

Նախնական գնահատման հայտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ



Երևանի Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանում լիցքավորման և լվացման կայանների կառուցում և ավտոկայանատեղիի վերակառուցում

Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր

Նախնական գնահատման հայտ

Խորհրդատու



Ֆինանսավորող գործակալություն



Ասիական զարգացման բանկ

Իրականացնող մարմին



Ծրագրի No: 130115L-T7

Ծրագրի նախաձեռնող՝ «Էգիս Ինթերնեյշնլ» ընկերությունը «Էգիս Ինթերնեյշնլ» ընկերության հայաստանյան մասնաճյուղի միջոցով

Գրանցման համարը՝ N 01Բ936183

Ծրագրի նախաձեռնողի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ջեյմս Բրայսի 19/1

Ծրագիր՝ « Երևանի Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանում լիցքավորման և լվացման կայանների կառուցում և ավտոկայանատեղիի վերակառուցում»

Նպատակը՝ ավտոբուսների հավաքակայանի վերակառուցում

Ծրագրի իրականացման վայրը՝ Երևան, Նոր Նորք վարչական շրջան, փ. Թևոսյան, 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ8

Ա1. Ծրագրի նախապատմությունը8

Ա2. Իրականացնող մարմինների պատասխանատվության շրջանակը.....9

Բ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ 11

Բ1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրությունը11

 Բ 2. Միջազգային բնապահպանական կանոնակարգեր.....15

 Բ3. Վարչական շրջանակը.....17

Գ. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ..... 21

Գ1. Ներածություն21

Գ2. Ծրագրի տեսակը22

Գ3. Ծրագրի տեղադիրքը.....23

Գ 4. Գոյություն ունեցող կառույցները24

Գ5. Աշխատանքների նկարագրությունը.....25

 Դ. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....39

Դ1. Կոնցեպտուալ.....39

Դ2. Նախագծային այլընտրանքներ42

Ե. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....46

 Ե1. Ընդհանուր շրջանակը..... 46

 Ե2. Մթնոլորտային օդի որակ.....49

 Ե3. Աղմուկ.....52

 Ե4. Թրթռումներ.....53

 Ե5. Մակերեսային և ստորգետնյա ջրեր.....54

 Ե6. Տեղագրություն, հողային ռեսուրսներ, երկրաբանություն, սելամոլոգիա.....54

 Ե7. Էկոլոգիական ռեսուրսներ.....58

 Ե8. Սոցիալ- տնտեսական պայմանները.....62

Զ. ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....64

 Զ1. Դրական ազդեցությունները64

Նախնական գնահատման հայտ

Ձ2. Բացասական ազդեցություններ	68
Ձ 2-1 Ծրագրի շինարարական գործողությունների ազդեցությունները	69
Ձ 2-2 Ավտոբուսային հավաքակայանի շահագործման ընթացքում առաջացող ազդեցությունները.....	84
Ձ 3 Համապարփակ ազդեցության գնահատում.....	93
Է. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ, ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	94
Է 1. Տեղեկատվության հրապարակում	94
Է 2. Քննարկումներ և հանրության մասնակցություն.....	95
Է3. Բողոքների լուծման մեխանիզմ.....	98
Ը. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	101
Ը1. Ներածություն.....	101
Ը 2. Իրականացման գործիքակազմը.....	102
Ը 3. Ազդեցության կառավարում (մեղմացնող միջոցառումներ և մոնիթորինգ)	102
Ը.4 Ծինարարության բնապահպանական կառավարման պլան (ՇԲԿՊ).....	133
Ը5. Հաշվետվողականություն.....	134
Ը6. Ազդեցությունների ամփոփում. Պարտականությունների գրանցամատյան.....	136
Ժ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	141
ՀԱՎԵԼՎԱԾ Ա. Արագ բնապահպանական գնահատման (ԱԲԳ) ստուգաթերթիկ.....	144
ՀԱՎԵԼՎԱԾ Բ. Իրականացնող մարմինների պատասխանատվության շրջանակի աղյուսակ...152	
ՀԱՎԵԼՎԱԾ Գ. ՀՀ կանոնակարգերի/ նորմատիվների շրջանակը	Error! Bookmark not defined.
ՀԱՎԵԼՎԱԾ Դ. Այլընտրանքների համեմատական վերլուծություն.....	163
ՀԱՎԵԼՎԱԾ Ե. Թուլավորություններ և հաստատումներ.....	165
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-1. Երևանի քաղաքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվություն (Ճարտարապետահատակագծային առաջադրանք)	165
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-2. Երևանի Քաղաքապետարանի նախնական համաձայնությունը նախատեսվող գործունեության վերաբերյալ.....	167
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-3 Նախագծային փորձաքննության եզրակացություն	177
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-4. Երևանի ավտոբուսային հավաքակայանի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական	180
ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-5. Ջրամատակարարման և կոյուղու տեխնիկական պայման տրամադրելու դիմում.....	179

Նախնական գնահատման հայտ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-6. «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված ջրամատակարարման և կոյուղու տեխնիկական պայման201

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-7. ՀՀ «ճանապարհային ոստիկանության» կողմից երթևեկության կառավարման պլանի հաստատումը184

ՀԱՎԵԼՎԱԾ Զ. Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի զգայուն ընկալիչների թերթիկ 186

ՀԱՎԵԼՎԱԾ Է. Ելակետային իրավիճակի ուսումնասիրություններ և հետազոտություններ.....194

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-1. Կլիմայական հիմնական տարրերի տվյալները194

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-2. Ջրվեժի հավաքակայի տարածքում առկա ծառերի և թփերի տեսակները.....199

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3. Հատման ենթակա ծառերի և թփերի տեսակները201

ՀԱՎԵԼՎԱԾ Ը. Ծրագրի գործողությունների հետևանքով արժեքավոր բնապահպանական ընկալիչներին (ԱԲԸ) պատճառված ազդեցությունների չափը.....202

ՀԱՎԵԼՎԱԾ Թ. Հանրային լսումների և հաղորդակցության մասին հաշվետվություն213

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-1. Ներածական հանդիպում Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարության հետ213

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2. Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարին և «Երևանի ավտոբուս» ՍՊԸ-ի տնօրենին ուղղված պաշտոնական ծանուցումը.....216

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-3. 2021թ. -ի հունվարի 21-ին կայացած 1-ին հանրային քննարկման մասին հաշվետվությունը220

ՀԱՎԵԼՎԱԾ Ժ. Բնապահպանական կառավարման պլան.....220

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1. ԲԿՊ աղյուսակ. Մեղմացնող միջոցառումներ221

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-2. ԲԿՊ աղյուսակ. Մեղմացնող մոնիթորինգ.....300

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-3. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան (բովանդակություն),321

ՀԱՎԵԼՎԱԾ Ի. Շինարարության բնապահպանական կառավարման պլանի կառուցվածքի ձևաչափ.....323

ՀԱՎԵԼՎԱԾ Լ. Տեղամասի կառավարման պլանի կառուցվածքի ձևաչափ..... 325

ՀԱՎԵԼՎԱԾ Խ. Պատահարի/ միջադեպի մասին հաշվետվության ձևանմուշ.....326

ՀԱՎԵԼՎԱԾ Ծ. Կանաչապատման նախագիծ.....328

Նախնական գնահատման հայտ

Աղյուսակների ցանկը

Աղյուսակ Ա-1. Իրականացնող մարմնի առաջադրանքները և ձեռնարկվող գործողությունները

Աղյուսակ Գ-1. Երևանի նոր ավտոբուսային ցանցում նախատեսված տրանսպորտային միջոցների քանակը

Աղյուսակ Գ-2. Տարածքի տեղադիրքի տեղագրագեոդեզիական կոորդինատները

Աղյուսակ Ե-1. Տվյալների հավաքագրման պլան

Աղյուսակ Ե -2. Կլիմայական պարամետրերը

Աղյուսակ Ե -3. Փոշու, ծծմբի երկօքսիդի (SO₂) և ազոտի երկօքսիդի (NO₂) խտությունները

Աղյուսակ Ե -4. Աղմուկի սահմանային թույլատրելի արժեքները

Աղյուսակ Զ-1. Ազդեցությունների խստության սահմանման չափանիշները

Աղյուսակ Զ-2. Բնապահպանական ազդեցությունների մեծության գնահատում

Աղյուսակ Զ-3. PM_{2.5} և PM₁₀-ի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները

Աղյուսակ Զ-6. Բնական սեղմված գազի (ԲՄԳ) բաղադրությունը

Աղյուսակ Զ-7. Երթևեկության ինտենսիվության գնահատում

Աղյուսակ Ը-1. Ավտոբուսային հավաքակայանում օգտագործվող վնասակար և վտանգավոր նյութերը

Աղյուսակ Ը-2. Պահպանման նպատակով նյութերի խմբավորում

Աղյուսակ Ը-3. Օպերատորի թափոնների կառավարման համակարգը

Աղյուսակ Ը-4. Ազդեցությունների ամփոփում. Պարտականությունների գրանցամատյանը

Նկարների ցանկը

Նկար Գ -1. Ծրագրի տարածքը՝ Թևոսյան և Հովհաննիսյան փողոցների փոխհատման հարևանությամբ

Նկար Գ-2. Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանի կառույցներն ու սարքավորումները

Նկար Գ -3. Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման գլխավոր հատակագիծը

Նկար Գ -4. Ապամոնոտաժման ենթակա կառույցները

Նկար Գ -5. ԲՄԳ-ի և դիզելային վառելիքի լիցքավորման կայանի հատակագիծը

Նկար Գ -6. Գազի կոմպրեսոր

Նկար Գ -7. Օդը չորացնող սարք

Նկար Գ -8. Պահեստային մաս («շշերի դարակ»՝ 1 800 լ, 250 բար)

Նկար Գ -9. Արագ լիցքավորման կայան՝ դիսպենսերներով

Նկար Դ -1. Ջրվեժի հավաքակայանի հատակագիծը՝ ըստ ԱԶԲ-ի սխեմատիկ նախագծի

Նկար Ե - 1. Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի տեղագրական քարտեզը

Նկար Ե - 2. Ծրագրի տեղադիրքը՝ Նոր Նորք վարչական շրջանում

Նկար Զ -1. Փուլ 1-ի շինարարական աշխատանքներին խոչընդոտող ծառերի և թփերի տեղադիրքը

Նկար Զ -2. Ծրագրի տեղադիրքը քաղաքային ճանապարհների նկատմամբ

Նկար Է-1. Բողոքների լուծման մեխանիզմի գծապատկերը

Նախնական գնահատման հայտ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱ	Առողջություն և անվտանգություն
ԱԱԱ	Աշխատանքային անվտանգություն և առողջություն
ԱԱՇՄ	Առողջություն, անվտանգություն և շրջակա միջավայր
ԱԲԳ	Արագ բնապահպանական գնահատում (ստուգաթերթիկ)
ԱԲԸ	Արժեքավոր բնապահպանական ընկալիչ
ԱԳ	Ազդեցության գնահատում
ԱԵԱ	Ազդեցության ենթակա անձ
ԱԸ	Արժեքավոր ընկալիչ
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱԶԲ ԱՔՀ	Ասիական զարգացման բանկի Անվտանգության քաղաքականության հայտարարագիր
ԲԳՈՒՇ	Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակներ
ԲԸՏՄ	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
ԲԼՄ	Բողոքների լուծման մեխանիզմ
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ԲՊՄԿ	Բնության պահպանության միջազգային կազմակերպություն
ԲՄ	Բրիտանական ստանդարտներ
ԲՄՀ	Բրիտանական ստանդարտների հաստատություն
ԲՖԳ	Բազմափուլային ֆինանսավորման գործիք
ԳԿ	Գլխավոր կապալառու
ԳՄ	Գործադիր մարմին
ԳՕՍՏ	ՀՀ կողմից ընդունված ստանդարտներ
ԵԿ	Ենթակապալառու
ԵՔ	Երևանի քաղաքապետարան
ԵՔԾԻԳ	Երևանի քաղաքապետարանի ծրագրերի իրականացման գրասենյակ
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ԹՎԺ	Թերությունների վերացման ժամանակահատված
ԻՄ	Իրականացնող մարմին
ԿԱԱԲ	ԱԶԲ ուղեցույց
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀԼՀՊ	Հանրային լուսմների և հաղորդակցության պլան
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
ՄԱԱ	Մասնիկի առավելագույն արագություն
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ՄՆԽ	Մանրամասն նախագծման խորհրդատու
ՄՆ	Մշակույթի նախարարություն
ՄՉՀ	Մանրամասն չափագրման հետազոտություն
ՇԲԿՊ	Շինարարության բնապահպանական կառավարման պլան
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՇՄՆՈՒ	Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրություն
ՇՄԱ	Շեմի սահմանային արժեքը
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՍՄԿ	Ստանդարտացման միջազգային կազմակերպություն
ՏՎԻ	Տեխնիկական վերահսկողության խորհրդատու (Ինժեներ)
ՏՀԾ	Տվյալների հավաքագրման ծրագիր
ՔԹՊ	Քիմիական թթվածնի պահանջ
ՔԿԶՆԾ	Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր
ՕԳ	Օտարման գոտի

Ա1. Ծրագրի նախապատմությունը

1. Երևանի հասարակական տրանսպորտի համակարգը բաղկացած է միկրոավտոբուսներից, ավտոբուսներից, տրոլեյբուսներից և մետրոյի երթուղիներից: Ներկայումս ուղևորների 85%-ը տեղափոխվում է չտուբսիդավորված մասնավոր միկրոավտոբուսներով՝ չնայած թանկ ուղեվարձերին: Թեև միկրոավտոբուսները 1990-ականներին փրկեցին Երևանը տրանսպորտային ծանր ճգնաժամից, սակայն այժմ երբ մեծ ու միջին ավտոբուսները դուրս են մղվել տրանսպորտային համակարգից, դրանք նպաստում են քառասյին իրավիճակների առաջացմանը: Ծառայության որակը բավարար չէ ծանրաբեռնվածության և խցանումների պատճառով: Հասարակական տրանսպորտի ենթակառուցվածքը վատթարացել է, տրանսպորտային միջոցների շարժակազմը հին է և բավարար չափով չի սպասարկվում՝ երթևեկելով միջինում 16 կմ/ժ արագությամբ:
2. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի (ՔԿԶՆԾ) «Երևանի ավտոբուսային հավաքակայաններ» ծրագիրը ֆինանսավորվում է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) Բազմափուլային ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ) միջոցով: Բանկի քաղաքականությունը պահանջում է, որ ԱԶԲ-ի կողմից օժանդակվող և ֆինանսավորվող բոլոր ծրագրերը համապատասխանեն Անվտանգության քաղաքականության հայտարարագրի (ԱՔՀ, 2009) պահանջներին: Ենթադրվում է, որ Երևանի ավտոբուսային հավաքակայանի ծրագիրը կարող է պարունակել բնապահպանական ռիսկեր և ազդեցություններ, ուստի գոչձադրվու է շրջակա միջավայրի պահպանության մեխանիզմը:
3. Շրջակա միջավայրի անվտանգության դրույթները կիրառվել են Ծրագրի բնապահպանական գննության միջոցով և կատեգորիայի որոշման համար: Ծրագրի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների նախնական գննությունն իրականացվել է ԵՔ ԾԻԳ-ի կողմից՝ Մանրամասն նախագծման խորհրդատուի (ՄՆԽ) միջոցով: Գործընթացն իրականացվել է՝ համաձայն Անվտանգության քաղաքականության հայտարարագրի (ԱՔՀ, 2009)՝ ապահովելով առաջարկվող ծրագրի բնապահպանական անվտանգությունն ու կայունությունը և օժանդակելով Ծրագրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում բնապահպանական նկատառումների դիտարկմանը: Այն հնարավորություն ընձեռեց Ծրագիրը դասակարգել ԱԶԲ ԱՔՀ-ի և ազգային նորմատիվային պահանջներին համապատասխան:
4. Շրջակա միջավայրի նախնական գննության հիմնական նպատակն էր ապահովել, որ բնապահպանական և սոցիալական նկատառումները հաշվի առնվեն մանրամասն նախագծման վաղ փուլում՝ նպատակ ունենալով ապահովել առաջարկվող ծրագրի կայունությունը: Որոշվել է հետագա ուսումնասիրությունների և գնահատման շրջանակը, ինչը, ըստ ազգային և միջազգային ստանդարտների, կպահանջվի ծրագրի մանրամասն նախագծման փուլում, իսկ ստուգման արդյունքներն ամփոփվել և ներկայացվել են Երևանի ավտոբուսների հավաքակայանի համար պատրաստված Շրջակա միջավայրի նախնական գնահատման (ՇՄՆՈԻ) հաշվետվության մեջ (Տարբերակ1).
5. Ծրագրի իրականացման պատասխանատուն Իրականացնող մարմինը՝ Երևանի քաղաքապետարանն է (Պատվիրատու), որը գործում է Ծրագրի իրականացման գրասենյակի (ԵՔ ԾԻԳ) միջոցով: Ծրագրի վարչական շրջանակը, պատասխանատու մարմինների առաջադրանքներն ու ձեռնարկվող գործողությունները ներկայացված են Բաժին Ա2-ում և մանրամասն ներկայացված են Բ3 բաժնում (Կարչական շրջանակը), ինչպես նաև Հավելված Բ-ում:
6. Սույն Նախնական գնահատման հայտը պատրաստվել է ՇՄԱԳ գործընթացի շրջանակներում Մանրամասն նախագծման խորհրդատուի (ՄՆԽ¹) կողմից ԵՔ ԾԻԳ-ի հանձնարարականով համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ

¹ Պայմանագրում սահմանված է որպես «Առաջադրանք 6»: Խորհրդատուին վերահսկողության իրականացման առաջադրանք չի տրվել:

Նախնական գնահատման հայտ

օրենքի (2014 թ.) պահանջների՝ ապահովելու համար առաջարկվող ծրագրի բնապահպանական անվտանգությունը և կայունությունը և օժանդակելու Ծրագրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում բնապահպանական նկատառումների դիտարկմանը:

Ա2. Իրականացնող մարմինների պատասխանատվության շրջանակը

7. Աղյուսակ Ա-1-ում ներկայացված է Իրականացնող մարմնի կողմից Ծրագրի համար առաջադրված խնդիրները և իրականացված գործողությունները: Աղյուսակը կազմվել է Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրության և ծրագրի բնապահպանական դասակարգման հիման վրա, ինչպես նկարագրված է ստորև²:

Աղյուսակ Ա-1 Իրականացնող մարմնի առաջադրանքները և ձեռնարկվող գործողությունները

	Առաջադրանքը	Ժամանակացույցը	Արձագանքը/ձեռնարկվող գործողությունը
1	Ծրագրի դասակարգումը որոշելու նպատակով լրացնել ՇՄ նախնական գնմության Արագ գնահատման ստուգաթերթիկը	Պատրաստվել է ՄՆԽ-ի կողմից	Բնապահպանական դասակարգումն իրականացվել է ԱԶԲ-ի կողմից
2	ՇՄ վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը պատրաստված է ՀՀ օրենսդրական պահանջների և ԱԶԲ ԱՔՀ (2009) –ին համապատասխան	Պատրաստվել է ԾԻԳ-ի կողմից (ՇՄՆՈՒ տարբերակ)՝ Ծրագրի ազդեցության ընդգրկման շրջանակի որոշման և դասակարգման նպատակով ՄՆԽ-ն՝ ԵՔ ԾԻԳ-ի հանձնարարությամբ, Ծրագրի բնապահպանական դասը որոշելուց հետո	ՀՀ ՇՄՆ-ի եզրակացությունը ձեռք է բերվելու ԵՔ ԾԻԳ-ի կողմից ՄՆԽ -ի միջոցով Ներկայացվելու է ԱԶԲ-ի դիտարկմանը և հավանությանը
3	Իմաստալից քննարկումներ և խորհրդակցություններ ազդեցության ենթակա շահագրգիռ կողմերի հետ՝ ԱԶԲ պահանջներին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան	Կազմակերպվում է ՇՄԱԳ-ի շրջանակում ՄՆԽ -ի կողմից՝ ԵՔ ԾԻԳ-ի հանձնարարությամբ	Ձեռք է բերվել ազդեցության ենթակա Երևան համայնքի համաձայնությունը
4	ՇՄԱԳ հաշվետվության հրապարակում	ՇՄԱԳ (ՏՇՄՆՈՒ տարբերակը) տեղադրվել է ԵՔԾԻԳ-ի պաշտոնական	Կիրառարակվի ԱԶԲ-ի և ԵՔԾԻԳ-ի պաշտոնական կայքերում

² Ծրագրի ողջ շրջափուլում պատասխանատու մարմինների առաջադրանքների և իրականացվող գործողությունների ամբողջական շրջանակը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ Բ-ում:

Նախնական գնահատման հայտ

		կայքում ³ ՇՄԱԳ հաշվետվությունը հրապարակվելու է ԱԶԲ-ի հավանությունը ստանալուց հետո	
5	Թույլտվությունների և հաստատումների ձեռքբերում պետական գերատեսչություններից	Ձեռք կբերվի նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը և/կամ աջակցություն կցուցաբերվի կապալառուին ձեռք բերման գործում	ՀՀ ՇՄՆ-ի կողմից հաստատված փորձաքննության եզրակացության ձեռքբերումը ԵՔԾԻԳ-ի կողմից՝ ՄՆԽ-ի միջոցով Ծառահատման թույլտվությունը ձեռք է բերվելու ԵՔ-ից
6	ՇՄԱԳ/ԲԿՊ-ն՝ որպես մրցութային և պայմանագրային փաստաթղթերի բաղկացուցիչ մաս	Նախքան մրցույթը	ԵՔԾԻԳ-ը ապահովում է, որ ՄՆԽ-ի կողմից ՇՄԱԳ/ԲԿՊ-ն ներառված լինի մրցութային և պայմանագրային փաստաթղթերում
7	ՇՄԱԳ/ ԲԿՊ հաշվետվությունների հասանելիությունը Կապալառուների համար	Նախքան մրցույթը	ԵՔԾԻԳ-ը ապահովում է որ ա) ՄՆԽ-ի կողմից ՇՄԱԳ/ԲԿՊ-ն ներառված լինի մրցութային և պայմանագրային փաստաթղթերում բ) ՇՄԱԳ/ԲԿՊ-ն տեղադրված լինի պաշտոնական կայքում, գ) ՇՄԱԳ/ԲԿՊ-ի թղթային օրինակը, այդ թվում՝ Պարտականությունների ամփոփագիրը փոխանցվի Կապալառուին
8	Շինարարական աշխատանքների բնապահպանական կառավարման պլան (ՇԲԿՊ)	Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը	Կապտրաստվի Կապալառուի կողմից՝ ՄՆԽ-ի աջակցությամբ Կղիտարկվի և կհաստատվի ԾԻԳ-ի կողմից: ԱԶԲ-ին կտեղեկացվի հաստատման մասին:
9	ՇՄԱԳ/ԲԿՊ-ի պատշաճ իրականացում	Շինարարական աշխատանքների	Շինարարական աշխատանքների

3

<https://sudipyerevan.am/en/environmental-impact/>

Նախնական գնահատման հայտ

		փուլում և թերությունների վերացման ժամանակահատվածում	համապատասխանությունը ՇՄԱԳ/ԲԿՊ/ՇԲԿՊ-ի պահանջներին վերահսկվում է ԾԻԳ-ի և ՄՆԽ-ի կողմից կանոնավոր ստուգայցերի միջոցով
10	ՇՄԱԳ-ի վերանայում և ազդեցության լրացուցիչ գնահատում	Եթե նախագծում/կամ գործողություններում առկա են զգալի փոփոխություններ	Ծրագրի նախագծային փոփոխությունների ռիսկերը կդիտարկվեն և անհրաժեշտության դեպքում բնապահպանական կատեգորիան կվերանայվի ԱԶԲ-ի կողմից
11	ԱԶԲ-ին ներկայացնել հաշվետվություն	Կիսամյակային հաշվետվություններ շինարարական աշխատանքների փուլում և թերությունների վերացման ժամանակահատվածում	Կպատրաստվի և կներկայացվի ԵԲՕԻԳ-ի կողմից

Բ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Բ1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրությունը

8. Հայաստանն ունի բավական լավ մշակված շրջակա միջավայրի պաշտպանության օրենսդրական և կարգավորման շրջանակ: ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածը (06.12.2015 թ.) սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության և վերարտադրության, բնական պաշարների պաշտպանության օգտագործման վերաբերյալ:
9. Օրենսդրական դաշտը պարունակում է ավելի քան 30 օրենք և ավելի քան 100 օժանդակ իրավական կարգավորումներ՝ շրջակա միջավայրը պաշտպանելու համար: Ազգային քաղաքականությունը և օրենսդրական կարգավորումների շրջանակը, որոնք այս կամ այն չափով կիրառելի են տրանսպորտային և քաղաքաշինության ոլորտում, ինչպես նաև դրանց գործնական կիրառումը ուսումնասիրվել են ստուգման շրջանակում: Որոշ առավել կիրառելի օրենքներ և կանոնակարգեր, շրջակա միջավայրի և սոցիալական պաշտպանությանն առնչվող կիրառելի իրավական պարտավորությունները և ՀՀ-ի կողմից պահանջվող ԱԳ գործընթացը, թվարկված են ստորև, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.

Բնապահպանական

Օրենսգրքեր և օրենքներ

10. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (հուլիսի 22, 2014 թ.) պահանջում է ծրագրերի՝ բնապահպանական ազդեցությունների գնահատում, ստուգում և դասակարգում՝ ըստ գործունեության տեսակի, գնահատման հաշվետվությունների փորձագիտական քննություն և փորձագիտական եզրակցության տրամադրում: Սույն օրենքի շրջանակում Շրջակա միջավայրի նախարարությունը հաստատում է տրամադրում երկրում զարգացման տարբեր ծրագրերի համար: Համաձայն Գլուխ 3, հոդված 14-ի՝ ՇՄԱԳ⁴ և փորձաքննության առարկա հանդիսացող տնտեսական գործունեության կատեգորիաները, սահմանված ցուցակներում ընդգրկված ցանկացած գործունեություն ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախագծման փուլում՝ նախքան ծրագրի իրականացումը, և միայն ՇՄՆ-ի հաստատումը ստանալուց հետո ծրագրի գործողությունները կարող են սկսվել և իրականացվել: Կիրառելի են նաև Գլուխ 4-ի՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացին վերաբերող ընթացակարգերը և պահանջները, ինչպես նաև Գլուխ 6-ը՝ Հանրային ծանուցման և հանդիպումների ընթացակարգերն ու պահանջները:
11. «Թափոնների մասին» օրենքը (2004 թ.) կարգավորում է թափոնների (այդ թվում՝ շինարարական) հավաքումը, փոխադրումը, պահեստավորումը, մշակումը, վերաօգտագործումը և հեռացումը:
12. «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքը (2005 թ.) կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպումը:
13. «Հայաստանում ստուգումների կազմակերպման և իրականացման մասին» օրենքը (2000 թ.) կարգավորում է տնտեսական գործունեության տեսչական ստուգումների կատարման ընթացակարգերը:
14. «Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքը» (1994 թ., վերջին անգամ լրամշակվել է 2007թ.-ին) կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային խտությունները և այլն:
15. «Հողային օրենսգիրքը» (2001) կարգավորում է հողօգտագործման գործընթացում առաջացող բոլոր հարաբերությունները, որոնք իրավական հիմք են հանդիսանում հողօգտագործման տարբեր և արդյունավետ ձևերի մշակման, հողի ֆերրիության բարելավման և պահպանման և հողային ռեսուրսների պաշտպանության համար՝ հաշվի առնելով դրանց ընդգծված բնապահպանական, տնտեսական և սոցիալական կարևորությունը:
16. «ՀՀ ջրային օրենսգիրքը» (2002) ապահովում է իրավական հիմքեր երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների ապահովման համար: Համապատասխանում են «Ջրային օրենսգրքի» (2002 թ.) հետևյալ կանոնակարգերը և ընթացակարգերը՝ (ա) թույլտվությունների տրամադրման ընթացակարգը, (բ) սանիտարական ելքերը, (գ) ջրահեռացման ջրերի օգտագործումը, (դ) ջրային ռեսուրսների այլընտրանքային հաշվառում, (ե) անդրսահմանյան ջրային ռեսուրսների վերաբերյալ տեղեկությունների հասանելիություն, (զ) ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանություն, (է) պետական ջրային կադաստրում փաստաթղթերի գրանցում, (ը) հանրության իրազեկում և Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից մշակված փաստաթղթերի հրապարակում, ինչպես նաև ջրային ոլորտին և բնապահպանական խնդիրներին առնչվող ուղեցույցներ և այլ նորմատիվ փաստաթղթեր:

⁴ Հայաստանի օրենսդրությունը չի տարբերակում ազդեցության գնահատման պայմանները ծրագրի բնապահպանական կատեգորիաների համար, և՛ «Ա», և՛ «Բ» կատեգորիաները պահանջում են ՇՄԱԳ, մինչդեռ ԱԶԲ ԱՔՀ-ն (2009) նախատեսում է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում «Ա» կատեգորիայի համար և Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրություն (ՇՄՆՌԲ) «Բ» կատեգորիայի համար:

Նախնական գնահատման հայտ

17. ՀՀ օրենքը «Բուսական աշխարհի մասին» (ՀՕ-22 23.11. 1999 թ) սահմանում է ՀՀ բույսերի պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև բուսատեսակների բազմազանության, քանակի և աճելավայրերի վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այն նաև սահմանում է տեսակների, մասնավորապես՝ էնդեմիկ և վտանգված, մոնիթորինգի և գնահատման պահանջները:
18. ՀՀ օրենքը «Կենդանական աշխարհի մասին» (ՀՕ-52 03.04. 2000 թ) սահմանում է ՀՀ կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենդանիների քանակի և նրանց ապրելավայրերի վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այն նաև սահմանում է տեսակների, մասնավորապես՝ էնդեմիկ և վտանգված, մոնիթորինգի և գնահատման պահանջները:
19. ՀՀ օրենքը «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» (ՀՕ-211 27.11.2006 թ) սահմանում է ՀՀ հատուկ պահպանվող տարածքների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը:
20. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը (11.11.1998 թ.):

Այլ իրավական ակտեր

- ՄՆ 245-71 «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական չափորոշիչները»
- ՀՀ կառավարության թիվ 1325-Ն որոշումը «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» (19.11.2014 թ.)
- ՀՀ կառավարության թիվ 160-Ն որոշումը «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՄԹԿ) և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանաձգազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները հաստատելու մասին» (2.02.2006)
- ՀՀ կառավարության թիվ 121-Ն «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության, լիցենզավորման կարգը հաստատելու մասին» որոշումը նախատեսում է Հայաստանում առաջացած վտանգավոր թափոնների մշակման կանոնակարգեր, այդ թվում՝ քաղաքաշինության ոլորտում (2003 թ.)
- ՀՀ բնապահպանության և ընդերքի նախարարություն թիվ 120՝ «ՀՀ տարածքում առաջացող թափոնների ըստ վտանգավորության աստիճանի դասակարգման մասին հրահանգը» (05.12.1996 թ.)
- ՀՀ կառավարության թիվ 1404-Ն «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» (02.11.2017 թ.)
- ՀՀ կառավարության թիվ 1396-Ն որոշումը «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» (8.09.2011 թ.)
- ՀՀ կառավարության թիվ 108-Ն որոշումը «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» (08.02.2018)
- ՀՀ կառավարության թիվ 967-Ն որոշումը «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» (14.08.2008)
- ՀՀ ՇՄ նախարարի թիվ 64-Լ հրամանը «Անշարժ (ամրակայված) աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար գազերի հաշվարկման համակարգչային ծրագրերի որոշման մասին» (18.02.2020 թ.)
- ՀՀ առողջապահության նախարարի թիվ 20-Ն որոշումը «Վտանգավոր քիմիական թափոնների գործածությանը և վտանգավոր քիմիական նյութերի պահպանմանը և փոխադրմանը ներկայացվող

Նախնական գնահատման հայտ

- հիգիենիկ պահանջներ» N 2.1.7.001-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին (29.11.2009)
- ՀՀ առողջապահության թիվ 138 առ 06.03.2002 թ. հրամանը «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» № 2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին
 - ГООТ 17.2.4.05-83 «Բնության պաշտպանություն, մթնոլորտ, փոշու կախովի մասնիկների որոշումը գրավիմետրիկ մեթոդով»
 - ՀՀ կառավարության թիվ 160-Ն որոշումը «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների -ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին» (02.02.2006 թ.)
 - ՀՀ Կառավարության 29.01.2010 թ-ի №72-Ն որոշումը ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին;
 - ՀՀ Կառավարության 29.01.2010 թ-ի №71-Ն որոշումը ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին;
 - ՀՀ Կառավարության 25.09.2014 թ-ի №1059-Ա որոշումը «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին»;
 - ՀՀ Կառավարության 14.08.2014 թ.-ի №781-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին»
 - Ավտոմատ ԲՄԳ կայանների ստանդարտ տեխնոլոգիական նախագծման՝ շրջակա միջավայրի պահպանման ուղղված պահանջները (Սանկտ Պետերբուրգ, 2016 թ.)
 - ՀՀ կառավարության թիվ 438 որոշումը «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» (20.04.2002 թ.)
 - Երևան քաղաքի ավագանու No 405-Ն որոշումը «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգի մասին» (16.03.2012 թ.)
 - Երևան քաղաքի ավագանու No 337-Ն որոշումը «Երևան քաղաքի ավագանու No 405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (12.02.2021 թ.)
 - ՇՄՆ-ի վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի կողմից մշակված ասբեստ պարունակող նյութերի մշակման ուղեցույց:

Աշխատանքի անվտանգություն և առողջության պահպանություն

Օրենսգրքեր և օրենքներ

21. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքը (2005 թ.),
22. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (1998 թ.):

Այլ իրավական ակտեր⁵

- ✓ ՀՀ կառավարության թիվ 1631-Ն որոշումը «Անհատական պաշտպանության միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» (2004 թ.)
- ✓ ՀՀ կառավարության թիվ 1089-Ն որոշումը «Բժշկական գնության մասին» (2004 թ.)

⁵ Արդյունաբերության և շինարարության անվտանգության ոլորտում Հայաստանի Հանրապետության հիմնական կիրառելի նորմատիվային ասպեկտների մանրամասն ցանկը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱՏ Գ-ում, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱՏ Գ-1-ում:

Նախնական գնահատման հայտ

- ✓ ՀՀ կառավարության թիվ 2390-Ն որոշումը «Մեքենաների և մեխանիզմների անվտանգությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» (2006 թ.)
- ✓ ՀՀ կառավարության թիվ 286 որոշումը «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» (12.04.2001 թ.)
- ✓ ՀՀ առողջապահության նախարարի թիվ 15-Ն որոշումը «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը (19.09.2012 թ.)
- ✓ ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար»

Ծրագրի դասակարգումը

23. Համաձայն ՀՀ ՇՄԱԳ մասին օրենքի՝ Ծրագրի բնապահպանական կատեգորիան որոշելու համար հաշվի են առնվում Ծրագրի հետևյալ չափանիշները.
 - ✓ Գլուխ 3, Հոդված 14, կետ 5, 3) դ՝ 5 խորանարդ մետր և ավելի տարողությամբ բենզալցակայաններ/գազալցակայաններ,
 - ✓ Գլուխ 3, Հոդված 14, կետ 6, 7) ա՝ Քաղաքաշինական կառույցներ՝ ավելի քան 1500 քմ շինարարական տարածքով
24. Խիստ բաղադրիչի սկզբունքի հիման վրա՝ առաջարկվող Ծրագիրը դասակարգվում է որպես «Կատեգորիա Բ»՝ համաձայն ՀՀ ՇՄԱԳ մասին օրենքի Գլուխ 3, Հոդված 14, կետ 5, 3) դ-ի, և կանցնի փորձաքննություն 2 փուլով՝ Հայաստանի պետական ՇՄ փորձաքննության ընթացակարգի նախնական և հիմնական փուլերով՝ ՀՀ ՇՄՆ-ի հաստատումը ստանալու համար: Հետևաբար, սույն Նախնական գնահատման հայտի հաշվետվությունը, այնուհետև ամբողջական ՇՄԱԳ հաշվետվությունը ներկայացվում են պետական դրական եզրակացությունը ստանալու համար:

Բ 2. Միջազգային բնապահպանական կանոնակարգեր

Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային բնապահպանական կոնվենցիաներին և արձանագրություններին

25. ՀՀ-ն ստորագրել և վավերացրել է ավելի քան 35 միջազգային կոնվենցիաներ և արձանագրություններ, որոնցից 24-ը վավերացվել են սկսած 1993 թ.-ի գերխոնավ տարածքների պահպանության մասին Ռամսարի կոնվենցիայով: Առաջարկվող նախագիծը զննվել է միջազգային պարտավորությունների տեսանկյունից և եզրակացություն է արվել, որ Ծրագրի արդյունքում դրանցից ոչ մեկը չի խախտվելու:
26. Վտանգավոր նյութերի գործածության ոլորտում, Հայաստանի Հանրապետության կառավարությունը վավերացրել է Ստոկհոլմի կոնվենցիան և հանդիսանում է Բազելի կոնվենցիայի մասնակից կողմ: Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված և վավերացված բնապահպանական միջազգային կոնվենցիաների արձանագրությունների ամբողջական ցանկը ներկայացված է Հավելվածում Գ-ում:

ԱԶԲ անվտանգության քաղաքականության հայտարարագիր (2009 թ.)

27. Սույն ուսումնասիրությունն իրականացվել է՝ համաձայն ԱԶԲ Անվտանգության քաղաքականության հայտարարագրի (ԱԶՀ, 2009), Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցի (2003 թ.) և Բնապահպանական ուսումնասիրության և գնահատման շրջանակների (ԲԳՈԻՇ), որոնք համաձայնեցված են ՀՀ կառավարության և ԱԶԲ-ի միջև: Տեղական

Նախնական գնահատման հայտ

ստանդարտների բացակայության դեպքում ուղենիշ են ընդունվում միջազգային ստանդարտներն ու ուղեցույցները, մասնավորապես Համաշխարհային բանկի «Բնապահպանական, առողջապահական և անվտանգության ընդհանուր ուղեցույցը» (2007 թ.):

28. Բանկի քաղաքականությունը պահանջում է, որ ԱԶԲ-ի կողմից օժանդակվող և ֆինանսավորվող բոլոր ծրագրերը համապատասխանեն Անվտանգության քաղաքականության հայտարարագրի (ԱՔՀ, 2009) պահանջներին, որտեղ սահմանված են քաղաքականության սկզբունքերը և նախանշվում է Անվտանգության քաղաքականության հայտարարագրի իրագործման գործընթացը: Մասնավորապես, պետք է կիրառվեն բնապահպանական անվտանգության քաղաքականության Հիմնական սզբունքները⁶:
29. Անվտանգության քաղաքականության հիմնադրույթները (ԱՔՀ, 2009) սահմանում են ազդեցության գնահատման (ԱԳ) պահանջներ ԱԶԲ-ի կողմից օժանդակվող բոլոր ծրագրերի համար: ՇՄ ազդեցության գնահատման հաշվետվությունը պահանջվում է բոլոր «Ա» և «Բ» բնապահպանական կատեգորիաների ծրագրերի համար, ընդ որում «Ա» և «Բ» կատեգորիաների հաշվետվությունների մանրամասնությունն ու ընդգրկունությունն ուղղակիորեն կապված են բնապահպանական ռիսկերի և պոտենցիալ ազդեցության մեծության հետ: ԱԶԲ Քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը՝ առաջարկվող ծրագրի գնության գործընթացի հնարավորինս վաղ սկսելն է՝ շրջակա միջավայրի գնահատման համապատասխան շրջանակը և հաշվետվության տեսակը որոշելու համար, որպեսզի ձեռնարկվեն հնարավոր ազդեցություններին և ռիսկերին համարժեք ուսումնասիրություններ:

Նախնական գնություն և դասակարգում

30. Ծրագրի բնապահպանական կատեգորիան որոշելու նպատակով ԾԻԳ-ի հանձնարարությամբ և ի աջակցություն ԱԶԲ-ի ՄԽԽ-ն իրականացրել է նախնական գնություն և դասակարգում: Շիրակի ավտոբուսների հավաքակայանի ծրագիրը որպես ՔԿԶՆ Ծրագիր գնվել է ԱԶԲ-ի դասակարգման համակարգի հիման վրա: Առաջարկվող Ծրագիրը ենթարկվել է մանրամասն գնության իր տեսակի, գտնվելու վայրի, մասշտաբի և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների մեծության և ազդակիրների զգայունության տեսանկյունից:
31. Լրացվել է ԱԶԲ-ի Արագ բնապահպանական գնահատման (ԱԲԳ) ստուգաթերթիկ, որը կցվել է սույն հաշվետվությանը որպես Հավելված Ա: Զննության արդյունքում եզրակացվեց, որ առաջարկվող ծրագիրը մեծ հավանականությամբ շրջակա միջավայրի վրա նշանակալի անդառնալի, անկառավարելի կամ աննախադեպ բացասական ազդեցություններ չի ունենալու: Ծրագրի հնարավոր բացասական ազդեցությունները տեղանքային բնույթի են, դրանցից անշրջելիները սակավաթիվ են և հիմնականում կառավարելի են մեղմացնող միջոցառումների շնորհիվ: Այս ազդեցությունների գոտին չի տարածվի աշխատանքի իրականացման շինհրապարակների ֆիզիկական սահմաններից դուրս:
32. Արագ բնապահպանական գնահատման (ԱԲԳ) ստուգաթերթիկի հիման վրա ԱԶԲ-ի խորհրդատուներն առաջարկեցին Զրվեժի ավտոբուսների հավաքակայանների ծրագիրը դասակարգել «Բ» խմբում, ուստի, համաձայն ԱԶԲ ԱՔՀ (2009)-ի անհրաժշտ կլինի պատրաստել Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրության (ՇՄՆՈԻ) հաշվետվություն:

Ստանդարտներ և կանոնակարգեր

33. Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրությունը (ՇՄՆՈԻ) իրականացվում է՝ համաձայն ԱԶԲ Անվտանգության քաղաքականության հայտարարագրի (ԱՔՀ, 2009 թ.), Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցի (2003 թ.) և Բնապահպանական ուսումնասիրության և

⁶ ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարագիր (2009 թ.), Ա. Համապարփակ հայտարարագիր ԱԶԲ-ի պարտավորության և քաղաքականության սկզբունքների վերաբերյալ, էջ 14, 1. Բնապահպանական անվտանգության մեխանիզմներ, քաղաքականության սկզբունքները, էջ 16:

Նախնական գնահատման հայտ

գնահատման շրջանակների (ԲԳՈԻՇ), որոնք համաձայնեցված են ՀՀ կառավարության և ԱԶԲ-ի միջև:

34. Այն դեպքերում, երբ տեղական ստանդարտները բացակայում են կկիրառվեն միջազգայնորեն ճանաչված ստանդարտները, իսկ այն դեպքերում, երբ ֆոնային ելակետային տվյալները գերազանցում են ազգային օրենսդրական չափանիշներին և ազգային ուղեցույցները առկա չեն, ապա կկիրառվեն միջազգային ուղեցույցները: Բոլոր նման դեպքերում ՇՄՆՈՒ հաշվետվության մեջ կհիմնավորվեն տվյալ ծրագրի կամ տեղանքի համար ընտրված մակարդակներն ու մոտեցումները.
- Համաշխարհային բանկի «Բնապահպանական, առողջապահական և անվտանգության ընդհանուր ուղեցույցները» (2007 թ.)
 - Համաշխարհային բանկի «Աղտոտվածության կանխարգելման և մեղմացնող միջոցառումների ձեռնարկը

Բ3. Վարչական շրջանակը

Վերահսկիչ մարմին

35. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրերի (ՔԿԶՆԾ) կառավարման խորհուրդը, որը գլխավորում է վարչապետը, կազմված է Էկոնոմիկայի նախարարության, Ֆինանսների նախարարության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Արդարադատության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, Կենտրոնական բանկի, Կադաստրի կոմիտեի և Երևանի կառուցապատման ԾԻԳ-ի ներկայացուցիչներից: Կառավարման խորհուրդը ստեղծվել է Ծրագրի իրականացմանը հետևելու նպատակով:

Գործադիր մարմին

36. Էկոնոմիկայի նախարարությունը Կառավարման խորհրդի ներքո հանդիսանում է ՔԿԶՆԾ Գործադիր մարմինը (ԳՄ): ԳՄ-ն կկատարի Ծրագրի իրականացման և վարկային միջոցների բաշխման վերահսկողությունը:

Իրականացնող մարմին

37. Ծրագրի Իրականացնող մարմինը (ԻՄ) Երևանի քաղաքապետարանն է (Պատվիրատու), որը պատասխանատու է Ծրագրի իրականացման ընթացքի ընդհանուր վերահսկողության համար: Քաղաքապետարանը նաև պատասխանատու է աղբի/թափոնների կառավարման ծառայությունների համար, որը ներառում է շինարարական աղբի/թափոնների հավաքման և տեղադրման համար թափոնավայրեր հատկացնելու, ինչպես նաև տարածքի հետագա կանաչապատման համար:

Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակ

38. Երևանի քաղաքապետարանի ներքո ստեղծված Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակը (ԵԿՆԾԻԳ) պատասխանատու է ծրագրերի ամենօրյա կառավարման համար: Այն ղեկավարվում է լրիվ դրույքով աշխատող Ծրագրի տնօրենի կողմից: ԵԿՆԾԻԳ-ը ներառում է մասնագետներ հետևյալ ոլորտներում՝ ինստիտուցիոնալ, տեխնիկական, ֆինանսական, մոնիտորինգի և գնահատման, իրավական/պայմանագրերի կառավարման, գնումների, տարաբնակեցման, բնապահպանության, հասարակայնության հետ կապերի, ինչպես նաև օգնական/թարգմանիչ: ԵԿՆԾԻԳ-ի պարտականությունները ներառում են՝

Նախնական գնահատման հայտ

- I. գնումների պլանի պատրաստում և թարմացում,
- II. մրցույթների կազմակերպում, հայտերի գնահատում և պայմանագրերի շնորհում,
- III. պայմանագրերի կառավարում,
- IV. Տեխնիկական վերահսկողության (Ինժեների) գործողությունների կառավարում,
- V. վերահսկողություն,
- VI. որակի հսկողություն,
- VII. համապատասխան գործակալություններից հաստատումների և թույլտվությունների ձեռքբերում,
- VIII. Պայմանագրի շնորհման ժամանակացույցի պատրաստում և վարկի հատկացում՝ ըստ ԱԶԲ ուղեցույցների,
- IX. Կապալառուի կողմից իրականացվող մեղմացնող միջոցառումների ստուգում՝ ԲԿՊ-ում սահմանված կարգով,
- X. կանոնավոր կերպով կիսամյակային բնապահպանական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում ԱԶԲ-ին,
- XI. հանդիսանալ հասարակության հետ կապի օղակ՝ մտահոգությունների և բողոքների առնչությամբ,
- XII. փոխգործակցել Կառավարության և քաղաքային իշխանությունների, Ծրագրի կառավարման խորհրդատուների, ՀԿ-ների, քաղաքացիական հասարակության և Ծրագրի իրականացմամբ հետաքրքրված այլ շահագրգիռ կողմերի հետ՝ իրականացնելով պատշաճ խորհրդատվություն, արձագանքելով արտակարգ իրավիճակներին և ծանուցելով համապատասխան ղեկավար մարմիններին ողջամիտ ժամկետներում,
- XIII. տեղեկացված լինել ղեկավար մարմինների պահանջներին և օրենսդրության փոփոխություններին և արձագանքել համապատասխանաբար:

Մանրամասն նախագծման խորհրդատու (ՄՆԽ)

39. Խորհրդատուի հիմնական պարտավորությունները ներառում են՝

Նախագծային փուլում

- I. Մշակել մանրամասն նախագիծ Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված Կոնցեպտուալ (հայեցակարգային) նախագծի հիման վրա⁷,
- II. Իրականացնել ազդեցությունների գնահատում (ԱԳ) և պատրաստել ՇՄԱԳ հաշվետվությունը այդ թվում՝ Բնապահպանական կառավարման և մոնիտորինգի պլանը (ԲԿՊ), ինչպես նաև այլ պահանջվող փաստաթղթերը,
- III. Իրականացնել ՄՉՀ հետազոտություն և մշակել Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիրը,
- IV. Պատվիրատուին ներկայացնել ՇՄՆՈՒ հաշվետվությունը՝ ԱԶԲ-ի կողմից դիտարկման և հաստատման համար,
- V. իրականացնել անհրաժեշտ հանրային լուսումները՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ԱԶԲ և ՀՀ կառավարության միջև համաձայնեցված Բնապահպանական գնահատման և ուսումնասիրությունների շրջանակի (ԲԳՈՒՇ),

⁷ Հայեցակարգային նախագիծը (սկզբնական սխեմատիկ նախագիծը) մշակվել է ԱԶԲ-ի կողմից՝ հավաքակայանի նախագծման առաջատար մասնագետի և ենթակառուցվածքների նախագծման ավագ ինժեների ներգրավմամբ

Նախնական գնահատման հայտ

- VI. Իրականացնել Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և ըստ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի դիմել ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն՝ դրական եզրակացություն ստանալու նպատակով:

Տեխնիկական վերահսկողության խորհրդատու (Ինժեներ, որը տվյալ պահին ներգրավված չէ)

40. Ինժեների հիմնական առաջադրանքները ներառում են՝

Շինարարական աշխատանքների փուլում

- I. Ծրագրի շինարարության տեխնիկական վերահսկողություն, ներառյալ՝ ԲԿՊ-ի և ՇԲԿՊ-ի իրականացումը,
- II. ապահովել բոլոր աշխատանքների իրականացման լիարժեք համապատասխանությունը նախագծին և մասնագրերին, ինչպես նաև կիրառելի ազգային և միջազգային բնապահպանական, առողջության ու անվտանգության ստանդարտներին,
- III. կառավարել պայմանագրային փոփոխությունները, Կապալառուի հայտերը և վերանայումները,
- IV. մոնիթորինգի ենթարկել ծրագրի իրականացումը, օգուտները և ապահովել համապատասխանությունը սոցիալական բոլոր պահանջներին, ապահովել տարաբնակեցման ու բնապահպանական պահանջների, ճանապարհային անվտանգության, առողջության և անվտանգության, մոնիտորինգի իրականացումը՝ համաձայն համապատասխան անվտանգության փաստաթղթերի, ԱԶԲ Անվտանգության քաղաքականության և ՀՀ գործող օրենսդրության,
- V. աջակցել և ուղղորդել շինարարության Կապալառուին՝ ՇԲԿՊ և մանրամասն ՏԲԿՊ-ի մշակման գործում,
- VI. ապահովել ՇԲԿՊ-ի և ՏԲԿՊ-ների պատրաստումը շինարարության Կապալառուի կողմից,
- VII. հաշվետվություն ներկայացնել ԵԿՆԾԻԳ-ին:

Հետշինարարական փուլում

- VIII. մոնիտորինգի իրականացման նպատակով կատարել տեղամասային այցելություններ թերությունների վերացման ժամանակահատվածում:

Կապալառու

41. Կապալառուի հիմնական պարտավորությունները թվարկված են, սակայն սահմանափակված չեն ստորև թվարկվածով.

- I. Մշակել Շինարարական բնապահպանական կառավարման պլանը (ՇԲԿՊ)՝ որպես աշխատանքային շինարարական փաստաթուղթ, հիմնվելով սույն ՇՄԱԳ/ԲԿՊ հաշվետվության վրա՝ այդ թվում մեղմացնող միջոցառումների համար գնահատված բյուջեն, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ թարմացնել ՇԲԿՊ-ն շինարարության ընթացքում և ձեռք բերել Ինժեների հաստատումը թարմացված մասի վերաբերյալ,
- II. վարձել ամբողջ դրույքով աշխատող բնապահպանության մեկ մասնագետ և առողջության և անվտանգության մեկ մասնագետ կամ մեկ բնապահպան՝ առողջապահության և անվտանգության ոլորտի կրթությամբ, ինչպես նաև վարձել սոցիալական հարցերի մասնագետի, ինչպես սահմանված է մրցութային փաստաթղթերում,

Նախնական գնահատման հայտ

- III. Իրականացնել ՇԲԿՊ-ն՝ որպես պայմանագրի հատուկ մասի և հատուկ պայմաններ, ԲԿՊ-ի, ներառյալ՝ մոնիթորինգի տարբեր բաղադրիչների իրականացումը համաձայնեցնել Ինժեների հետ,
- IV. արտակարգ իրավիճակների և պատահարների դեպքում անհապաղ ծանուցել Ինժեներին և արտակարգ իրավիճակների հարցերով զբաղվող համապատասխան ղեկավար մարմիններին,
- V. համապատասխան մարմիններից ձեռք բերել թույլտվություններ և հաստատումներ և դրանց պատճենը տրամադրել Ինժեներին,
- VI. իրականացնել շիանրարական աշխատանքների կանոնավոր ինքնամոնիթորինգ և տրամադրել ուղղիչ միջոցառումների մասին հաշվետվություն,
- VII. պատրաստել բնապահպանական ծրագրի վերաբերյալ հաշվետվություն, ինչպես սահմանված է ՇՄԱԳ-ում:

Ասիական զարգացման բանկ

- 42. Ծրագրի ամբողջ շրջափուլի ընթացքում ԱԶԲ-ն կարող է իրականացնել պարբերական դիտարկումներ, ստուգումներ և ծրագրի վերահսկողություն՝ ԱԶՀ 2009 թ. սկզբունքներին և պահանջներին համապատասխան: ԱԶԲ-ն սոցիալական և բնապահպանական ազդեցությունների և ռիսկերի կառավարման գործում կաջակցի ԵԲ-ին՝ դրանով իսկ նպաստելով ներդրումների երկարաժամկետ կայունությանը: Այս նպատակով ԱԶԲ-ն միջոցներ կձեռնարկի, որպեսզի ծրագրի նախապատրաստման և իրականացման ընթացքում ԵԲ-ն հետևի ԱԶԲ-ի սոցիալական և բնապահպանական անվտանգության պահանջներին:
- 43. ԱԶԲ-ն նույնպես իր ներդրումը կունենա Ծրագրի մասին տեղեկությունների հրապարակման գործում, մասնավորապես՝ ՇՄՆՈԻ-ի և ԲԿՊ-ի, ինչպես նաև բնապահպանական մոնիթորինգի կիսամյակային հաշվետվությունների անգլերեն տարբերակները կայքում տեղադրելու միջոցով:
- 44. Ստորև թվարկված է պարտականությունների այն շրջանակը, որոնք ԱԶԲ-ն կիրականացնի ծրագրի տարբեր փուլերում:

Նախաշինարարական փուլում

- I. ուսումնասիրում է ծրագրի բնապահպանական զննության արդյունքները և վավերացնում է ծրագրի բնապահպանական դասը,
- II. ուսումնասիրում և հաստատում է ՇՄՆՈԻ-ն՝ «չեմ առարկում» ձևաչափով,
- III. հրապարակում է ՇՄՆՈԻ-ն ԱԶԲ-ի կայքում

Շինարարության փուլում

- IV. ուսումնասիրում է կիսամյակային հաշվետվությունները և ԵԿՆ ԾԻԳ-ին տրամադրում անհրաժեշտ խորհրդատվություն,
- V. իրականացնում է տարեկան բնապահպանական առաքելության ստուգայցեր

Հետշինարարական փուլում

- VI. ուսումնասիրում է հետշինարարական փուլի աուդիտի հաշվետվությունները:

- 45. Պետական մարմինները և նրանց դերակատարությունը, որ կարող են ներառվել Ծրագրում, հետևյալն են.

Նախնական գնահատման հայտ

Շրջակա միջավայրի նախարարություն

46. ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ) պատասխանատու է բնական ռեսուրսների պաշտպանության, կայուն օգտագործման, վերականգնման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի բարելավման համար: Այդ ոլորտներում ՇՄՆ ղեկավարությունը վերահսկում է ազգային քաղաքականության, շրջակա միջավայրի չափորոշիչների և ուղենիշների զարգացումը և դրանց կիրառումը: ՇՄՆ-ն այդ գործառնություններն իրականացնում է իր կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով: ԲՆ հիմնական ստորաբաժանումը, որը վարչական իշխանություն ունի ՇՄԱԳ-ի և ծրագրի հաստատման գործընթացի վրա «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ն է, որը պատասխանատու է գնահատման հաշվետվությունների դիտարկման և փորձաքննության եզրակացության կարծիք տրամադրելու համար, նաև՝ շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով լրացուցիչ պահանջների ներկայացման համար:
47. ՇՄՆ-ն նաև Կառավարության լիազոր մարմինն է թափոնների կառավարման ոլորտում՝ համաձայն «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի (24.11.2004 թ):

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

48. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը (ԲԸՏՄ) ՀՀ կառավարությանը ենթակա պետական մարմին է, որը պատասխանատու է ծրագրերի ստուգման համար՝ ապահովելով ծրագրի իրականացման գործընթացի համապատասխանությունը ՇՄՆ-ի կողմից սահմանված պայմաններին և Ծրագրի ԲԿՊ-ին:

Արտակարգ իրավիճակների նախարարություն (ԱԻՆ)

49. ԱԻՆ-ը պատասխանատու է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության աշխատանքների համակարգման համար, արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպման ու համակարգման համար, արտակարգ իրավիճակների դեպքում բնակչությանը տարհանելու և պատասպարման միջոցառումների կազմակերպման համար: ԱԻՆ-ը կազմակերպում է արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկ պարունակող ծրագրերի պետական փորձաքննություն՝ ապահովելով ցանկացած գործունեության տեխնոլոգիական անվտանգության կանոնների խստագույն կիրառումը:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (ՏԿԵՆ)

50. ՏԿԵՆ-ի էներգետիկայի վարչությունը պատասխանատու է տնտեսության էներգետիկայի ոլորտի կայուն զարգացման և անվտանգության համար, ներառյալ բնական գազի ոլորտը: Վարչության առաջադրանքների շրջանակը ներառում է նաև բնական գազի պաշարների արդյունավետության մեխանիզմների մշակումը:

Գ. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գ1. Ներածություն

51. Երևանի հասարակական տրանսպորտի համակարգը բաղկացած է միկրոավտոբուսներից, ավտոբուսներից, տրոլեյբուսներից և մետրոյի երթուղիներից: 2013թ. հանրային տրանսպորտի ցանցի հետազոտությունների միջոցով հավաքագրված ավտոբուսային ցանցի IPSC երթուղիության տվյալների և «Երևանտրանս»-ի տրամադրած տվյալների վերլուծության համաձայն

Նախնական գնահատման հայտ

միկրոավտոբուսների ուղևորների թիվը տարեկան կազմում է 63,4 մլն ուղևոր, և 104,7 մլն ուղևոր: 2013 թվականից ի վեր ավտոբուսային ցանցում տեղի է ունեցել մի քանի երթուղիների փակում, և երթևեկության տեղափոխում այլ ավտոբուսային երթուղիներ: Սա վկայում է այն մասին, որ Երևանի տրանսպորտային շուկայում օրվա գրեթե բոլոր ժամերին նկատվում է տրանսպորտային միջոցների պակաս (դեֆիցիտ), այսինքն՝ պահանջարկը գերազանցում է առաջարկը:

52. Սյուս կողմից՝ հասարակական տրանսպորտի ենթակառուցվածքը վերջին երկու տասնամյակում վատթարացել է ներդրումների թերանուցման պատճառով, ինչպես նաև տրանսպորտային միջոցների շարժակազմը հին է և սպասարկման որակը բավարար չէ՝ երթևեկության արագությանը կազմում է միջինում 16 կմ/ժ: Ներկայումս ուղևորների 85%-ը փոխադրվում են չտուբսիդավորված մասնավոր միկրոավտոբուսներով՝ չնայած թանկ ուղեվարձերին: Թեև միկրոավտոբուսները 1990-ականներին փրկեցին Երևանը տրանսպորտային ծանր ճգնաժամից, ներկայումս մեծ ու միջին ավտոբուսների դուրս մղման պայմաններում դրանք ստեղծում են քառասյին իրավիճակներ: Տրանսպորտային միջոցների գերծանրաբեռնվածության և երթևեկության խցանումների պատճառով ծառայության որակը չի բավարարում: Այս փոփոխությունը լուրջ վնաս է հասցրել հասարակական տրանսպորտի այլ տեսակների ֆինանսական կայունությանը և հանգեցրել է տրոլեյբուսի և մետրոյի ոլորտներում ներդրումների դժվարությունների, քանի որ ուղեվարձերը չափազանց ցածր են ընթացիկ և կապիտալ ծախսերը ծածկելու համար:
53. Հայաստանի կառավարությունն աշխատում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) հետ ավտոբուսների հնացած գործող շարժակազմը նորով փոխարինելու ուղղությամբ:
54. Սակայն ներկայիս իրավիճակը բարենպաստ չէ ոչ միայն քաղաքային ավտոբուսների շարժակազմի շահագործման առումով, այլ նաև ոլորտի աշխատակիցների աշխատանքի համար բարենպաստ պայմանների և սոցիալական հարցերի լուծման համար: Սեյսմիկ անվտանգության առումով առկա հավաքակայանների շենքերից շատերը աշխատավայրում լուրջ վտանգ են ներկայացնում: Հայաստանի կառավարությունը դիմել է ԱԶԲ-ին՝ օգտագործելու ՔԿՆԶԾ-ի վարկային միջոցները Երևանի Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի վերակառուցմանն նպատակով:
55. 2013-2017 թվականների ընթացքում հասարակական տրանսպորտի հիմնական պարամետրերի փոփոխության վերլուծությունը ցույց է տալիս, որ 2013 թվականի համեմատ 2017 թվականին երթուղիներում ցամաքային տրանսպորտի բոլոր երեք տեսակների օրական թիվը փոքր-ինչ նվազել է: Նոր ավտոբուսային ցանցի ծրագրով առաջարկվող ավտոբուսային ցանցը ներառելու է մոտ 50 ավտոբուսային երթուղի (տե՛ս Աղյուսակ Գ-1):

Աղյուսակ Գ-1: Երևանի նոր ավտոբուսային ցանցում նախատեսված տրանսպորտային միջոցների քանակը

Փոխադրամիջոցի չափը	Երթուղիների քանակը	Շարժակազմի քանակը	%
Հողակապավոր ավտոբուս (18 մ)	11	216	26,3%
Մեծ (12 մ)	3	29	3,5%
Միջին (8.6 մ)	31	488	59,5%
Տրոլեյբուս	5	87	10,6%
Ընդհանուր	50	820	100%

Գ2. Ծրագրի տեսակը

56. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիրը (ՔԿՆԶԾ) մշակվել է որպես Երևան քաղաքի գլխավոր հատակագծի լրացում՝ կայուն, ինտեգրված և տնտեսապես արդյունավետ քաղաքային տրանսպորտի համակարգի ստեղծմանը նպաստելու նպատակով՝ դրանով իսկ

Նախնական գնահատման հայտ

բարելավելու քաղաքային տրանսպորտի համակարգը Երևանում: Սա քաղաքաշինական ռազմավարության մի մասն է, որը ձեռնարկվել է ԵՔ-ի կողմից: Այս Ծրագիրն ընդգրկում է ճանապարհային քարտեզը, քաղաքականության շրջանակը և մինչև 2025 թ. ընկած ժամանակահատվածի համար ներդրումային ծրագիրը, որը բաղկացած է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողությունների պլաններից:

57. ՔԿԶՆԾ-ն ներառում է հետևյալ բաղադրիչները և ակնկալվող արդյունքները.

- I. Բաղադրիչ Ա. տրանսպորտի քաղաքային ենթակառուցվածքի ամբողջականացում, ընդլայնում, վերականգնում և բարելավում Հայաստանի քաղաքային վայրերում (ֆիզիկական ներդրում),
- II. Բաղադրիչ Բ. ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման պլան, համապատասխան համայնքներում քաղաքային տրանսպորտի ինստիտուցիոնալ և կառավարման կարողությունների հզորացմամբ, ներառյալ՝ կոնցեսիաները (ոչ ֆիզիկական ներդրումները),
- III. Բաղադրիչ Գ. Ծրագրի կառավարման համակարգ. խորհրդատվական ծառայություններով՝ ՔԿԶՆ Ծրագրի և ԲՖԳ ներքո բոլոր այլ հատուկ ծրագրերի իրականացման և կառավարման նպատակով (ոչ-ֆիզիկական ներդրումները):

58. Առաջարկվող Ծրագիրը մտնում է Ա բաղադրիչի մեջ, որը ներառում է հետևյալը⁸

- I. ճանապարհի և կամրջի կառուցում, քաղաքային ենթակառուցվածքի բարելավում,
- II. հասարակական տրանսպորտի ցանցի և ենթակառուցվածքի հիմնանորոգում և ընդլայնում:

Գ3. Ծրագրի տեղադիրքը

59. Երևանի քաղաքապետարանը նախատեսում է վերակառուցել Երևանի Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանը՝ Երևան ժամանող բնական սեղմված գազով (ԲՄԳ) լիցքավորվող շարժակազմը տեղակայելու համար: Ծրագրի վայրը՝ Երևան, Նոր Նորք, փ. Հ.Թևոսյան 9 հասցեյում ներկայումս գործող ավտոբուսային հավաքակայանի տարածքն է, որը գտնվում է Երևանի արևելյան մասում Ջրվեժում՝ Թևոսյան և Հովհաննիսյան փողոցների փոխհատման վայրում, (տե՛ս Նկար Գ-1, Հավելված Ե, Ենթահավելված Ե-4), Տեղագրագեոդեզիական կոորդինատներն ըստ ARMWGS-84 ազգային համակարգի հետևյալն են .

Աղյուսակ Գ-2. Տարածքի տեղադիրքի տեղագրագեոդեզիական կոորդինատները

	X	Y
1	8464405.2148	4450520.9209
2	8464279.1872	4450710.3549
3	8464419.8782	4450792.1426
4	8464504.4976	4450643.2158
5	8464727.4511	4450766.3190
6	8464740.1068	4450719.4750

⁸ <https://sudipyerevan.am/en/road-construction/>.



60. Ջրվեժի հավաքակայանում կտեղակայվի 200 ԲՍԳ ավտոբուս (12 մ երկարությամբ) 2-3 տարի ժամանակավոր իրավիճակով պայմանավորված ժամանակահատվածում՝ մինչև Շիրակի պողոտայի հարևանությամբ հավաքակայանի կառուցման ավարտը, և շուրջ 100 դիզելային ավտոբուս (8,6 մետր երկարությամբ): Ջրվեժի հավաքակայանը 2-3 տարի հետո ամբողջությամբ կվերակառուցվի (2-րդ փուլ), որտեղ երկարաժամկետ հեռանկարում կտեղակայվի 200-210 ավտոբուս:

Գ 4. Գոյություն ունեցող կառույցները

61. Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի ընդհանուր մակերեսը կազմում է մոտ **4,53901** հեկտար: Ներկայումս հավաքակայանում տեղակայված է շուրջ 250 ավտոբուս: Դրանց մեծ մասը 7,7 մ երկարությամբ միջին չափի ավտոբուսներ են: Դրանք են՝ մանուշակագույն «ՀԻԳԵՆ» ավտոբուսները և դեղին «Բոգդան» ավտոբուսները:
62. Ներկայումս հավաքակայանը ներառում է հետևյալ հարմարություններն ու կառույցները, որոնք ներկայացված են Նկար Գ-2-ում.
- 1) մուտք և ելք Թևոսյան փողոցի կողմից,
 - 2) վարչական շենք,
 - 3) տեխնիկական սպասարկման տարածք, որը ներառում է շուրջ 15 հոր,

Նախնական գնահատման հայտ

- 4) լվացման կայան,
- 5) լիցքավորման կայան,
- 6) ստորգետնյա պահեստ,
- 7) ավտոկայանատեղի,
- 8) շինություն, որը ծառայում է որպես կայանատեղի,
- 9) մուտք և ելք (չի օգտագործվում):

63. Հսկիչն իրականացնում է անվտանգության հսկողություն գլխավոր մուտքի մոտ՝ նախքան փոխադրամիջոցների առջև դարպասները բացելը: Լիցքավորման կայանը տեղակայված է շենքի մյուս կողմում: Այս տարածքում է գտնվում նաև վառելիքի ստորգետնյա պահեստը:

64. Գոյություն ունեցող որոշ կառույցներ/սարքավորումներ ներկայումս չեն օգտագործվում, օրինակ՝ հավաքակայանի տարածքի վերին հատվածում (բացօթյա կայանատեղի) գտնվող մուտքի/ելքի դարպասը, մուտքից հետո տեղակայված տեխնիկական հորը, գործածությունից դուրս եկած տրանսֆորմատորը և վարչական շենքի քայքայված մասը:

Նկար Գ-2. Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանի կառույցներն ու սարքավորումները ու.



Գ5. Աշխատանքների նկարագրությունը

65. ՄՆԽ-ի կողմից մշակված Ծրագրի մանրամասն նախագիծն անցել է պետական փորձաքննություն, որի համար տրվել է փորձաքննության եզրակացություն N 60-22 տրված 14

Նախնական գնահատման հայտ

մարտի 2022 թ., որի համաձայն որի նախագիծն երաշխավորվում է հաստատման (տես ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-3): Ներկայումս ընթանում է համալիր փորձաքննության գործընթացը:


66. Հայեցակարգային նախագիծը (սկզբնական սխեմատիկ նախագիծը) մշակվել է ԱԶԲ-ի կողմից՝ հավաքակալայանի նախագծման առաջատար մասնագետի և ենթակառուցվածքների նախագծման ավագ ինժեների ներգրավմամբ, և ԵՔ ԾԻԳ-ի կողմից տրամադրվել է ՄՆԽ-ին՝ որպես հիմք՝ մանրամասն նախագծման համար անհրաժեշտ բոլոր ուսումնասիրություններն իրականացնելու համար: Սակայն, սխեմատիկ նախագիծն ուսումնասիրելուց հետո ՄՆԽ-ի կողմից մշակվել և առաջարկվել է վերանայված հատակագիծ (մանրամասները տե՛ս Գլուխ Դ.1. Ծրագրի այլընտրանքները): Խորհրդատուի կողմից պատրաստվել է տեխնիկական հուշագիր, որն ամփոփում է սխեմատիկ նախագծի անհրաժեշտ փոփոխությունները: Վերջիններս քննարկվել և համաձայնեցվել են բոլոր կողմերի հետ:
67. Սույն Ծրագրի համար մանրամասն նախագիծը, այդ թվում՝ սույն ՇՄԱԳ/ԲԿՊ-ն մշակվել է Նախագծման խորհրդատուի կողմից և կներառվի մրցույթային փաստաթղթերում:
68. Ջրվեժի հավաքակալայանի աշխատանքների շրջանակը ժամանակավոր իրավիճակով պայմանավորված ժամկետում կսահմանափակվի հավաքակալայանի մասնակի վերակառուցմամբ (Փուլ 1-ին), որը հիմնականում կներառի ԲՄԳ լիցքավորման կայանի տեղադրման, լվացման կայանների, դիզելային վառելիքի լիցքավորման կայանների, հավաքակալայանի վերին մասում ավտոկայանատեղիների և ստորին մասում՝ ժամանակավոր կայանատեղիների կառուցման աշխատանքներով՝ գոյություն ունեցող որոշ կառույցների ապամոնտաժման հետ մեկտեղ: Շինարարական աշխատանքների վերջնական ավարտը նախատեսվում է 2-րդ փուլի ավարտին, ընդ որում նոր ավտոբուսների տեղակայման նպատակով Ջրվեժի հավաքակալայանի ժամանակավոր բարելավման աշխատանքները (Փուլ 1-ին) (մինչև Շիրակի հավաքակալայանի կառուցման ավարտը և շահագործման հանձնելը) կլինեն վերջնական և չեն փոփոխվի 2-րդ փուլի ընթացքում:
69. Այսպիսով, Ջրվեժի ավտոբուսային հավաքակալայանի վերակառուցման աշխատանքները կիրականացվեն 2 փուլով՝

1-ին փուլը ներառում է հետևյալ աշխատանքները (Գլխավոր հատակագիծը ներկայացված է Նկար Գ-3-ում) .

- i) որոշ կառույցների ապամոնտաժում,
- ii) նոր լիցքավորման կայանի կառուցում, որը բաղկացած էրկու մասից՝ ԲՄԳ լիցքավորման կայան և դիզելային վառելիքի լիցքավորման կայան,
- iii) նոր շենքի կառուցում ավտոբուսների լվացման կայանի համար,
- iv) Թևոսյան փողոցի կողմից նոր մուտքի կառուցում դեպի հավաքակալայանի տարածք, որը կծառայի որպես հիմնական մուտք և հին մուտքի վերակառուցում՝ վերափոխելով այն հիմնական ելքի,
- v) պարսպապատում
- vi) էլեկտրաէներգիայի մատակարարման ենթակալայանի տեղադրում,
- vii) գոյություն ունեցող ներքին ճանապարհների վերանորոգում,
- viii) կանաչապատում:

Նկար Գ-3. Ջրվեժի ավտոբուսային հավաքակալայանի վերակառուցման գլխավոր հատակագիծը

Նախնական գնահատման հայտ



i) Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանը զբաղեցնում է 45 3901 մ² տարածք, որից 12 262 մ²-ը **կապամոնտաժվի** 1-ին փուլի ընթացքում, քանի որ դրա մեծ մասը գտնվում է քայքայված վիճակում և ճի չի կարող շահագործվել: Ապամոնտաժման ենթակա կառույցներն են՝ որպես ավտոկայանատեղի ծառայող շինությունը, վերանորոգման/տեխասպասարկման օժանդակ կառույցների մեծ մասը, պարսպի մի հատվածը: Գոյություն ունեցող կառույցների ապամոնտաժման սխեման ներկայացված է Նկար Գ-4-ում:


ii) **Լիցքավորման կայան.** Կառուցվելու է նոր լիցքավորման կայան, որն ընդհանուր առմամբ կզբաղեցնի 1220 մ² տարածք և բաղկացած կլինի 2 հիմնական մասից (տե՛ս Նկար Գ-5):

➤ Փոխադրամիջոցներ դիզելային վառելիքի լիցքավորման կայան՝ 201 մ² ընդհանուր մակերեսով: Դիզելային վառելիքի լիցքավորման կայանը կունենա դիզելային վառելիքի պահեստավորման համար նախատեսված ստորգետնյա հոր և լիցքավորման դիսպենսերներ, որոնք ապահովված կլինեն լիցքավորման 2 բաշխիչ փողրակով՝ 2 ավտոբուսների միաժամանակյա լիցքավորման համար: Վառելանյութի բաքերը կտեղադրվեն պահեստային հորում (155 մ²), որն այնուհետև ծածկվելու է հողաձածկությամբ:

Նախնական գնահատման հայտ

- ԲՄԳ լիցքավորման կայանն ընդհանուր առմամբ կզբաղեցնի 466 մ² տարածք, որն իր հերթին բաղկացած կլինի երեք հիմնական մասից՝ կոնկրետորների տեղակայման համար նախատեսված տարածք (239 մ²), 6 լիցքավորման դիսպենսեր և ԲՄԳ-ի չորացման և պահեստավորման հարթակ:


Նկար Գ-4. Ապամոնտաժման ենթակա կառույցները⁹



Նկար Գ-5. ԲՄԳ-ի և դիզելային վառելիքի լիցքավորման կայանի հատակագիծը

⁹ Ապամոնտաժման ենթակա կառույցները նշված են վարդագույնով

Նախնական գնահատման հայտ



- Ըստ նախագծի՝ միջին ճնշման գազը խողովակով մուտք է գործելու նախնական կուտակիչ և ֆիլտրերով համալրված գազատար սարքերով անցնելուց հետո մատակարարվելու է կոմպրեսորներին: Ընդհանուր առմամբ՝ կայանում կտեղադրվի 5 կոմպրեսոր (4+1 պահուստային)՝ յուրաքանչյուրը 1200 M/h հզորությամբ (Նկար Գ-6):

Նկար Գ-6. Գազի կոմպրեսոր



Գազի կոմպրեսորները համալրված կլինեն գազի ճնշումը կարգավորող ավտոմատ կառավարման համակարգերով, որոնք անսարքության դեպքում կդադարեցնեն կոմպրեսորի աշխատանքը: Այդպիսի շեղումների թվին են պատկանում հովացման դադարեցումը, յուղերի ճնշման անկումը, գազի բարձր կոնցենտրացիան,

Նախնական գնահատման հայտ

Էլեկտրականության համակարգում խափանումները, գազի սեղմման պարամետրերի աստիճանները անհամապատասխանությունը պահանջներին:

- Յուրաքանչյուր կոմպրեսորի համար նախատեսվելու է նաև օդը չորացնող սարք (Նկար Գ-7): Կոմպրեսորներով անցնելուց հետո բարձր ճնշման գազը կհովացվի օդի հովացման սարքերում և կմատակարարվի օդը չորացնող սարքերին:
- Չորացրած գազը կուտակվելու է 400 լ ընդհանուր հզորությամբ 40 *ստորգետնյա կուտակիչներում*, որտեղից այն կմատակարարվի լիցքավորման կետեր (Նկար Գ-8): 200 ավտոբուսները կվերալիցքավորվեն միաժամանակ, ինչի համար ընդհանուր առմամբ կպահանջվի 33600 M/h մեթան գազ (200x168): Արագ լիցքավորման համակարգի արտադրողականությունը հիմնականում կախված է պահեստավորման մեծությունից (տարողությունից): Ջրվեժի հավաքակայանի համար (200 ԲՄԳ ավտոբուս) նախատեսվում է նվազագույնը 80 տ գազի պահեստավորում: Այն ապահովում է 250 բար ճնշման պայմաններում 500մ³ գազի պահեստավորման հզորություն: Երբ պահեստը դատարկ է կամ լիցքավորման ընթացքի մեջ է, այն պետք է վերալիցքավորվի կոմպրեսորների միջոցով: Նշանակում է, որ ավտոբուսային հավաքակայանում արագ լիցքավորման համակարգի արտադրողականությունը հիմնականում կախված է կոմպրեսորների աշխատանքային արտադրողականությունից, այլ ոչ թե պահեստային հզորությունից:

Նկար Գ-7. Օդը չորացնող սարք



Նախնական գնահատման հայտ

Նկար Գ-8. Պահեստային մաս («22երի դարակ»՝ 1 800 լ, 250 բար)



- Լիցքավորման կայանում նախատեսվում է 6 ԲՍԳ դիսպենսեր աշխատանքային ժամերին արագ լիցքավորման համար՝ (Նկար Գ-9):

Նկար Գ-9. Արագ լիցքավորման կայան՝ դիսպենսերներով



- Լիցքավորման կայանի տարածքում կտեղադրվեն նաև օդամղիչներ՝ յուրաքանչյուր դիսպենսերի մոտ երկուական:
- Լիցքավորման կայանը ապահովված է լինելու ծածկով և հագեցած լինելու հրդեհաշիջման սարքերով:

iii) Փոխադրամիջոցների լվացման տարածք

Ավտոբուսների արտաքին լվացումը լինելու է մեխանիզացված և հնարավորություն է տալու լվանալ ավտոբուսի բոլոր մակերեսները, այսինքն՝ ավտոբուսի կողքերը, վերևի և ներքևի մասերը: Նախատեսվել է ամբողջությամբ մեխանիզացված լվացման համակարգ՝ պորտալ սարքավորումներով: Ձմեռային ցուրտ ջերմաստիճանով պայմանավորված՝ լվացման տարածքը կփակվի բազմաշերտ (սենդվիչ) պանելային պատերով: Դժվար հասանելի մասերը, օրինակ՝ մեքենայի հատակային հատվածի մաքրումը կկատարվի ձեռքով՝ ճկուն խողովակների միջոցով:

Լվացման կայանը նախատեսված է 5 ավտոբուսի միաժամանակյա լվացման համար: Նախատեսվել է 5 լվացման կետ (մեկ լվացման կետի մակերեսը՝ 7մ X 13մ= 125 մ2)՝ յուրաքանչյուր ավտոբուսը շաբաթական մեկ անգամ լվանալու համար: Լվացման կետերի անհրաժեշտ քանակը որոշվել է՝ 1 լվացման կետ 40 ավտոբուսի համար հաշվարկով:

Փոխադրամիջոցների լվացման համար օգտագործվելու է երկրորդային ջուր. անձրևաջրերը կուղղվեն ջրի մաքրման կայան, որտեղից այն կօգտագործվի ավտոբուսների լվացման համար, ինչպես նաև 85% ջրի վերադարձի համար դիտարկվել են ջրի վերացիկլավորման համակարգերը: Նախատեսվում է կենտրոնացված կոյուղատար համակարգ:

Ավտոբուսների լվացման կայանի տեղադիրքը ներկայացված է Նկար Գ-3-ում:

iv) Մուտքի / ելքի հատված

Հավաքակայանի վերին մասում կստեղծվի մեկ նոր մուտք՝ Թևոսյան փողոցից մուտք գործելու հնարավորությամբ: Գոյություն ունեցող մուտքը կվերափոխվի գլխավոր ելքի:

Ե՛վ մուտքը, և՛ ելքը կունենան 10 մ լայնություն, տեղակայված կլինեն դեպի հավաքակայան տանող հիմնական մոտեցման ճանապարհի վերջնակետերում: Յուրաքանչյուր մուտքի և ելքի

Նախնական գնահատման հայտ

համար նախատեսվում է երկու երթուղիների գոտի, որպեսզի ավտոբուսները կարողանան մուտք գործել և դուրս գալ Թևոսյան փողոցի երկու ուղղություններով:

Ավտոբուսների մուտքի դարպասը լինելու է RFID (ռադիոհաճախականության նույնականացում) սարքավորված անցակետով: Անցակետը մեկ հարկանի շինություն է, որը զբաղեցնում է 14.7 մ² տարածք:

Ավտոբուսների երթուղիները օպտիմալացնելու համար նախատեսվում է առանձին ելք, որը նույնպես սարքավորված է լինելու ելքի համար նախատեսված RFID կապով:

Անձնակազմի և այցելուների համար նախատեսվում է ավտոբուսներից առանձնացված մուտքի/ելքի մեկ դարպաս, ինչպես նաև ավտոբուսի մուտքի/ելքի տարածքում առանձնացվելու է անվտանգության անձնակազմի համար նախատեսված հատուկ սենյակ՝ Փուլ 2-ի ընթացքում դեպի վարչական մասնաշենք և կայանատեղի մուտք ապահովելու համար:

v) Ներքին ճանապարհների վերանորոգում

Կիրականացվեն շուրջ 12360 մ² մակերեսով ներքին ճանապարհների վերակառուցման և պատվածքի աշխատանքներ:

vi) Պարսպապատում

Հավաքակայանի տարածքը ամբողջ պարագծով պարսպապատված կլինի, որից 582.7 մ-ը կքանդվի և նորից կվերակառուցվի 1-ին փուլի ընթացքում: Նոր պարիսպը կկառուցվի դեկորատիվ բետոնե բլոկներից, որոնք տեսանելիության վրա կունենան նվազագույն ազդեցություն: Պատի բարձրությունը գետնից կլինի 2,6 մ: Այս պատը կծառայի նաև որպես աղմկապաշտպան պատնեշ՝ աղմուկը նվազեցնելու համար:

vii) Էլեկտրամատակարարման սարքավորումներ

Խորհրդատուն նախագծել է նաև տեղամասի համար պահանջվող էլեկտրականության պայմանները՝ էլեկտրական միացումները, տրանսֆորմատորները և լուսավորության, սարքավորումների և այլնի համար ենթակառուցվածքները: Նախատեսված է ընդհանուր էլեկտրամատակարարման ենթակայան հավաքակայանի տարածքում, որը մատակարարելու է առնվազն հսկողության սենյակը և ուղեվարձի կառավարման սենյակը:

Ավտոբուսների լվացման կայանի, գազի և դիզելային վառելիքի լիցքավորման կայանի աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ է նոր ենթակայան: Տարածքում նախատեսված է ընդհանուր էլեկտրամատակարարման ենթակայան՝ 2x2500 կՎԱ. 6 / 0,4 կՎ տրանսֆորմատորով, որը կզբաղեցնի է 72 մ² տարածք:

viii) Գոյություն ունեցող ներքին ճանապարհների վերանորոգում

Ընդհանուր առմամբ՝ կվերանորոգվեն 12360 մ² մակերեսով գոյություն ունեցող ներքին ուղիներ. 1-ին փուլի ընթացքում կքանդվի հին ա/բ ծածկը և կկառուցվեն նոր ճանապարհներ: Ավտոբուսային հավաքակայանի մակերեսն ամբողջությամբ կվերանորոգվի 2-րդ փուլի ընթացքում:

ix) Կանաչապատում

Հավաքակայանը կանաչապատման տեսանկյունից գրավիչ տեսք կունենա: 1-ին փուլում նախատեսվում է կանաչապատել 1350 մ² ընդհանուր մակերեսով տարածք: Կանաչապատման նախագիծը (տե՛ս Հավելված Ծ-ում) զուգակցվելու է կանաչապատման տարածքի խնամքը նկարագրող պլանի հետ:

70. **Փուլ 2-ում** նախատեսվում են հետևյալ աշխատանքները.

i) Ավտոկայանատեղիի վերակառուցում

Կնախագծվի կայանատեղիի ավտոբուսների և անձնակազմի անձնական փոխադրամիջոցների համար (Փուլ 2): Ավտոբուսների կայանատեղին գտնվելու է մեկ հարթության վրա, և յուրաքանչյուր ավտոբուսի համար նախատեսված է կայանման տարածք:

- 12 մ երկարությամբ 200 ավտոբուսի համար նախատեսվում է 5մ X 15մ չափի կայանատեղի, երկու կայանված ավտոբուսների հետնամասերի միջև 2 մ տարածությամբ՝ «հետընթաց կայանման» ռեժիմով ԲՄԳ դանդաղ լիցքավորման սարքի համար.
- 18 մ երկարությամբ 132 ավտոբուսի համար կայանատեղին կլինի 5մ X 21մ չափով թողնելով «միջանցք»՝ նախատեսված «առաջընթաց կայանման» ռեժիմի համար: Ավտոբուսների համար առաջարկվում է 60 աստիճանի անկյունով կայանատեղիներ:
- Կայանատեղիի տարածքը ներառում է նաև 6 ԲՄԳ արագ լիցքավորման դիսպենսերներ,
- դանդաղ լիցքավորման ԲՄԳ դիսպենսերներ կայանատեղիի տարածքում՝ գիշերային վերալիցքավորման համար,
- անձնական փոխադրամիջոցների կայանատեղին նախատեսված է անձնակազմի 85 անդամի և այցելուների համար, յուրաքանչյուր կայանակետի մակերեսը՝ 2.5 մ x 5 մ՝ նախատեսված «հետընթաց կայանման» ռեժիմով 90 աստիճանի անկյունով կայանման համար: Անձնական փոխադրամիջոցների կայանատեղին տեղակայվելու է շահագործման տարածքից դուրս և ներառելու է բավարար կայանատեղիներ՝ անձնակազմի մեքենաների, մոտոցիկլետների և հեծանիվների համար: Շենքի մուտքերի մոտ նախատեսվում է նաև կայանատեղի հաշմանդամների համար:

ii) Տեխսպասարկման տարածքը

Շարժակազմի կանոնավոր սպասարկումն իրականացնելու համար նախագծվել է սպասարկման աշխատանքների 26 կայան՝ 6մ X 15 մ՝ 12 մ -ոց ավտոբուսների համար և 6մ X 21մ չափերով՝ 18 մ-ոց ավտոբուսների համար: Սպասարկման մեկ կետի մակերեսը (ներառյալ հորը) շուրջ 135 մ² է, իսկ սպասարկման տարածքը արողջությամբ կգրադեցնի շուրջ 1520 մ²: Ընդհանուր առմամբ՝ տարածքում անհրաժեշտ է մոտավորապես 8 հոր: Մուտքը դեպի հորեր կապահովվի ստացիոնար աստիճանավանդակի միջոցով, ինչպես նաև բոլոր հորերը փոխկապակցված կլինեն մեկ թեքահարթակով, ինչը տվյալ դեպքում կարևոր է:

Շուրջ 1670 մ² մակերեսով տարածք հատկացված է տեխսպասարկման աշխատանքների հսկողության աշխատակազմի գրասենյակի և հարմարությունների համար (մոտ 10 անձի համար): Վերահսկողություն իրականացնող անձնակազմի համար սպասարկման տարածքի հարևանությամբ տրամադրվում է 2 աշխատասենյակ: Այս աշխատասենյակները պաշտպանված կլինեն ադմուկից, սակայն սպասարկման տարածքը տեսանելի կլինի:

iii) Վերանորոգման սրահներ

Նախատեսված են առանձին սրահներ վերանորոգման աշխատանքների տարբեր տեսակների և բաղադրիչների համար՝ շարժիչների, փոխանցման տուփերի, օդափոխման համակարգով և գտիչով ներկման, պաստառապատման, անվաբացքի ուղղման և էլեկտրական

Նախնական գնահատման հայտ

սարքավորումների համար մեկական սրահներ՝ յուրաքանչյուրը պահեստավորման հնրավորություններով համապատասխան աշխատանքի պահեստամասերի համար: Տեխսպասարկման և վերանորոգման սրահների մոտակայքում նախատեսված են սանիտարահիգիենիկ պայմաններ (զուգարաններ, լվացարաններ և այլն):

iv) Տեխզնման տարածքը

Տեխզնման տարածքում անհրաժեշտ է համարվել ունենալ 2 հոր: Մուտքը դեպի հորեր կապահովվի ստացիոնար աստիճանավանդակի միջոցով: Հորերն ապահովված կլինեն հատուկ ջրահեռացման համակարգով:

Ամենօրյա տեխզնման համար նախատեսվում են հատուկ կետեր՝ համաձայն օպերատորի սպասարկման կանոնների:

Տեխզնման տարածքում հորերի անհրաժեշտություն չկա: Նախատեսվում է միայն անվտանգության ծառայության համար հատկացված տարածք՝ վարչական շենքին կից:

v) Պահեստային խցիկներ

Նախատեսված է մեկ խցիկ պահեստամասերի համար՝ առանձին հատվածներով հին և նոր անվադողերի, նավթի բաքերի, մնացած բոլոր պահեստամասերի և մանրադետալների համար, ինչպես նաև առնվազն մեկ պահեստային տարածք՝ ԲՄԳ-ով աշխատող մեքենաների և դիզելային տրանսպորտային միջոցների համար:

Նախատեսված է գործիքների պահեստ՝ աշխատանքային գործիքները համակարգված կերպով դասավորելու, անվտանգ պահելու համար: Գործիքների պահեստավորման սենյակի դասավորությունը լինելու է հարմարեցված գործիքների պարբերաբար հաշվառման և աուդիտ իրականացնելու համար:

vi) Վարչական աշխատասենյակներ

Գոյություն ունեցող վարչական շենքը չի քանդվելու, այլ կամրացվի սեյսմակայունության պահանջներին համապատասխան և ներսից կվերակառուցվի:

Հավաքակայանի ընդհանուր տարածքից մոտ 500 մ² մակերես է հատկացվել վարչական գրասենյակների և շինությունների համար: Վարչական շենքի առաջին հարկում տեղակայվելու են ընդունարանը և անվտանգության ծառայության տարածքը: Այս հարկում են գտնվելու հանդիպումների/հանրային խորհրդակցությունների/կոնֆերանսների դահլիճները: Վարչական աշխատասենյակները կտեղակայվեն առաջին հարկից բարձր: Նախատեսվել է դեկավար անձնակազմի համար երեք (3) սենյակ, և առնվազն տասնհինգ (15) աշխատասենյակ՝ տեխնիկական անձնակազմի համար: Աշխատանքային բացօդյա տարածքներ ևս տրամադրվելու են վարչական անձնակազմի համար: Փակ աշխատասենյակների և բացօդյա աշխատանքային տարածքների փաստացի քանակը համաձայնեցված է Երևանի ավտոբուսային ընկերության և ԻՄ/ՕԻԳ-ի հետ: Խորհրդակցությունների սենյակի հարմարությունները ներառում են նաև պատին ամրացված LCD տեսակի էկրան:

Գրասենյակային տարածքը ունենալու է նաև պատճենահանման մեքենաների սենյակ, գրասենյակային պարագաների պահեստ, բուֆետ և աշխատանքային ընդմիջման (լանջի) համար նախատեսված տարածք: Վարչական գրասենյակային տարածքը հագեցած է լինելու հակահրդեհային և արտակարգ իրավիճակների սարքավորումներով և դրանց պահուստային մասերի համար նախատեսված հատուկ պահեստներով, առաջին բուժ. օգնության և շենքի սպասարկման պարագաներով: Վարչական շենքի յուրաքանչյուր հարկում պետք է ապահովվեն որակյալ և համապատասխան չափի՝ արական և իգական սեռի համար նախատեսված սանհանգույցներ (զուգարաններ, լվացարաններ և այլն): Յուրաքանչյուր

Նախնական գնահատման հայտ

սանհանգույցում առնվազն մեկ զուգարան պետք է հասանելի լինի հաշմանդամների համար: Շենքերի ներքին կահավորումը ներառված չէ ներկա առաջադրանքի մեջ:

vii) Հսկողության սենյակ և ուղեվարձի կառավարման սենյակ

Վարչական շենքերի համալիրը ներառելու է նաև հատուկ սենյակներ շարժակազմի կառավարման և ուղեվարձի կառավարման համար:

Շարժակազմի կառավարման սենյակը ունենալու է նվազագույնը 6 աշխատանքային կայան: Սենյակի նախագիծը և առաստաղի բարձրությունը նախատեսված են մեծ էկրանով LCD մոնիտորների տեղադրման համար: Հսկողության սենյակը ունենալու է նաև համապատասխան տարածք՝ աշխատանքային կայանների վերահսկողությունն իրականացնող անձնակազմի համար: Առանձին սենյակ կհատկացվի ուղեվարձի էլեկտրոնային վճարման համակարգի մոնիթորինգի իրականացման համար: Այս սենյակը ունենալու է համապատասխան չափի աշխատանքային կայաններ ուղեվարձերի կառավարումն իրականացնող անձնակազմի համար: Հսկողության սենյակը և ուղեվարձի կառավարման սենյակը կունենան անվտանգ, հսկվող մուտքեր: Այս սենյակների հատուկ սարքավորումները մանրամասն նկարագրված են նախագծի Թողարկում 2.5-ում: Այս սենյակների համար սահմանված են բոլոր հաղորդուղիների միացումները (օրինակ՝ էլեկտրական, հեռահաղորդակցության) և դրանց գտնվելու տեղադիրքերը: ITS (խելացի տրանսպորտային համակարգեր) սարքավորումների տեխնիկական մասնագրերը կտրամադրվեն ԱԶԲ-ի խորհրդատուների կողմից:

viii) Վարորդի և ուղեկցորդի հարմարանքները

Տղամարդկանց և կանանց համար նախատեսված որակյալ կողպվող հանդերձապահարաններ են տրամադրվելու վարորդների, ուղեկցորդների և ավտոբուսային ընկերության այլ աշխատակիցների համար: Տրամադրված պահարանների թիվը պետք է բավարար լինի վարորդների և ուղեկցորդների առնվազն երկու ամբողջական հեթթափոխի համար 400 ավտոբուսի հաշվարկով: Նախագծված են արական և իգական սեռի համար նախատեսված որակյալ սանհանգույցներ (զուգարաններ, լվացարաններ և այլն), այդ թվում՝ հաշմանդամների համար նախատեսված զուգարաններ: Նախատեսված են նաև ճաշարանը և խոհանոցը: Ճաշարանը լինելու է հարմար վարորդների, ուղեկցորդների, ինչպես նաև վարչական անձնակազմի համար: Անձնակազմի համար տրամադրվելու են նաև հանգստի և ժամանցի հարմարություններ, ներառյալ հեռուստատեսության, սեղանի խաղերի սենյակ և ֆիզիկական վարժությունների և խաղերի դահլիճներ (օրինակ՝ սեղանի թենիս, բասկետբոլ և այլն): Անձնակազմի հանդերձարանները, հանգստի և ժամանցի տարածքները, սանհանգույցները և ճաշարանը լինելու են վարչական մասնաշենքի մուտքի հարևանությամբ և ունենալու են հավաքակայանից դուրս առանձին մուտք: Նախագծված է նաև անձնակազմի վերապատրաստման դասընթացների համար նախատեսված սենյակ, որը կարող է նաև ծառայել որպես խորհրդակցությունների դահլիճ, ինչպես նաև հաշվի է առնվել վարորդի համար նախատեսված ուսուցողական մոդել-մեքենան և դրա հետ կապված ծախսերը: Լվացաքատունը նախատեսված է հանդերձապահարանների սենյակի հարևանությամբ՝ համազգեստների լվացումը հեշտացնելու համար: Շենքերի ներքին կահավորումը ներառված չէ ներկա առաջադրանքի շրջանակում:

ix) Ջրահեռացման և ենթաջրահեռացման համակարգեր

Հավաքակայանի ջրահեռացման համակարգը նախագծված է այնպես, որ հավաքակայանը կարողանա գործել նույնիսկ արտասովոր եղանակային պայմաններում:

Նախնական գնահատման հայտ

x) Գոյուղատար և սանիտարական համակարգ

Գոյուղին և սանիտարական համակարգը նախագծված է տեղանքին համապատասխան: Նախագծված կոյուղատար համակարգը կմիացվի քաղաքային կոյուղատար համակարգին, որն անցնում է Թևոսյան փողոցով (տե՛ս Հավելված Ե-4):

xi) Հեռահաղորդակցության գծեր

Հավաքակայանը կապահովվի հեռախոսային մալուխներով և ինտերնետային կապուղիներով:

xii) Գոյություն ունեցող հաղորդուղիները

Հաղորդուղիների տեղափոխություն նախատեսված չէ:

xiii) Ներքին ճանապարհային ցանցի վերակառուցում

Հավաքակայանի տարածքում գտնվող բոլոր ճանապարհները, որոնք չեն վերակառուցվել 1-ին փուլի ընթացքում, կվերակառուցվեն 2-րդ փուլում:

xiv) Նշանների համակարգը

Հավաքակայանի մուտքի տարածքում կտեղադրվի մեծ լուսավորված վահանակ: Հաստատության տարածքում անհրաժեշտ կլինի նաև տեղադրել մի շարք նշաններ՝ տարբեր տարածքներ սահմանազատելու, հատուկ վտանգներ նշելու և այլնի համար: Խորհրդատուն մշակել է նշանների համակարգի լիարժեք պլան հավաքակայանի տարածքի համար:

71. Ավտոբուսային հավաքակայանի կառուցման համար իրականացվելու են ընդհանուր առմամբ հետևյալ շինարարական աշխատանքները.

- i. գոյություն ունեցող շինությունների ապամոնտաժում,
- ii. հողային աշխատանքներ/հանույթ (հողային աշխատանքների ընդհանուր ծավալը 22488.8 մ³ է, ներառյալ՝ 269.4 մ³ (1347 մ² x 0,20 սմ) բուսահողի շերտի հեռացումը,
- iii. լիցքի աշխատանքներ, որոնց ծավալը կազմում է 1033 մ³,
- iv. նախատեսված են հետևյալ կառույցները.
 - լիցքավորման կայանի կառուցում՝ 9670 մ²
 - լվացման կայան՝ 1920մ²
 - 1 անցակետ
 - էլեկտրական ենթակայան
 - դիզելային վառելիքի ստորգետնյա պահեստ, ԲՄԳ պահեստ
 - ջրամբարներ (քանակը և ծավալը կորոշվի Փուլ 2-ում)
 - ճանապարհի հենապատ
- v. Ջրամատակարարման համակարգի տեղադրումը ներառում է՝
 - 515.0 մ երկարությամբ ջրագծի տեղադրում
 - ջրագծերի դիտահորեր՝ 5 հատ
- vi. Անձրևաջրերի ջրահեռացման համակարգի տեղադրում
 - 410.0 մ երկարությամբ խողովակ
 - դիտահորեր՝ 5 հատ
- vii. Լվացման կայանի ջրահեռացման համակարգի տեղադրում
 - 380*600 մմ ջրահեռացման ցանց՝ 50 մ երկարությամբ, որը միացվում է համակարգին մաքրվելուց հետո
 - ջրի մաքրման և վերացիկավորման սարքավորում 5 մ³/ժ՝ 1 հատ,
 - կպչուն ժապավեն SKMR-100՝ նավթայուղերի հավաքման համար՝ 1 հատ,

Նախնական գնահատման հայտ

- ջրահեռացման պոմպ Grundfos Unilift AP 50.50.11.A1.V 1,6 / 1,1 կՎտ 1x230 B- 1 հատ:
 - viii. Ներքին ճանապարհային ցանցի կառուցում
 - ❖ գոյություն ունեցող ասֆալտի պատվածքի հեռացում՝ 5071 մ³
 - ❖ վերին (մաշման) շերտ, բարձր ծակոտկենությանը տաք ասֆալտ, տեսակ «A» ա/բ h=6սմ բիտումային հիմքով՝ 12360 մ²
 - ❖ տաք խոշորահատիկ ասֆալտ ա/բ h=10սմ - 12360 մ²
 - ❖ խճաքարի, կոպճավազի խառնուրդ C-6 40մմ, h=10 սմ – 1235.8 մ³
 - ❖ կոպճավազային խառնուրդ C-4 80մմ, h=100 սմ, E=180ՄՊա - 12360 մ²
 - ix. Լուսավորություն
 - 2595 մ երկարությամբ մալուխ
 - լուսավորության 167 ցինկապատ սյուն՝ LED լուսատուներով (215Վտ)
 - x. Ճանապարհի կառուցում և կահավորում
 - երկու մոտեցման ճանապարհի Թևոսյան փողոցի կողմից՝ մուտքի և ելքի համար
 - մայթեր՝ 1,5 լայնությամբ և 783 մ երկարությամբ
 - ճանապարհային նշանների տեղադրում. երթևեկության կազմակերպման և անվտանգության նկատառումներով նախատեսվում է 7 ճանապարհային նշան և 599.9 մ ընդհանուր երկարությամբ գծանշում
 - xi. կանաչապատում (Փուլ 1-ին) և ոռոգման համակարգ (Փուլ 2-ում)
 - 70 ծառի և 20 թփի տնկում
 - 10 նստարանի տեղադրում
 - 12 աղբամանի տեղադրում
72. Շինարարական աշխատանքների համար կիրառվող նյութերը հետևյալն են.
- լիցքի նյութ՝ կոպիճ և ավազ, հողային և ժայռային հանույթ
 - բետոն
 - ասֆալտ
 - բազմաշերտ (սենդվիչ) պանել
 - մետաղական ամրաններ՝ կառուցվածքների համար
 - մետաղական կառուցվածքներ և կցամասեր
 - ջուր՝ տեխնոլոգիական (տոփանում) և բնապահպանական (փոշու առաջացումը կանխարգելելու համար)
 - այլ (խողովակներ, լուսավորություն, պաստառներ և պողպատե արգելափակոցներ, ներկեր, քսանյութեր և այլն)

Դ. ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

73. ԱԶԲ Անվտանգության քաղաքականության հայտարարագիրը (2009)¹⁰, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը¹¹ պահանջում են հաշվի առնել ծրագրի իրագործելի այլընտրանքները ծրագրի տեղակայվածության և նախագծի առումով՝ թույլ տալով առաջարկվող միջոցներով խուսափել կամ կանխարգելել հավանական բնապահպանական ազդեցություններ:
74. Երևան քաղաքի առավել կայուն քաղաքային տրանսպորտային համակարգի ապահովման նպատակով, այդ թվում՝ նոր ավտոբուսների ժամանման պարագայում (փաստացի գտնվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ բանակցությունների փուլում (ՎՋԵԲ) Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման և սեղմված բնական գազի լիցքավորման կայանի կառուցման համար դիտարկվել են հետևյալ այլընտրանքային տարբերակները.

Կոնցեպտուալ (հայեցակարգային)

- «Զրոյական» կամ «ոչինչ չանել» այլընտրանք
- Նոր ավտոբուսային հավաքակայանի կառուցում
- Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի վերակառուցում

Նախագծային

- ԾԻԳ-ի կողմից տրամադրված նախնական սխեման
- «ԷԳԻՍ»-ի այլընտրանքային սխեման

Դ1. Կոնցեպտուալ

«Զրոյական» այլընտրանք

75. Կոնցեպտուալ տարբերակներից մեկը՝ «զրոյական» կամ «ոչինչ չանել» այլընտրանքն է, այն է՝ թողնել ներկա իրավիճակն այնպես, ինչպես կա: Այս տարբերակը մերժվել է սույն հաշվետվության Ա1 (Ծրագրի նախաբանը) և Գ. (Ծրագրի նկարագրությունը) պարբերություններում նշված մի շարք պատճառներով, որոնք հիմնավորում են նոր հավաքակայանի կառուցման անհրաժեշտությունը, այն է՝
76. Երևան քաղաքի տրանսպորտային համակարգում տրանսպորտային միջոցների պակասը (դեֆիցիտը).
- Ներկայումս Երևանում գործում է հինգ տրոլեյբուսային երթուղի: Գոյություն ունեցող տրոլեյբուսի շարժակազմը (79 տրանսպորտային միջոց) շատ հին է (9-10-ից մինչև 27-30 տարվա արտադրության), և նրանց շուրջ 20%-ը հնարավոր չէ օգտագործել դրանց վատ վիճակի պատճառով:
 - Միջին չափի ավտոբուսների (միդիավտոբուսներ) շարժակազմը կազմված է բացառապես ավելի փոքր դիզելային տիպի փոխադրամիջոցներից՝ 18-ից մինչև 22

¹⁰ ԱԶԲ ԱՔՀ (2009) Բնապահպանական երաշխիքների քաղաքականության սկզբունքները . Սկզբունք No 3, էջ 16, . <https://www.adb.org/sites/default/files/institutional-document/32056/safeguard-policy-statement-june2009.pdf>

¹¹ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, Հոդված 18, պարբերություն 2, ենթապարբերություն 5). <https://www.arlis.am/documentview.aspx?docid=91594>

Նախնական գնահատման հայտ

նստատեղով և կանգնած ուղևորներ տեղափոխելու սահմանափակ հնարավորությամբ: Այս փոխադրամիջոցներով սպասարկվում է 39 երթուղի՝ որպես անհատական կոնցեսիաներ:

- Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի հիմնական մասն են կազմում մասնավոր օպերատորների կողմից շահագործվող «ԳԱԶԵԼ» մակնիշի միկրոավտոբուսները: Ցանցի այս հատվածը ապահովում է ուղևորափոխադրումների մոտ 53%-ը: Գրանցված են մոտավորապես 1400-ից ավելի միկրոավտոբուսներ, սակայն մեծ հավանականությամբ օրական շահագործման մեջ գտնվող մեքենաների թիվը ավելի փոքր է:
- Բոլոր միկրոավտոբուսները փոխարկվել են սեղմված բնական գազով շահագործման համար: Այս տրանսպորտային միջոցների շուրջ 75%-ը 10 տարուց ավելի տարիք ունի: Նման ինտենսիվ շահագործման պարագայում այս տրանսպորտային միջոցների օգտակար ծառայության ժամկետը 5 տարուց քիչ է: Մեր դիտարկումները վկայում են, որ շարժակազմի մեծ մասը գտնվում է անմխիթար վիճակում, հղի են թերություններով, որոնք կարող են հանգեցնել անվտանգության խնդիրների:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ շահագործման համար պիտանի տրանսպորտային միջոցների քանակը սահմանափակ է: Օրվա գրեթե բոլոր ժամերին Երևանի տրանսպորտային համակարգում առկա է տրանսպորտային միջոցների պակաս, այսինքն պահանջարկը գերազանցում է առաջարկը, ինչը հանգեցնում է գերժանրաբեռնվածության:

77. Վատթար վիճակում գտնվող տրանսպորտային ենթակառուցվածքներ. տրանսպորտային միջոցների շարժակազմը հին է և դրանց պատշաճ պահպանում/սպասարկում չի իրականացվում.

- Գոյություն ունեցող տրոլեյբուսի շարժակազմը (79 տրանսպորտային միջոց) շատ հին է (9-10-ից մինչև 27-30 տարվա արտադրության), և դրանց շուրջ 20%-ը հնարավոր չէ օգտագործել անմխիթար վիճակի պատճառով:
- Միջին չափի ավտոբուսներից, միայն «Higer» մակնիշի ավտոբուսների (249 փոխադրամիջոց՝ միջինում 4-6 տարվա արտադրության) օգտակար ծառայության ժամկետը չի սպառվել: «Hyundai» և «Jijiang» ավտոբուսները նպատակահարմար չեն քաղաքային ավտոբուսային ցանցում ինտենսիվ շահագործման համար:
- Միկրոավտոբուսների մոտ 75% -ը 10 տարեկանից բարձր են: Նման ինտենսիվ շահագործման դեպքում այս տիպի մեքենաների անվտանգ շահագործման ժամկետը 5 տարուց պակաս է: Նրանք շարժվում են միջինում 16 կմ/ժ արագությամբ և մեծապես նպաստում են քաղաքային ճանապարհների երթևեկության խցանումներին:

Այսպիսով, շարժակազմի մեծ մասը, հատկապես միկրոավտոբուսները, գտնվում են շատ վատ վիճակում և կարող են ի հայտ գալ թերություններ, որոնք կարող են հանգեցնել անվտանգության խնդիրների:

78. Ծառայության որակը. սպասարկման որակը անբավարար է տրանսպորտային միջոցների գերժանրաբեռնվածության պատճառով:

79. Ավտոբուսային ոլորտի աշխատակիցների բարեկեցությունը.

Նախնական գնահատման հայտ

80. Պայմանները բարենպաստ չեն ինչպես քաղաքային ավտոբուսների շարժակազմի շահագործման առումով, այնպես էլ ոլորտի աշխատակիցների բարեկեցության համար: Մեյսմիկ անվտանգության առումով հավաքակայանի շենքերից շատերը աշխատավայրում լուրջ վտանգ են ներկայացնում:
81. Երևանի ավտոբուսային հավաքակայանների վարչական շենքերը և այլ առկա կառույցները սեյսմիկ անվտանգության առումով գտնվում են վատ վիճակում:
82. «Ոչ մի գործողություն» տարբերակը կենսունակ չի համարվում, քանի որ եղած պայմանները ժամանակի ընթացքում էլ ավելի կվատթարանան: Վերոնշյալ բոլոր հանգամանքները կարևորում են փոխադրամիջոցների շարժակազմի արդիականացման անհրաժեշտությունը ավտոբուսների նոր շարժակազմ ապահովելու նպատակով՝ հնացած գոյություն ունեցող շարժակազմը (ֆինանսավորվում է ՎՁԵԲ -ի կողմից) փոխարինելու համար, ինչն իր հերթին հանգեցնում է նոր և/կամ վերակառուցված և արդիականացված հարմարությունների անհրաժեշտության: Այսպիսով, Երևան քաղաքի տրանսպորտային համակարգի կառուցումն ու արդիականացումը դարձել է կենսական անհրաժեշտություն:

«Նոր ավտոբուսային հավաքակայանի կառուցում»

83. Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով դիտարկվել է Արշակունյաց պողոտայի և Շիրակի փողոցի փոխհատման հարևանությամբ նոր ավտոբուսային հավաքակայանի կառուցման այլընտրանքը: Այս տարբերակը գրավիչ էր մեծ քանակությամբ նոր ԲՄԳ ավտոբուսների տեղակայման տեսանկյունից: Նոր ավտոբուսային բազան կարող է կառուցվել ժամանակակից տեխնոլոգիական չափանիշներին և անվտանգության պահանջներին համապատասխան: Մյուս կողմից, նշված տարբերակն այս պահին համարվել է ոչ կենսունակ՝ հետևյալ պատճառներով.
 - ✓ նոր ավտոբուսային հավաքակայանի ծրագրի իրականացումը բավականին ժամանակատար է. շինարարական աշխատանքները կարող են տևել ավելի քան 2 տարի, ինչն ընդունելի չէ՝ հաշվի առնելով, որ նոր գնված ԲՄԳ ավտոբուսների առաջին շարժակազմն արդեն ժամանում է Երևան, և Ծրագրի իրագործումը հրատապ է,
 - ✓ առաջանում է նոր հողատարածքների օտարման և զբաղեցման անհրաժեշտություն:
84. Այնուհանդերձ, «Նոր ավտոբուսային հավաքակայանի կառուցում» այլընտրանքն ամբողջությամբ չի մերժվել. որոշվել է նոր ավտոբուսային հավաքակայան կառուցել Արշակունյաց պողոտայի և Շիրակի փողոցի փոխհատման հարևանությամբ Ջրվեժի հավաքակայանի վերակառուցմանը զուգընթաց:

«Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանի վերակառուցում»

85. Վերոնշյալ պատճառներից ելնելով և հատկապես հաշվի առնելով, որ Երևան ժամանող 100 ավտոբուսները տեղակայելու հրատապ անհրաժեշտություն և ժամանակային սահմանափակումներ են առաջացել՝ որոշում է կայացվել ընտրել մեկ այլ տարբերակ՝ «Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանի վերակառուցումը»: Նպատակը Շիրակի նոր հավաքակայանի շինարարության ժամանակահատվածում 200 ավտոբուսների ժամանակավոր տեղակայումն է:
86. Չնայած մի շարք սահմանափակումներին, որոնք չեն նպաստում այս տարբերակի ընտրության օգտին, այն է՝ շինարարության ընթացքում գոյություն ունեցող շարժակազմի ժամանակավոր տեղակայման համար տարածքի սահմանափակ լինելը, հին հավաքակայանի բազմաթիվ

Նախնական գնահատման հայտ

շենքերի և շինությունների ապամոնտաժման և քանդման աշխատանքների ընթացքում շինարարական տարածքը մեկուսացնելու և գործող շարժակազմի անվտանգությունն ապահովելու դժվարությունները, ինչպես նաև գործող և նոր ժամանած շարժակազմի վերջնական տեղակայման համար տարածքի սահմանափակությունը, այս այլընտրանքը գրավիչ է համարվել, քանի որ

- ✓ այն թույլ է տալիս համեմատաբար կարճ ժամանակահատվածում հիմնել գազի լիցքավորման կայան ԲՄԳ ավտոբուսների շարժակազմի համար,
- ✓ լինելով գործող հավաքակայան՝ Ջրվեժի հավաքակայանի տարածքն արդեն իսկ զբաղեցնում է որոշակի հողատարածք և նոր տարածքի հատկացման կարիք չկա, ինչը կարող էր բազմաթիվ բնապահպանական և սոցիալական ազդեցություններ, այդ թվում՝ հողի օտարման խնդիր առաջացնել :
- ✓ Վատթար վիճակում գտնվող կառույցները, որոնք ներկայումս իրական վտանգ են ներկայացնում ինչպես անձնակազմի, այնպես էլ այցելուների համար կվերակառուցվեն:
- ✓ Ավտոբուսային ձեռնարկության աշխատակիցների բարեկեցությունը զգալիորեն կբարելավվի:
- ✓ Վերակառուցված հավաքակայանի պլանավորումը և հատակագիծը կարող են ապահովել հավաքակայանի շահագործման անվտանգության բոլոր պահանջները՝ այդպիսով բարելավելով գոյություն ունեցող տրանսպորտային ենթակառուցվածքը:
- ✓ Հաշվի է առնվում և պահպանվում է ավտոբուսների «գրոյական վազքը» նվազեցնելու սկզբունքը:

Դ.2. Նախագծային այլընտրանքներ

Սկզբնական սխեմատիկ նախագիծը

87. Սկզբնական սխեմատիկ նախագիծը մշակվել և առաջարկվել է ԱԶԲ-ի կողմից՝ հավաքակայանի նախագծման առաջատար մասնագետի և ենթակառուցվածքների նախագծման ավագ ինժեների ներգրավմամբ, որը պետք է բավարար հիմք հանդիսանար մանրամասն նախագծի համար (տե՛ս Նկար Դ-1):
88. Նախագծման խորհրդատուն դիտարկել է այս սխեմատիկ հատակագիծը և եզրակացրել է, որ ԱԶԲ-ի կողմից մշակված հատակագիծն ընդունելի է, սակայն պետք է վերանայվի, քանի որ առկա են որոշ անհամապատասխանություններ Պատվիրատուի կողմից ՊՇ-ում նշված պահանջների և Նախագծման խորհրդատուի կողմից հավաքագրված ելակետային տվյալների միջև: Այս սխեմատիկ հատակագիծը պետք է վերանայվի որոշ առումներով:
89. Մասնավորապես, սկզբնական սխեմատիկ նախագիծն առաջարկում է 100 ավտոբուսի (12 մ) համար նախատեսված բացօթյա կայանատեղի հավաքակայանի տարածքի վերին հատվածում: Դրանցից 70-ը 60 աստիճանի անկյունով կայանատեղիներ են, իսկ 30-ը՝ 90 աստիճանի: Մյուս կողմից, եթե 90 աստիճանի անկյունով կայանումը ապահովում է առավելագույն արդյունավետություն տարածության օգտագործման առումով, ապա այն վարորդների համար դժվարացնում է մանևրումը և մեծացնում է վթարների ռիսկը, մինչդեռ 60

Նախնական գնահատման հայտ

աստիճանի անկյունով կայանումը բալանսավորում է տարածության օպտիմալացման և անվտանգության ապահովման սկզբունքները:

90. Գնահատվել է, որ ըստ հավաքակայանի առաջարկվող նախագծի՝ որոշակի փուլում ավտոբուսների կայանատեղիներում կառաջանա «գերբեռնվածություն»՝ ավտոբուսների ամբողջական շարժակազմը տեղավորելիս:
91. Սկզբնական սխեմատիկ հատակագծում մասնավոր փոխադրամիջոցների (անձնակազմի համար) համար կայանատեղի նախատեսված չէ: Այնուամենայնիվ, ելնելով այն ենթադրությունից, որ անձնակազմի 50%-ն օգտագործում է անձնական փոխադրամիջոց, անհրաժեշտ է մոտ 170 ավտոկայանատեղի՝ մասնավոր մեքենաների համար: Հավաքակայանը չունի բավարար կայանատեղիներ գոյություն ունեցող վարչական շենքի դիմաց:
92. Հավաքակայանի վերին հատվածի կայանատեղիի արևելյան կողմում առաջարկվում է տեղադրել դիզելային վառելիքի երկու բաք՝ յուրաքանչյուրը 50 000 լ տարողությամբ: Հաշվի առնելով թիրախային 200 դիզելային ավտոբուսները՝ ավտոբուսային հավաքակայանին շաբաթական ավելի քան 100 000 լիտր վառելիք է անհրաժեշտ: Եթե վառելիքի մատակարարումն իրականացվում է շաբաթական երկու անգամ, ապա երկու դիզելային վառելիքի բաքը բավարար է: Այնուամենայնիվ, պահեստի տարողությունը կարող է բավարար չլինել, եթե վառելիքը մատակարարվի շաբաթական միայն մեկ անգամ:
93. Վառելիքի լիցքավորման դիսպենսերները, որոնք հավաքակայանի տարածքում տեղակայված են մի քանի վայրերում, խնդրահարույց են: ԲՄԳ դիսպենսերների տեղադիրքը նախատեսելիս հաշվի չեն առնվել ՀՀ անվտանգության կանոնները՝ շենքերի միջև 60 մ անվտանգության գոտի պահպանելու վերաբերյալ: Ուստի հավաքակայանի արևելյան կողմում՝ մուտքի դարպասի մոտ առաջարկվող վայրը համապատասխան չէ:
94. Սխեմատիկ նախագծով առաջարկվում է թողնել լվացման տարածքը այնպես, ինչպես կա՝ միայն մեկ լվացման կայանով: Այնուամենայնիվ, լրացուցիչ կայանների անհրաժեշտություն կա՝ հնարավոր գերբեռնվածությունից խուսափելու համար:
95. Սխեմատիկ նախագծում նշված չէ տեխսպասարկման տարածքը: Ենթադրվում է, որ կպահպանվի գործող տեխսպասարկման տարածքը, որը գտնվում է վարչական շենքի մոտ: Ընդամենը ապահովված է ոչ բարվոք վիճակում գտնվող 15 սպասարկման կետ: Սպասարկման կետերը նախատեսված են գործող դիզելային ավտոբուսների համար և տարածքը չի ընդլայնվի լրացուցիչ 100 ԲՄԳ ավտոբուսի համար:
96. Հաշմանդամություն ունեցող կամ այլ հատուկ կարիքներ ունեցող անձանց համար մատչելիության/հասանելիության վերաբերյալ ոչ մի տեղեկատվություն չի տրամադրվել և որևէ հատուկ լուծում չի նախատեսվել:
97. Բնապահպանական երաշխիքների վերաբերյալ ոչ մի տեղեկատվություն չի տրամադրվել, և որևէ հատուկ լուծում չի նախատեսվել:
98. Սխեմատիկ նախագծում նշված է գոյություն ունեցող լիցքավորման կայանը՝ իր դիսպենսերներով, որոնք գտնվում են այլ վայրում:

Նախնական գնահատման հայտ

Նկար Դ-1. Ջրվեժի հավաքակայանի հատակագիծը՝ ըստ ԱԶԲ-ի սխեմատիկ նախագծի



99. Ամփոփելով՝ կարելի է համարել, որ ԱԶԲ-ի առաջարկած սխեմատիկ նախագիծը բարելավման կամ վերամշակման կարիք ունի:

«ԷԳԻՍ»-ի սխեմատիկ նախագիծը

100. Նախագծման խորհրդատուն հավաքակայանի համար մշակել է բարելավված սխեմատիկ նախագիծ՝ ընդունված նախագծային կոնցեպտուալ կանոնների հիման վրա: Սկզբնական սխեմատիկ նախագծի համեմատ հավաքակայանի չափերի և հատակագծի որևէ լուրջ փոփոխություն չի առաջարկվել: Այս տարբերակը համապատասխան է՝ հաշվի առնելով հավաքակայանի ժամանակավոր իրավիճակը, որն ամբողջությամբ կվերակառուցվի 2 կամ 3 տարի հետո:

101. Ժամանակավոր օգտագործման համար առաջարկվել է հավաքակայանի նոր հատակագիծ, որը մշակվել է՝ հաշվի առնելով, որ որևէ խոշոր ներդրում, ոչ մի նոր տեղադրված բաղադրիչ չպետք է խաթարի հավաքակայանի ամբողջական վերակառուցման հնարավորությունը: Ամբողջական վերակառուցումից հետո հավաքակայանի հատակագիծը մշակվել և ընդունվել է ԱԶԲ-ի և ԾԻԳ-ի կողմից (Ջրվեժի հավաքակայանի գլխավոր հատակագիծը, 29.06.2021թ.) և որոշվել է, որ ժամանակավոր իրավիճակը (Ծրագրի 1-ին փուլ) պետք է ներառի նաև հավաքակայանի այն բաղադրիչների վերջնական տեղադիրքերը, որոնք չեն հեռացվի կամ տեղափոխվի հավաքակայանի կառուցման ավարտական փուլում (Փուլ 2):

Նախնական գնահատման հայտ

102. Առաջարկվել են հավաքակայանի մի քանի հատակագծեր, տարբերակներ: Վերջնական հատակագիծն առաջարկվել և ընդունվել է (29.06.2021 թ.) (ներկայացված է Նկար Դ-2-ում) հետևյալ հիմնական սկզբունքներով.
- ✓ Ավարտական փուլում (Փուլ 2) նախագծվելու և կառուցվելու է հավաքակայանի վերին հատվածը՝ ներառյալ ավտոկայանատեղիները, ԲՄԳ արագ լիցքավորման կայանը և լվացման կայանները:
 - ✓ Գոյություն ունեցող որոշ հիմնական շենքեր կպահպանվեն ժամանակավոր իրավիճակի՝ 1-ին փուլի ընթացքում (վերին շենք, սպասարկման շենք, վարչական շենք) և կվերօգտագործվեն որպես ավտոբուսների կայանատեղի: Կքանդվեն միայն մի քանի կառույցներ, որոնք արդեն լքված վիճակում են:
 - ✓ Ամեն դեպքում անհրաժեշտ կլինի իրականացնել որոշ շինարարական աշխատանքներ՝ վերափոխելու հավաքակայանի ներքին մասում գտնվող շենքերը համապատասխան կայանատեղիների:
 - ✓ ԲՄԳ ավտոբուսները կկայանվեն բացօթյա կայանատեղիներում՝ կանխելու բնական սեղմված գազի հետ կապված ռիսկերի առաջացումը շենքում, որը պետք է հազեցած լինի անվտանգության հատուկ դետեկտորներով (համաձայն կանոնակարգերի):
 - ✓ Կկատարվեն շինարարական աշխատանքներ հավաքակայանի վերին մասի ավտոկայանատեղիների ճանապարհային պատվածքի վրա, ինչպես նաև հավաքակայանի ստորին մասի ավտոկայանատեղիների ժամանակավոր վերանորոգման աշխատանքներ:
 - ✓ Վարչական շենքը կպահպանվի և կվերանորոգվի 2-րդ փուլում:
 - ✓ Տեխնիկական սպասարկման շենքը կպահպանվի 1-ին փուլի ընթացքում այնքան ժամանակ, քանի դեռ սպասարկման նոր շենքը չի շահագործվել: 2-րդ փուլի ընթացքում կկառուցվի տեխնիկական սպասարկման նոր շենքը:
 - ✓ Կբարելավվի մուտքի թեքահարթակը հավաքակայանի վերին և ստորին մասերի միջև:
103. Հաստատված հատակագիծը ցույց է տրված Նկար Գ-3-ում: Այս հատակագիծը գերծ է վերը նշված թերություններից, և կան մի շարք առավելություններ՝ նախորդ այլընտրանքի համեմատ, այն է՝
- ✓ անվտանգության տեսանկյունից՝ բոլոր տրանսպորտային միջոցները՝ ինչպես ավտոբուսները, այնպես էլ անձնական փոխադրամիջոցները, կշարժվեն միակողմանի երթևեկության սկզբունքով՝ հետիոտնային ուղիների համար սահմանված կանոններով և երթևեկության կանոններով (կանգառներ, առաջնահերթություն խաչմերուկում և այլն),
 - ✓ անձնական փոխադրամիջոցների համար նախատեսվել է ավտոկայանման 211 տեղ,
 - ✓ երթևեկության կառավարման նոր պլանում հաշվի է առնվել մեկ մուտքի և մեկ ելքի դարպաս,
 - ✓ հավաքակայանի համար կնախատեսվի համակցված ԲՄԳ լիցքավորման լուծում (արագ լիցքավորում),
 - ✓ պահպանվում է 60 մ անվտանգության գոտի ԲՄԳ լիցքավորման կայանի և շենքերի միջև,

Նախնական գնահատման հայտ

- ✓ սպասարկման աշխատանքների կետեր՝ պարբերական սպասարկման համար, որոշ կետեր՝ օպերատորի կողմից ամենօրյա ստուգման համար: Տեխնոլոգիաների տարածքը ներառում է անվտանգության հսկողություն՝ վարչական շենքին կից հատկացված տարածքով:
- ✓ Բավարար տարածք՝ սպասարկման աշխատասենյակների և վարչական շենքերի համար:

Ե. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ե1. Ընդհանուր շրջանակը

104. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և ՇՄԱԳ հաշվետվության, այդ թվում՝ Բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) պատրաստումը, սկսվում է Ծրագրային տարածքի ֆիզիկական, կենսաբանական, հնագիտական-մշակութային և սոցիալ-տնտեսական միջավայրի վերաբերյալ տվյալների և տեղեկությունների հավաքագրմամբ և վերլուծությամբ: Ռեսուրսները (Ժամանակ և բյուջե) չվատնելու համար հավաքագրվում են միայն այն տվյալները, որոնք անհրաժեշտ են և օգտակար են ԱԳ հուսալի գործընթացի համար:
105. Ելակետային տվյալների և այլ տեղեկությունների հավաքագրման գործընթացն, իր հերթին, սկսվում է առկա տվյալների ուսումնասիրությունից: Կլիմային, տեղագրությանը, երկրաբանությանն ու հողերին, բնական պաշարներին, բուսական աշխարհին և սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերվող տվյալները ձեռք են բերվում պաշտոնական, հրապարակված և չհրապարակված աղբյուրներից: Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը (Հատոր 5, 2006 թ.) ելակետային տվյալների հիմնական աղբյուրն է, որը հետագայում համալրվել է այլ տեղեկատվական աղբյուրներով, ինչպիսիք են՝ Երևան քաղաքի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը (2017)¹², մասնագիտական ուսումնասիրություններն ու դաշտային հետազոտությունները, այդ թվում՝ ծրագրի շահառուներից ստացված տեղեկատվությունը: Վերջինս կարևոր է որպիսի հաշվի առնվեն այն բոլոր հանգամանքները, որոնք ըստ տեղի բնակիչների և այլ շահագրգիռ խմբերի, ինչպիսիք են՝ հասարակական կազմակերպությունները, կարևոր են շրջակա միջավայրի պահպանության համար:
106. Տվյալների վերաբերյալ պահանջները կողմնորոշված են շրջակա միջավայրի այն կողմերի վրա, որոնք կարող են ազդեցության ենթարկվել ծրագրի գործողությունների հետևանքով: Այս նպատակով մշակվել է տվյալների հավաքագրման պլան.

Աղյուսակ Ե-1. Տվյալների հավաքագրման պլան

ԱԲԸ	Բնապահպանական պարամետրերը	Տվյալների աղբյուրը	Արտաքին փորձագետ	Մոդելավորում
Օդի որակ	Կլիմա	ՀՀՇՆ (СНиП) II-7.01-2011 Շինարարական կլիմատոլոգիա	Կիրատելի չէ	Կիրատելի չէ

¹²<https://www.yerevan.am/uploads/media/default/0001/72/e7224f93ad7096478f9aadb96ba61ea0ca693c9.pdf>

Նախնական գնահատման հայտ

			Տվյալների ուսումնասիրություն	
	Փոշի Ծծմբի երկօքսիդ (SO2) Ազոտի երկօքսիդ (NO2)	ՀՀ ՇՄՆ-ի «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ	Տվյալների ուսումնասիրություն Օդի որակի հետազոտության մասնագետ	Շինարարության ընթացքում փոշու և գազի արտանետումների տարածման գնահատում և շահագործման փուլի համար կանխատեսումները
	Աղմուկ	Չափագրումներ	Ելակետային տվյալների տեղական մասնագետ	3D ձայնային մոդել ծրագրի աղմուկի ազդեցությունը գնահատելու համար Երկարաժամկետ կտրվածքում առանց աղմկապաշտպան պատնեշների երթևեկության պայմաններում Երկարաժամկետ կտրվածքում աղմկապաշտպան պատնեշների առկայությամբ երթևեկություն Աղմկապաշտպան միջոցառումների գնահատումը
	Թրթռում	Չափագրումներ	Տեղական փորձագետ ելակետային չափումների համար	Ազդեցության մոդելը, որը հիմնված է շենքի վրա թրթռման ազդեցության փոխանցման ֆունկցիայի եզրակացության վրա

Նախնական գնահատման հայտ

Էկոլոգիական ռեսուրսներ	Բուսական աշխարհ, ներառյալ ծրագրային տարածքում առկա ծառերը	Տարածման վայրերը և Կարմիր գրքում գրանցված լինելը, վտանգված և/կամ էնդեմիկ տեսակների մասին գրականության ուսումնասիրություն Տեղանքի դաշտային այցելություն՝ Օրագրի տարածքում շինարարական աշխատանքների խոչընդոտող ծառերը հաշվելու նպատակով	մասնագիտացված փորձագետ	Կիրառելի չէ
Հողերը	Բուսահող	Երկրաբանական հետազոտության հաշվետվություն	մասնագիտացված փորձագետ	Կիրառելի չէ
	Աղտոտված հողեր	Կիրառելի չէ	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
Սոցիալական համակարգեր Բնակելի տներ Ձեռնարկատիրական գործունեություններ	Սոցիալ-տնտեսական տվյալներ	Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը (Հատոր 5, 2006թ.) էլակետային տվյալների հիմնական աղբյուրն է, որը հետագայում համալրվեց այլ՝ հրապարակված և չհրապարակված տեղեկատվական աղբյուրներով Տեղանքի ուսումնասիրություն՝ դաշտային այցելության եղանակով	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
	ՀՕՏ գործընթացում ընդգրկված գույքը	Կադաստրային փաստաթղթեր	Նախագծման խորհրդատվական թիմ	Կիրառելի չէ
	Հեռահաղորդակցության մալուխների, ջրի, կոյուղու և գազի խողովակների, էլեկտրասյունների և էլեկտրալարերի, ջրահեռացման	Հաղորդուղիների ուսումնասիրություն, Խորհրդակցություններ սեփականատերերի/մատակարարների հետ, հանդիպումներ տեղի բնակչության հետ	Նախագծման խորհրդատվական թիմ	Կիրառելի չէ

Նախնական գնահատման հայտ

	համակարգերի առկայությունը			
Նյութական ռեսուրսներ	Լիցքի նյութը ձեռք կբերվի գրանցված քարհանքերից	Նոր քարհանքեր, բացահանքեր չեն բացվի	Կիրառելի չէ	Հաշվարկվել է շուրջ 1000-1200 մ ³
Հնագիտական և մշակութային ժառանգություն	Հնագիտական վայրեր Մշակութային ռեսուրսներ	Տվյալների ուսումնասիրություն Մշակույթի նախարարության տվյալները Տեղամասային դաշտային այցելություններ	Հնագետ	Կիրառելի չէ

Ե2. Մթնոլորտային օդի որակ

Կլիմա

107. Այս հատվածը ներկայացվում է Արաբկիրի մոնիթորինգի կայանի օդերևութաբանական տվյալների հիման վրա, որը տեղակայված է Թևոսյան պողոտայից մոտ 4 կմ հեռավորության վրա¹³: Հիմնվելով այս տվյալների վրա՝ տարածքը բնութագրվում է չորացմաբային կլիմայով և գտնվում է ՀՀ չափավոր տաք կլիմայական գոտում: Կլիման հիմնականում բնութագրվում է երկար, շոգ ամառներով և ցուրտ ձմեռներով: Միջին պարամետրերը հետևյալն են.

108. Կլիման հիմնականում բնութագրվում է երկար, շոգ ամառներով և ցուրտ ձմեռներով: Ամառային սեզոնը տևում է ավելի քան 4 ամիս՝ չոր և շոգ եղանակով: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը 8°C է, ամռանը՝ +22°C, ձմռանը՝ -7-8°C, բացարձակ առավելագույնը՝ +42°C, բացարձակ նվազագույնը՝ -31°C: Առանց ցրտահարության շրջանի տևողությունը 213-224 օր է: Օդի հարաբերական խոնավությունը ամռանը 44-45% է, ձմռանը՝ մինչև 70-80%:

109. Ամռանը փչող քամիները ուժեղանում են օրվա երկրորդ կեսին՝ երբեմն հասնելով 15-20 մ/վրկ-ի: Ձմեռները չափավոր ցուրտ են. մշտական ձյան ծածկույթ ամեն տարի չի առաջանում: Հունվարի միջին ջերմաստիճանը -4-6°C է, նվազագույնը՝ -31°C: Գարունը կարճատև է՝ անկայուն եղանակով: Աշունը բնութագրվում է մեղմ, արևոտ և հանդարտ եղանակով: Տարեկան միջին տեղումների քանակը 250-370 մմ է: Առավելագույն տեղումները լինում են մայիսին:

110. Կլիմայական հիմնական տարրերի տվյալները ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆՓԱՀԱՎԵԼՎԱԾ Է-1-ում: Միջին պարամետրերն ամփոփված են Աղյուսակ Ե-2-ում¹².

Աղյուսակ Ե-2. Կլիմայական պարամետրերը

Գայան	Օդի ջերմաստիճանը °C			Օդի խոնավությունը %		
	Միջին տարեկան	Տարեկան նվազագույն	Տարեկան առավելագույն	Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա միջինը (օգոստոս)

¹² ՀՀՇՆ (СННП) II-7.01-2011 Շինարարական կլիմատոլոգիա, (http://www.mud.am/lows/files/26_10_11_h.pdf)

Նախնական գնահատման հայտ

					միջինը (հունվար)		
Երևան «Արարկ իր»	11.5	Հունվարին՝ -21	Օգոստոսին՝ +41	61	69	35	
Տեղումները և ձյան ծածկույթը							
Կայան	Տեղումների քանակը			Չյան ծածկույթը			
	Մայիս ամսվա միջինը	Օրական առավելագույնը մայիսին	Տարեկան, մմ		10 օրվա առավելագո ւյնը, սմ	Տարվա ընթացքու մ ձյունածա ծկ օրերի թիվը	Սառեցմա ն առավելագ ույն խորությու նը, սմ
միջին ամսակ ան			օրական առավելագ ույն				
Երևան «Արարկ իր»	55	47	353	47	50	53	152
Քամի							
Կայան	Օդի միջին տարեկ ան ճնշում ը (hPa)	Ցերեկվա ժամերին պարբերականու թյունը ըստ ուղղությունների %	Միջին արագությունը՝ ըստ ուղղությունների , մ/վրկ	Ամսական միջին արագությու նը, մ/վրկ	Տարեկան միջին արագությ ունը	Ուժեղ քամիների օրերի թիվը	
Երևան «Արարկ իր»	889.7	29	1,9	1,9	2.0	30	
		Հունվար	Հունվար				
		Հյուսիս-արևելք	Հյուսիս Հյուսիս-արևելք				
			հարավ- արևմուտք				
		29	4,0				2,5
Ապրիլ Հյուսիս-արևելք	Ապրիլ հյուսիս						
32	5,7	2,6					
Հուլիս Հյուսիս-արևելք	Հուլիս Հյուսիս						
37	2,9	2,0					
Հոկտեմբեր Հյուսիս-արևելք	Հոկտեմբեր Հյուսիս						

111. Ինչպես ՀՀՇՆ (СННП) II-7.01-2011-ում ներկայացված, այնպես էլ չափագրումների արդյունքում ստացված (տե՛ս ստորև), օդերևութաբանական տվյալների ուսումնասիրությունը օգտագործվել է՝ չափված մեծությունների վրա դրանց ազդեցությունն ավելի ստույգ գնահատելու համար:

Փոշի, ծծմբի երկօքսիդ (SO₂) և ազոտի երկօքսիդ (NO₂)

112. Երևանը երեք կողմից շրջապատված է սարերով, ինչը խոչընդոտում է մթնոլորտում աղտոտիչների բնական ձևով ցրվելուն և, հետևաբար, հանգեցնում է օդում դրանց բարձր խտացումների: Օդի աղտոտիչների գոյացման հիմնական աղբյուրն ավտոմեքենաների արտանետումներն են, որոնք կուտակվում են ճանապարհացանցի ինտենսիվ շահագործման հետևանքով: Երևան քաղաքի գլխավոր հատակագծում գնահատված է, որ օդի աղտոտիչների շուրջ 95%-ն առաջանում է հասարակական տրանսպորտի շահագործումից:
113. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Ջրվեժի Թևոսյան փողոցում գտնվող ծրագրային տարածքը գտնվում է օդի «չափավոր» աղտոտվածության գոտում: Ստորև բերված Աղյուսակ Ե-3-ում ներկայացված են օդի աղտոտիչների խտությունները (փոշի, ծծմբի երկօքսիդ, ազոտի օքսիդ) որոնք չափվել են 2018 թ. երրորդ եռամսյակից սկսած՝ No 8 ստասիկ կայանում, որը տեղակայված է Նոր Նորք վարչական շրջանում՝ Գայի պողոտայում, որտեղ իրականացվում են շուրջօրյա ակտիվ չափումներ:
114. Աղյուսակը ներկայացնում է նաև օդի աղտոտիչների առավելագույն թույլատրելի մեծությունները՝ հիմնվելով բնակավայրերի մթնոլորտում սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի (ՄԹԿ) վերաբերյալ ՀՀ ստանդարտների վրա: Այս կայանում օդի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության թիվ 160-Ն «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՄԹԿ) նորմերի մասին» որոշման հիման վրա:
115. Նոր Նորք վարչական շրջանում՝ Գայի պողոտայում տեղակայված No 8 ՇՄՆ-ի օդի որակի մոնիթորինգի կայանների տվյալները հաստատում են, որ օդի միջին որակը մոտ է թույլատրելի կոնցենտրացիաներին և որոշ դեպքերում գերազանցում է դրանք:
- (i) Փոշի. համաձայն չափված ընդհանուր միջին տարեկան ցուցանիշների՝ փոշու աղտոտիչները չեն գերազանցել միջին օրական (0.15) ՄԹԿ-ն:
 - (ii) Ծծմբի երկօքսիդ (SO₂). 2018 թ.-ից մինչև 2021 թ. ծծմբի երկօքսիդի ցուցանիշները գերազանցել առավելագույն և միջին օրական ՄԹԿ-ն: չեն
 - (iii) Ազոտի երկօքսիդ (NO₂). 2018 թ.-ից մինչև 2021 թ. ընկած ժամանակահատվածում ազոտի երկօքսիդի չափված ընդհանուր տարեկան միջինը չի գերազանցել ՄԹԿ-ն, թեև 2020 թ.- ին No 8 կայանում գրանցվել է գերազանցում:
116. Բացի տրանսպորտային արտանետումների առաջացրած աղտոտումից, խոշոր անտառահատումները, որոնք տեղի են ունեցել տարածաշրջանում, քաղաքի սահմաններից հարակից վայրերում, ամառային չոր ամիսների ընթացքում առաջացնում են փոշու զգալի քանակություն: Տրանսպորտային արտանետումների, ինտենսիվ կառուցապատման, արդյունաբերական ձեռնարկությունների և անտառահատումների համատեղ ազդեցությունները բացատրում են Աղյուսակ Ե-3-ի արդյունքները:

Աղյուսակ Ե-3. Փոշու, ծծմբի երկօքսիդի (SO₂) և ազոտի երկօքսիդի (NO₂) խտությունները

Պարամետր	Կայան	2018	2019	2020	2021			Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա (մգ/մ ³)	
					Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Սահմանային միանգամյա	Միջին օրական
Փոշի								0.5	0.15
	N8	0.08	0.093	0.110	0.16	0.15	0.15		
Ծծմբի երկօքսիդ (SO ₂)								0.05	0.05
	N8	0.028	0.012	0.011	0.022	0.026	0.020		
Ազոտի երկօքսիդ (NO ₂)								0.085	0.04
	N8	0.012	0.013	0.042	0.022	0.035	0.028		

Տվյալները տրամադրվել է ՇՄՆ-ի «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Համաձայն ՀՀ կառավարության 02.02.2006 թ. թիվ 160-Ն «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմերի մասին» որոշման:

- 117. Ծրագրային տարածքի շրջակայքում Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի համար օդի էլակետային որակը գնահատելու նպատակով Նախագծման խորհրդատուի կողմից 2022 թվականի հունվարին իրականացվել է մոնիթորինգ՝ մասնագիտացված կազմակերպության ներգրավմամբ:
- 118. Մթնոլորտային օդի որակի հետազոտության վերաբերյալ հաշվետվությունը կներառվի ՇՄԱԳ-ում:

Ե3. Աղմուկ

- 119. Ներկայումս Երևանում աղմուկի հիմնական աղբյուրը համարվում է գործող քաղաքային տրանսպորտը (մոտավորապես 90%): Աղմուկի էլակետային միջավայրը հիմնականում բնութագրվում է ճանապարհային երթևեկության չափավոր աղմուկով Թևոսյան և Հովհաննիսյան փողոցների մերձակայքում:
- 120. Նախագծման խորհրդատուն ներգրավել է ակուստիկ ինժեներ, որի կողմից իրականացվել է ակուստիկ հետազոտություն՝ ծրագրային տարածքի աղմուկի մակարդակի ֆոնային (էլակետային) տվյալները հավաքագրելու և ճանապարհային ծրագրի ակուստիկ ազդեցությունը մոդելավորելու նպատակով: Աղմուկի հետազոտության վերաբերյալ հաշվետվությունը պատրաստվել է և կներառվի վերջնական ՇՄՆՈԲ-ում:
- 121. Էլակետային արժեքները համեմատվում են ՀՀ ստանդարտների և ՄՖԿ-ի ուղեցույցների հետ, որոնք ներկայացված են Աղյուսակ Ե-4-ում:

Աղյուսակ Ե-4. Աղմուկի սահմանային թույլատրելի արժեքները

№	Մենքերի և տարածքների նշանակությունը	ՀՀ ստանդարտները		ՄՖԿ ստանդարտները (ցերեկ/ գիշեր)
		Չայնի մակար- դակները Լա և ձայնի համարժեք մակար- դակները Լաէկվ դԲԱ La eq (ցերեկ/ գիշեր)	ՇՄԱ (ձայնի առավելագույն մակարդակը), դԲԱ (ցերեկ/ գիշեր)	
1	Աշխատատեղ	60	-	-
2	Բնակելի շենքերի, կլինիկաների, ամբուլատորիաների, հանգստյան տների, ծերերի և հաշմանդամների խնամքի տների, գրադարանների, մանկապարտեզների, դպրոցների և այլ կրթական հաստատությունների հարակից տարածքներ	55/ 45	70/ 60	55/ 45
3	Հյուրանոցներին և ցանկացած տեսակի հանրակացարաններին կից տարածքներ	60/ 50	75/ 65	55/ 45

122. Աղմուկի ուսումնասիրության շրջանակում կատարված չափագրումները տվյալներ են տրամադրում՝ գնահատելու ավտոբուսային հավաքակայանի շահագործման պոտենցիալ ակուստիկ ազդեցությունը տեղի բնակելի հատվածի, հյուրանոցների և այլ ձեռնարկատիրական հիմնարկների վրա: Արդյունքները համեմատվել են սահմանային շեմերի հետ (տե՛ս Գլուխ Զ. ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ):

Ե4. Թրթռումներ

123. Ներկա վիճակի թրթռման ուսումնասիրությունն իրականացվել է ակուստիկ և թրթռման ինժեների կողմից, որը ներգրավվել է Նախագծման խորհրդատուի կողմից՝ ծրագրային տարածքի թրթռման վերաբերյալ ֆոնային (ելակետային) տվյալները հավաքագրելու նպատակով:

124. Ֆոնային մակարդակը գնահատվել է 0,05 մմ/վ: Ճանապարհային երթևեկության հետևանքով գետնի ցնցումներն առաջանում են հիմնականում դինամիկ ուժերի պատճառով, որոնք կապված են ճանապարհի անհարթությունների հետ, ինչպիսիք են փոստրակները, բարձրությունները և այլն, որոնցով անցնում են մեքենաները: Ազդեցությունը գնահատվել է շինարարական աշխատանքների փուլի համար՝ հիմնվելով հետևյալի վրա՝

Նախնական գնահատման հայտ

- աղբյուրի և ընկալիչի միջև հեռավորությունը,
- շինարարության տեսակը,
- գրունտի վիճակը:

125. Կատարված չափագրումների տվյալների հիման վրա գնահատվել են Ծրագրի հնարավոր ազդեցությունները առողջության վրա: Արդյունքները համեմատվել են սահմանային շեմերի հետ (տե՛ս Գլուխ 2. ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

Ե5. Մակերևութային և ստորգետնյա ջրեր

126. Ջրային ցանցը տեղանքում թույլ է զարգացած: Հիմնական ջրային երակը Հրազդան գետն է և նրա ձախակողմյան վտակ Գետառը, որոնց ռեժիմն ամբողջությամբ կարգավորվում է տարբեր հիդրոտեխնիկական կառույցներով, ջրահոսքերով և ջրանցքներով:
127. Ծրագրի տարածքում և/կամ անմիջապես մոտակայքում չկան ջրային մարմիններ և ջրահոսքեր (գետեր, լճեր, ջրամբարներ, ռոտզման ջրանցքներ և այլն): Տեղամասի հյուսիսային կողմում առկա է ձորակ, որն այժմ ջրազուրկ է:
128. Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն-չորրորդական հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ, պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին, որոնք ֆոնդային հորատանցքերով մինչև 20.0 մետր խորությունը չեն բացահայտվել:
129. Սակայն հարկ է նշել, որ մակերեսային ջրերը ներթափանցելով գրունտային զանգվածների ավելի խորը տեղադրված շերտերի մեջ, կուտակվելով և զետեղվելով հրաբխային և լճային- այլուվիալ պալեոռելիեֆի խորդուբորդ մասերում, կարող են առաջացնել «թաքնված» ջրափոսեր, ջրակալված և խոնավացած տեղամասեր:

Ե6. Տեղագրություն, գրունտներ, երկրաբանություն, սելյամոլոգիա

130. Մանրամասն նախագծի մշակման ընթացքում ՄՆԻ-ի կողմից իրականացվել է ինժեներատեղաբանական հետազոտություն տեղանքի ռելիեֆի առանձնահատկությունների տեսողական գնահատման, երկրաբանական և ինժեներատեղաբանական վտանգավոր պրոցեսների և երևույթների բացահայտման նպատակով: Կատարվել են հետևյալ աշխատանքները՝ տարածքի ինժեներատեղաբանական տեղազննում, հորատանցքերի հորատում, գրունտներից խախտված և չխախտված կառուցվածքի նմուշների ընտրում, գրունտների ֆիզիկամեխանիկական հատկանիշների որոշում լաբորատոր պայմաններում, նախկինում տարբեր գիտաարտադրական և նախգծային հետազոտական կազմակերպությունների կողմից տվյալ և հարակից տարածքներում իրականացված ուսումնասիրությունների հաշվետվությունների հավաքում, ամփոփում և արխիվային նյութերի ընդհանրացում:

Տեղագրություն

131. Տեղագրական հանույթը կատարվել է լիցենզավորված մասնագիտացված «Ինֆորմուլա» ՍՊԸ-ի կողմից (Կադաստրային լիցենզիա՝ N0391): Հանույթն իրականացվել է ARMWGS84 կոորդինատային համակարգով և աշխատանքների ընդհանուր ծավալն ընդգրկել է 8 հա: Քարտեզագրումն իրականացվել է ֆոտոգրամետրական և ԱՏՀ

Նախնական գնահատման հայտ


մեթոդաբանությանն հիման վրա, իսկ հսկիչ կետերն օգտագործվել են ավելի ճշգրիտ թվային օրթոֆոտո խճանկար ստանալու համար: Նույնականացման նշանները դրվել են ամբողջ տարածքում, որպեսզի անօդաչու թռչող սարքի կողմից նկարահանված նկարներում նկատելի լինեն (կոորդինատները տես Աղյուսակ Գ-2):

132. Բոլոր աշխատանքները կատարվել են անվտանգության կանոնների պահպանմամբ: Հավաքագրված տեղեկատվությունը մշակելուց հետո ստեղծվել է օրթոֆոտո խճանկար՝ 2,5 սմ/պիքսելից պակաս թույլտվությամբ: Խճանկարի հիման վրա իրականացվել են քարտեզագրման աշխատանքներ: Բոլոր օբյեկտները ներառված են մեկ .dwg ֆորմատի ֆայլում՝ որպես կետ, տող և բազմանկյուն շերտեր: Քարտեզագրման աշխատանքներն ավարտելուց հետո ստեղծվել է տարածքի տեղագրական քարտեզը: Արդյունքները տրամադրվում են թվային ձևաչափերով՝ .dwg՝ CAD համակարգերի համար և .shp՝ GIS համակարգերի համար: Թվային օրթոֆոտո խճանկարի ձևաչափը .tiff է: Աշխատանքներն իրականացվել են DJI Matrice 210 RTK V2 GNSS դրոնով:

Աղյուսակ Գ-2 Տեղագրական հանույթի կոորդինատները

N	X	Y	Z
1	8464434.651819	4450559.272352	1372.31828
2	8464458.614447	4450566.962327	1372.238962
3	8464490.998156	4450575.845031	1373.55375
4	8464708.447863	4450743.823492	1377.756561
5	8464721.676433	4450731.831817	1378.045361
6	8464681.035136	4450711.405836	1377. 820135
7	8464641.279312	4450691.473362	1377.782207
8	8464599.532584	4450641.924518	1377.570161
9	8464558.615033	4450615.177207	1376.891485
10	8464491.700513	4450585.35808	1373.415862
11	8464437.889949	4450676.876183	1372.47099
12	8464436.289697	4450702.392698	1372.549019
13	8464445.930785	4450730.002717	1372.635824
14	8464398.477986	4450765.168205	1372.694386
15	8464319.572695	4450728.517986	1372.434546
16	8464310.565956	4450714.443346	1372.455159
17	8464290.232905	4450709.668181	1372.292454
18	8464338.902137	4450666.167953	1372.121657
19	8464384.919181	4450580.834894	1372.056364
20	8464400.031543	4450550.71896	1371.319441
21	8464423.159815	4450521.431792	1369.792958

Նկար Ե- 1. Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի տեղագրական քարտեզը



Երկրաբանություն

133. Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը գտնվում է Ջրվեժ-Նորք հրաբխային սարավանդի սահմաններում, էրոզիոնահողմնահարման լանջերի վրա, որոնք ունեն հյուսիսարևմտյան թեքություններ, մակերևույթի մեղմ և աննշան անկումներ: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1003.0-1005.0 մետրի սահմաններում:
134. Տեղանքի երկրաբանական կառուցվածքը և հետազոտված հատվածները բնութագրվում են Նեոգեն-չորրորդական հասակի հրաբխային առաջացումներով՝ բազալտ, անդեզիտ-բազալտ, հրաբխային խարամ, ավազ, մոխիր: Նշված կազմավորումները ծածկված են միջին Չորրորդականի հասակի հրաբխային տուֆերի փոքր հզորությամբ շերտերը, որոնք էլ եզրածածկված են բերվածքային առաջացումների շերտերով՝ կավային, ավազային և խոշորաբեկորային գրունտներ և տեխնոգեն առաջացումներ՝ լիցքային գրունտ: Հորատման աշխատանքների ընթացքում մինչև 2.0 մետր խորությամբ փորված հորատանցքերում բացահայտվել են միայն հրաբխային տուֆերը, բերվածքային և տեխնոգեն գրունտները:

Նախնական գնահատման հայտ

135. Տեղամասի ինժեներաերկրաբանական կառուցվածքում՝ 20 մ խորության վրա առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակները.
- Շերտ 1. լիցքային գրունտ՝ չպառկապնդված, խճա-մանրախճային կազմի, հազվադեպ մեծաբեկորներով, կավային և ավազային նյութի խառնուրդով մինչև 30%, ծածկված 0.1- 0.3 մետր հաստությամբ ասֆալտա-բիտումային ծածկով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.3-1.0 մետր:
 - Շերտ 2. կավավազ սպիտակահողային՝ բաց դեղնավուն, սպիտակավուն երանգով, կարբոնատացած, փոշենման ավազային նյութի խառնուրդով, մանրախճի, հազվադեպ խճի պարունակությամբ երի և փոշենման ավազների նրբաշերտերով և ոսպնյակներով, խճի հազվադեպ մեծաբեկորների պարունակությամբ մինչև 15%, գրունտը տեղ-տեղ ցեմենտացած է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-2.0 մետր:
 - Շերտ 4. մեծաբեկորային գրունտ՝ հրաբխային տուֆերից, նարնջագույն, դեղնավուն և դարչնագույն երանգով, միջին ամրության, տարածումը սահմանափակ է, բացահայտվել է միայն թիվ 1 և թիվ 2 հորատանցքում, բացահայտված հզորությունը՝ 1.0 մետր:
 - մինչև 15%, գրունտը տեղ-տեղ ցեմենտացած է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.3-0.5 մետր:
 - Շերտ 3. մանրախճային գրունտ կավավազա-ավազային խառնուրդով մինչև 40%, կարբոնատացած կավավազն
136. Ինժեներաերկրաբանական հետազոտությունը ցույց տվեց, որ այնպիսի վտանգավոր ֆիզիկաերկրաբանական գործընթացներ և երևույթներ, ինչպիսիք են կարստը, սողանքը, փլուզումը և այլն, ծրագրային տարածքում առկա չեն:

Սեյսմոլոգիա

137. Սեյսմատեկտոնական տեսակետից տարածքը գտնվում է Երևանի միջլեռնային վերադրված ճկվածքի սահմաններում՝ նրա կենտրոնական մասում: Համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյսմակտիվ մարզերից մեկը: Համաձայն ՀՀՄՆ II – 6.02.2006-ի՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ:
138. Միկրոսեյսմերով գրանցված տվյալներով ստացված արդյունքներից երևում է, որ տարածքի գրունտերի տատանումների գերակայող պարբերությունները գտնվում են 0.414-0.462 վրկ. տիրույթում: Տարածքի գրունտները համապատասխանում են սեյսմիկ 3-րդ կարգի¹⁴ գրունտներին:

Գրունտներ

139. Առաջարկվող Ծրագիրը գտնվում է Երևան քաղաքում՝ կառուցապատված արդյունաբերական վայրում, որը ՀՀ հողային ֆոնդում դասակարգված է որպես կատեգորիա 4)՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ 3) տրանսպորտի օբյեկտների:
140. Լինելով գործող ձեռնարկություն, Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի ողջ բնական միջավայրը ձևավոխվել է, որտեղ ամբողջությամբ հեռացվել է բուսահողը և ենթահողի ծածկույթի որոշ մասը: Ինժեներաերկրաբանական հետազոտությունը ցույց է տվել, որ բուսահողի շերտը առկա չէ, լիցքային գրունտը չպառկապնդված է՝ խճա-մանրախճային

¹⁴ ՀՀՇՆ 20.04 «ԵՐԿՐԱՇԱՐԺԱԴԻՄԱՑԿՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ», Աղյուսակ 3:

Նախնական գնահատման հայտ

կազմի, հազվադեպ մեծաբեկորներով, կավային և ավազային նյութի խառնուրդով մինչև 30%, ծածկված է 0.1- 0.3 մետր հաստությամբ ասֆալտա-բիտումային պատվածքով՝ շինարարական և կենցաղային թափոնների առկայությամբ:

141. Գոյություն ունեցող հավաքակայանի տարածքում կան փոքր կանաչ հատվածներ՝ դեկորատիվ ծառերով և թփերով, որոնք խնամվում են հավաքակայանի աշխատակիցների կողմից: Այդ փոքրիկ հատվածները ծածկված են բուսահողի շերտով, որի պիտանի ծավալը գնահատվում է մոտ 330 մ³:
142. Հողի հաջորդ շերտը սպիտակահողային կավավազ է, տեղ-տեղ սպիտակավուն և դեղնավուն երանգով, կարբոնատացած, փոշենման ավազային նյութի խառնուրդով, մանրախճի, հազվադեպ խճի պարունակությամբ մինչև 15%, գրունտը տեղ-տեղ ցեմենտացած է, լցանյութը՝ միջին խտության, սակավախոնավ:
143. Հավաքակայանի տարածքի գրունտների որոշակի աղտոտվածություն հնարավոր է՝ հաշվի առնելով հողօգտագործման բնույթը, և երբ վատթար վիճակում գտնվող մեծ թվով ավտոբուսների կենտրոնացման պայմաններում բացառված չեն վառելիքի, նավթի և քսայուղի արտահոսքը: Մյուս կողմից՝ Ծրագրով պայմանավորված այս կոնկրետ վայրերի հետ կապված ռիսկը համարվում է շատ ցածր, քանի որ ամբողջ տարածքը ասֆալտապատ է: ԲԿՊ-ում նախատեսվում է, որ շինարարության կապալառուն կիրականացնի հողի քիմիական վերլուծություն մինչև դրա վերջնական տեղավորումը:
144. Այնուամենայնիվ, Ծրագրի տարածքի մերձակայքում հողի աղտոտման հնարավոր որոշ աղբյուրներ բացահայտված են և առնչվում են հետևյալին.
- հարևանությամբ գտնվող բազմաթիվ ռեստորաններ և հյուրանոցներ,
 - կուտակված թափոններ (հիմնականում շինարարական թափոններ, օրինակ՝ ապամոնտաժված շինությունների մնացորդները՝ քար, մետաղ, պլաստիկ և այլն),
 - փոքր այգիներ և պարտեզներ, որոնք պատկանում են հարևան բնակիչներին և որտեղ կարող են օգտագործված լինել թունաքիմիկատներ:
145. Շինարարական աշխատանքների փուլում վառելիքի, յուղի (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն) քսայուղերի և այլ հեղուկ նյութերի թափոններով հողի աղտոտման որոշակի վտանգի և մեղմացնող միջոցառումների համար տե՛ս Գլուխ Զ. ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և Գլուխ Ը. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆը):

Ե7. Էկոլոգիական ռեսուրսներ

146. Բույսերի և կենդանիների, այդ թվում՝ հազվագյուտ և անհետացող տեսակների և դրանց բնական միջավայրի, պոպուլյացիաների օգտագործումը, վերարտադրությունը, պաշտպանությունը, պահպանումը և կառավարումը կարգավորվում են «Բուսական աշխարհի մասին» օրենքով (ընդունվել է 23.11.1999 թ.), «Կենդանական աշխարհի մասին» օրենքով (ընդունվել է 03.04.2000 թ.), Հայաստանի Կարմիր գրքով, ինչպես նաև Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր գրքով և ԲՊՄՄ վտանգված տեսակների Կարմիր ցուցակով, որտեղ նշված են բույսերի և կենդանիների այն տեսակները, որոնք կանգնած են գլոբալ ոչնչացման առավել մեծ ռիսկի առաջ և, այդ իսկ պատճառով առանձնացված են որպես խիստ վտանգված կամ խոցելի տեսակներ:

Նախնական գնահատման հայտ

147. Ծրագրի տեղանքը գտնվում է կառուցապատված արդյունաբերական վայրում, որտեղ հողերը հիմնականում մշակված են և առկա են դեկորատիվ բույսեր և մրգատու ծառեր: Այնուամենայնիվ, տարածքները հետազոտվել են «Բուսական աշխարհի հետազոտության» շրջանակում՝ հաշվի առնելով, որ նույնիսկ կառուցապատված տարածքներում բուսականությունը վերականգնում է իր բնապատմական բնույթը, որը խաթարվել է ռոտզման պակասի, բուսականության խնամքի դադարեցման պատճառով կամ ուղղակի ազատ տարածքներում:
148. Բուսական աշխարհի (ֆլորայի) հետազոտության իրականացման, ինչպես նաև շինարարության գործընթացին խոչընդոտող ծառերի տեսակներն ու քանակը որոշելու համար պայմանագիր է կնքվել մասնագիտացված «Բիո Գամա» ՍՊԸ- ի հետ: Բուսական աշխարհի կարևոր տեսակների հավանական առկայության վերաբերյալ կենսաբանական ելակետային պայմանները նկարագրելու համար կատարվել է տվյալների և գրականության ուսումնասիրություն և մի քանի տեղամասային այցելություն՝ Ծրագրի տարածքում Կարմիր ցուցակում ընդգրկված, վտանգված և/ կամ էնդեմիկ տեսակների առկայությունը որոշելու համար.
149. Կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը.
- ✓ գոյություն ունեցող գրականության և այլ հասանելի աղբյուրների ուսումնասիրություն,
 - ✓ տեղամասային այցելություններ,
 - ✓ տվյալների վերլուծություն և ֆոնային կենսաբանական վիճակի նկարագրություն
 - ✓ Կարմիր ցուցակում գրանցված և/կամ էնդեմիկ/վտանգված տեսակների ցանկի կազմում, որոնք հատուկ պաշտպանական միջոցների կարիք ունեն,
 - ✓ Ծրագրի շրջանակում հեռացվող ծառերի և թփերի տեսակների և քանակի որոշում,
 - ✓ ՇՄԱԳ/ԲԿՊ-ում ներառվող պաշտպանական միջոցառումների վերաբերյալ առաջարկներ.

Բուսական աշխարհի (ֆլորայի) հետազոտություն

150. Ուսումնասիրվող տարածքների դաշտային աշխատանքների ընթացքում հավաքվել է ծառերի, թփերի և խոտաբույսերի մոտ 30 նմուշ, դրանք չորացվել են, կազմվել են հերբարիումներ, այնուհետև կատարվել են տեսակների որոշման աշխատանքներ: Լաբորատոր ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտում: Համակարգչային «Excel» ծրագրով ստեղծվել է տվյալների բազա, որում ընդգրկվել են բույսերի տեսակային կազմը, ուսումնասիրվող տարածքում դրանց տարածվածությունը, կենսաձևերը, տնտեսական և այլ նշանակություն ունեցող՝ սննդային, համեմունքային, դեղատու, մեղրատու, կերային, դեկորատիվ, տեխնիկական տեսակները: Տեսակների վերաբերյալ տվյալների աղբյուր են հանդիսացել Հայաստանի ֆլորայի 11 հատորները (Флора Армении, 1954-2011), Հայաստանի բույսերի Կարմիր գիրքը (2010), Հայաստանի ջրաճահճային բուսականությունը (Բարսեղյան, 1990), «Կանաչ Հայաստան» ատլասը (2016) և այլն: Ծառաթփատեսակների որոշումների համար օգտագործվել են մի շարք հրատարակություններ (Հարությունյան, 1987; Деревья и кустарники СССР, 1951): Բույսերի գիտական անվանումները ճշտվել են՝ ըստ Ս. Չերեպանովի մեթոդական ձեռնարկի (Չերեպանով, 1995): Տեսակների վերաբերյալ տվյալների վերլուծության համար օգտագործվել

Նախնական գնահատման հայտ

է Լ.Բ. Մալիշևի ֆլորայի քանակական վերլուծության մեթոդը (Մալիշև, 1975). Բուսատեսակների գիտական անվանումները պարզաբանվել են Ն. Չերեպանովի մեթոդական ձեռնարկով (Չերեպանով, 1995 թ.):

151. Ուսումնասիրությունների ընթացքում հետազոտվել է ինչպես վայրաճ, այնպես էլ հավաքակայանի կանաչապատ տարածքի բուսականությունը՝ հիմնականում ծառերը: Ուսումնասիրությունների ընթացքում հետազոտվել են ինչպես դեկորատիվ (թույա, թեղի, հացենի, թխկի և այլն), այնպես էլ պտղատու (կեռասենի, բալենի, խնձորենի, ծիրանենի և այլն) ծառերը և թփերը: Ընդ որում հաշվվել են հասուն, կենսունակ կամ բերքատու առանձնյակները: Ավտոբուսային հավաքակայանի տարածքում իրականացված բուսաբանական հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ ուսումնասիրվող տարածքում բնական բուսականությունը բացակայում է: Ուսումնասիրված տարածքում հիմնականում աճում են դեկորատիվ ծառեր և թփատեր, որոնք Ջրվեժի գործող ավտոբուսային հավաքակայանի տարածքում տնկվել են կանաչապատման նպատակով: Այնուամենայնիվ, հատուկենտ հանդիպում են Երևանի ֆլորային բնորոշ որոշ տեսակներ, որոնք սակայն ներկայացված են մոլախոտային բուսականության տեսքով (օշինդր (*Mugwort*), շնախոտ (*Swallowworts*), սպանդ (*Harmel*), խոզանախոտ (*Foxtail*) և այլն):
152. Ուսումնասիրվող տարածքն ամբողջությամբ փոփոխություն է կրել արդյունաբերական յուրացման արդյունքում՝ գրեթե ամբողջ մակերեսը ասֆալտապատ է, բացառությամբ փոքր հատվածների, որտեղ աճեցվում է դեկորատիվ բուսականությունը:
153. Ոռոգման պակասի և բուսականության խնամքի դադարեցման պատճառով հավաքակայանի տարածքի անմշակ և լքված հատվածներում (հողատարածքի շատ փոքր հատվածներում) բուսականությունը տեղ-տեղ վերականգնել է իր սկզբնական բնույթը: Ուսումնասիրվող տարածքի բնական բուսականությունը հիմնականում քսերոֆիլ կիսաանապատային է, օշինդրի (*Artemisia fragrans*) առանձին բուսուտներով, որից սակայն բավականին քիչ տարածքներ են պահպանվել: Տարածված են նաև ինվազիվ ու էքսպանսիվ տեսակների մոլախոտեր՝ հազարատերևուկ սովորականը (*Achillea millefolium*), շնախոտ սուրը (*Cynanchum acutum*), խիժաճարճատուկ կնյունանմանը (*Chondrilla juncea*), տատաշ փոփոզը (*Tribulus terrestris*) և այլն: Հանդիպում են թելուկազգիների (Թալ թուրքմենական - *Atriplex turcomanica*, Թելուկ սպիտակ - *Chenopodium album*), լոբազգիների (Դառը բիան - *Goebelia alopecuroides*), խաչածաղկավորների (Նվարդակ լայնատերև - *Lepidum latifolium*), բարդածաղկավորների (Գեղավեր կամ Տատասկ սովորական - *Cirsium vulgare*), հացազգիների (Արվանտակ մատնաձև - *Cynodon dactylon*) և այլ ընտանիքների ներկայացուցիչներից կազմված մոլախոտային համակեցություններ:
154. Հավաքակայանի տարածքում հայտնաբերված բարձրակարգ անոթավոր բույսերի ընդհանուր 26 տեսակները պատկանում են 18 ցեղի, 13 ընտանիքի, 2 բաժնի, 2 դասի, որոնցից 17-ը՝ դեկորատիվ, իսկ 9-ը պտղատու ծառաթփային տեսակներ են:
155. Ուսումնասիրվող տարածքի բուսական աշխարհը ներկայացված է տարբեր բույսերի կենսաձևներով, որտեղ տեսակների բազմազանությամբ առաջատար դիրքը պատկանում է վարդազգիներին (*Rosaceae*), այնուհետև հաջորդում են ուռենազգիները (*Salicaceae*), թխկազգիները (*Aceraceae*), ցախակեռասազգիներ (*Caprifoliaceae*), ձիթենազգիներ (*Oleaceae*) և թեղազգիները (*Ulmaceae*) հետևյալ հարաբերակցությամբ՝ ծառեր՝ 20 տեսակ, թփեր և


Նախնական գնահատման հայտ

կիսաթփեր՝ 3 տեսակ, բնափայտային լիանա՝ 3 տեսակ: Ուսումնասիրվող տարածքում խոտաբույսերը հիմնականում մոլախոտեր են:

156. Հետազոտությունը ցույց տվեց, որ **ուսումնասիրված տարածքի 26 տեսակների մեջ 22 Բույսերի Կարմիր գրքում կամ ԲՊՄՄ (Բնության Պահպանության Միջազգային Միություն) Կարմիր ցուցակում գրանցված տեսակները բացակայում են:** Ուսումնասիրված տարածքում Հայաստանում հատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող տեսակներ չեն հայտնաբերվել: Միայն շնախոտ (Swallowworts) և սպանդ (Harmel) տեսակի մոլախոտերն են համարվել հազվագյուտ: Տարածքում սննդային, դեղագործական, համեմունքային, կերային և այլ օգտակար բույսեր չեն հայտնաբերվել:
157. Ջրվեժի հավաքակայանի ուսումնասիրության տարածքում գրանցվել է ընդհանուր առմամբ 200 առանձնյակ ծառ (10 սմ և ավելի բնի տրամագիծ ունեցող), թուփ և փայտացողունավոր լիանա, որից ծառերը կազմում են 178 առանձնյակ, թփերը՝ 21, լիանաները՝ 1 առանձնյակ: 200 առանձնյակից 190-ը պատկանում են դեկորատիվ ծառերին և թփերին, իսկ 10-ը՝ պտղատուներին: Ծառաթփային բույսերի տեսակները, առանձնյակների քանակը և բների հաստությունները ներկայացված են Հավելված Է, Ենթահավելված Է-1-ում:
158. Ուսումնասիրվող տարածքում բացարձակ մեծ թիվ են կազմում թեղի փոքր տեսակի առանձնյակները (127 ծառ), որոնք հիմնականում տնկվել են ավտոբուսային հավաքակայանի ցանկապատերի երկայնքով: Առանձնյակների քանակով հաջորդը հացենի պենսիլվանյան տեսակն է (14 առանձնյակ), այնուհետև վարդենու թփերն են (15 առանձնյակ) և թեղի մերկը (11 առանձնյակ):
159. Ծրագրի տարածքում առկա ողջ բուսականությունը, որը խոչընդոտում է շինարարական աշխատանքներին, կտրվելու և մաքրվելու է: Հավաքակայանի տարածքում գտնվող 200 առանձնյակից վերակառուցման աշխատանքների 1-ին փուլի ընթացքում հատվելու է 61 ծառ և 6 թուփ: Հակակշռող և մեղմացնող միջոցառումները ներկայացված են սույն հաշվետվության հետագա գլուխներում (Գլուխ Զ-ում և Գլուխ Ը-ում):
160. Ծառերի քանակը նշվել է՝ ըստ նախնական գնահատման, որը կարող է կրճատվել շինարարական աշխատանքների ընթացքում, քանի որ դրանցից շատերը կարող են պահպանվել և չհատվել: Դա կարող է կախված լինել ավտոբուսային հավաքակայանի ցանկապատի ճշգրիտ դիրքից: Այսպիսով, բուսականության մաքրման աշխատանքները սկսելուց առաջ կապալառուն պետք է վերահաշվի ծառերն ու թփերը և համապատասխանաբար թարմացնի Ծառերի կառավարման պլանը:
161. Կապալառուն նաև հոգ կտանի ավտոբուսային հավաքակայանի տարածքում մնացած ծառերի և թփերի մասին, որոնք չեն հեռացվի և պետք է ձեռք առնի պաշտպանիչ միջոցառումներ՝ համաձայն «Երևան քաղաքի ավագանու No 405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու No 337-Ն որոշման (12.02.2021 թ.): Պաշտպանիչ միջոցառումները նախատեսվում են նաև Ծառերի կառավարման պլանում:

Ե8. Սոցիալ- տնտեսական պայմանները

- 162. Վերակառուցվող Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանը գտնվում է Երևան քաղաքի վարչական տարածքում, որը Հայաստանի Հանրապետության ամենամեծ վարչական, տնտեսական, գիտական և մշակութային կենտրոնն է և տարածաշրջանային փոխադրումների կարևորագույն տրանսպորտային տարանցիկ հանգույցը: Երևանը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիսարևելյան մասում՝ Հրազդան գետի երկու ափերին, ծովի մակարդակից 900-1200 մ բարձրության վրա և սահմանակից է ՀՀ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին: Երևանի տարածքը 233 քառ. կմ է, բնակչությունը՝ 1087,9 հազար մարդ, որը կազմում է Հայաստանի Հանրապետության բնակչության ավելի քան 35%-ը:
- 163. Երևանի տնտեսությունը բազմաձյուղ է՝ գյուղմթերքի վերամշակումից մինչև տեղեկատվական տեխնոլոգիաներ: Երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) կապիտալի տեսակարար կշիռը կազմում է 42,1%: Երևանին են բաժին ընկնում հանրապետության արդյունաբերության ընդհանուր ծավալի 42.1%-ը, շինարարության՝ 53.9%-ը, մանրածախ առևտրի՝ 82.6%-ը, ծառայությունների՝ 85.5%-ը, շահագործման հանձնված բնակելի շենքերի՝ 77.6%-ը, հյուրանոցային տնտեսության օբյեկտների՝ 33.2%-ը: Հաշվի առնելով Երևան քաղաքի վարչական, տնտեսական, ինչպես նաև գիտական և մշակութային ներուժը՝ քաղաքային տնտեսության բոլոր ոլորտների զարգացման և ենթակառուցվածքների բարելավման և զարգացման ծրագրերի իրականացման համար թիրախ են հանդիսանում այս ոլորտները: Այս գործընթացում կարևորվում է միջազգային համագործակցության ընդլայնումը, համայնք-մասնավոր հատվածների արդյունավետ համագործակցությունը:
- 164. Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանի: Ծրագիրը կիրականացվի Նոր Նորք վարչական շրջանում:



Նոր Նորք վարչական շրջան


- 165. Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանը գտնվում է Նոր Նորք վարչական շրջանում (տե՛ս Նկար Ե-2):

Նախնական գնահատման հայտ

166. Նոր Նորք վարչական շրջանը գտնվում է Երևան քաղաքի հյուսիս-արևելքում: Արևմուտքից ընդհանուր սահմաններ ունի Նորք-Մարաշ, Կենտրոն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների հետ, հյուսիսից՝ Ավան, իսկ հարավից Էրեբունի վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով արևելյան կողմից հարում է Կոտայքի մարզին:
167. Վարչական շրջանը ոչ պաշտոնապես բաժանված է փոքր թաղամասերի՝ ներառյալ Նոր Նորքի 9 գանգվածները և Բագրևանդ թաղամասը: Շրջանի ընդհանուր տարածքը 14 կմ² է, բնակչությունը՝ 126065: Գլխավոր փողոցներն են՝ Դավիթ Բեկ փողոցը, Գայի պողոտան, Թևոսյան փողոցը, Գյուրջյան փողոցը, Մինսկի փողոցը և Վիլյուսի փողոցը: Ծրագիրը գտնվում է Թևոսյան փողոցում:
168. Նոր Նորք վարչական շրջանը արդյունաբերական տեսանկյունից Երևանի ամենաթույլ զարգացած շրջանն է: Խորհրդային տարիներին կառուցվել են խոշոր գործարաններ և արտադրամասեր, սակայն Հայաստանի անկախացումից հետո ծանր արդյունաբերության գործարանների մեծ մասը լքվել է: Ներկայումս վարչական շրջանը հիմնականում հանդիսանում է քաղաքի առևտրային և հանգստի կենտրոն: Երևանի հանրակրթական դպրոցների գրեթե 10%-ը գտնվում է Նոր Նորքում: Շրջանը ունի 19 հանրակրթական դպրոց, 2 մասնավոր դպրոց:
169. Ծրագրի համար ԵՔ-ի կողմից հատկացված հողատարածքը ներկայումս գործող ավտոբուսային հավաքակայան է, որը տեղակայված է Թևոսյան և Հովհաննիսյան փողոցների փոխհատման հարևանությամբ և զբաղեցնում է 4,53 հա տարածք:
170. Ծրագրի ազդեցության տարածքում սոցիալական համակարգերի առկայության վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը, որոնք կարող են կրել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցություն ավտոբուսային նոր հավաքակայանի կառուցման և շահագործման հետևանքով, հավաքագրվել է տեղամասային այցելությունների ընթացքում (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Զ):
171. Ծրագրի սոցիալական համակարգերը ներկայացված են այնպիսի արժեքավոր ընկալիչներով, ինչպիսիք են՝
- ✓ Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանը, որը ներկայումս գործող ձեռնարկություն է,
 - ✓ պետական գույքը՝ Թևոսյան և Հովհաննիսյան փողոցները, ընդհանուր օգտագործման պետական ճանապարհները և երթևեկությունը,
 - ✓ համայնքային սեփականություն հանդիսացող փոքր հողակտորը (մոտ 1078 մ²), որը կօտարվի Ծրագրի նպատակով,
 - ✓ համայնքային և մասնավոր սեփականությունը, ինչպիսիք են՝ ձեռնարկատիրական օբյեկտները, առևտրային խանութները և հանգստյան տները, ինչպես նաև լքված շինությունները, որոնց սեփականատերերը հայտնի չեն,
 - ✓ հաղորդողիները, ինչպիսիք են՝ հեռահաղորդակցության ուղիները, ջրատար և գազատար խողովակները, էլեկտրականության սյուները և գծերը, ջրահեռացման համակարգերը,
172. Վերոնշյալ սոցիալական համակարգերի վրա հնարավոր ազդեցության տեսակը և համապատասխան մեղմացնող միջոցառումները ներկայացված են Գլուխ Զ-ում:

Նկար Ե-2. Ծրագրի տեղադիրքը Նոր Նորք վարչական շրջանում

Նախնական գնահատման հայտ



2. ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

173. Այս բաժինը բացահայտում է ծրագրի ազդեցության տարածքում շրջակա միջավայրի վրա՝ այդ թվում բնակչության կենսամակարդակի վրա ծրագրի հնարավոր դրական և բացասական, ուղղակի և անուղղակի ազդեցությունների շրջանակը ֆիզիկական, կենսաբանական, սոցիալ-տնտեսական (ներառյալ՝ աշխատանքի անվտանգության և առողջության, համայնքների առողջության և անվտանգության, խոցելի խմբերի և զենդերային խնդիրների), ինչպես նաև ուսումնասիրվել են գլոբալ և կոմունյատիվ ազդեցությունները: Այն ազդեցությունները, որոնք Ծրագրի գործողությունների ուղղակի արդյունք չեն հանդիսանում, բայց առաջացել են Ծրագրի առկայության պատճառով, հատկապես սոցիալական սոցիալական բնույթ ունեցողները, նույնպես ուսումնասիրվել են ՇՄՆՈՒ փուլում: Նաև բացահայտվել են կանխատեսումների հետ կապված անորոշությունները, և նշվել են այն թեմաները, որոնք հետագա ուշադրություն կարիք չունեն:

2.1. Դրական ազդեցությունները

ա) Նախագծին առնչվող դրական ազդեցությունները

174. Ծրագրի նպատակը Նոր Նորք վարչական շրջանում սեղմված բնական գազի լիցքավորման կայանով ավտոբուսային նոր հավաքակայանի վերակառուցումն է, որը կնպաստի Երևանի խիստ խաթարված հասարակական տրանսպորտային ենթակառուցվածքի բարելավմանը: Նշված հավաքակայանի վերակառուցման շնորհիվ էապես կբարելավվեն և՛ գործող, և՛ նոր ձեռք բերված քաղաքային ավտոբուսային շարժակազմի շահագործման պայմանները, ինչպես նաև էապես կբարելավվի ոլորտի և հավաքակայանի աշխատակիցների բարեկեցությունը:

Նախնական գնահատման հայտ

175. Վերջին երկու տասնամյակների ընթացքում ներդրումների բացակայության պատճառով Երևանում գոյություն ունեցող ավտոբուսների հավաքակայանների պայմանները խիստ վատթարացել են: Պայմանները վնասակար են ինչպես քաղաքային ավտոբուսային շարժակազմի շահագործման, այնպես էլ ավտոբուսների ոլորտի աշխատակիցների բարեկեցության համար: Ծրագիրը միտված է զգալիորեն բարելավելու ավտոբուսների շարժակազմի շահագործումը, քանի որ հավաքակայանի բոլոր բաղադրիչները՝ հավաքակայանի տարածքում տրանսպորտային միջոցների շարժը, երթևեկության հոսքին համապատասխան մուտքերն ու ելքերը, վարչական շենքը և այլ կառույցները, աշխատանքների իրականացման 2-րդ փուլում նաև կայանատեղիի տարածքը, նախագծվել են՝ համաձայն միջազգային և տեղական կանոնակարգերի՝ հավաքակայանի չափերի և հատակագծի բարելավմամբ, ինչպես նաև հաշվի առնելով աշխատանքի անվտանգության և աշխատողների առողջության պահանջները:
176. Ծրագրի կառուցվածքային տարրերը, հատկապես վարչական շենքը, որի վերանորոգումն իրականացվելու է 2-րդ փուլում, նախագծվել են հաշվի առնելով տարածաշրջանի սեյսմիկ ակտիվության ռիսկայնությունը:
177. Հավաքակայանի տարածքը նախագծված է այնպես, որ չի սահմանափակվում հաշմանդամություն ունեցող աշխատողների անարգել տեղաշարժը ամբողջ համալիրի ներսում: Մուտքի դարբասների և շենքերի մուտքերի մոտ նախատեսվում են թեքահարթակներ՝ անվասայլակ օգտագործողների տեղաշարժը հարմարավետ լինելու համար: Սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով մարդկանց համար նախատեսված են նաև գետնի ուղղորդող սալիկաձածկեր և ձայնային նախագուշակյան ազդանշաններ: Բարձրահարկ շենքերում կտեղադրվեն վերելակներ:
178. Կայունության և էկոլոգիապես մաքուր լինելու սկզբունքը կիրառվել է նաև շինարարական նյութերի ընտրության հարցում: Նյութերի ընտրության և վերջնամշակման աշխատանքների հիմնական նկատառումները հետևյալն են՝
- I. նախագծում պահպանում է գոյություն ունեցող հավաքակայանի և տեղական քաղաքային միջավայրի ճարտարապետական ոճը, համալիրն ամբողջությամբ նախագծված է միասնական ճարտարապետական ոճով՝ հաշվի առնելով 2-րդ փուլում կառուցվելիք շինությունները,
 - II. կիրառվելու են սենդվիչ պանելներ, որոնք առավել էներգաարդյունավետ են,
 - III. նախատեսվում է բնական լուսավորություն և օդափոխություն ապահովել բոլոր այն սենքերում, որտեղ դա հնարավոր է, և կօգտագործվեն էներգաարդյունավետ լուսադիոդային լամպեր այն տարածքներում, որտեղ անհրաժեշտ է ապահովել արհեստական լուսավորություն,
 - IV. տանիքները նախագծված են՝ ապագայում ֆոտովոլտային վահանակներ տեղադրելու հարմարությամբ,
 - V. նախագծված է ջրի վերացիկլավորման համակարգ, որի շնորհիվ արտադրական նպատակով մեծամասամբ օգտագործվելու է երկրորդային օգտագործման ջուր,
 - VI. հետագա վերամշակման նպատակով կոշտ թափոնների (անվաղողեր) կուտակման համար նախատեսված են պահեստներ, և տեղադրվելու են առանձնացված աղբամաններ՝ վարչական շենքի տարբեր հատվածներում և այլ տարածքներում:

բ) Էկոլոգիական օգուտները

179. Ի տարբերություն դիզելային ավտոբուսների՝ ԲՄԳ-ով աշխատող ավտոբուսներն ավելի անաղմուկ են և դրանց ածխաթթու գազի և ազոտի օքսիդի արտանետումները ավելի նվազ են:

Նախնական գնահատման հայտ

ԲՄԳ-ավտոբուսները կարող են զգալիորեն նպաստել շրջակա միջավայրի վիճակի բարելավմանը՝ ածխաթթու գազի արտաներտումները կրճատվում են 10-30 %-ով, ազոտի օքսիդի արտաներտումները՝ 90%-ով, գրեթե ամբողջությամբ վերանում է PM2.5 մանր մասնիկներով փոշին, ինչպես նաև զգալիորեն նվազում է աղմուկի մակարդակը, քանի որ ԲՄԳ շարժիչներն առավել անաղմուկ են: Ներկա իրավիճակում, երբ ավտոբուսների հավաքակալանը տեղակայվելու է մի տարածքում, որտեղ օդի որակը որոշ աղտոտող նյութերի գծով արդեն իսկ վատթարացած է (հիմնականում NO₂, PM10 և PM2.5), ավտոբուսային հավաքակալանի նախագիծը փաստորեն հանդիսանում է էկոլոգիապես մաքուր ծրագիր և , քանի որ ենթադրվում է, որ Ծրագրի շնորհիվ Երևանում ներկա անմխիթար տրանսպորտային միջոցների թիվը կրճատվելու է, ապա հնարավոր է նաև քաղաքի ֆոնային աղտոտվածության նվազեցումը:

180. Ավտոբուսային հավաքակալանի ջրահեռացման համակարգի նախագծում հաշվի են առնված նաև տարածքի ջրային հոսքերը վերահսկելու, հողերի ողողաքայքայումը և տեղանքում հեղեղումները նվազագույնի հասցնելու նկատառումները:
181. Նախագծային լուծումները սերտորեն փոխկապակցված են էկոլոգիական օգուտների հետ. հաշվի է առնված բնական ռեսուրսների (ջրի, նյութերի և էներգիայի) խնայողության սկզբունքը: Այդպիսի լուծումներից են՝ ջրի վերացիկլավորումը և երկրորդային ջրի վերաօգտագործումը, էներգաարդյունավետ վահանակները և այլն:
182. Կանաչապատման նախագիծը նույնպես որոշակի էկոլոգիական օգուտներ է խոստանում, այն է՝ տեղանքի գեղագիտական գրավչության բարելավում և էկոլոգիական արժեքի բարձրացում, հողի բաղադրակառուցվածքի կայունացում, անձրևաջրերի հոսքերի ներթափանցման բարելավում, և աղմուկի որոշակի նվազում:

զ) Սոցիալ-տնտեսական օգուտները

183. Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համակարգը ներառում է միկրոավտոբուսների, ավտոբուսների, տրոլեյբուսների և մետրոպոլիտենի երթուղիները: Այսօրվա դրությամբ Հասարակական տրանսպորտի ենթակառուցվածքը վատթարացել է, իսկ մեքենաների շարժակազմը հին է և վատ պահպանված, դրանց միջին արագությունը կազմում է ժամում 16 կիլոմետր: Ավելին, 2013 թվականից ի վեր մի քանի ավտոբուսային երթուղիներ փակվել են՝ երթևեկությունը տեղափոխելով այլ ավտոբուսային գծեր: Սա վկայում է Երևանի տրանսպորտային համակարգում օրվա գրեթե բոլոր ժամերին տրանսպորտային միջոցների պակասի (դեֆիցիտի) առկայության մասին, այսինքն՝ պահանջարկը գերազանցում է առաջարկին:
184. Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի հիմնական մասն են կազմում մասնավոր օպերատորների կողմից շահագործվող միկրոավտոբուսները: Ցանցի այս հատվածը ապահովում է ուղևորափոխադրումների մոտ 53%-ը: Գրանցված են մոտավորապես 1400-ից ավելի միկրոավտոբուսներ, սակայն իրականում օրական շահագործման մեջ գտնվող մեքենաների թիվը ավելի փոքր է, գերբեռնվածության և խցանումների պատճառով միկրոավտոբուսները մատուցում են ցածր որակի ծառայություններ:
185. Ներկայիս տրանսպորտային միջոցների շուրջ 75%-ը շահագործվում են ավելի քան 10 տարի (նշենք, որ նման ինտենսիվ շահագործման պարագայում այս տրանսպորտային միջոցների օգտակար ծառայության ժամկետը 5 տարուց քիչ է): ՄՆԽ-ի կողմից իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ շարժակազմի մեծ մասը գտնվում է անբավարար վիճակում, ինչը կարող է հանգեցնել անվտանգության խնդիրների: Հասարակության, ինչպես նաև շահագործող անձնակազմի անվտանգության մակարդակի բարձրացումը համարվում է ծրագրի գլխավոր և ամենակարևոր սոցիալ-տնտեսական ձեռքբերումներից մեկը:

Նախնական գնահատման հայտ

186. Ավտոբուսային շարժակազմը բացառապես բաղկացած է 18-ից մինչև 22 նստատեղով և կանգնած երթևեկելու սահմանափակ հնարավորությամբ միջին չափի ավտոբուսներից (միդի): Այս փոխադրամիջոցներով սպասարկվում է 39 երթուղի: Միջին չափի ավտոբուսներից, միայն «ՀԻԳԵՆ» մակնիշի ավտոբուսների արտադրողի կողմից սահմանված անվտանգ ծառայության ժամկետը չի սպառվել: «ՀՅՈՒՆԴԱՐ» և «ՋԻՋԻԱՆԳ» ավտոբուսների տարիքը չի գերազանցում 10 տարին, սակայն դրանք նախատեսված չեն քաղաքային ավտոբուսային ցանցում ինտենսիվ շահագործման համար:
187. Հայաստանի Հանրապետության կառավարությունն աշխատում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ՝ դեֆիցիտը հաղթահարելու և գոյություն ունեցող հնացած շարժակազմը փոխարինելու, ավտոբուսների նոր շարժակազմ ապահովելու ուղղությամբ: Այսպիսով, ուղևորները մեծապես կշահեն առաջարկվող Ծրագրից, որը հնարավորություն է ընձեռում ձեռք բերել շատ ավելի հարմարավետ և անվտանգ ավտոբուսների նոր շարժակազմ:
188. Թեև միկրոավտոբուսները 1990-ականներին մեծ դեր ունեցան Երևանը տրանսպորտային ծանր ճգնաժամից փրկելու գործում, սակայն ներկայումս դրանք փաստորեն դուրս են մղում մեծ ու միջին ավտոբուսներին, դրանով իսկ նպաստում են երթևեկության քառասային իրավիճակին: Այս տեղաշարժը լրջորեն խաթարել է այլ հասարակական տրանսպորտային ծառայությունների ֆինանսական կայունությունը և առաջացրել ներդրումների նվազում տրոլեյբուսի և մետրոյի համար, քանի որ ուղեվարձերը չափազանց ցածր են շահագործման և նորացման ծախսերը մարելու համար: Երևան քաղաքի համար նախատեսվում է իրականացնել նոր ավտոբուսային ցանցի և ինտեգրված սակագների և տոմսերի համակարգի ներդրում՝ նպատակ ունենալով հասնել հասարակական տրանսպորտային համակարգի ֆինանսական կայունությանը, և ներկայիս նախագիծը նշված ծրագրի բաղադրիչներից մեկն է:
189. Ավտոբուսների հավաքակայանի վերակառուցման ավարտից հետո բարելավված հասարակական տրանսպորտային համակարգը կնպաստի Երևանի տարբեր հատվածների միջև փոխկապակցվածության ընդլայնմանը և դրանով իսկ՝ տարածաշրջանի տնտեսական աճին: Ակնկալվում է, որ նոր ավտոբուսային շարժակազմը դրական դերակատարություն կունենա Երևանի և երկրի տնտեսական աճի խթանման գործում:
190. ԲՄԳ-ով աշխատող ավտոբուսների նոր շարժակազմի համար Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման շնորհիվ էապես կկրճատվի ուղևորափոխադրումների ժամանակը և կբարձրանա երթևեկության անվտանգության մակարդակը: Ծրագրերի քանակական օգուտներն ու առավելություններն են՝ (i) փոխադրամիջոցների շահագործման արժեքների խնայողություններ, (ii) ուղևորության ժամանակի խնայողություններ փոխադրամիջոցների միջին արագության աճի շնորհիվ՝ առկա ճանապարհային ցանցի հետ համեմատած, (iii) պատահարների նվազում, (iv) բարելավված տրասպորտային ծառայություններ՝ ընդլայնված ավտոբուսային շարժակազմի և առավել հարմարավետ տրանսպորտային միջոցների շնորհիվ: Մի շարք լրացուցիչ ծախսեր, որոնք կարող են կրճատվել առկա ճանապարհացանցի գերբեռնվածության նվազման արդյունքում առայժմ քանակապես որոշված չեն, բայց դրանց դրական արդյունքները նույնպես ակնկալվում են:
191. Կանխատեսվում են որոշ սոցիալ-տնտեսական ազդեցություններ. շինարարական աշխատանքների ընթացքում ժամանակավոր աշխատատեղերի ստեղծումը կարող է ապահովել լրացուցիչ եկամուտ տեղի բնակչության համար՝ կարճաժամկետ աշխատատեղեր ստեղծելու միջոցով: Ուստի, սոցիալական խնդիրները, որոնք պայմանավորված են ոչ տեղացի աշխատողներով, կհասցվեն նվազագույնի:
192. Ակնկալվում են որոշ սոցիալ-տնտեսական օգուտներ անմիջական շահառուի համար: Մասնավորապես, «Երևանի ավտոբուսային հավաքակայանի» Ջրվեժի մասնաճյուղի

Նախնական գնահատման հայտ

փոխտնօրենը առաջին հանրային լսումների ժամանակ տեղեկացրեց, որ ներկայումս վարորդներն ու հավաքակայանի մյուս աշխատակիցները ստիպված են լինում արտաժամյա աշխատել (հավելյալ 2-3 ժամ)՝ ավտոբուսների վառելիքի վերալիցքավորում իրականացնելու համար: Ջրվեժի հավաքակայանի վերակառուցումը և ԲՄԳ արագ լիցքավորման սարքավորումների տեղադրումը թույլ կտա կրճատել այդ ժամանակը, ինչը կնպաստի անձնակազմի աշխատանքային պայմանների բարելավմանը:

193. Ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման նախագծում հաշվի են առնված մարդկանց սոցիալապես զգայուն խմբերի կարիքները, մասնավորապես նախագծային լուծումները տրվել են հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող կամ այլ հատուկ կարիքներ ունեցող անձանց ազատ տեղաշարժի հնարավորության ապահովումը: Մասնավորապես՝ 1-ին փուլում հաշմանդամների հարմարավետության համար անհրաժեշտ համարվող հատվածներում կկառուցվեն 2.0x1.2 թեքահարթակներ, իսկ 2-րդ փուլում շենքերում նախատեսված են հատուկ վերելակներ:
194. Ծրագիրը թույլ կտա բարելավեն նաև կանանց կենսամակարդակը՝ երթևեկության ժամանակահատվածի կրճատման, ինչպես նաև գերբեռնվածության զգալի կրճատման շնորհիվ:

92. Բացասական ազդեցություններ

195. Ծրագրի իրականացման ընթացքում ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման աշխատանքների հետևանքով, իսկ հետագայում՝ վերջինիս շահագործման ընթացքում ինչպես աշխատանքային տեղամասը, այնպես էլ մերձակա տարածքի բնական և սոցիալական միջավայրը ենթարկվելու է որոշակի ազդեցության: Աշխատանքային տեղամասից դուրս ազդեցություններն պայմանավորված են շինհրապարակից դուրս իրականացվող գործողություններով, ինչպիսիք են շինարարական տեխնիկայի երթևեկությունը, ճամբարների տեղակայումը, ջարդիչի, այլ սարքավորումների առկայությունը և այլն, որոնք, այնուամենայնիվ, ուղղակիորեն կապված են ծրագրի հետ:
196. ԵՔ ԾԻԳ-ի կողմից 2020 թվականի սեպտեմբերին Ծրագրի ամենավաղ փուլում, հնարավոր բնապահպանական ազդեցություններից և ռիսկերից խուսափելու նպատակով իրականացվել է ծրագրի ազդեցության շրջանակի որոշում և Շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրության հաշվետվության նախագիծը ներկայացվել է ԱԶԲ-ին (ՇՄՆՈՒ տարբերակ):
197. Այնուհետև, Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման գործընթացը շարունակվել է ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում: Ազդեցության գնահատումն իրականացվել է նախագծող թիմի հետ սերտ համագործակցությամբ, ովքեր ժամանակին տեղեկացվել են վերհանված ազդեցությունների մասին և հնարավորություն են ունեցել դրանք հաշվի առնելու:

Ազդեցությունների ժամանակային ընդգրկումը

198. Ծրագրի ազդեցությունները և համապատասխան մեղմացնող միջոցառումները և մոնիթորինգի պահանջները նախատեսվել են ԲԿՊ-ում՝ ըստ ծրագրի զարգացման փուլերի՝
- Նախագծման փուլ,
 - Նախաշինարարական փուլ՝ նախապատրաստական աշխատանքներ,
 - Շինարարության փուլ,
 - Հետշինարարական փուլ՝ թերությունների վերացման շրջան,
 - Շահագործման փուլ:

Նախնական գնահատման հայտ

- 199. Ծրագրի կողմից առաջացած բոլոր ազդեցությունները կարելի է խմբավորել երկու հիմնական մասերի
 - Շինարարական աշխատանքների ազդեցություններ
 - Ավտոբուսային հավաքակայանի շահագործման ազդեցություններ:

Ձ 2-1 Ծրագրի շինարարական գործողությունների ազդեցությունները

200. Սույն հաշվետվության Գլուխ Գ-ում ներկայացված գործողությունները կարող են ազդել շրջակա միջավայրի վրա: Համապատասխան շինարարական աշխատանքները շրջակա միջավայրի վրա կունենան միջին ծավալի վերակառուցման աշխատանքերին բնորոշ բացասական ազդեցություններ: Այնուամենայնիվ, ակնկալվում է, որ շինարարական աշխատանքների բացասական ազդեցությունները լինելու են ժամանակավոր, այսինքն՝ սահմանափակվելու են շինարարական աշխատանքների ժամանակահատվածով, և հիմնականում սահմանափակվելու են շինհրապարակի տարածքով:

Արժեքավոր ընկալիչներ (ԱԸ)

- 201. Ծրագրի գործողությունները կարող են ազդել օրենսդրության և հասարակության կողմից արժևորվող բնական միջավայրի բաղադրիչների և սոցիալական համակարգերի վրա: Ազդեցությանների տեսակը և տարածման չափը պայմանավորված է Ծրագրի տարածքով, որը գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանի տարածքն է, ինչը հիման վրա էլ հնարավոր է դառնում որոշել, թե շրջակա միջավայրի ո՞ր ասպեկտներն են դիտվելու որպես ԱԸ:
- 202. Ծրագրի արժեքավոր ընկալիչների շրջանակը, ինչպես նաև հավանական ռիսկերը և դրանց կարևորությունը որոշվել և ամբողջացվել են շահագրգիռ կողմերի և ազդակիր անձանց հետ (Նոր Նորքի թաղապետարանի և Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի անձնակազմը, համայնքի անդամները, տեղի բնակիչները, ՀԿ-ները և այլն), հանդիպումների, քննարկումների և հաղորդակցության ժամանակահատվածում: Այսօրինակ քննարկումների, նախագծային աշխատանքների և ելակետային տվյալների առավել մանրամասն ուսումնասիրության շնորհիվ ազդեցությունների և ԱԸ-րի շրջանակը հստակեցվել է:

Ազդեցությունների խստությունը

203. Բնապահպանական արժեքավոր ընկալիչների (ԱԸ) վրա ծրագրի ազդեցությունների խստությունը վերլուծության է ենթարկվել, որի արդյունքները ներկայացվել են ՀԱՎԵԼՎԱԾ Ը-ի Աղյուսակ Ը-2-ում: Ազդեցության խստությունը որոշելու նպատակով կիրառվել է Աղյուսակ Զ-1-ում ներկայացված գնահատման համակարգը և հաշվի են առնվել հետևյալ ասպեկտները.

Ազդեցության տեսակը

204. Ազդեցության խստությունը պայմանավորված է նաև ազդեցության տեսակով: Ծրագրի գործողությունները ԲԱԸ-ի վրա կարող են ազդել ուղղակի կամ անուղղակի կերպով, ինչն առաջարկվող ծրագրի համար ամփոփ ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ Ը-ում:

Աղյուսակ Զ-1. Ազդեցությունների խստության սահմանման չափանիշները

Չափանիշներ	Դասակարգում/ Գնահատական			
	1	2	3	4

Նախնական գնահատման հայտ

Ազդեցության մակարդակը (փոփոխության նկատմամբ զգայունություն)	Աննշան	Ցածր	Միջին	Բարձր
Ազդեցության նշանակությունը	Տեղային	Մարզային	Ազգային	Միջազգային
Ազդեցության տևողությունը	Անցողիկ	Կարճաժամկետ	Միջին տևողության	Երկարաժամկետ (մշտական)
Ազդեցության հաճախականությունը	Մեկանգամյա	Հազվադեպ	Հաճախակի	Շարունակական
Ազդեցության հավանականությունը	Շատ քիչ հավանական	Հնարավոր	Հավանական	Հաստատ
Ազդեցության շրջելիությունը	Լիովին շրջելի	Հիմնականում շրջելի	Մասամբ շրջելի	Անշրջելի

Ազդեցության կարևորությունը

205. Ծրագրի ազդեցությունների խստության մակարդակի վերլուծությունը ցույց է տալիս, որ կենսաֆիզիկական միջավայրի վրա ակնկալվող ազդեցությունները հիմնականում կլինեն ժամանակավոր և տեղի կունենան միայն շինարարության ընթացքում: Հավելված Ը-ի Աղյուսակ Ը-3-ում ներկայացված է ազդեցության կարևորությունը՝ մեղմացնող միջոցառումների կիրառման դեպքում և դրանց չկիրառման դեպքում՝ «ազդեցության կարևորությունը առանց մեղմացնող միջոցառումների»: Ազդեցություններից խուսափելու և համապատասխան մեղմացնող միջոցառումների պլանավորման, մնացորդային բացասական ազդեցությունների որոշման և դրանք հաղթահարելու համար, հիմք են ընդունվում ազդեցության հետևանքները «մեղմացնող միջոցառումների չկիրառման դեպքում»: Ռիսկերի և ազդեցությունների գնահատման համար կիրառվել են ԱԶԲ ՇՄԱԳ ուղեցույցով առաջարկվող չափանիշները, որոնք ներկայացված են Աղյուսակ Զ-2-ում:

206. Ֆիզիկական, կենսաբանական, սոցիալական և պատմամշակութային միջավայրի վրա ազդեցությունների բոլոր ասպեկտները ուսումնասիրելուց հետո որոշվել է, որ դրանք կառավարելի են և կարող են նվազագույնի հասցվել, նույնիսկ վերացվել ժամանակին և պատշաճ իրականացվող մեղմացնող միջոցառումների միջոցով: Առաջարկվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ՝ հիմք ընդունելով դրանց նշանակությունը և առաջացումը Ծրագրի բոլոր փուլերի համար (մանրամասն նախագիծ, նախաշինարարություն, շինարարություն, շահագործում և տեխնիկական սպասարկում) մեղմացնող միջոցառումները ներկայացված են Գլուխ Ը. Բնապահպանական միջոցառումների ծրագիր և ՀԱՎԵԼՎԱԾ Ժ-ում:

Աղյուսակ Զ-2. Բնապահպանական ազդեցությունների մեծության գնահատում¹⁵

15

Բարձր (Բ)	Միջին (Մ)	Ցածր (Ց)	Ոչ նշանակալի (ՈՆ)
-----------	-----------	----------	-------------------

Նախնական գնահատման հայտ

ԲԱՇ⇒ Խստություն↓	Միջազգային/ Չափազանց մեծ	Ազգային/ Բարձր	Մարզային/ Միջին	Տեղական/Ցածր
Բարձր	-	-		Մոցիալական համակարգեր Աղմուկ և թրթռումներ
Միջին	-	-	Երթևեկություն և տրանսպորտ Հաղորդուղիներ	Մթնոլորտային օդի որակ Հողեր, այդ թվում՝ բուսահող Լանդշաֆտ և գեղագիտական արժեք Բուսական աշխարհ
Ցածր	-	-	Նյութական ռեսուրսներ	
Աննշան				Հնագիտական գտածոների հայտնաբերում Մտորգետնյա ջրեր

Առաջարկվող Նախագծի բնապահպանական արժեքավոր ընկալիչներն են՝
Մթնոլորտային օդի որակ (այդ թվում՝ աղմուկ և թրթռում)

207. Մթնոլորտային օդի վրա ազդեցությունը հավանական է հետևյալ փուլերում՝
- ✓ շինարարության փուլում՝ հողային աշխատանքների պատճառով առաջացած փոշի և գործող շինարարական մեքենաների ու տեխնիկայի գազային արտանետումների տեսքով: Շինարարական աշխատանքների ընթացքում վնասակար նյութերի արտանետումներն առաջանալու են հողային/հանույթի աշխատանքների, բեռնման աշխատանքների, ծածկի իրականացման, գծանշումների և սարքավորումների շահագործման հետևանքով: Շինարարական տեխնիկական նույնպես աղմուկի և թրթռումների առաջացման հիմնական աղբյուր է հանդիսանում, և
 - ✓ ավտոբուսների հավաքակայանի շահագործման փուլում՝ ավտոբուսային շարժակազմի շահագործման ընթացքում գազային արտանետումների տեսքով:

Նախնական գնահատման հայտ

208. Շինարարական աշխատանքների ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցությունը գնահատելու համար իրականացվել է կանխատեսվող արտանետումների ցրման և գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկներ, որոնք կատարվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված¹⁶ համակարգչային ծրագրի միջոցով:
209. Ինչպես շինարարության, այնպես էլ թերությունների վերացման ժամանակահատվածում ԲԿՊ-ում նախատեսված է փոշու արտանետումների գործիքային կանոնավոր չափագրումների պահանջը (տե՛ս Գլուխ Ը): Կապալառուից պահանջվելու է իրականացնել էլակետային վիճակի չափագրումներ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 28 օր առաջ: Այնուհետև, Կապալառուն պարտավորվելու է իրականացնել փոշու՝ 2,5 PM և 10 PM մասնիկների գործիքային կանոնավոր չափագրումներ (ամսական երկու անգամ, ինչպես նաև ԱԵԱ-ներից բողոքներ ստանալու դեպքում) և արդյունքների ու դրանց վերլուծությունների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություններ՝ համեմատելով ազգային և ՄՖԿ (IFC) ստանդարտների հետ՝ ըստ հետևյալ առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաների.

Աղյուսակ Զ-3. PM2.5 և PM10-ի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները

№	Նյութի անվանումը	ՄԹԿ (մգ/մ3)		ՄՖԿ ստանդարտ (մգ/մ3)
	Փոշու մասնիկները	Առավելագույնը	Օրական միջինը	Օրական միջինը
1	PM2.5	0.15	0.035	0.025
2	PM10	0.3	0.06	0.05

210. Փոշու մասնիկների չափումները կատարվելու են նախապես ընտրված 4 կետերում՝ յուրաքանչյուր կետում առնվազն 3 անգամ, աշխատանքային ժամերի ընթացքում, որի հիման վրա որոշվելու է միջին ցուցանիշը: Կետերն ընտրվել են խիտ բնակեցված տարածքներում՝ մոտ գտնվող զգայուն ընկալիչների սկզբունքի հիման վրա: Չափիչ սարքը տեղադրվելու է մոնիթորինգի պլանում որոշված զգայուն ընկալիչների մոտ (հանգստավայրերի, ձեռնարկատիրական գործունեության օբյեկտների)՝ դրանց վրա ազդեցությունը որոշելու համար:
211. Ծծմբի երկօքսիդի (SO2) և ազոտի երկօքսիդի (NO2) չափումները պետք է իրականացվեն կապալառուի կողմից երկու անգամ՝ առաջին անգամ նախքան շինարարական աշխատանքները սկսելը, երկրորդ անգամ՝ մինչև թերությունների վերացման ժամանակահատվածի ավարտը: Լրացուցիչ միջանկյալ չափագրումներ կիրականացվեն տեղի բնակիչների կողմից գրանցված բողոքների դեպքում:
212. Կանոնավոր չափումների համար օգտագործվող սարքավորումը չի կարող ներկայացվել ՇՄԱԳ հաշվետվության այս փուլում, սակայն գործիքային չափագրումների համար ենթակապալառու ընկերությանը ներկայացվող պահանջները սահմանվում են ՇՄԱԳ/ԲԿՊ- ում.
- ✓ ենթակապալառու կազմակերպությունը կներկայացնի սարքավորումների տրամաչափման և ստանդարտացման վկայագրեր,
 - ✓ կազմակերպությունը նախքան ընտրվելը կներկայացնի չափագրումների մեթոդաբանությունը,
 - ✓ կօգտագործվի սարքավորում, որի արդյունքները հնարավոր կլինի համեմատել էլակետային տվյալների հետ:

¹⁶ ՀՀ ԷՆ Հրաման թիվ 64-Լ «Անշարժ օբյեկտներից վտանգավոր գազերի արտանետումների ցրումը հաշվարկելու համար համակարգչային ծրագրերի որոշման մասին» (18.02.2020)

Նախնական գնահատման հայտ

213. Հետշինարարական փուլում փոշու, ածխաթթու գազի, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի մակարդակի վրա ազդեցությունը տե՛ս ստորև Ջ-2-2-ում:

Աղմուկ

214. Շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական տեխնիկայի շահագործման հետևանքով անշուշտ տեղի կունենա աղմուկի որոշակի ավելացում: Աղմուկը վերահսկելու և թույլատրելի սահմանային չափանիշները պահպանելու համար ԲԿՊ-ում նախատեսվում է իրականացնել կանոնավոր մոնիթորինգ՝ գործիքային չափագրումների միջոցով: Ծրագրի տարածքի աղմուկի մակարդակի ֆոնային տվյալները հավաքագրվել են Ակուստիկ հետազոտության շրջանակներում (հաշվետվությունը կկցվի հիմնական փուլի ՇՄԱԳ հաշվետվությանը):
215. Ելակետային չափագրումներ իրականացվել են 3 կետերում: Ելակետային տվյալները կհամեմատվեն Աղյուսակ Ե-6-ում ներկայացված ՄՖԿ ուղեցույցների և ՀՀ ստանդարտների հետ: Եթե Ակուստիկ ուսումնասիրության արդյունքները ցույց տան, որ չափված որոշ կետերում աղմուկի ֆոնային մակարդակը արդեն իսկ գերազանցում է ստանդարտները, ապա շինարարության ընթացքում կկիրառվի ՄՖԿ «+3դԲ կանոնը»:
216. Ակուստիկ ուսումնասիրության շրջանակներում կատարված չափագրումները տեղեկատվություն են տրամադրում ավտոբուսների հավաքակայանի հետագա շահագործման հնարավոր ակուստիկ ազդեցությունը գնահատելու համար: Այս ազդեցությունը քննարկված է Գլուխ Զ 2-2-ում (Ազդեցությունը շահագործման ընթացքում):

Թրթռումներ

217. Ծրագրի շրջանակում որոշվել է հնարավոր թրթռումների ազդեցությունը աշխատակիցների և մերձակա բնակչության առողջության վրա: Թրթռումների ազդեցությունը առողջության վրա որոշվել է գործիքային չափագրումների միջոցով հավաքագրված ֆոնային տվյալների հիման վրա: Հետազոտության նպատակն էր՝ որոշել միջավայրի ֆոնային թրթռումների մակարդակը՝ հետագայում շինարարական աշխատանքների հետևանքով թրթռումների մակարդակի հնարավոր աճի՝ առողջության վրա թողած ազդեցությունը և անհրաժեշտ մեղմացնող միջոցառումը կիրառելու համար:
218. Թրթռումների հետ կապված առողջապահական ստանդարտներին Կապալառուի համապատասխանությունն ապահովելու համար ԲԿՊ-ում պլանավորված է թրթռումների գործիքային չափագրումների պահանջը՝ ինչպես շինարարության, այնպես էլ թերությունների վերացման ժամանակահատվածի ընթացքում: Այս միջոցառումները իրականացվելու են Կապալառուի կողմից: Կապալառուն չափումներն իրականացնելու է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 28 օր առաջ: Կապալառուն պատասխանատու կլինի իրականացնելու գործիքային կանոնավոր չափագրումներ (ամսական երկու անգամ, նաև ԱԵԱ-ներից բողոքներ ստանալու դեպքում) և արդյունքների ու դրանց վերլուծությունների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություններ՝ համեմատելով ազգային օրենսդրական կարգավորումների հետ.
- ГОСТ 31319-2006 (EH 14253:2003) Մեխանիկական թրթռում. Ընդհանուր թրթռման չափումները և մարդու առողջության վրա ազդեցության գնահատումը. Աշխատավայրերում չափումների իրականացման վերաբերյալ պահանջները,
 - ГОСТ 12.1.012-90 Աշխատանքային անվտանգության ստանդարտների համակարգը, ընդհանուր պահանջները,

Նախնական գնահատման հայտ

- ГООСТ 12.1.012-2004 Թրթռման անվտանգություն. Ընդհանուր պահանջներ. Սանիտարական նորմ №2-III-11.3 «Թրթռումը աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում»:
219. Չափագրումները կիրականացվեն 3 ընտրված կետերում (վայրերը տե՛ս Նկար Ե-2-ում)՝ յուրաքանչյուրում առնվազն 3 անգամ, աշխատանքային ժամերի ընթացքում, և կորոշվի միջին արժեքը: Չափիչ սարքը կտեղադրվի Մոնիթորինգի պլանում որոշված զգայուն ընկալիչների մոտ (բնակարաններից, ձեռնարկատիրական գործունեության օբյեկտից դուրս կամ ներս և այլն)՝ դրանց վրա ազդեցությունը որոշելու համար:
220. Գործիքային չափագրումներ կատարելու նպատակով ընտրված ենթակապալառու ընկերությանը ներկայացվում են հետևյալ պահանջները՝
- ենթակապալառու կազմակերպությունը կներկայացնի սարքավորումների տրամաչափման և ստանդարտացման վկայագրեր,
 - նախքան կազմակերպությանը ընտրելը, կներկայացվի չափումների առաջարկվող մեթոդաբանությունը,
 - պետք է օգտագործվի ելակետային տվյալների հետ համադրելի տեխնիկական բնութագրերով սարքավորում ըստ՝ արագացման (մ/վ²), արագության (մ/վ), տեղաշարժի (մ) և ճշգրտության (նիշերի)

Ջրային մարմիններ

221. Ինչպես արդեն նշվել է Գլուխ Ե5-ում, Ծրագրի տարածքում և/կամ անմիջապես մոտակայքում չկան ջրային մարմիններ և ջրահոսքեր (գետեր, լճեր, ջրամբարներ, ոռոգման ջրանցքներ և այլն), որոնք կարող են ազդեցության ենթարկվել Ծրագրի հետ կապված աշխատանքների հետևանքով: Նաև, ըստ արխիվային ֆոնդի և ինժեներաերկրաբանական հետազոտության տվյալների, ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել մինչև 20.0 մ խորության հորատանցքերում:
222. Մյուս կողմից՝ քանի որ անձրևաջրերը կհեռացվեն կենտրոնացված ջրահեռացման համակարգի միջոցով, իսկ կոյուղաջրերը կթափվեն քաղաքային կոյուղու համակարգ, ուստի հնարավոր է որոշակի ազդեցություն ջրի աղտոտման և նստվածքազոյացման առումով: Շինարարության ընթացքում անձրևաջրերի արտահոսքը շինհրապարակից կարող է աղտոտման և նստվածքազոյացման աղբյուր դառնալ:
223. Ազդեցությունը հավանական է հիմնականում շինարարության փուլում: Հնարավոր է հողային աշխատանքների պատճառով առաջացած նստվածքազոյացում, ինչպես նաև շինարարության ընթացքում բետոնաջրերի, հեղուկ և պինդ թափոնների արտանետման և այլնի պատճառով աղտոտում: Առկա ջրային ռեսուրսները հավանական աղտոտումից և նստվածքազոյացումից զերծ պահելու նպատակով ԲԿՊ-ով նախատեսվում են հատուկ միջոցառումներ:
224. Հնարավոր է վառելանյութի, յուղի (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն) քսանյութերի և այլ հեղուկ նյութերի և թափոնների արտահոսք կամ հոսակորուստ՝ ոչ պատշաճ կերպով պահեստավորված նյութերից, վերալիցքավորման կամ հավաքակայանատեղիի շինարարության և շահագործման ընթացքում շահագործվող սարքավորումներից և տեխնիկայից: Այնուամենայնիվ, դրանք չեն հանգեցնի ստորգետնյա ջրերում ներթափանցման և դրանց աղտոտման, քանի որ ըստ ինժեներաերկրաբանական հետազոտության՝ մինչև 20 մ խորությամբ հորատման աշխատանքների արդյունքում ստորգետնյա ջուր չի նկատվել: Ավելին, ավտոբուսային հավաքակայանի ամբողջ մակերեսը ասֆալտապատ է, ինչը նվազեցնում է նման ազդեցության հավանականությունը: Ասֆալտե պատվածքը և վառելանյութի պահեստավորման տարածքում շահագործման ձեռնարկը կբացառեն

Նախնական գնահատման հայտ

շահագործման ընթացքում ցանկացած աղտոտում: Ազդեցությունը քիչ հավանական է և գնահատվում է «Ոչ նշանակալի»:

225. Թեև ազդեցությունը հավանական չէ, այնուամենայնիվ, շինարարության ընթացքում արտահոսքերը և տարածումները նվազեցնելու համար մեղմացնող որոշ համապատասխան ընթացակարգեր են նախատեսվում ԲԿՊ-ում (Գլուխ Ը, Հավելված Ժ):

Բուսական աշխարհը

226. Բուսական աշխարհի (ֆլորայի) հետազոտությունն իրականացվել է 2021 թ. դեկտեմբերին «Բիո Գամա» ՍՊԸ-ի փորձագետների կողմից (հետազոտության վերաբերյալ ամբողջական հաշվետվությունը կկցվի հիմնական փուլի ՇՄԱԳ հաշվետվությանը): Հետազոտության արդյունքում հաստատվել է, որ հետազոտվող տարածքը չի կարող էկոլոգիական վտանգ ներկայացնող տարածք համարվել, քանի որ այն Երևան քաղաքում գտնվող գործող ավտոբուսային հավաքակայան է, որի ողջ բնական միջավայրը ձևափոխված է և վերածված է հիմնականում ասֆալտապատ արդյունաբերական տարածքի: Այստեղ առկա են հավաքակայանի աշխատակիցների կողմից մշակվող կանաչապատ գոտիները: Որևէ չմշակված հող Ծրագրում ընդգրկված չէ: Այս եզրակացության հիման վրա կենդանական աշխարհի հետազոտության անհրաժեշտություն չկար և իրականացվել է միայն բուսականության հետազոտությունը:


227. Բուսական աշխարհի հետազոտության արդյունքները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում ազդեցության որոշման տեսանկյունից, ամփոփ ներկայացված են ստորև՝

- ✓ Ծրագրի տարածքում չկան Հայաստանի Կարմիր գրքում, Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր գրքում և ԲՊՄՄ վտանգված տեսակների Կարմիր ցուցակում գրանցված տեսակներ,
- ✓ Ծրագրի տարածքում չկան հազվագյուտ էկոհամակարգեր, կրիտիկական վիճակում գտնվող բնական միջավայրեր, որտեղ պետք է խուսափել շինարարական աշխատանքներից:
- ✓ հիշյալ տարածքում չկան Հայաստանի էնդեմիկ բույսեր,
- ✓ տարածքում ուտելի, բուժիչ և այլ օգտակար բույսեր, համեմունքներ, անասնակեր առկա չեն, որ կարող էին հետաքրքրություն ներկայացնել բնակչության համար:

228. Ջրվեժի հավաքակայանի տարածքում առկա ծառերի և թփերի ցանկը՝ ըստ տեսակների և բների տրամագծերի, ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-1.

229. Ծրագրի տարածքում առկա այն բուսականությունը, որը խոչընդոտում է շինարարական աշխատանքներին, կտրվելու և մաքրվելու է: Ըստ նախնական գնահատման՝ ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման նպատակով տարածքի մաքրման համար ընդհանուր հատվելու է 61 ծառ և 6 թուփ, որոնցից 59-ը դեկորատիվ ծառեր են, իսկ 2-ը՝ պտղատու: Հատման ենթակա ծառերի և թփերի տեղադիրքը ներկայացված է Նկար Զ-1-ում: Հակակշռող և մեղմացնող միջոցառումները ներկայացված են սույն հաշվետվության Գլուխ Ը-ում:

Նկար Զ-1. Փուլ 1-ի շինարարական աշխատանքներին խոչընդոտող ծառերի և թփերի տեղադիրքը



230. ԲԿՊ-ում հակակշռող և մեղմացնող միջոցառումներ են նախատեսվում հատման ենթակա ծառերի և այն ծառերի համար, որոնք շինարարության ընթացքում հատուկ պաշտպանության կարիք կունենան (տե՛ս Գլուխ Ը՝ Բուսական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլանը և ՀԱՎԵԼՎԱԾ Ժ՝ ԲԿՊ-ի Աղյուսակը): Ծառերի և այլ բուսականության պահպանության նպատակով ԲԿՊ-ում պլանավորվել են հնարավոր ազդեցություններն ընդունելի մակարդակների հասցնելուն ուղղված հատուկ մեղմացնող միջոցառումներ: Ծառերի պահպանության վերաբերյալ օրենսդրական պահանջները¹⁷ բավարարելու համար կապալառուն պատասխանատվություն է կրում ՇԲԿՊ-ի կազմում մշակել Ծառերի կառավարման պլան:

231. Բուսական աշխարհի հետազոտության ամփոփ արդյունքները, հնարավոր ազդեցությունները և փորձագետների առաջարկությունները գետեղված են ՀԱՎԵԼՎԱԾ Է, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-1-ում և Է-2-ում: Հետազոտության հիման վրա կարելի է եզրակացնել, որ ավտոբուսային հավաքակայանի շինարարությունը էականորեն չի ձևափոխի և չի հանգեցնի խիստ կարևոր էկոհամակարգերի ոչնչացմանը, վտանգված կամ հազվագյուտ տեսակների անհետացմանը: Բայց և այնպես, ծրագրի իրականացման ընթացքում բուսական աշխարհը, այնուամենայնիվ, կարող է կրել որոշակի բացասական ազդեցություններ՝

¹⁷ Երևան քաղաքի ավագանու No 405-Ն որոշումը և Երևան քաղաքի ավագանու No 337-Ն որոշումը «Երևան քաղաքի ավագանու No 405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (12.02.2021 թ.).

Նախնական գնահատման հայտ

- ✓ հանույթի, տոփանման և բնահողի տեղափոխման պատճառով բուսական միջավայրի խաթարում կամ ոչնչացում,
 - ✓ շինարարության ընթացքին խոչընդոտող անցանկալի բուսականության հատման և մաքրման հետևանքով ծառերի և թփերի կորուստ:
232. Բուսական աշխարհի վերաբերյալ հաշվետվությունը առաջարկություններ է ներկայացնում այն մասին, թե ինչպես խուսափել մտահոգության տեղիք տվող տարածքներից, ինչպես նվազագույնի հասցնել ծառերին հասցվող վնասը: Հաշվետվությունն իր մեջ ներառում է հրահանգներ, որոնք կարող են օգտագործվել շինարարների կողմից, մասնավորապես՝
- ✓ ներգրավել կանաչապատման մասնագետ և կտրված ծառերի ու թփերի փոխարեն տնկել նորերը, իրականացնել վերակառուցված ավտոբուսային հավաքակայանի տարածքի կանաչապատումը,
 - ✓ իրականացնել մոնիթորինգ մինչև շինարարական աշխատանքների ավարտը՝ կրկնակի ստուգելու նոր տնկված ծառերի գոյատևման մակարդակը,
 - ✓ խուսափել ծառերի անհարկի հատումից և պահպանել այն առանձնյակները, որոնք չեն խոչընդոտում շինարարական աշխատանքներին:
233. Բուսական աշխարհի տեսակների պահպանության մասին բոլոր առաջարկությունները հաշվի են առնվել և ներառվել Գլուխ Ը՝ Բուսական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլանում և Հավելված Ժ՝ ԲԿՊ-ի Աղյուսակում:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ

234. Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ռախատեսվող գործունեությունը չի իրականացվելու ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում, ինչպես նաև Ծրագրի անմիջական տարածքում՝ ՀՀ Կառավարության 2008 թ-ի օգոստոսի 14-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N967-Ն որոշմամբ հաստատված բնության հուշարձանները բացակայում են:
235. Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ գտնվող հատուկ պահպանվող տարածքը՝ 7 կմ-ից ավելին Կոտայքի մարզի Գեղաղիբ գյուղի մոտ գտնվող Էրեբունու արգելոցն է, իսկ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կազմում գտնվող «Ջրվեժ» անտառապարկը, որը կարգավորվում է «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով գտնվում է ավելի քան 3 կմ հեռավորության վրա:
236. ՀՀ Կառավարության 2008 թ-ի օգոստոսի 14-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկից առավել հավանական կարող են համարվել Կոտայքի մարզի Ջորաղբյուր գյուղի մոտ գտնվող Մանգյուսի բրածո ֆլորա երկրաբանական հուշարձանը և Ողջաբերդ գյուղի հյուսիս-արևելյան մասում գտնվող «Ողջաբերդ» բնապատմական համալիրը, որոնք գտնվում են շիրանարական աշխատանքների հրապարակից և տրանսպորտային ուղիներից առնվազն համապատասխանաբար 4,5 և 5,5 կմ հեռավորության վրա:

Գրունտներ և բուսահող

237. Ծրագրի տարածքը սահմանափակված է ներկայումս գործող ավտոբուսային հավաքակայանի տարածքով: Ծրագրային տարածքում ավտոբուսային ձեռնարկության և քաղաքաշինության արդյունքում դեռևս չփոփոխված նոր հողատարածքների որևէ ներառում չի իրականացվի, ուստի բուսահողի լուրջ ծավալներ չկան: Ողջ առկա բուսահողը

Նախնական գնահատման հայտ

սահմանափակվում է Ջրվեժի հավաքակայանի կանաչապատ տարածքներով և ընդհանուր ծավալը գնահատվում է մոտավորապես 330մ³:

238. Չնայած բուսահողի համեմատաբար փոքր քանակին, այնուամենայնիվ, սա առաջ է բերում բուսահողի՝ գրունտի վերին, հունուսով հարուստ շերտի հանման և պահեստավորման հարցը՝ վերջինիս պահպանության նպատակով: Ողջ բուսահողը պահպանվելու է Ծրագրի համար հատկացված տարածքի սահմաններում, որպեսզի հետագայում օգտագործվի կանաչապատման նպատակով:
239. Կանաչապատման տարածքներն ըստ նախագծի 1-ին փուլի կազմելու են 1350մ², որի համար պահանջվելու է ընդհանուր առմամբ 269,4 մ³ բուսահող, ինչը նշված է նաև Կանաչապատման ամփոփագրում: Բուսահողաշերտի պահանջվող քանակը կբավարարվի ծրագրի աշխատանքների ընթացքում առաջացած և պահպանված հողի բերրի շերտով: Անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ պահանջվող քանակը կլրացվի պայմանագրային հիմունքներով մատակարարից գնման միջոցով օրենքով սահմանված կարգով:
240. Պլանավորվում է իրականացնել ընդհանուր 22488.8 մ³ հանույթ, որը զգալի է և շինարարության ընթացքում կարող է հանգեցնել էրոզիայի և նստվածքագոյացման հետ կապված խնդիրների: Կապալառուն Ինժեների հաստատմանն է ներկայացնելու տարատեսակ հողային աշխատանքների համար շինարարության մանրամասն մեթոդաբանություն, որտեղ հատուկ ուշադրություն պետք է դարձվի ուղղահայաց պլանավորմանը՝ տրամադրելով անվտանգության և ջրահեռացման համապատասխան լուծումներ:
241. Շինարարության փուլում հողի՝ վառելանյութով, յուղով (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն), քսանյութերով և այլ հեղուկ նյութերով ու թափոններով աղտոտման որոշակի վտանգ կա, որը սակայն արձր չի գնահատվում: Այնուամենայնիվ, ԲԿՊ-ում ներառված են միջին մասշտաբի շինարարական ծրագրերին հատուկ կանոնավոր մեղմացնող միջոցառումներ, որոնք համարվում են բավարար: Այդ միջոցառումները հիմնականում վերաբերվում են վառելանյութի, յուղի, քսանյութերի և այլ հեղուկ նյութերի ու թափոնների տեղափոխմանը, պահեստավորմանը և տեղավորմանը, ինչպես նաև աղտոտված գրունտի անվտանգ տեղավորմանն ուղղված մեղմացնող միջոցառումներին:

Նյութերի ստացման աղբյուրներ (հանքեր/բացահանքեր/ջրային ռեսուրսներ)

242. Ըստ Նախագծի՝ շինարարության համար անհրաժեշտ է լինելու 1235.8 մ³ խիճ և կոպճավազային խառնուրդ: Լիցքի համար անհրաժեշտ քարերը, կոպիճը, ավազը և այլ նյութերը (լիցքի աշխատանքների ընդհանուր ծավալը գնահատվում է 1033 մ³), ինչպես նաև ասֆալտը և բետոնը գնվելու են գրանցված հանքերից և մատակարարներից:
243. Լիցքի համար շրջակա միջավայրից նյութի որևէ տեսակի հանույթ չի նախատեսվում, բայց և այնպես, նմանատիպ գործողությունների ռիսկը գնահատվել է, և այդ նպատակով պլանավորվել են մեղմացնող միջոցառումներ ՇՄԱԳ/ԲԿՊ-ում:
244. Տեխնոլոգիական նպատակներով ջրամատակարարումը ինչպես ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման աշխատանքների, այնպես էլ շահագործման ընթացքում իրականացվելու է համապատասխան մարմնի հետ ծառայությունների մատուցման պայմանագրի միջոցով: Գոյություն ունեցող որա- և կոյուղագծերին միացման տեխնոլոգիական

Նախնական գնահատման հայտ

հնարավորությունները ուսումնասիրվել են նախագծման փուլում և ձեռք են բերվել նախնական համաձայնություններ (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ե. ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ Ե-3 և Ե-4):

245. Տեխնոլոգիական նպատակներով էլեկտրաէներգիայի մատակարարումը և՛ ավտոբուսների հավաքակայանատեղիի շինարարության, և՛ շահագործման ընթացքում իրականացվելու է համապատասխան մարմնի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ ծառայությունների մատուցման պայմանագրի միջոցով:
246. Գործնական նպատակներով բնական գազի մատակարարումը իրականացվելու է համապատասխան մարմնի՝ «Գազպրոմ Արմենիա» ՍՊԸ-ի հետ ծառայությունների մատուցման պայմանագրի միջոցով:

Թափոնների գոյացում

247. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններից է թափոնների առաջացումը, որը, պատշաճ կերպով չկառավարվելու դեպքում, դառնում է աղտոտման և լանդշաֆտի գեղագիտական տեսքի վատթարացման աղբյուր: Սույն հաշվետվությունը դիտարկում է թափոնների երկու հիմնական խումբ՝ շինարարության ընթացքում առաջացող թափոններ (ժամանակավոր ազդեցություն) և ավտոբուսային հավաքակայանի հետագա շահագործման ընթացքում առաջացող թափոններ (մշտական ազդեցություն): Այս խմբերից յուրաքանչյուրն իր հերթին դիտարկվում է՝ ըստ թափոնների տեսակի (պինդ և հեղուկ) և վտանգի աստիճանի (վտանգավոր/ ոչ վտանգավոր):
248. Շինարարական աշխատանքների արդյունքում առաջացած թափոնները բաժանվում են երկու խմբի՝

անվտանգ թափոններ

- ✓ թափոններ, որոնք կառաջանան շենքերի, շինությունների քանդման աշխատանքների ընթացքում և շինարարության հետ կապված այլ թափոնների,
- ✓ ոչ պիտանի հանույթ, որն կառաջանա հողային աշխատանքների արդյունքում, օրինակ՝ հող, ավազ, ապարներ և քարեր,
- ✓ շինարարության հետ կապված կոշտ թափոններ՝ մետաղի, փայտի, պլաստիկ մասերի, դատարկ պարկերի, տարաների (և այլն) և կենցաղային աղբի տեսքով:

վտանգավոր թափոններ

- ✓ վտանգավոր հեղուկ նյութեր և դրանց մնացորդներ՝ ներառյալ վառելանյութ, յուղ, քսանյութեր, բետոնաջուր

249. Նյութերի և թափոնների տեսակները և դրանց կառավարման եղանակները մանրամասն նկարագրված են Գլուխ Ը-ում՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ: Մեղմացնող առաջարկվող միջոցառումները թվարկված են ԲԿՊ-ում (ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ):

Սոցիալական համակարգեր

250. Սոցիալական համակարգերի վրա ազդեցությունը համարվում է ծրագրի ամենազգայուն բաղադրիչը: Դրանք ներառում են շինարարական աշխատանքների, իսկ հետագայում՝ վերակառուցված ավտոբուսային հավաքակայանի շահագործման հետևանքով պատճառված անհանգստությունը և/կամ անհարմարությունը: Առաջին հերթին անմիջական

Նախնական գնահատման հայտ

ազդեցության է ենթարկվում Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանը, ձեռնարկության անձնակազմը, հարևանությամբ գործող ձեռնարկատիրական հիմնարկները և համայնքային սեփականությունը: Մոտակայքում չկան բնակելի տներ և այլ հասարակական հաստատություններ, ամենամոտ բնակավայրը գտնվում է մոտ 500 մ հեռավորության վրա, ուստի որևէ մշտական ազդեցություն տեղի բնակչության առողջության և գույքի վրա հավանական չէ: Ծրագրի ազդեցության տարածքում սոցիալական համակարգերի առկայության վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը, որոնք կարող են կրել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցություն ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման և շահագործման հետևանքով, հավաքագրվել է տեղամասային այցելությունների ընթացքում (տե՛ս Գլուխ Ե և ՀԱՎԵԼՎԱԾ Զ): Հնարավոր ազդեցությունների վերլուծությունը գնահատվել և ներկայացվել է Պատշաճ կատարման համալիր ստուգման հաշվետվությունում, որտեղ նշվում է, որ որևէ մասնավոր սեփականություն ազդեցության չի ենթարկվում, և հողի օտարման խնդիր այս Ծրագրում չի առաջանում:

251. Շրջակա հանրության և նրանց կենսակերպի վրա թողնված ազդեցությունները համարժեք գնահատելու համար ծրագրի տարածքում կամ անմիջապես դրան հարակից տարածքում առկա և հաստուկ թերթիկում ներկայացված զգայուն արժեքավոր ընկալիչները տեղ են գտել ՀԱՎԵԼՎԱԾ Զ-ում: Տեղի հանրությանը և այլ ընկալիչներին պատճառվող բացասական ազդեցություններից խուսափելուն, կանխելուն և/կամ դրանք մեղմելուն ուղղված միջոցառումները՝ և՛ ավտոբուսային հավաքակայանի շինարարության, և՛ դրա ավարտից հետո, պատասխանատու մարմինների հստակ մատնանշմամբ, ներկայացված են ԲԿՊ-ում (Գլուխ Ը՝ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ և ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ):
252. Արտակարգ իրավիճակները, ներառյալ հիվանդությունների վերահսկումը, ինչպիսին է COVID-19-ը, կառավարելի են: Ծրագրի բոլոր կողմերի՝ ԾԻԳ-ի, վերահսկողության Խորհրդատուի և Կապալառուի դերերն ու պատասխանատվությունները չափազանց կարևորվում են COVID-19 համաճարակի ժամանակ: Նրանք պետք է ապահովեն ԱԱԿՊ-ի արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ COVID-19-ի կանխարգելման, վերահսկման և մեղմացնող միջոցառումները:
253. COVID-19-ի վերահսկման դերերն ու պարտականությունները բաշխվում են հետևյալ կերպ.

Կապալառուի պարտականություններն են՝

- ✓ Ներառել ՇԲԿՊ-ում COVID-19-ի կանխարգելմանը, վերահսկմանը և մեղմացմանն ուղղված մանրամասն ԱԱԿՊ,
- ✓ Ապահովել, որպեսզի ԱԱԿՊ-ը պարբերաբար թարմացվի՝ հիմնվելով երկրի առողջապահության ոլորտը կարգավորող գործակալությունների և ԱՀԿ առողջության վերաբերյալ խորհրդատվություններ վրա,
- ✓ Իրականացնել ԱԱԿՊ-ում նախատեսված COVID-19-ի կանխարգելման, վերահսկման և մեղմացնող միջոցառումներ,
- ✓ Տրամադրել աշխատակիցներին նախաաշխատանքային և կանոնավոր դասընթացներ COVID-19-ի կանխարգելման, վերահսկման և մեղմացնող, ինչպես նաև ԱՊՄ-ների ճիշտ օգտագործման վերաբերյալ;

Նախնական գնահատման հայտ

- ✓ Տրամադրել բոլոր աշխատողներին համապատասխան ԱՊՄ-ներ և ապահովել, որպեսզի յուրաքանչյուր հերթափոխի համար առկա լինի բավարար մատակարարում կամ ինչպես նշված է առողջության վերաբերյալ խորհրդատվություններում,
- ✓ Ստանձնել COVID-19-ի կանխարգելման, վերահսկման և մեղմացնող միջոցառումների հետ կապված բոլոր ծախսերը, աշխատակիցներից որևէ գումար չպետք է զանձվի,
- ✓ Աշխատակիցներին բժշկական օգնություն ցուցաբերել աշխատանքային տեղամասում COVID-19-ի ցանկացած դեպք արձանագրելիս,
- ✓ Տրամադրել COVID-19-ի կանխարգելման, վերահսկման և մեղմացնող վերաբերյալ պաստառներ և այլ նյութեր՝ աշխատակիցներին հասկանալի լեզվով և ձևաչափով,
- ✓ Աշխատանքային ճամբարներում ապահովել աշխատողների միջև նվազագույնը 1 մետր հեռավորություն,
- ✓ Դադարեցնել գործունեությունը, եթե աշխատանքային տեղամասերը և/կամ հարակից տարածքները բարձր ռիսկերի են ենթարկվում COVID-19-ի պատճառով,
- ✓ Համապատասխանել աշխատակիցների բարեկեցությանը և աշխատանքային առողջությանն ու անվտանգությանը վերաբերող բոլոր ազգային և տեղական պահանջներին,
- ✓ Համակարգել ԾԻԳ/Խորհրդատուի հետ փաստաթղթերին, մոնիթորինգին և հաշվետվությանն առնչվող պահանջները, ներառել ձևանմուշները ՇԲԿՊ-ում,
- ✓ Թարմացնել արտակարգ իրավիճակների պլանը տեղական առողջապահական հաստատությունների կամ բժշկական անձնակազմի ցանկով, որոնք հասանելի են՝ տեղում կամ համայնքում COVID-19-ի հնարավոր դեպքերն ընդունելու համար,
- ✓ Պատրաստել երկշաբաթյա մոնիթորինգային հաշվետվություն COVID-19-ի վերաբերյալ և ներկայացնել ԾԻԳ-ին:

ԾԻԳ-ի պարտականություններն են

- ✓ Վերանայել կապալառուների նոր/թարմացված/վերանայված ԱԱԿՊ-ը և բացթողումներ հայտնաբերելու դեպքում՝ հիմնվելով առողջապահական ոլորտը կարգավորող գործակալությունների և ԱՀԿ կողմից տրված առողջապահական խորհրդատվությունների վրա, աջակցել կապալառուներին բացթողումները վերացնելու գործընթացում,
- ✓ Վերահսկել կապալառուների ԱԱԿՊ-ի ամենօրյա իրականացումը, մոնիթորինգը և հաշվետվությունը,
- ✓ Ստուգել աշխատանքային շինարարական տեղամասերը՝ կապալառուների պատրաստակամությունն ու COVID-19 կանխարգելման, վերահսկման և մեղմացնող միջոցառումների համապատասխան իրականացումը ապահովելու համար,
- ✓ Վերահսկել կապալառուների ԱԱԿՊ-ի իրականացումը,
- ✓ Համագործակցել տեղական առողջապահական մարմինների և բժշկական հաստատությունների հետ՝ շտապ օգնության դեպքերի և բուժման անհրաժեշտության համար,
- ✓ Վերահսկել բողոքների լուծման մեխանիզմի (ԲԼՄ) միջոցով բարձրացված բողոքները կամ առաջարկությունները,

Նախնական գնահատման հայտ

- ✓ Տրամադրել հասանելի տեղական առողջապահական հաստատությունների կամ բժշկական անձնակազմի ցանկը՝ COVID-19-ի հավանական դեպքերը աշխատանքային տեղամասում կամ համայնքում հաստատելու համար,
- ✓ Վերանայել կապալառուների կողմից ներկայացվող COVID-19-ի վերաբերյալ երկշաբաթյա մոնիթորինգային հաշվետվությունները և ամսական կտրվածքով ներկայացնել ԾԻԳ:

Տեխնիկական վերահսկողության խորհրդատուի (Ինժեների) պարտականություններն են՝

- ✓ Աջակցություն ցուցաբերել ԾԻԳ-ին՝ կապալառուներին COVID-19-ի կանխարգելման, վերահսկման և մեղմացնող վերաբերյալ անվտանգության հրահանգներ և ուղեցույցներ տրվելիս,
- ✓ Աջակցություն ցուցաբերել ԾԻԳ-ին՝ աշխատանքային տեղամասի ռիսկերի գնահատում, ստուգումներ, քննարկումներ և պլանավորում իրականացնելիս,
- ✓ Աջակցություն ցուցաբերել ԾԻԳ-ին՝ կապալառուների ՇԲԿՊ-ը ներառյալ ԱԱԿՊ-ը վերանայելիս,
- ✓ Աջակցություն ցուցաբերել ԾԻԳ-ին՝ COVID-19-ի վերաբերյալ մոնիթորինգային հաշվետվությունները վերանայելիս, և
- ✓ Վերլուծել կապալառուների կողմից ներկայացված հաշվետվությունները և աջակցություն ցուցաբերել ԾԻԳ-ին՝ բնապահպանական մոնիթորինգային կիսամյակային և կանոնավոր հաշվետվությունները (ԲՄՀ) նախապատրաստելիս:

Հաղորդողիների վրա ազդեցությունը

254. Հաղորդողիների (գազատարներ, էլեկտրալարեր, հեռահաղորդակցության մալուխներ) վրա ազդեցությունը գնահատվում է գոյություն ունեցող համակարգերի լրացուցիչ ծանրաբեռնվածության և վնասման տեսանկյունից: Վնասի ռիսկը, որը ցածր է գնահատվում, դիտարկվում է միայն շինարարության ժամանակահատվածում և առնչվում է ավտոբուսային հավաքակալանին մոտ գտնվող վերգետնյա հաղորդողիներին: Գործնականում այն զրոյական է շահագործման փուլում, մինչդեռ ավտոբուսային հավաքակալանի շահագործման փուլում հնարավոր է հաղորդողիների վրա որոշակի բեռնվածություն (սպառումը զգալի չէ շինարարական աշխատանքների ժամանակահատվածում): Բոլոր զգայուն ընկալիչները և ազդեցությունները որոշված և ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ Զ-ում՝ Ջրվեժի ավտոբուսային հավաքակալանի զգայուն ընկալիչների թերթիկում:
255. Ծառայությունների մատակարարման անհրաժեշտ խափանումները կլինեն կարճաժամկետ և տեղայնացված, հաշվի կառնվեն սեզոնային ժամանակը և օրվա ժամը: Ազդակիր անձինք պետք է ծանուցվեն աշխատանքներից առաջ: Պատահարի դեպքում՝ հետևանքները կվերացվեն կարճ ժամկետներում և ծառայությունների մատակարարումը արագ կվերականգնվի:
256. Ջրվեժի հավաքակալանի տարածքից դուրս գտնվող ստորգետնյա հաղորդողիների վնասումը հավանական չէ: Այնուամենայնիվ, իրականացվել է գործող հավաքակալանի հաղորդողիների հետազոտություն, և շինարարության ընթացքում ստորգետնյա հաղորդողիների աշխատանքի խափանման և դրանց պատճառված վնասների որոշակի ռիսկն առկա է, թեպետ նախագծողները այսօրինակ ազդեցության հավանականությունը ցածր

Նախնական գնահատման հայտ

Են գնահատում: Մրցույթն հաղթող կապալառուից պահանջվելու է նախքան աշխատանքները մեկնարկելը ևս մեկ անգամ իրականացնել հաղորդուղիների հետազոտություն և կառավարել դրանց տեղափոխումը՝ պահպանելով հաղորդուղիների տեղափոխման ենթապլանով նախատեսված մեղմացնող միջոցառումները:

257. Անմիջապես ծրագրային տարածքի հատվածում տեղակայված հաղորդուղիներին պատճառված վնասի հետևանքով առաջացած ազդեցությունը ամբողջությամբ վերացվելու է Կապալառուի կողմից՝ վնասված հաղորդուղիների տեղափոխման, նորոգման կամ փոխարինման միջոցով:
258. Տեղի ջրային համակարգերին միանալու տեխնիկական պայման ստանալու նպատակով Խորհրդատուն դիմել է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությանը: Համապատասխան տեխնիկական պայմանը տրամադրվել է (ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-3 և Ե-4), թեև 1-ին փուլի ջրամատակարարումը կապահովվի Ջրվեժի հավաքակայանին սպասարկող գոյություն ունեցող խողովակաշարին միանալու միջոցով:

Երթևեկություն և տրանսպորտ

259. Ջրվեժի հավաքակայանի վերակառուցման աշխատանքների ընթացքում ժամանակավորապես կմեծանա Թևոսյան փողոցի երթևեկության ինտենսիվությունը, ինչպես նաև կավելանա հարակից տեղական ճանապարհային ցանցի երթևեկությունը՝ շինարարության ընթացքում բեռնատարների ու այլ մեքենաների դեպի շինհրապարակ և այնտեղից դուրս երթևեկի պատճառով: Գոյություն ունեցող ճանապարհների ու հետիոտնային անցումների որևէ երկարաժամկետ զբաղեցում և/կամ արգելափակում չի ենթադրվում: Այնուամենայնիվ, հասարակական տրանսպորտի և հետիոտների անվտանգությունը որոշակիորեն կարող է վտանգվել: Հանրության անվտանգությունը կարող է վտանգված լինել, մուտքերը դեպի աշխատավայրեր և ձեռնարկատիրական գործունեության օբյեկտներ կարող են փակվել և դժվարանցանելի դառնալ:
260. Շինարարության ընթացքում հանրության անվտանգության ապահովման, խցանումների և քաղաքի երթևեկությանը պատճառվող այլ անհանգստությունների նվազեցմանն ուղղված ամենօրյա մեղմացնող միջոցառումները նկարագրված են ԲԿՊ-ում, նախ և առաջ՝ Երթևեկության կառավարման պլանում:
261. Հետշինարարական շահագործման փուլում վերոնշյալ փողոցներն, ընդհակառակը, կբեռնաթափվեն պայմանավորված այն հանգամանքով, որ հավաքակայանում կայանվելու են մոտ 200 նոր ԲՄԳ ավտոբուսներ գործող 249-ի փոխարեն: Այս ազդեցությունը քննարկվում է ստորև:

Լանդշաֆտի գեղագիտական գրավչություն

262. Շինարարական տարածքի մաքրումը ծառերից, ժամանակավոր ցանկապատումը, ճամբարների և շարժական տնակների հիմնումը, շինարարական մեքենաների կայանումը և շինանյութի և թափոնների կուտակումը լանդշաֆտի գեղագիտական տեսքի ձևափոխություն կառաջացնեն: Սակայն այս ազդեցությունը լինելու է ժամանակավոր և տևելու է մինչև աշխատանքների ավարտը: Շինարարության փուլում ազդեցության մեղմացումն ապահովվելու է ըստ Թափոնների և նյութերի կառավարման, Շրջակա միջավայրի

Նախնական գնահատման հայտ

պահպանության և Աշխատանքային տեղամասի կառավարման պլանների՝ ծրագրի տարածքից դուրս գտնվող տարածքն օգտագործելու համար: Շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ Կանաչապատման նախագծի (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ծ) և Տեղամասի վերականգնման պլանի համաձայն՝ կիրականացվի տեղամասի և գեղագիտական տեսքի վերականգնում:

Հնագիտական և մշակութային ժառանգություն/Ֆիզիկական և մշակութային ռեսուրսներ

263. Հնագետի խորհրդատվության համաձայն՝ նախատեսվող ծրագրի տարածքում Երևանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ներառված հնագիտական միավորները լիովին բացակայում են:
264. Շրջակա տարածքները դեռևս խորհրդային շրջանում լիովին մելիորացված են, իսկ արդի ժամանակաշրջանում գրեթե ամբողջովին կառուցապատված: Ամենամոտ գտնվող հնավայրերը, որոնք փաստագրված են՝ Նոր-Նորք-1, Նոր-Նորք-2, Նոր-Նորք-5 քարիդարյան կայաններն են, ՀՀ պաշտպանության նախարարության տարածքում գտնվող Ավանի վաղբրոնզեդարյան դամբարանադաշտը, Ջրվեժի և Մուշական գյուղի քարիդարյան և միջնադարյան հուշարձանները, որոնցից ամենամոտը ծրագրի տարածքից գտնվում է առնվազն 1-1,5 կմ հեռավորության վրա: Ուստի ծրագրի իրականացումը որևէ բացասական ազդեցություն ունենալ չի կարող տեղի պատմա-մշակութային միջավայրի վրա և նման ռիսկերի գոյությունը լիովին բացառվում է:
265. Այնուամենայնիվ, ԲԿՊ-ի Մշակութային ժառանգության կառավարման ենթապլանով նախատեսվում են որոշակի մեղմացնող միջոցառումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով հնագիտական գտածոների հայտնաբերման մասին ՀՀ օրենսդրական պահանջների բավարարմանը:

Ձ 2-2 Ավտոբուսային հավաքակայանի շահագործման ընթացքում առաջացող ազդեցությունները.

Մթնոլորտային օդի որակ

266. Մթնոլորտային օդի վրա ազդեցությունը հնարավոր է ավտոբուսային հավաքակայանի շահագործման փուլում՝ ավտոբուսային շարժակազմի կողմից արտանետվող գազերի տեսքով: Փոշու, CO, SO₂, NO₂ մակարդակների ավելացումը հետշինարարական փուլում գնահատվում է ոչ հավանական, քանի որ օպերատորի ավտոբուսային շարժակազմը կկրճատվի (ներկայիս 249-ից մինչև շուրջ 200 ավտոբուս), իսկ շարժակազմը կարդիականացվի և կփոխարինվի ժամանակակից ԲՄԳ տիպի ավտոբուսներով, որոնք բնութագրվում են գազի ավելի քիչ արտանետումներով:
267. Վերոնշյալ եզրակացությունը հաստատվել է Շիրակի ավտոբուսային հավաքակայանի համար կատարված ուսումնասիրության շրջանակներում իրականացված մթնոլորտային օդի որակի մոդելավորմամբ: Օդի որակի մոդելավորման նպատակն էր գնահատել Շիրակի նոր ավտոբուսային հավաքակայանի ստեղծման ազդեցությունը օդի որակի վրա: Գնահատումը կատարվել է օդի որակի վերաբերյալ ՄՖԿ- ի և ԱՀԿ -ի ուղեցույցների համաձայն և հիմնվել է

Նախնական գնահատման հայտ

2021 թվականի հունվարին տեղամասային այցելության ընթացքում հավաքագրված էլակետային տվյալների վրա: Օդի որակի և աղտոտման կանխատեսումները հիմնվել են աղտոտիչների արտանետումների գնահատման և մթնոլորտում ցրման մոդելի վրա: Ավտոբուսային հավաքակայանի համար արտանետումների գործակիցները որոշելու համար օգտագործվել է «Copert» մոդելը, որը տրանսպորտային միջոցների արտանետումների ստանդարտ հաշվիչն է ԵՄ-ում: Այն կիրառում է փոխադրամիջոցների քանակը, վազքը, արագությունը և այլ տվյալներ, ինչպիսիք են շրջակա միջավայրի ջերմաստիճանը, և հաշվարկում է արտանետումները և էներգիայի սպառումը որոշակի երկրի կամ տարածաշրջանի համար: Ավտոբուսային հավաքակայանի արտանետումների համար որոշվել են ԲՄԳ ավտոբուսների՝ վառելիքի սպառման և աղտոտող նյութերի արտանետումների գործակիցները: Այնուհետև «Copert» մոդելի տվյալներով գնահատվում է ԲՄԳ ավտոբուսի աղտոտող նյութերի արտանետումների գործակիցները: Այս աղտոտող նյութերի արտանետումների գործակիցները և ընդհանուր օրական արտանետումները համեմատվել են դիզելային ավտոբուսի արտանետումների հետ: Արդյունքները ներկայացված են «ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂՈՏԱՅԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԲՄԳ ԱՎՏՈՒՄԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ԾՐԱԳՐԻ՝ ՄԹՆՈՒՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ» հաշվետվության մեջ:

- 268. Շիրակի ավտոբուսային հավաքակայանի ծրագրի՝ մթնոլորտային օդի վրա ազդեցության վերոնշյալ գնահատումը հիմք է տալիս եզրակացնել, որ PM10-ը, PM2.5-ը և NO2-ը զգալիորեն նվազում են ԲՄԳ ավտոբուսային հավաքակայանի ստեղծմամբ՝ դիզելային հավաքակայանի համեմատ: Օդի որակի վատթարացման ներկա պայմաններում Ծրագիրը նպաստում է աղտոտիչների նվազեցմանը: ԲՄԳ ավտոբուսները կարտանետեն շատ ավելի քիչ աղտոտիչներ, քան շարժակազմի մնացած մասը: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ վերոնշյալ մոդելավորման արդյունքները կիրառելի են նաև Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի համար, և նման ազդեցությունը չի կարող համարվել նշանակալի:
- 269. Հաջորդ բաղադրիչը լիցքավորման կայանն է, որի նպատակն է հավաքակայանում ավտոբուսների համար ԲՄԳ-ի ապահովումը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ԲՄԳ-ին բնորոշ բաղադրությունը, որտեղ հիմնական բաղադրիչը մեթանն է՝ կազմելով 94%:

Աղյուսակ Զ-6. Բնական սեղմված գազի (ԲՄԳ-ի) բաղադրությունը

ԲՄԳ տիպային բաղադրությունը	Պայմանական նշանակումը	%
Մեթան	CH4	94,2
Էթան	C2H	62,29
Ածխաթթու գազ	CO	20,57
Պրոպան	C3H	80,03
Բութան	C4H	100,25
Նիտրոգեն	N2	0,44

Նախնական գնահատման հայտ

Այլ	H2, O2, S և այլն	2,0
-----	------------------	-----

270. Աղյուսակ Զ-6- ի ոչ մի նյութի վերաբերյալ չկա սանիտարահիգիենիկ պահանջ, ուստի սանիտարական առումով և բնակչության վրա ազդեցության տեսանկյունից հետաքրքրություններ կայացնող աղտոտիչները չեն արտանետվում լիցքավորման կայանի կողմից:
271. Նույնը վերաբերում է նաև ավտովագման կետին: Վերոնշյալ հետաքրքրություններ կայացնող աղտոտիչներից ոչ մեկը նշված չէ ավտովագման կետի համար, ուստի ենթադրվում է, որ ավտովագման կետը որևէ աղտոտիչ չի արտանետի:
272. Բացի այդ, հաշվի են առնվել Ծրագրի տեղանքում ավտոբուսային հավաքակայանի տարբեր բաղադրիչ մասերի արտանետումները: Նախագիծը տեղակայված է մի տարածքում, որտեղ արդեն առկա են աղտոտման այլ աղբյուրներ՝ վառելիքի այրում (երթնեկություն և տրանսպորտ, արդյունաբերություն և ձեռնարկատիրական գործունեություն):
273. Սա թույլ է տալիս եզրակացնել, որ Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի սույն **Ծրագրի ազդեցությունը չի հանգեցնի օդի որակի զգալի վատթարացման:**

Աղմուկ

274. Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի շահագործման ընթացքում աղմուկի ազդեցության աճ տեղի չի ունենալու այն պատճառով, որ գործող շարժակազմը համեմատությամբ մի կողմից կրճատվելու է սպասարկվող ավտոբուսների քանակը (249-ից մինչև 200), մյուս կողմից գործող ավտոբուսները փոխարինվելու են տեխնիկապես ավելի առաջադեմ մոդելներով: Այնուամենայնիվ, նորացված շարժակազմը նույնպես առաջացնելու է որոշակի աղմուկի մակարդակ:
275. Շիրակի ավտոբուսային հավաքակայանի ծրագրի շրջանակում իրականացված աղմուկի մոդելավորման և վերլուծությունների հիման վրա եզրակացվեց, որ ավտոբուսային հավաքակայանի շահագործման հետևանքով առաջացած աղմուկը արդյունավետորեն կճնշվի, իսկ թվերը կլինեն Հայաստանի օրենսդրական և ՄՖԿ ստանդարտների սահմաններում աղմկապաշտպան պատնեշի կառուցման շնորհիվ:
276. Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանը գործող օբյեկտ է, որի տարածքը պարսպապատված է ողջ պարագծով: Պարիսպը հիմնականում գտնվում է բարվոք վիճակում, բացառությամբ մի մասի, որը քանդվելու է և նորից կառուցվելու է: 582.7 մ երկարությամբ հատվածը կվերակառուցվի ավելի ամուր շինանյութի կիրառմամբ: 20 սմ հաստությամբ և 2,6 մ բարձրությամբ նոր պարիսպը կծառայի որպես աղմկապաշտպան պատնեշ՝ ավտոբուսների շարժակազմի շահագործման աղմուկի մակարդակը նվազեցնելու համար:
277. Բացի այդ, ծառեր և թփեր կտնկվեն հավաքակայանի տարածքի այն կողմերում, որոնք հարակից են հանրային վայրերին: Ավտոբուսային հավաքակայանի տարածքի կանաչապատումը նախագծված է: Այս բոլոր միջառումները թույլ կտան ավտոբուսային հավաքակայանի շահագործման հետևանքով առաջացած աղմուկի մակարդակը պահել թույլատրելի չափանիշների սահմաններում:
278. Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի ՇՄԱԳ-ի շրջանակներում իրականացվել է աղմուկի գործիքային չափագրում մասնագիտական ակուստիկ սարքավորումների միջոցով:

Նախնական գնահատման հայտ

Հետազոտության արդյունքները համեմատվել են Ադյուսակ Ե-6-ում ներկայացված Ծրագրի համար ընդունված սահմանային արժեքների հետ և կներառվեն հիմնական փուլի ՇՄԱԳ հաշվետվության մեջ:

Թրթռումներ

279. Թրթռումների մակարդակի բարձրացում անշուշտ տեղի կունենա անմիջապես հավաքակայանի տարածքում, ինչպես նաև հարակից տարածքներում Ծրագրի շինարարության, սակայն ոչ շահագործման փուլում (ՀԱՎԵԼՎԱԾ Ը., Ադյուսակ Ը-2): Ավտոբուսային հավաքակայանի շահագործման փուլում թրթռումների մակարդակը կլինի ընդունելի սահմաններում:

Ջրային մարմինների և ստորգետնյա ջրերի որակը

280. Մակերևութային ջրային մարմինների վրա հետշինարարական ազդեցություն տեղի չի ունենալու, Ծրագրի տարածքի մոտակայքում դրանց բացակայության պատճառով:
281. Ստորգետնյա ջրերի վրա ազդեցությունը հավանական չէ և գնահատվում է որպես «ոչ զգալի» քանի որ ավտոբուսային հավաքակայանի ամբողջ մակերեսը կասֆալտապատվի: Ասֆալտե պատվածքը, հեղուկ նյութերի պատշաճ և անվտանգ պահպանման շահագործման ձեռնարկը և ստորգետնյա ջրերի խորը տեղակայվածությունը կբացառեն շահագործման ընթացքում ցանկացած աղտոտում: Ավտոբուսների շարժակազմը թարմացվում է բոլորովին նոր ավտոբուսներով, իսկ արտահոսքերը քիչ հավանական են և հազվադեպ: Ավելին, ավտոբուսային նոր հավաքակայանը կահավորված է ժամանակակից տեխսպասարկման կայաններով, և մեքենաների տեխնիկական վիճակը խստորեն վերահսկվելու է օպերատորի կողմից: Այնուամենայնիվ, նախատեսվում են մեղմացնող միջոցառումներ (ՀԱՎԵԼՎԱԾ Ժ):

Բուսական աշխարհ (ֆլորա)

282. Բուսական աշխարհի վրա ազդեցությունը հիմնականում սահմանափակվում է շինարարական աշխատանքների իրականացման ժամանակահատվածում հավաքակայանի տարածքում աճող դեկորատիվ ծառերի հատումով: Շահագործման ժամանակահատվածում Օպերատորը կխնամի կտրված ծառերի փոխարեն տնկված ծառերն ու թփերը: Կանաչապատման համար ոռոգման համակարգը կնախագծվի 2-րդ փուլում, որը թույլ կտա ոռոգել ոչ միայն ավտոբուսային հավաքակայանի տարածքում կանաչապատման նախագծի համաձայն տնկված ծառերն ու թփերը, այլ նաև ավտոբուսային հավաքակայանի ծրագրի տարածքից դուրս տնկվածները:

Գրունտներ և բուսահող

283. Ազդեցությունը հողի վրա նույնպես սահմանափակված է շինարարական աշխատանքների ժամանակահատվածով: Կառուցապատվող նոր հողատարածքը մեծ չէ՝ մոտ 1078 մ², համայնքային չօգտագործվող հող է և գտնվում է հավաքակայանի տարածքի անմիջապես հարևանությամբ: Որևէ տեսակի աղտոտում նույնպես հնարավոր չէ ավտոբուսային հավաքակայանի ամբողջ տարածքի ասֆալտե պատվածքի պատճառով: Հավաքակայանի կանաչապատ տարածքներում առկա է սահմանափակ քանակությամբ

Նախնական գնահատման հայտ

բուսահող (մոտ 330 մ³), որը կհեռացվի և կպահպանվի հետագա վերաօգտագործման նպատակով:

Նյութերի ստացման աղբյուրներ (գազի, ջրի, էլեկտրականության մատակարարում)

284. Ավտոբուսների շարժակազմի վերալիցքավորման համար գազի մատակարարումը կկազմակերպվի համապատասխան կազմակերպության՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ կնքված մատակարարման պայմանագրի հիման վրա:
285. Ավտոբուսային հավաքակայանի շահագործման ընթացքում տեխնոլոգիական նպատակներով ջրամատակարարումը կկազմակերպվի օպերատորի և համապատասխան կազմակերպության միջև մատակարարման պայմանագիր կնքելու միջոցով: Ջրամատակարարման պայմանագիր կնքելու հեռանկարով ամենամոտ ջրային համակարգերին միանալու հնարավորությունը ուսումնասիրվում է նախագծման փուլում: (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-3): Մանիտարական և հրդեհաշիջման նպատակների համար գործող Փ- 250 մմ ջրատարին միացումը թույլատրվում է:
286. Այս ազդեցությունը գնահատվում է ոչ բարձր, քանի որ ջրի հավելյալ պահանջարկը՝ համեմատած արդեն գործող հավաքակայանի հետ, էական չէ՝ հաշվի առնելով, որ ջուրը կպահանջվի հիմնականում ջրի վերացիկլավորման համակարգով ապահովված լվացման կայանի շահագործման համար: Մաքուր ջրի պահանջարկը մատակարարի կողմից գնահատվում է մոտ 15%: 2-րդ փուլի համար կվերակառուցվի և կօգտագործվի նաև հավաքակայանի տարածքում գոյություն ունեցող ջրհորը:
287. Շինարարության ընթացքում տեխնոլոգիական նպատակներով ջրամատակարարումը կկազմակերպվի կապալառուի և օպերատորի միջև կնքված պայմանագրի հիման վրա:
288. Խորհրդատուն նախագծել է անձրևաջրերի մաքրման համակարգ, որը միացված է Թևոսյան փողոցի ջրահեռացման համակարգին: Այդ նպատակով խորհրդատուն դիմել է «Վեոլիա Ջուր» ՍՊԸ և ստացել է տեխնիկական պայման (ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-3, Ե-4):
289. Ավտոբուսային հավաքակայանի կառուցման և շահագործման ընթացքում տեխնոլոգիական նպատակներով էլեկտրաէներգիայի մատակարարումը կկազմակերպվի համապատասխան կազմակերպության՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ մատակարարման պայմանագիր կնքելու միջոցով:

Թափոնների առաջացում

290. Ավտոբուսային հավաքակայանի շահագործման ընթացքում կառաջանան հետևյալ տեսակի կոշտ և հեղուկ թափոնները.

ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐ

- ✓ մուտքային բաժանարարի (գատիչի) ներսում ձևավորված մասնիկներ,
- ✓ կոմպրեսորների ներսում առաջացած մեխանիկական խառնուրդներ,
- ✓ ավտոբուսների շարժակազմի՝ շահագործման համար ոչ պիտանի պահեստամասեր,

Նախնական գնահատման հայտ

- ✓ օգտագործված սարքավորումների՝ շահագործման համար ոչ պիտանի պահեստամասեր,
- ✓ ավտոբուսների անվադողեր - կատեգորիա III,
- ✓ կոշտ թափոններ՝ մետաղի, փայտե, պլաստմասե մասերի, դատարկ պարկերի, տարաների և այլնի տեսքով,
- ✓ կենցաղային աղբ և սննդի օրգանական թափոններ:

ՀԵՂՈՒԿ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ / ՎՆԱՍԱԿԱՐ ԹԱՓՈՆՆԵՐ

- ✓ գազի՝ ջրի կաթիլներից մաքրման ընթացքում մուտքի գատիչներում առաջացող հեղուկը,
 - ✓ որպես չորացնող միջոց օգտագործվող սիլիցելային գելը,
 - ✓ ավտոբուսների լվացման կեղտաջրերը, որոնք ուղղվում են դեպի քաղաքային կոյուղու գծին միացված հավաքակայանի ջրահեռացման համակարգ,
 - ✓ ավտոբուսների սպասարկման համար օգտագործվող յուղերի/քսանյութերի մնացորդներ,
 - ✓ սանիտարահիգիենիկ սարքավորումներից դուրս եկող կեղտաջրերը,
 - ✓ բենզինի և դիզելի թափոններ, որոնք առաջանում են դիզվառելիքի հազվադեպ օգտագործումից:
291. Թափոնների վերոնշյալ տեսակների կառավարումը կկազմակերպվի ավտոբուսային հավաքակայանի օպերատորի կողմից՝ համաձայն Գլխում Ը-ի՝ Թափոնների և նյութերի կառավարման պլանի առաջարկությունների:
292. Շահագործման փուլում ավտոբուսային հավաքակայանի տարածքից կեղտաջրերի արտահոսքը լինելու է վերահսկելի: Աղտոտված կեղտաջրերը կմաքրվեն կախույթային մասնիկներից, նավթից և վառելանյութերից 3 հատվածից բաղկացած ստորգետնյա կուտակիչներում, այնուհետև կանցնեն վերջնական մաքրման սարքավորում, որն ապահովում է ջրի 85-90% մաքրում և վերացիկլավորում: Առանձնացված նավթի և վառելիքի մնացորդները կհավաքվեն «TAPE SKIMMER SKMR-100» տիպի հատուկ սարքում, որից հետո կհեռացվեն: Հեռուարար, հավաքակայանի կեղտաջրերը չեն կարող հանդիսանալ տեղական ջրահեռացման և կոյուղատար համակարգերի աղտոտման և նստվածքագոյացման աղբյուր: Անձրևաջրերի հեռացման համար հավաքակայանի տարածքում նախատեսված է ջրահեռացման համակարգ:

Սոցիալական համակարգեր

293. Գնահատվել է նաև մշտական ազդեցությունը սոցիալական համակարգերի վրա, որը ներառում է գոյություն ունեցող հավաքակայանի անձնակազմի առողջության և կենսապայմանների չափանիշները, հանգստյան տները, ռեստորանները և հարևանությամբ տեղակայված այլ ձեռնարկատիրական հիմնարկները, տեղական ճանապարհների և հաղորդակցության ցանցը և այլն: «Մշտական» նշանակում է, որ ազդեցությունը չի սահմանափակվի միայն շինարարական աշխատանքների ժամանակահատվածով: Հնարավոր ազդեցությունները կվերացվեն կամ կմեղմացվեն նախատեսված պաշտպանական միջոցառումների միջոցով: Հնարավոր ազդեցությունների այս տեսակները մանրամասն

Նախնական գնահատման հայտ

ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ Զ-ում: Ծրագծի թերթիկը և առաջարկվող մեղմացնող միջոցառումները թվարկված են ԲԿՊ-ի տարբեր ենթապլաններում:

Ազդեցությունը աշխատողների և հանրային առողջության և անվտանգության վրա

294. Ընդհանուր առմամբ՝ մարդկանց առողջության վրա ազդեցությունը կարող է լինել մթնոլորտային օդի որակի վատթարացման, աղմուկի և թրթռման մակարդակի բարձրացման, երթևեկության ոչ պատշաճ կառավարման վտանգների, վտանգավոր նյութերի և թափոնների աղտոտիչների հետևանքով, արտակարգ իրավիճակներին պատշաճ ուշադրություն չդարձնելը, այդ թվում այնպիսի հիվանդությունների վերահսկումը, ինչպիսին է COVID-19-ը:

295. Ինչպես արդեն քննարկվել է, ազդեցությունը օդի որակի վրա, ինչպես նաև աղմուկի և թրթռումների տեսքով չի աճելու վերակառուցված հավաքակայանի շահագործման փուլում: Երթևեկության ոչ պատշաճ կառավարման հետևանքային վտանգները, ինչպես նաև նյութերի և թափոնների կառավարումը նույնպես քննարկվել են: Համապատասխան մեղմացնող միջոցառումները քննարկվում են Գլխում Ը-ում և պլանավորված են ՀԱՎԵԼՎԱԾ Ժ-ում ներառված ԲԿՊ սխեմայում:

Ազդեցությունը հաղորդողիների վրա

296. Ծրագրի շինարարական աշխատանքների փուլում տեղանքում առկա հաղորդողիների ցանցի վրա ազդեցությունը սահմանափակված է վերջիններիս վատթարացման և վնասման ռիսկերով: Ազդեցությունը շահագործման փուլում կարող է լինել քաղաքային ջրամատակարարման և կոյուղու համակարգի, էլեկտրաէներգիայի, գազամատակարարման և հեռահաղորդակցության համակարգի վրա ծանրաբեռնվածության առումով: Խորհրդատուն ուսումնասիրել է ավտոբուսային հավաքակայանի կողմից առաջացրած հնարավոր ծանրաբեռնվածությունը քաղաքային ջրամատակարարման և կոյուղու համակարգի վրա՝ դիմելով «Վեոլիա Ջուր» ՍՊԸ-ին՝ տարածքային համակարգերին միանալու տեխնիկական պայման ստանալու համար: Թույլտվությունը տրամադրվել է Ծրագրին (ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-3, Ե-4):

297. Ավտոբուսային հավաքակայանի տարածքից կեղտաջրերի անվերահսկելի արտահոսք շահագործման փուլում չի կանխատեսվում, ուստի այն չի կարող հանդիսանալ տեղական ջրահեռացման և կոյուղատար համակարգերի աղտոտման և նստվածքազոյացման աղբյուր: Անձրևաջրերի հեռացման համար նախատեսված է ջրահեռացման համակարգ հավաքակայանի տարածքում: Ավտոբուսների լվացման կայանի տեխնիկական սրահի տակ լինելու է նկուղ, որտեղ տեղադրվելու է «APOC» ջրի մաքրման սարքավորումը՝ 5 մ³/ժ հզորությամբ՝ նավթայուղերով և կախույթային պինդ մասնիկներով աղտոտված կեղտաջրերի ներթափանցումը քաղաքային կոյուղու համակարգ կանխելու համար: Աղտոտված կեղտաջրերը կմաքրվեն կախույթային մասնիկներից, նավթից և վառելանյութերից 3 հատվածից բաղկացած ստորգետնյա կուտակիչներում, այնուհետև կանցնեն վերջնական մաքրման սարքավորում, որն ապահովում է ջրի 85-90% մաքրում և վերացիկլավորում: Առանձնացված նավթի և վառելիքի մնացորդները կհավաքվեն «TAPE SKIMMER SKMR-100» տիպի հատուկ սարքում և կհեռացվեն:

Նախնական գնահատման հայտ

Երթևեկություն և տրանսպորտ

298. Ծրագիրը երկարաժամկետ կտրվածքով անշուշտ ազդեցություն է ունենալու քաղաքային երթևեկության վրա: Մյուս կողմից՝ այս ազդեցությունը ներկա իրավիճակի համեմատ չի ավելանա, քանի որ Թևոսյան փողոցի վերակառուցված ավտոբուսային հավաքակայանը կսպասարկի ընդհանուր առմամբ 200 ԲՄԳ ավտոբուսի, ինչն ավելի քիչ է, քան այս հավաքակայանում սպասարկվող ավտոբուսների ներկայիս շարժակազմը: Յուրաքանչյուր ավտոբուսի համար օրական մեկ շրջապտույտի հաշվարկով՝ գնահատված է, որ յուրաքանչյուր ավտոբուս ամեն առավոտ և երեկո հավաքակայանի տարածքում երթևեկում է 100 մետր: Դրա հիման վրա կատարվում է հետևյալ ենթադրությունը. ավտոբուսային հավաքակայանը օգտագործվում է հավասարապես ամբողջ օրվա ընթացքում՝ յուրաքանչյուր ավտոբուսը՝ օրական մեկ շրջապտույտ: Ավտոբուսները հավաքակայան կմտնեն 1 նորակառույց մուտքից՝ Թևոսյան փողոցի անկյունից, և կապահովվի մեկ ելք (ներկայիս գլխավոր մուտքը) դեպի Թևոսյան փողոց: Հնարավոր է նաև մեկ ելք դեպի Հովհաննիսյան փողոց: Այսպիսով, Ծրագրի տարածքը մոտ է երեք տարբեր ճանապարհների, տես Նկար Զ-1:

Նկար Զ-2. Ծրագրի տեղադիրքը քաղաքային ճանապարհների նկատմամբ





Լանդշաֆտի գեղագիտական գրավչություն

299. Լանդշաֆտի և շրջակա միջավայրի նախաշինարարական գեղագիտական տեսքը Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման ծրագրի հետևանքով չի ենթարկվելու անդառնալի ձևափոխությունների, քանի որ շինարարական աշխատանքներն իրականացվելու են գոյություն ունեցող հավաքակայանի պարսպապատ տարածքում: Տարածքի ներքին կանաչապատումը և գեղագիտական տեսքը ժամանակավորապես կփոխվի շինարարական աշխատանքների ընթացքում, այնուհետև կվերականգնվի կանաչապատման նախագծի իրականացման միջոցով (տարածքի կանաչապատումը մշակված և ներառված է նախագծային փաթեթում)՝ արտաքին գեղագիտական գրավչություն ապահովելու համար:

Զ 3. Համապարփակ ազդեցության գնահատում

300. Առաջնորդվելով ԱԶԲ անվտանգության քաղաքականությամբ և ՀՀ օրենսդրական պահանջներով¹⁸ Ծրագրի առաջացրած հավանական ազդեցությունները դիտարկելուց և առանձին-առանձին վերլուծելուց հետո իրականացվում է համալիր ազդեցության գնահատում և համապատասխան մեղմացնող միջոցառումների պլանավորում՝ հաշվի առնելով Ծրագրի ազդեցությունների հնարավոր զուգակցումը և կուտակային էֆեկտի առաջացումը: Ուսումնասիրվել են ինչպես միջօրագրային, այնպես էլ՝ ներօրագրային ազդեցությունները:
301. Միջօրագրային ազդեցությունների շրջանակները սահմանված և ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ Ը-ի Սխեմա Ը-1-ում և Ը-2-ում: Սխեմա Ը-1-ից պարզ է դառնում, որ բազմաթիվ գործողությունների պատճառով կարող են ազդեցություն կրել նույն ԱԶԸ-ները՝ այսպիսով ենթարկվելով կուտակային ազդեցությունների: Ազդեցությունների մեծ մասը կարճաժամկետ է, հանդիպելու է հիմնականում շինարարության ընթացքում և էականորեն մեղմացվելու ԲԿՊ-ում և ՇԲԿՊ-ում պլանավորված միջոցառումների իրականացման միջոցով (տե՛ս նաև ՀԱՎԵԼՎԱԾ Ժ-ի Սխեմա Ժ-3):
302. Համապատասխան փաստաթղթերի, այդ թվում՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ուսումնասիրությունները, ինչպես նաև ԵՔ մարմինների հետ հաղորդակցությունը ցույց տվեցին, որ Ծրագրի ազդեցության տարածքում միաժամանակ չի նախատեսվում իրականացնել այլ ծրագրեր/գործողություններ, որոնք կարող են հանգեցնել բացասական բնապահպանական ազդեցությունների աճի:
303. Ներօրագրային ազդեցությունների շրջանակները և դրանց խստությունը կարող է ընդլայնվել ամբողջ ՇՄԱԳ գործընթացի ընթացքում՝ հետագա հետազոտությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, Ճանապարհային ոստիկանության և Երևանի քաղաքապետարանի հետ խորհրդակցությունների, ինչպես նաև ազդեցության ենթակա անձանց և այլ շահագրգիռ կողմերի հետ հետագա հանրային քննարկումների արդյունքում: Շինարարության ընթացքում այլ գործունեության կամ այլ ծրագրի ի հատյտ գալու պարագայում, ազդեցությունները կուսումնասիրվեն և ՇԲԿՊ-ն կթարմացվի լրացուցիչ մեղմացնող միջոցառումների ընդգրկման նպատակով, ինչպես նաև հնարավորության դեպքում կապ է հաստատվելու ծրագրերի միջև՝ նպատակ ունենալով նվազեցնել այդ ծրագրերի կուտակային ազդեցությունները:

¹⁸ ԱԶԲ ԱԲՀ (2009), Հավելված 1, պարբ. 6 և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, Հոդված 18, 5)

Է. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ, ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ,
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

305. Ծրագրի բոլոր փուլերում՝ նախագծման փուլից շինարարություն և շահագործում, բոլոր շահագրգիռ կողմերի, ազդակիր անձանց, ՀԿ-ների և այլ շահագրգիռ անձանց բովանդակալից և արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար ՀՀ օրենսդրության և ԱԶԲ ԱՔՀ-ի (2009) համաձայն՝ իրականացվել են հանրային լուսմներ և հաղորդակցություններ: Հանրային լուսմների և հաղորդակցության պլանը (ՀԼՀՊ) մշակվել է ՇՄԱԳ/ԲԿՊ-ի շրջանակներում՝ որպես Բնապահպանական կառավարման պլանի բաղկացուցիչ մաս (տե՛ս Գլուխ Ը): ՀԼՀՊ-ը ներառում է հետևյալը.
- I. Ծրագրի մասին հասարակության իրազեկվածության բարձրացման նպատակով դրա վերաբերյալ տեղեկատվության հրապարակում:
 - II. Նախագծի և ՇՄԱԳ/ԲԿՊ-ի մշակման փուլերում հանրության և ազդակիր անձանց մասնակցության ապահովման նպատակով հանրային լուսմների կազմակերպում: Ի լրումն, նախքան շինարարական շխատանքների մեկնարկը Կապալառուն իրականացնում է նախաշինարարական հանրային լուսմ, այնուհետև՝ հարկ եղած դեպքում՝ ընթացիկ հանրային լուսմներ (օր.՝ նախագծի փոփոխման և/կամ որևէ էական չնախատեսված ազդեցության դեպքում): Հետագա հանրային լուսմների անհրաժեշտություն կարող է առաջանալ և իրականացվել Կապալառուի կողմից Ինժեների և ԵՔՕԻԳ-ի աջակցությամբ ու մասնակցությամբ:
 - III. Բողոքների լուծման մեխանիզմ՝ ազդակիր անձանց և շահագրգիռ կողմերի հետ ամենօրյա մշտական հաղորդակցության միջոցով բողոքներին և առաջարկություններին արագ արձագանքելու նպատակով:

Է1. Տեղեկատվության հրապարակում

306. Ծրագրի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը սկսվել է նախագծման փուլում: Ծրագրի մասին տեղեկատվությունը, այդ թվում՝ մանրամասն նախագիծը և ՇՄՆՈՒ հաշվետվությունը հասանելի են դարձվել հանրությանը, համապատասխան մարմիններին և շահագրգիռ կողմերին: Ծրագրի մասին տեղեկատվությունը հանրայնացվել է՝
- ա) Երևանի քաղաքապետարանի, Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի օպերատորի վարչակազմի, Նոր Նորք վարչական շրջանի և այլ պետական մարմինների հետ խորհրդակցությունների ընթացքում (տե՛ս հաշվետվությունը ՀԱՎԵԼՎԱԾ Թ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-1),
 - բ) հանրային լուսմների միջոցով (Արձանագրությունը տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Թ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-3),
 - գ) ՇՄՆՈՒ հաշվետվությունը (անզլերեն և հայերեն)՝ ԵՔՕԻԳ-ի կայքում¹⁹
307. Հետևյալ փաստաթղթերը հրապարակվելու են ԱԶԲ-ի, ԵՔ-ի և ԵՔՕԻԳ-ի կայքէջերում և անհրաժեշտության դեպքում պարբերաբար կթարմացվեն.
- ա) ՇՄԱԳ հաշվետվության հայերեն և անզլերեն տարբերակները;

¹⁹<https://sudipyerevan.am/en/environmental-impact/>

Նախնական գնահատման հայտ

- բ) Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակները (ԲԳՈԻՇ),
- գ) Պատվիրատուի կողմից պատրաստված ծրագրի առաջընթացի և ԲԿՊ-ի իրականացման մասին կիսամյակային հաշվետվությունները:

308. Ներածական և հետագա հանդիպումների, ինչպես նաև հանրային քննարկումների իրականացման շրջանակները սահմանելու նպատակով որոշվում է ծրագրի առանցքային շահագրգիռ կողմերի շրջանակը, որը կարող է նշվել և ընդլայնվել ազդեցության գնահատման գործընթացի ընթացքում և ՇՄՆ-ն կողմից՝ ըստ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ թիվ 1325-Ն որոշման (19.11.2014):

- Էկոնոմիկայի նախարարություն,
- Ֆինանսների նախարարություն և Կենտրոնական բանկ,
- Բնապահպանության նախարարություն և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
- Երևանի քաղաքապետարան,
- Ասիական զարգացման բանկ,
- Նոր Նորք վարչական շրջան, ազդակիր անձինք,
- Ջրվեժի ավտոբուսային հավաքակայան,
- Հասարակական կազմակերպություններ

Է 2. Քննարկումներ և հանրության մասնակցություն

309. Ազդակիր Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի հետ իրականացվել է ներածական հանդիպում: Ազդեցության ենթակա շրջանի վարչական մարմնին վարչական շրջանի տարածքում Ծրագիրն իրականացնելու մտադրության մասին տեղեկացնող պաշտոնական գրություն է ուղարկվել՝ ծրագրի համառոտ նկարագրությամբ (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Թ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2): Ծրագրի ինժեներական և բնապահպանական թիմերի և Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի՝ պրն. Սուրեն Ղամբարյան հետ համատեղ ժողովը տեղի է ունեցել 2021 թվականի դեկտեմբերի 14-ին:

310. Ներածական հանդիպման ընթացքում նախագծային թիմը ներկայացրեց Ծրագրի նախագծերը և այլ տեխնոլոգիական ու ինժեներական մանրամասներ, բացի այդ, ազդեցության ենթակա համայնքի ներկայացուցիչը տեղեկացվեց շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացի առաջընթացին և մեղմացնող միջոցառումների պլանավորմանը: Ազդեցության ենթակա շրջանի ղեկավարը տեղեկացվեց այն մասին, որ Ծրագրի նախաձեռնողները, Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ԱԶԲ Անվտանգության քաղաքականության համաձայն, կազմակերպում են հանրային քննարկման միջոցառումներ, և նրանց հարցում արվեց իրենց օժանդակությունը ցուցաբերել և նպաստել այդ միջոցառումների իրականացմանը՝ ապահովելով հանրության մասնակցությունը և արդյունավետ ու բովանդակալից հանրային քննարկումների իրականացումը (ներածական հանդիպման մասին ամբողջական հաշվետվությունը տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Թ-ում, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-Թ-ում):

311. Հանրային քննարկումների և տեղեկատվության հրապարակման մասին ԱԶԲ-ի ԱՔՀ-ի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները, մասնավորապես՝ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության թիվ 1325-Ն որոշման (19.11.2014) պահանջները բավարարելու նպատակով իրականացվելու են մի շարք հանրային քննարկումներ/լսումներ: ԱԶԲ-ի

Նախնական գնահատման հայտ

քաղաքականության և Հայաստանի օրենսդրության պահանջները լիովին բավարարելու նպատակով 4 փուլով իրականացվելու են հանրային քննարկումներ/լսումներ Երևանի ազդեցության ենթակա Նոր Նորք վարչական շրջանում: Բոլոր հանրային քննարկումները/լսումները կազմակերպվելու են ՄՆԽ-ի կողմից ԵՔՕԻԳ-ի անունից՝ որպես Ծրագրի նախաձեռնող: Պետական իրավասու մարմինը ապահովելու է իր ներկայացուցիչների մասնակցությունը քննարկումներին:

312. **Առաջին փուլ.** Հանրային քննարկումը կազմակերպվել և տեղի է ունեցել 2022 թվականի հունվարի 21-ին: Քննարկումը վարում էր Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության պետի տեղակալ պրն. Գևորգ Նավասարդյանը: Որպես քննարկման անցկացման վայր՝ ընտրվել էր Նոր Նորքը, քանի որ Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանը գտնվում է այս վարչական շրջանում: Քննարկմանը հրավիրվել են ազդեցության ենթակա համայնքի ներկայացուցիչները, ինչպես նաև ազդեցության ենթակա ձեռնարկատիրական հիմնարկների ներկայացուցիչները, ՀԿ-ները և ԱԶԲ-ի ներկայացուցիչը:
313. Հանրային քննարկման իրականացման նպատակն էր տեղեկացնել շահագրգիռ կողմերին և հանրությանը ծրագրի իրականացման մտադրության և ընդհանուր գաղափարի մասին, նրանց հնարավորություն տալ տեղյակ լինելու ծրագրի մասին, հնարավորինս շուտ բարձրացնելու իրենց հուզող հարցերը, որպիսի հնարավոր լինի բոլոր ողջամիտ առաջարկությունները հաշվի առնել Ծրագրի նախագծում, մեղմացնող միջոցառումների և մոնիթորինգի պլանում: Միջոցառման ամբողջական հաշվետվությունը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ Թ-ի ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-3-ում:
314. Յուրաքանչյուր հանրային քննարկում/լսում իրականացնելուց առաջ ՄՆԽ-ն ապահովում է համապատասխան տեղեկատվության և փաստաթղթերի ժամանակին հրապարակումը, հասկանալի բնույթը և հասանելիությունը ազդեցության ենթակա մարդկանց, այդ թվում՝ կանանց, աննպաստ վիճակում գտնվողների և այլ խոցելի խմբերի համար: Առաջին հանրային քննարկման և նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ծանուցումը, ներառյալ՝ Նախնական ազդեցությունների գնահատման մասին հաշվետվությունը, տեղադրվել են ԵՔՕԻԳ-ի պաշտոնական կայքում²⁰: Ծանուցումները և վերջնական ՆԲՓ-ը հանրային քննարկումներից առաջ՝ առնվազն 7 աշխատանքային օրվա ընթացքում, հրապարակվելու է իրավասու մարմնի՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի և ԵՔՕԻԳ-ի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև թղթային պատճենները ներկայացվելու են հիշյալ մարմիններին:
315. Հանրային քննարկման իրականացման մասին ծանուցումը 2022 թվականի հունվարի 11-ին հրապարակվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, ինչպես նաև հայտարարություններ են փակցվել Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանին հարող՝ հանրային տեսանելի վայրերում: Երևան Օրիուս Կենտրոն ցանցի միջոցով հրավերները և

²⁰ՇՄՆՈՒ, ԲՍԳ-ով լիցքավորման կայանի կառուցում Արշակունյաց պողոտա – Շիրակի փողոց փոխհատման հարևանությամբ ավտոբուսային հավաքակայանի և Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի համար

[https://sudipyerevan.am/en/environmental-impact/;](https://sudipyerevan.am/en/environmental-impact/)

GrCF2 W2 -Երևանի ավտոբուսային հավաքակայանի ծրագիր_նչ տեխնիկական ամփոփագիր

<https://sudipyerevan.am/%d5%a2%d5%b6%d5%a1%d5%ba%d5%a1%d5%b0%d5%ba%d5%a1%d5%b6%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6>

Նախնական գնահատման հայտ

ծրագրի մասին տեղեկատվությունն տարածվել է հասարակական կազմակերպությունների շրջանակում:

316. Հանրային քննարկման մասին հայտարարությունը, օրակարգը, մասնակիցների ցանկը և մասնակիցների կողմից բարձրացված հարցերի և անհանգստությունների արձանագրությունը, ձեռք բերված պայմանավորվածությունների ու տրված լուծումների մասին ամբողջական տեղեկատվության հետ միասին պատշաճ կերպով փաստաթղթավորվել է և կցվել է սույն հաշվետվությանը՝ որպես ՀԱՎԵԼՎԱԾ Թ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-3: Հանրային քննարկման արձանագրությունը տեսագրության հետ միասին նույնպես ներկայացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի և ԵՔԾԻԳ-ի պաշտոնական կայքէջերում:
317. Հանրային քննարկումները/լուծումները տեղի են ունեցել համավարակի տարածման պայմաններում, որի ընթացքում պահպանվել է COVID-19 համավարակին համապատասխան ձևաչափը՝ ՀՀ Պարետի գործող որոշումների համաձայն (տե՛ս նաև Գլուխ Ը՝ Աշխատանքային անվտանգության և առողջության պլան): Հետագա քննարկումների անցկացման համար ընդունելի է նաև մեկ այլ տարբերակ, ինչպես օրինակ՝ անհատական կամ փոքր խմբերով բացօթյա քննարկումներ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների և ԱԵԱ-երի միջև: Այս միջոցառումները նույնպես պատշաճ կերպով փաստաթղթավորվելու են:
318. 1-ին հանրային քննարկման ընթացքում շահագրգիռ կողմերի կողմից բարձրացված բոլոր հարցերը քննարկվել են և տրվել բավարար պատասխաններ (տե՛ս Արձանագրությունը ՀԱՎԵԼՎԱԾ Թ, Ենթահավելված Թ-3-ում): Հիմնական շահագրգիռ կողմերը հայտնեցին իրենց գոհունակությունը և տվեցին իրենց նախնական հավանությունը ծրագրի համար:
319. Եթե ծրագրի մեկնարկը որևէ պատճառով երկար ժամանակով հետաձգվի, ապա հանրային քննարկումը կիրականացվի մեկ այլ հանրային լսում՝ տվյալ ժամանակահատվածին համապատասխան ձևաչափի պահպանմամբ:
320. **Երկրորդ փուլ.** ազդեցության ենթակա համայնքում իրականացվելիք հանրային լսումը ղեկավարվելու է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից և կազմակերպվելու է, ենթադրաբար, նաև 2022թ. գարնանը: Նախնական նախագիծը և ակնկալվող ազդեցությունները ներկայացվելու են մասնակիցներին, նրանց դիտողություններն ու առաջարկությունները արձանագրվելու են և ամփոփվելու՝ նախքան Բնապահպանական փորձաքննության ընթացակարգի հիմնական փուլի համար ՇՄՆ-ին դիմելը:
321. **Երրորդ փուլ.** կրկին Երևանի քաղաքապետարանի կողմից ղեկավարվող հանրային քննարկումը կազմակերպվելու է համապատասխան մարմնի կողմից Ազդեցությունների գնահատման ՊՇ-ն ստանալուց և մանրամասն նախագծի պատրաստ լինելուց հետո: Վերջնական ՇՄԱԳ/ԲԿՊ-ն ներկայացվելու է հանրությանը, իսկ նրանց մտահոգությունները փաստաթղթավորվելու են:
322. **Չորրորդ փուլ.** Ազդեցության ենթակա համայնքում կրկին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ղեկավարվող հանրային լսումը կազմակերպվելու է նախքան Բնապահպանական փորձաքննության ընթացակարգի հիմնական փուլի համար ԲՆ-ին դիմելը՝ վերջնական նախագիծը հանրությանը

Նախնական գնահատման հայտ

ներկայացնելու, նրանց հուզող հարցերի դիտարկման աստիճանի մասին տեղեկացնելու, վերջիններս չդիտարկելու հիմնավորում տրամադրելու համար:

Է3. Բողոքների լուծման մեխանիզմ

323. Առաջնորդվելով ԱԶԲ ուղեցուցների և քաղաքականությունների խնդիրների լուծման գործառույթով՝ ՇՄԱԳ/ԲԿՊ-ում մշակվել է Բողոքների լուծման մեխանիզմ (ԲԼՄ)՝ ծրագրի իրականացման ընթացքում ազդակիր անձանց հետ շարունակաբար հաղորդակցվելու, բողոքները և առաջարկությունները ստանալու և դրանք լուծելու նպատակով: Բողոքների լուծման մեխանիզմը մշակվել է մարդկանց հետ հաղորդակցվելու և նրանց բողոքներին/առաջարկներին արձագանքելու նպատակով ստորև ներկայացված հիմնական սկզբունքների պահպանմամբ՝


- ազդակիր անձանց հուզող հարցերի և բողոքների արագ, ժամանակին և արդյունավետ լուծում,
- պարզ ընթացակարգի և թափանցիկ գործընթացի ապահովում,
- ազդակիր անձանց բոլոր սեգմենտների համար արագ և անվճար հասանելիություն:

324. Ներկայացված բողոքների լուծման գործընթացում հավանականորեն ներառված կողմերն են՝ ԱԵԱ-ները, Կապալառուն, Ինժեները, ԵԶՕԻԳ-ը, ԻՄ-ը, դատարանը և/կամ ԱԶԲ-ն: Բողոքների լուծման մեխանիզմը մանրամասնորեն ներկայացվում է հանրությանը: Հանրային լսումների ընթացքում ազդակիր անձինք համապատասխանաբար տեղեկացվում են մեխանիզմի մասին: Բացի դրանից, ԲԼՄ-ի առկայության և առաջարկությունների ու բողոքների ներկայացման համար ազդակիր անձանց կողմից ձեռնարկվելիք քայլերի մասին տեղեկատվությունը նույնպես ներկայացվելու է ԵԶՕԻԳ-ի կայքէջում:

325. ՇՄԱԳ/ԲԿՊ-ը ներառում է ծրագրի ազդակիր անձանց և այլ շահագրգիռ խմբերի հետ մշտական հաղորդակցության մասին հատուկ ենթապլան: Մրցույթն հաղթող կապալառուն պատասխանատու է լինելու ԲԼՄ-ի պահանջները բավարարելու համար, ինչպես նաև պարտավորվելու է շինհրապարակներում տեղադրել ԲԼՄ-ի կիրառելու մասին համապատասխան տեղեկատվությունը պարունակող տեղեկատվական ցուցանակ:

326. Ծրագրի բնապահպանական և այլ հարցերի վերաբերյալ բողոք/առաջարկ ներկայացնելու համար, Բողոքների լուծման մեխանիզմի ընթացակարգային քայլերը ներկայացված են ստորև բերված գծապատկերում (Նկար Է-1):

Նկար Է-1. Բողոքների լուծման մեխանիզմի գծապատկերը



Նախաշինարարական փուլ

327. Քայլ 1. Ծրագրի ազդակիր անձը իր առաջարկությունները/մտահոգությունները/բողոքները, նախ և առաջ ներկայացնում է ԵՔԾԻԳ-ին: ԵՔԾԻԳ-ը ստանում և լուծում/արձագանքում է բողոքին: Եթե ԱԵԱ-ին չի բավարարում պատասխանը, կամ ԾԻԳ-ի պատասխանատու աշխատակազմին հարկավոր են լրացուցիչ լծակներ ազդակիր անձի բողոքը լուծելու համար, ապա կարող է ստեղծվել Բողոքների քննման խումբ (ԲՔԽ)՝ ապահովելու համար գործի օրինական, համապարփակ, արդար և թափանցիկ քննարկումը: ԲՔԽ-ի կազմը պետք է լինի հավասարակշռված և ներառի անկախ դիտորդի՝ ապահովելու համար բողոքի ուսումնասիրման գործընթացի անկողմնակալությունը և թափանցիկությունը: Առաջարկվում է ԲՔԽ-ի հետևյալ կազմը՝

Նախնական գնահատման հայտ

- ա. ԾԻԳ-ի ներկայացուցիչ - նախագահ,
- բ. անվտանգության երաշխիքների թիմի ներկայացուցիչ (ԾԻԳ) - մեկ անդամ,
- գ. հարկ եղած դեպքում տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչ - մեկ անդամ,
- դ. հարկ եղած դեպքում որակավորված տեխնիկական փորձագետ - մեկ անդամ,
- ե. հարկ եղած դեպքում Ինժեների/Կապալառուի ներկայացուցիչ - մեկ անդամ,
- զ. ԱԵԱ ներկայացուցիչ - մեկ անդամ,
- է. անկախ կողմ (օրինակ՝ ՀԿ) - մեկ դիտորդ:

328. **Քայլ 2.** Եթե ԱԵԱ-ին չի բավարարում ԾԻԳ-ի որոշումն անգամ բողոքը ԲՔԽ-ի կողմից ուսումնասիրվելու դեպքում, ապա վերջինս կարող է բողոքը ներկայացնել Երևանի քաղաքապետարան: Գործի գրանցման, վերանայման և լուծման համար ԵՔ-ը առաջնորդվում է հանրային կառավարման մասին ՀՀ օրենքով:

Շինարարության փուլ

329. **Քայլ 1.** Ծրագրի ազդակիր անձն իր առաջարկությունները/հուզող հարցերը/բողոքները կարող է ներկայացնել նախ և առաջ Կապալառուի՝ բողոքների լուծմամբ զբաղվող աշխատակիցներին (աշխղեկ, ինժեներ, սոցիալական կամ բնապահպանության մասնագետ), այսինքն՝ փորձ է արվելու տեղական մակարդակով բողոքները լուծել ժամանակին և արագ: Կապալառուի կողմից հաստատված մեխանիզմը Ծրագրի ԲՔԽ-ի անքակտելի մաս է կազմում:

ա. Կապալառուն ցուցապատառների և Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական վահանակների միջոցով ապահովում է կոնտակտային տվյալների հասանելիությունը (դաշտային գրասենյակի գտնվելու վայրը, աշխատանքային ժամերը, պատասխանատու կոնտակտային անձանց անունները, հեռախոսահամարները, փոստային և պաշտոնական էլ. փոստի հասցեները և այլն):

բ. ԱԵԱ-ն կարող է մոտենալ Կապալառուի ներկայացուցչին աշխատանքային տեղամասում և/կամ առաջարկությունը/բողոքը գրանցել Կապալառուի կողմից ճանապարհի Ծրագրի տարածքում կամ դրան մոտ գտնվող դաշտային գրասենյակում պահվող բողոքների գրանցամատյանում: Բողոքի գրանցման ձևանմուշը, դիմումի բովանդակությունը և ձևաչափը սահմանվում է Կապալառուի ԲԿՊ-ում և համաձայնեցվում Ինժեների հետ:

գ. Կապալառուն անմիջապես դիտարկում է բողոքը, համապատասխան մեղմացնող միջոցներ ձեռնարկում ողջամիտ ժամկետում խնդիրը լուծելու համար և 15 օրվա ընթացքում գրավոր պատասխանում է ԱԵԱ-ին՝ գրության պատճենն ուղարկելով Ինժեներին և ԾԻԳ-ին: Ներկայացված բողոքների/առաջարկությունների մասին դաշտային տվյալները կապալառուի կողմից ներառվում են ամսական հաշվետվության մեջ, որն ամեն ամիս թարմացվում է՝ արտացոլելով բողոքի կարգավիճակը:

330. **Քայլ 2.** Եթե ԱԵԱ-ին չի բավարարում իր բողոքի առնչությամբ Կապալառուի տրամադրած լուծումը, ապա գոյություն ունեն խնդրի լուծման նաև այլ հնարավորություններ: Հաջորդիվ ԱԵԱ-ն կարող է դիմել Ինժեներին Կապալառուից պատասխան ստանալուց/չստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում բողոքը ներկայացնելով: Հետագա առաջարկությունները/բողոքները դասակարգվում են ըստ բնապահպանական և սոցիալական/տարաբնակեցման կետերի: Սոցիալական/տարաբնակեցման անվտանգության հետ կապված խնդիրները լուծվում են Ինժեների և ԵՔԾԻԳ-ի ՀՕՏՕ մասնագետների կողմից: Ինժեները բողոքին պատասխանում է 15 օրվա ընթացքում:

Նախնական գնահատման հայտ

331. **Քայլ 3.** Եթե Ինժեները չի բավարարում բողոքը, ապա ԱԵԱ-ն կարող է դիմել ԵՔՕԻԳ, ԵՔ, ԻՄ և ԱԶԲ ՀՆ: Շինարարության փուլում ՕԻԳ-ի մակարդակով բողոքի լուծումն ընթանում է նույն հաջորդականությամբ, ինչ նախաշինարարական փուլում: Կապալառուն ցուցապաստառների և Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական վահանակների միջոցով տրամադրում է բոլոր կոնտակտային տվյալները: Վերջինս այս փուլում ծառայում է որպես մեկնարկային կետ, տրամադրում է անհրաժեշտ բացատրություններ և հիշյալ մարմիններին դիմելիս աջակցություն ցուցաբերում՝ հարկ եղած դեպքում նաև ԱԵԱ-ի հետ անհատական շփման միջոցով:
332. Ի վերջո, ԱԵԱ-ը կարող է պահանջել դատարանի ուշադրությունը և միջամտությունը: Այնուամենայնիվ, կգործադրվեն բոլոր ջանքերը Կապալառուի, Ինժեների և ԵՔՕԻԳ-ի մակարդակով խնդիրները լուծելու համար: Անհնարինության դեպքում փորձ կարվի խնդիրները լուծել ԵՔ մակարդակով՝ նպատակ ունենալով որքան հնարավոր է խուսափել/նվազագույնի հասցնել դատավեճը: Եթե ԱԵԱ-ը չի բավարարվում՝ սպառելով ԲԼՄ-ով նախատեսված բոլոր հնարավորությունները, ապա վերջինս կարող է դիմել ԱԶԲ: Անկախ արդյունքներից և տրված լուծումներից՝ բոլոր բողոքները պատշաճ կերպով կփաստաթղթավորվեն և հասանելի կլինեն ուսումնասիրման/դիտարկման, մոնիթորինգի և գնահատման նպատակով:

Ը. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ը1. Ներածություն

333. Բնապահպանական կառավարման ծրագիրը ներառում է՝
- ԲԿՊ-ի նպատակները և կառուցվածքը,
 - ԲԿՊ-ի և մոնիթորինգի գործիքակազմը՝ իրականացման գործընթացում մասնակիցների դերերը, պատասխանատվությունները և կազմակերպչական կարգավորումները,
 - Չնախատեսված ազդեցությունների և նախագծային փոփոխությունների կառավարումը,
 - Ծրագրի բնապահպանական կառավարման կարողությունները և բյուջեն ընդլայնելու մասին վերապատրաստման և կողմնորոշման ծրագիրը,
 - Ծրագրի իրականացման փուլի հանրային լսումների և հաղորդակցության պլանը և Բողոքների լուծման մեխանիզմը,
 - Շինարարության բնապահպանական կառավարման պլանը (ՇԲԿՊ): Սա ներառում է ՇԲԿՊ-ի մշակման պահանջը և ուղեցույցը,
 - Արձանագրությունների և հաշվետվությունների կազմման մասին պահանջները
 - Ազդեցությունների ամփոփումը (Պարտականությունների գրանցամատյանը):
334. ԱԶԲ-ի բնապահպանական անվտանգության վերաբերյալ պահանջներին²¹ և շրջակա միջավայրի պահպանության մասին Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքներին, նորմերին և ստանդարտներին համապատասխանությունն ապահովելու նպատակով Ծրագրի

²¹ ԱԶԲ ԱՔՀ (2009), էջ 16, սկզբունք No 4.

Նախնական գնահատման հայտ

համար մշակվել է Բնապահպանական կառավարման պլան (ԲԿՊ): Այն նկարագրում է բնապահպանական և սոցիալական պաշտպանության մասով ծրագրային բոլոր պարտավորությունները: ԲԿՊ-ն իր մեջ ներառում է Ծրագրի տևողության ընթացքում ծագած ցանկացած անցանկալի ազդեցությունից խուսափելուն, իսկ անհնարիության դեպքում՝ բնապահպանական պլանավորման և կառավարման միջոցով բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն, մեղմացնելուն և/կամ հավասարակշռելուն, ինչպես նաև դրական ազդեցություններն ընդլայնելուն ուղղված միջոցառումները:

Ը2. Իրականացման գործիքակազմը

335. Բնապահպանական կառավարման պլանը մշակվում է որպես աշխատանքային գործիք Կապալառուի և Ինժեների համար, որպեսզի ԲԿՊ-ի օգտագործողների համար հստակ լինի, թե ինչ է հարկավոր ներառել իրենց աշխատանքային մեթոդների և գործողությունների մեջ շինարարական աշխատանքների հետ կապված բնապահպանական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու համար: Ի լրումն, այն ծառայում է որպես ուղեցույց Երևանի քաղաքապետարանի և այլ համապատասխան մարմինների, այդ թվում՝ շահագործման ԲԸՏՄ-ի համար:

336. ՇՄԱԳ-ի անբաժանելի մաս կազմող ԲԿՊ-ն ներառվելու է մրցութային և պայմանագրային փաստաթղթերում և համարվելու է Կապալառուի պայմանագրային պարտավորությունների բաղկացուցիչ մաս:

337. Իրականացման միջոցառումները՝ հստակ նախանշում են ներգրավված յուրաքանչյուր կողմի դերն ու պատասխանատվությունը ԲԿՊ-ի իրականացման, մոնիթորինգի և վերահսկողության գործում, ինչպես նաև ՀԱՎԵԼՎԱՕ Ժ-ի ԲԿՊ սխեմայում ներկայացված են ժամանակացույցը և իրականացման բյուջեն:

338. ՇՄԱԳ/ԲԿՊ իրականացման ժամանակացույցը և պատասխանատու կազմակերպությունները նույնպես ներկայացված են ՀԱՎԵԼՎԱՕ Բ-ում:

Ը3 Ազդեցությունների կառավարում

339. Բնապահպանական կառավարման պլանը բաղկացած է երկու հիմնական մասից՝ տեքստային և աղյուսակային: Տեքստային մասը ներկայացված է ստորև, իսկ աղյուսակային ձևաչափը մշակվել և կցվել է սույն հաշվետվությանը՝ որպես ՀԱՎԵԼՎԱՕ Ժ: Երկու մասերն էլ իրենց հերթին բաղկացած են 2 մասից՝ Ա. Մեղմացնող միջոցառումներ և Բ. Մոնիթորինգ:

- Բնապահպանական մեղմացնող միջոցառումների աղյուսակ,
- Մոնիթորինգի աղյուսակ:

Ը3-1 Մեղմացնող միջոցառումներ

340. Այս բաժինը մշակվել է աղյուսակային ձևաչափի կիրառմամբ, որը ներառում է հետևյալը.

- Ծրագրի գործողություններ,
- Դրանց հնարավոր բնապահպանական ազդեցությունները,

Նախնական գնահատման հայտ

- Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ ամբողջ Ծրագրի ընթացքում՝ մանրամասն նախագծման փուլից մինչև նախաշինարարական, շինարարական, շահագործման փուլեր, այդ թվում՝ կարողությունների զարգացում և վերապատրաստումների անցկացում,
- Աշխատանքների իրականացման և իրագեկման, դրանց հետ կապված ինստիտուցիոնալ և կազմակերպչական կառուցվածքի համար պատասխանատու մարմիններ,
- Առաջարկվող մեղմացնող միջոցառման ինդիկատիվ (կանխատեսվող) ծախսերի գնահատում:

341. Այս բաժինը ներկայացնում է ընդհանուր սկզբունքներ և մեղմացնող միջոցառումներ, որոնք ընդգրկված են հետևյալ ենթապլաններում՝

I. Շինարարության փուլ

1. Բնապահպանական և անվտանգության գծով վերապատրաստման ծրագիր,
2. Աշխատանքային անվտանգության և առողջության պլան,
3. Հանրային լուծումների և հաղորդակցության պլան,
4. Բուսական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլան,
5. Շրջակա միջավայրի պահպանության պլան,
6. Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանության պլան,
7. Հաղորդուղիների պահպանության և տեղափոխման պլան,
8. Շինարարական ճամբարների տեղակայման պլան,
9. Տեղամասի կառավարման պլան (հանքեր և բացահանք, լցակույտեր, բետոնի և ասֆալտի գործարաններ)
10. Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան,
11. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան,
12. Թափոնների և նյութերի կառավարման պլան,
13. Մշակութային ժառանգության կառավարման պլան,
14. Տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան

II. Հետշինարարական փուլ

15. Թերությունների վերացման ժամանակահատված
16. Շահագործման փուլ

Բնապահպանական և անվտանգության գծով վերապատրաստման ծրագիր

342. Ծրագրի շրջափուլերի ընթացքում մշակվելու և իրականացվելու է բնապահպանական և անվտանգության վերապատրաստման ծրագիր: Վերապատրաստման ծրագիրն իր մեջ ներառում է՝

I. Շինարարական աշխատանքների մեկնարկից հետո 1 շաբաթվա ընթացքում Կապալառուին է ներկայացվում ԱԶԲ-ի անվտանգության և ազգային օրենսդրական պահանջների մասին ԵՔ-ի, ԵԿՆ ԾԻԳ-ի և Կապալառուի ինժեներական և բնապահպանական, առողջապահական և անվտանգության գծով անձնակազմի հետ Ինժեների կողմից իրականացվելիք վերապատրաստման դասընթացների պլանը՝ հետևյալ թեմաներով՝

- ա. Շրջակա միջավայրի կառավարում
- բ. Առողջության և անվտանգության կառավարում

Նախնական գնահատման հայտ

գ. Սոցիալական երաշխիքներ

II. Բնապահպանության, առողջության և անվտանգության թեմայով Կապալառուի՝ Բնապահպանության, առողջության և անվտանգության գծով մասնագետների կողմից ՇԲԿՊ-ում մշակված Անվտանգության կողմնորոշման պլանի համաձայն, Կապալառուների և ենթակապալառուի ամբողջ անձնակազմի համար կազմակերպված վերապատրաստման դասընթացներ: Ինժեներական անձնակազմից և աշխատակիցներից պահանջվում է աշխատանքային տեղամասում իրենց առաջին աշխատանքային շաբաթվա ընթացքում մասնակցել կողմնորոշման/անվտանգության ներածական դասընթացին և նոր ընդունված աշխատակիցների համար պարբերաբար անցկացվող վերապատրաստումներին:

343. Կապալառուի կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացները ներառում են՝

ա. Աշխատանքային տեղամասում առաջին աշխատանքային շաբաթվա ընթացքում, այնուհետև նոր ընդունված աշխատակիցների, այդ թվում՝ ենթակապալառուների աշխատակիցների համար պարբերաբար Բնապահպանական կողմնորոշման/անվտանգության թեմայով իրականացվող ներածական դասընթաց՝

- ✓ շրջակա միջավայրի և անվտանգության վերաբերյալ ՇՄԱԳ/ԲԿՊ-ում սահմանված ընդհանուր կանոններ և նորմեր, որոնք պետք է պահպանվեն աշխատանքային տեղամասում և ճամբարներում,
- ✓ առողջության և անվտանգության մասին ընդհանուր իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագիր՝ շինաշխատողներին սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի մասին իրազեկելու նպատակով,
- ✓ առողջության և անվտանգության մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված հատուկ ծրագիր՝ շինաշխատողներին համավարակային իրավիճակներում, մասնավորապես՝ COVID-19-ի դեպքում ձեռնարկվելիք միջոցառումների մասին իրազեկելու նպատակով,
- ✓ անօրինական թրաֆիքինգ. աշխատակիցները պետք է տեղյակ լինեն, որ մարդկանց, վայրի բնության, վտանգված տեսակների և անօրինական նյութերի թրաֆիքինգը ճանապարհային միջանցքով չի թույլատրվում և նմանատիպ դեպքերի գրանցման դեպքում կկիրառվեն տուգանքներ՝ ընդհուպ աշխատանքից ազատում,
- ✓ Մասնագիտական առողջության և անվտանգության պլանում, բուսական աշխարհի պահպանության պլանում թվարկված այլ թեմաներ և այլն:

բ. Տարին առնվազն երկու անգամ բոլոր աշխատակիցների, այդ թվում՝ ենթակապալառուների համար վերոհիշյալ թեմաներով իրականացվող Բնապահպանական/առողջության և անվտանգության գծով վերապատրաստման դասընթաց:

գ. Աշխատանքային տեղամասում աշխատողների տարբեր թիրախային խմբերի հետ (բարձրությունների վրա աշխատողների, հողային աշխատանք իրականացնող, էլեկտրական գործիքներով աշխատող մասնագետների, վարորդների և այլոց մասին) պարբերաբար իրականացվող Բնապահպանության/առողջության և անվտանգության թեմայով վերապատրաստումներ նախքան նոր տիպի աշխատանք սկսելը:

դ. Վերահսկող ինժեների պահանջով միջանկյալ լրացուցիչ վերապատրաստումներ.

Աշխատանքային անվտանգության և առողջության ապահովման պլան

344. Սույն ենթապլանի նպատակն է Գլխավոր Կապալառուին (ԳԿ) ու ենթակապալառուներին (ԵԿ-ներ) ապահովել ԱԶԲ-ի և ՀՀ օրենսդրության բոլոր պահանջների մասին փաստաթղթերով՝ Ծրագրի իրականացման ընթացքում մասնագիտական անվտանգությունը և առողջությունը պահպանելու նպատակով: Սույն ենթապլանն ընդգրկում է շինհրապարակում գտնվելու իրավասություն ունեցող բոլոր անձանց առողջության, անվտանգության և բարեկեցության ապահովման մասին պահանջները, այդ թվում՝ համապատասխան կողմնորոշման ծրագիրը: Բացի այդ, այն պատասխանատվություն է դնում Գլխավոր Կապալառուի վրա՝ մշակելու և Ինժեների հաստատմանը ներկայացնելու աշխատանքային անվտանգության պլանը յուրաքանչյուր աշխատանքի համար, որը ներառում է բոլոր աշխատանքների անվտանգ և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով իրականացվող տվյալ աշխատանքին հատուկ անվտանգության միջոցառումները: Աշխատանքային անվտանգության և առողջության պլանը բաղկացած է հետևյալ բաժիններից.

I. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԾՐԱԳԻՐ

345. Կապալառուն կազմակերպում և դասընթացներ է իրականացնում հետևյալ թեմաներով՝

- ✓ անվտանգության մասին ընդհանուր կանոններ և նորմեր, որոնք պետք է պահպանվեն շինհրապարակում և ճամբարներում,
- ✓ տվյալ աշխատանքի, այդ թվում՝ բարձրությունների վրա, էլեկտրական գործիքներով, հորատանցքերում և այլուր իրականացվող աշխատանքների վերաբերյալ կանոններ և նորմեր,
- ✓ առողջության և անվտանգության մասին ընդհանուր իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագիր՝ շինաշխատողներին սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին իրազեկելու նպատակով,
- ✓ առողջության և անվտանգության մասին հատուկ իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագիր՝ շինաշխատողներին COVID-19-ի ռիսկերի, դրանց կանխարգելման և վերահսկման՝ Կապալառուի Մասնագիտական անվտանգության պլանի ներակա և անքակտելի մաս կազմող միջոցառումների մասին իրազեկելու նպատակով,
- ✓ անօրինական թրաֆիքինգ. աշխատակիցները պետք է տեղյակ լինեն, որ մարդկանց, վայրի բնության, վտանգված տեսակների և անօրինական նյութերի թրաֆիքինգը ճանապարհային միջանցքով չի թույլատրվում և նմանատիպ դեպքերի գրանցման դեպքում կկիրառվեն տուգանքներ՝ ընդհուպ և այդ թվում աշխատանքից ազատում,
- ✓ մշակութային ժառանգություն. հնագետը իրազեկում է ամբողջ աշխատակազմին արժեքավոր մշակութային ընկալիչների առկայության, պաշտպանիչ միջոցառումների իրականացման և հնագիտական գտածոների հայտնաբերման ընթացակարգերի մասին: Հարկ եղած և ԵՔԾԻԳ-ի կողմից ուղղորդվելու դեպքում Կապալառուն ապահովում է գտածոների հայտնաբերման ընթացակարգի պատշաճ իրականացումը, վարձում է հնագետ կամ ընկերություն՝ շահագրգիռ կառավարական մարմինների հետ համագործակցությամբ համապատասխան հնագիտական պեղումներ իրականացնելու համար,
- ✓ Վերահսկողության Ինժեների կողմից պահանջվող այլ հատուկ թեմաներ:

II. ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ (ԱՊՄ)

Նախնական գնահատման հայտ

346. Կապալառուն իր աշխատակիցներին է տրամադրում և ապահովում է, որ իր և ենթակապալառուի աշխատակիցները կրեն և օգտագործեն սեզոնին համապատասխան աշխատանքային համազգեստ և աշխատանքին հատուկ ԱՊՄ-ներ: Աշխատանքային համազգեստը ներառում է լուսանդրադարձնող ժիլետներ, բաձկոններ, տաբատներ կամ բանվորական արտահագուստ, կոշիկներ, սաղավարտներ և ձեռնոցներ: Համազգեստի վրա պետք է լինի ընկերության տարբերանշանը:
347. Տվյալ աշխատանքին հատուկ վտանգներով և ռիսկերով պայմանավորված՝ ԱՊՄ-ները կարող են ներառել հատուկ ակնոցներ, պաշտպանիչ ականջակալներ, դիմակներ կամ ռեսպիրատորներ, դիմապաշտպան վահաններ, գոտիներ, պարաններ, աշխատանքին հատուկ բանվորական, օրինակ՝ եռակցողների համար նախատեսված արտահագուստ, և այլն:
348. Կապալառուն ապահովում է, որ իր և ենթակապալառուի ամբողջ անձնակազմը, այդ թվում՝ բանվորները, ինժեներները, աշխույժները, մենեջերները և շինհրապարակի այցելուները, հարկ եղած դեպքում կրեն համազգեստ և ԱՊՄ-ներ: Կապալառուն խթանիչ միջոցառումների իրականացման և տույժերի կիրառման համապատասխան մեխանիզմ է ներկայացնում ՇԲԿՊ-ում՝ ԱՊՄ-ների օգտագործումը պարտադիր դարձնելու համար:

III. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՄԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

349. Աշխատանքները սկսելուց առաջ տվյալ աշխատանքին հատուկ վտանգներով և ռիսկերով պայմանավորված (բարձրություններ, խոր խրամուղիներ և հորեր, ընկելու վտանգ, կռունկ և այլ տեխնիկա և այլն)՝ Կապալառուն տրամադրում է անվտանգության ապահովման համար անհրաժեշտ բոլոր գործիքները և լրացուցիչ սարքավորումները (հետևի բռնածողով փայտամածեր, աստիճանավանդակներ, կամուրջների մուտքեր, էլեկտրական պաշտպանիչ վահաններ, հրակայուն սարքեր):
350. Կապալառուն ապահովում է իր և ենթակապալառուի աշխատակիցների համար ցանկացած վտանգավոր իրավիճակների (առանց պաշտպանիչ միջոցների խրամուղիներ և հորեր, անուշադրության մատնված էլեկտրական գործիքներ, ծանր տեխնիկայի չկանոնակարգված շահագործում և այլն) բացառումը աշխատանքային տեղամասից:

IV. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ

351. Կապալառուն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցառումները իր և ենթակապալառուի աշխատակիցների առողջությունը, անվտանգությունը և բարեկեցությունը ապահովելու նպատակով: Առաջնորդվելով վերոգրյալով՝ վերջինս վարձում է բժշկական աշխատող, ով պատասխանատու է Կապալառուի ՇԲԿՊ-ի ԱԱՄՊ-ի անքակտելի մաս կազմող ՇՄԱԳ/ԲԿՊ-ին և Առողջապահական ծրագրին համապատասխանության ապահովման համար: Կապալառուն համագործակցում և համաձայնություն է ձեռք բերում մասնագիտացված բժշկական հաստատության հետ՝ պատահարների/միջադեպերի դեպքում անհրաժեշտ բժշկական աջակցություն ստանալու համար:

Նախնական գնահատման հայտ

352. ՎԻ-ի կողմից հաստատված Կապալառուի բժշկական աշխատողը մշակում է վերապատրաստման ծրագիր և վերապատրաստումներ իրականացնում կապալառուի և ենթակապալառուի աշխատակիցների համար՝ ինչպես նշված է Առողջության և անվտանգության կողմնորոշման պլանում: Բժշկական աշխատողը պարբերաբար ստուգում է աշխատակիցների առողջական վիճակը, ստուգումների արդյունքում ստացված տվյալները հասանելի պահում դաշտային գրասենյակում և ամսական հիմունքներով հաշվետվություն ներկայացնում:

353. Կապալառուն ճանապարհահատվածների բոլոր աշխատանքային տեղամասերը ապահովում է առաջին օգնության համար նախատեսված բոլոր միջոցներով և գործիքներով : Դրանք են՝ հեշտ հասանելի, ամբողջական առաջին բուժօգնության պայուսակ, տեսանելի վայրերում փակցված ցուցապաստառներ պատասխանատու անձանց հասանելիության և կոնտակտային տվյալների մասին տեղեկատվությամբ: Թունավոր տեսակներին տարբերելու և առաջին բուժօգնություն ցույց տալու համար Կապալառուն պետք է հրավիրի մասնագետի, ով կիրահանի աշխատակիցներին: Խորհուրդ է տրվում աշխատանքային տեղամասում ունենալ Հայաստանի թունավոր օձերի մասին տեղեկատուն, որտեղ մանրամասն նկարագրված են թունավոր օձատեսակները, օձի խայթոցի դեպքում ձեռնարկվելիք համապատասխան գործողությունները:

354. Կապալառուն մշակում է COVID-19 համավարկի կանխարգելմանն ուղղված առողջության և անվտանգության պլանը՝ հիմնված CWRD- ի առաջարկած գործառնական ընթացակարգի վրա՝ «Վարակիչ հիվանդությունների պայմաններում անվտանգ աշխատելը (օրինակ՝ Covid-19)» թեմայով և ձեռք է բերում ՎԻ-ի հավանությունը, ինչպես նաև տրամադրում ազգային նորմերով, միջազգային ուղեցույցներով, առողջության և անվտանգության պլանով նախատեսված բոլոր կանխարգելիչ միջոցները, գործիքները և սարքերը: Պլանը ունենալու է հետևյալ կառուցվածքը՝

Ա. Ներածություն

Բ. Ազգային և միջազգային COVID-19 կանոնակարգեր, անվտանգության ընդհանուր քաղաքականություն և կանոններ

Գ. Ուսուցման և իրազեկման ծրագիր

Դ. COVID-19- ով վարակման ռիսկերի գնահատում

Ե. Դերերն ու պարտականությունները՝ կառավարման, պլանավորման, իրականացման, մոնիթորինգի և հաշվետվությունների մասով

Մենեջերների և վերահսկողների պարտականությունները

ա. Գործատուի պարտականությունները

բ. աշխատողների պարտականությունները

Զ. COVID-19 –ի կանխարգելումը շինհրապարակում

ա. աշխատավայրի ստուգում

բ. մուտքի հսկողություն, ներառյալ թեստավորում և հետևում

գ. փաստացի կամ կասկածելի դեպքերին և վարակներին արձագանքելու միջոցառումներ

ա) աշխատակցի մոտ առկա են COVID-19- ի ախտանիշները

բ) աշխատակցի COVID-19- ի ախտորոշիչ թեստը դրական է

գ) աշխատակցի հետ սերտ կապ ունեցող COVID-19-ով վարակված անձի

առկայություն

Նախնական գնահատման հայտ

- դ. նշաններ և հիշեցումներ
- ե. Ֆիզիկական և սոցիալական հեռավորություն
- զ. պատշաճ հիգիենա
- է. հարմարություններ, մաքրում և ախտահանում
- ը. աշխատանքի վայրի նախազգուշական միջոցներ
- թ. կացարաններ և սոցիալական հարմարություններ
- ժ. առողջապահական և արտակարգ իրավիճակների հաստատություններ
- ի. անձնական խնամք և առողջություն

- դ. Գաղտնիություն
- ե. COVID-19 համավարակի կանխարգելում և աշխատանքային պրակտիկայի հսկողություն
- ա. աշխատողների պարտականությունները
- բ. աշխատանքային տեղամասի/գրասենյակի ընդհանուր գործելակերպ
- գ. Ծախսեր
- է. Բողոքների լուծման մեխանիզմ
- ը. Մոնիթորինգ և հաշվետվություն

Տեղեկատու փաստաթղթեր.

Նմուշային ստուգաթերթեր

Նմուշային ստուգաթերթ 1. COVID-19- ի հսկողության ստուգաթերթիկ աշխատողների և հյուրերի համար

Նմուշային ստուգաթերթ 2. Աշխատավայրի պատրաստման ստուգաթերթ

Նմուշային ստուգաթերթ 3. Աշխատակիցների հիմնական ուսուցման ստուգաթերթ

Ինֆոգրաֆիկայի նմուշ

355. Կապալառուն իր աշխատակիցներից յուրաքանչյուրին պարբերաբար տրամադրում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ/սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ՍՃՓՎ) կանխարգելման, բուժման և առողջապահական այլ համապատասխան միջոցներ՝ ՄԻԱՎ/ՍՃՓՎ-ներով վարակվելու ռիսկը և դրանց նկատմամբ խոցելիությունը նվազեցնելու նպատակով: Այս աշխատանքներն ընդգրկվում են կողմնորոշման դասընթացի մեջ և ուղեկցվում են կառավարական մարմինների, միջազգային գործակալությունների, հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ) և այլոց կողմից, այդ թվում՝ ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային կենտրոնի և ԱԶԲ-ի պայմանավորվող խորհրդատուների կողմից աշխատանքային տեղամասին հարող տարածքներում համապատասխան նախաձեռնությունների իրականացմամբ: Կապալառուն միանգամայն անվճար իր աշխատակիցներին տրամադրում է անհրաժեշտ թվով բարձրորակ պահպանակներ, քսանյութեր, ուղեցույցներ, պարբերաբար իրականացնում է ՍՃՓՎ/ՄԻԱՎ թեստեր և, հարկ եղած դեպքում, ՍՃՓՎ և ՁԻԱՀ բուժում:

V. ՀԱՆՐԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

356. Կապալառուն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները տեղի բնակիչների, ազդակիրների, ձեռնարկությունների, դրանց աշխատակիցների, հետիոտների և այլոց անսովորանգությունը, առողջությունը և բարեկեցությունը ապահովելու համար:

Նախնական գնահատման հայտ

357. Կապալառուն տեղադրում է ժամանակավոր ցանկապատ և ձեռնարկում բոլոր միջոցները՝ աշխատանքային գոտին սահմանազատելու և ոչ իրավասու անձանց մուտքը սահմանափակելու համար: Հարկ եղած դեպքում նշանակվում են պահակներ, տեղադրվում են ցանկապատեր, արգելապատնեշներ և արգելափակոցներ: ՎԻ-ի կողմից ներկայացված հատվածներում Կապալառուն տեղադրում է ամուր ցանկապատ (1.5-2մ բարձրությամբ պլաստիկ ցանց կամ բետոնե բլոկներ):
358. Կապալառուն պատշաճ և տեսանելի կերպով տեղեկացնում է հանրությանը ընթացող շինարարական աշխատանքներից բխող վտանգի, շինհրապարակում գործող տեխնիկայի և/կամ սարքավորումների առկայության մասին՝ նախազգուշացնող նշաններ և մուտքն արգելող ցուցապաստառներ տեղադրելով: Հայտարարությունների թավատառ տեքստը լինելու է հայերեն:

VI. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

359. Վերահսկողության խորհրդատուի (Ինժեներ) Բնապահպանական/առողջության և անվտանգության գծով մասնագետը պատասխանատու է Ծրագրի աշխատանքների՝ ՇՄՆՈՒ/ԲԿՊ/ՇԲԿՊ-ի Մասնագիտական առողջության և անվտանգության պլանի պահանջների բավարարման վերահսկողության և մոնիտորինգի, ինչպես նաև ՄԱԱ-ն մասին ԵԹՕԻԳ-ին իրազեկման համար:
360. Կապալառուն Մասնագիտական առողջության և անվտանգության հարցերի կարգավորման պատասխանատվությունը դնում է իր Բնապահպանական/անվտանգության գծով մասնագետի վրա, ով պատասխանատու է լինելու կապալառուի և ենթակապալառուի բոլոր աշխատակիցների համար՝ վերոհիշյալ թեմաներով կողմնորոշման վերապատրաստման ծրագրի իրականացման, ինչպես նաև ՄԱԱ-ն մասին, այդ թվում՝ բոլոր պատահարների/միջադեպերի, բացթողումների մասին ՀԱՎԵԼՎԱԾ խ-ում ներկայացված ձևաչափով ՎԻ-ին անհապաղ իրազեկելու համար:
361. Կապալառուն շինհրապարակի բոլոր տեղամասերում տարվող շինարարական աշխատանքների համար նշանակում է ՄԱԱ գծով պատասխանատու անձի: Այս անձը պատասխանատվություն է կրում ՇՄՆՈՒ/ԲԿՊ/ՇԲԿՊ-ում բնապահպանական, առողջության և անվտանգության մասով ներկայացված պահանջների՝ իր տեղամասում պահպանման, ինչպես նաև աշխատակիցների համար նոր աշխատանք սկսելուց առաջ և նոր ընդունված աշխատակիցների համար՝ պարբերաբար աշխատանքի վերաբերյալ ներածական վերապատրաստումների անցկացման համար: Կապալառուի շինհրապարակում ՄԱԱ հարցերով պատասխանատուն արտակարգ իրավիճակներում իրականացնում է անվտանգության միջոցառումներ և անհապաղ տեղեկացնում ԲԱԱ մասնագետին պատահարների/միջադեպերի, այդ թվում՝ բացթողումների մասին, և ղեկավարում է շտկող միջոցառումների կատարումը, նախազգուշական քայլերի ձեռնարկումը՝ նպատակ ունենալով կանխել հետագայում դրանց կրկնությունը:
362. Կապալառուն պատասխանատու է իր ենթակապալառուների կողմից Մասնագիտական առողջության և անվտանգության պլանի պահանջների բավարարման համար:

Հանրային լուսամների և հաղորդակցության պլան

363. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթերով հիմնավորել բոլոր այն միջոցառումները, որոնք ՀԿ-ն, ԵԿ-ները պետք է ձեռնարկեն ԱԶԲ ԱՔՀ 2009-ի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ծրագրի մասին տեղեկատվության հրապարակման և շահագրգիռ կողմերի, ծրագրի ազդակիր անձանց, ՀԿ-ների, այլ հետաքրքրված կողմերի հետ ծրագրի վերաբերյալ մշտական հաղորդակցությունն ապահովելու համար: Հանրային լուսամների և հաղորդակցության պլանը (ՀԼՀՊ) կապ է ստեղծում Պատվիրատուի, Վերահսկողության խորհրդատուի և Կապալառուի (ինչպես նաև Ենթակապալառուների) ու ազդակիր անձանց միջև (տեղի բնակիչներ, ճանապարհից օգտվողներ և այլք)՝ նախօրոք և շինարարական աշխատանքների, ինչպես նաև հնարավոր ազդեցությունների ընթացքում քննարկումների անցկացման և խորհրդատվությունների տրամադրման հաղորդակցային կամուրջ ստեղծելով: Սույն ենթապլանի նպատակն է ապահովել բոլոր շահագրգիռ կողմերի իմաստալից ներգրավվածությունը և ծրագրի, այդ թվում՝ շինարարական աշխատանքների և դրանց հետ կապված գործողությունների ժամանակացույցի, աշխատատեղերի, ծրագրից բխող օգուտների մասին տեղեկատվության ժամանակին տարածման միջոցով բարձրացնել հանրային իրազեկվածության մակարդակը: Սույն պլանը մշակվել է շահագրգիռ կողմերի, ծրագրի իրականացման վայր հանդիսացող համայնքի, ծրագրի ազդակիր անձանց և հանրության հետ որպես ամբողջություն մշտական հաղորդակցությունը պահպանելու նպատակով:

364. Սույն ենթապլանը պարունակում է ընդհանուր պահանջներ այն մասին, թե ինչպես բավարարել բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ տեղի բնակչության բողոքները և շահերը՝ արդյունավետ ԲԼՄ-ի հաստատման պատասխանատվությունը դնելով Հիմնական Կապալառուի վրա: ԲԼՄ-ի կառուցվածքը մանրամասն ներկայացված է Գլուխ Է-ում:

365. Ելնելով վերոգրյալից՝ ՀԼՀՊ-ը ներառում է՝

- 1) Նախաշինարարական և հետագայում շարունակական քննարկումներ՝ հանրությանը ծրագրի ներկայացման, վերջիններիս հետ հաղորդակցության ապահովման, ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և քննարկումների անցկացման, ինչպես նաև հանրությանը Բողոքների լուծման մեխանիզմին և դրա հետ կապված ընթացակարգերին ծանոթացնելու համար:
- 2) Բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ) կազմվում է Կապալառուի կողմից և թույլ է տալիս ազդեցության ենթակա անձանց ծրագրի վերաբերյալ հարցեր բարձրացնել:
- 3) Տեղեկատվության հրապարակում:

1) ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

366. Նախաշինարարական հանրային քննարկումն անցկացվում է մրցույթի հաղթող կապալառուի կողմից մոբիլիզացման փուլում՝ տեղամասային հասանելիություն և Պատվիրատուի կողմից շինարարական աշխատանքները մեկնարկելու թույլտվություն ստանալուց հետո՝ շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 10 օր առաջ:

367. Կապալառուն կազմակերպում է նախաշինարարական խորհրդատվական հանդիպումներ ազդակիր համայնքների ղեկավարների հետ և ներկայացնում իրազեկվածության բարձրացմանն ուղղված համապատասխան միջոցառումները:

Նախնական գնահատման հայտ

Սահմանվում են իրենց տարածքում իրականացվելիք շինարարական աշխատանքների պոտենցիալ զգայուն ընկալիչները և Կապալառուի կողմից ներկայացվում քննարկման մասնակիցներին: Առավել բարձր արդյունավետություն ապահովելու նպատակով պետք է իրականացվի հանրության իրազեկվածության բարձրացմանն ուղղված քարոզարշավ՝ ներգրավելով ՀԿ-երին: Սա իր մեջ կարող է ներառել հանրությանը հասցեագրված հայտարարություններ տարբեր մեդիա հարթակներում: Խորհրդատվական քննարկման նպատակն է ժամանակին նախագուշացնել համայնքին հավանական փոփոխությունների մասին, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան հարմարվել ծրագրի ազդեցություններին և նախապատրաստվեն ազդեցություններին կանխարգելելու, այլ ոչ թե՛ հակազդելու: Նախագուշացումն ուղեկցվելու է աշխատանքների մասին նշանների, ցուցատախտակների, ցանկապատերի և արգելապատնեշների տեղադրմամբ ու ճանապարհի գծանշմամբ՝ շինարարական աշխատանքների մեկնարկից և դրանից հետո:

368. Կապալառուն հանրային տեսանելի վայրերում փակցնում է նախաշինարարական հանդիպման ամսաթիվը, վայրը և նպատակը, բոլորներ բաժանում ազդակիր անձանց: Դրանք իրենց մեջ պարունակում են կոնտակտային տվյալներ՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու և կապ հաստատելու համար:

369. Ծրագրի մասին տեղեկատվությունը, այդ թվում՝ ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ն, շրջակա միջավայրի պահպանության, առողջության և անվտանգության մասին իրազեկվածության բարձրացման ծրագիրը նույնպես վիզուալ շնորհանդեսների միջոցով (շնորհանդես, գրաֆիկական նկարներ և քարտեզներ) է համայնքին ներկայացվում: Նախաշինարարական քննարկումները տեղի են ունենում ծրագիրը, շինարարական աշխատանքների ծրագիրը, ակնկալվող բնապահպանական, սոցիալական ազդեցությունները և ճանապարհի հասանելիության վրա ազդող ճանապարհային անվտանգության նախագծման առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ փոշու, աղմուկի բարձր մակարդակը, ճանապարհի ժամանակավոր փակումը և երթևեկության շեղումները ներկայացնելու ու քննարկելու, ինչպես նաև Բողոքների լուծման մեխանիզմը ներկայացնելու համար:

370. Կապալառուն լուծում է բարձրացված հարցերը կամ փոխանցում Վերահսկողության խորհրդատուին, եթե ԱԵԱ-ի ներկայացրած դիտողությունները/հարցերը իր պարտավորությունների սահմանից դուրս են գտնվում: Կապալառուն առաջընթացի վերաբերյալ առաջին ամսական հաշվետվության մեջ զեկուցում է խնդրի կարգավիճակի մասին (լուծված/չլուծված): Կապալառուն հաստատում է հետադարձ կապի մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի, արժեքավոր զգայուն ընկալիչների, ծրագրի ազդակիրներ ու շահագրգիռ անձանց ներգրավվածության թափանցիկության համար: Հանդիպման մասնակիցների և արված դիտողությունների վերաբերյալ մանրամասները գրանցվում են Կապալառուի կողմից և ներառվում ՇԲԿՊ-ի մեջ:

2) ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

371. Բողոքների լուծման մեխանիզմը մշակվել է ազդակիր անձանց հետ հաղորդակցվելու, ծրագրի կատարման մասին նրանց մտահոգությունները, բողոքները, գանգատները և առաջարկություններ ստանալու, դրանց լուծումը հեշտացնելու նպատակով: Սույն մեխանիզմի գործունեությունն ապահովվելու է Ծրագրի ընթացքում: Տեղական համայնքների, շահագրգիռ կողմերի և հանրության հետ շարունակական հաղորդակցությունը պահպանվելու է

Նախնական գնահատման հայտ

ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ի (առավել մարամասն տե՛ս Գլուխ Գ) համաձայն՝ Կապալառուի կողմից հաստատված ԲԼՄ-ի միջոցով: Շարունակական հաղորդակցությունը նշանակում է, որ ազդակիր բնակչությունը ցուցանակների և պաստառների միջոցով ժամանակին տեղեկացվելու է ցանկացած անհարմարության մասին, ինչպիսիք են՝ երթևեկության հասանելիության և վիճակի, ջրի, հոսանքի մատակարարման խանգարումներ և այլն:

372. ԲԼՄ-ի նպատակն է աջակցել ազդեցության ենթակա անձանց բողոք ներկայացնելիս և նկարագրել ժամանակին և արդյունավետ կերպով բողոքները լուծելու համար մշակված մեխանիզմը: Հավանական ներգրավված կողմերն են՝ ԱԵԱ-ները և այլ շահագրգիռ կողմերը, Կապալառուն, Վերահսկողության խորհրդատուն, ԵՔՕԻԳ-ը, ԵՔ-ն և դատարանը: Հանրությունը տեղյակ է պահվում ԲԼՄ-ի մասին նախաշինարարական հանրային քննարկման ընթացքում: Ի լրումն, ԲԼՄ-ի գոյությունը փաստող և ԱԵԱ-ների կողմից առաջարկություններ կամ բողոք ներկայացնելու համար ձեռնարկվելիք քայլերի մասին տեղեկատվությունը հրապարակված է ԵՔՕԻԳ-ի կայքէջում, ինչպես նաև շինհրապարակներում՝ Կապալառուի կողմից տեղադրված Ծրագրի մասին տեղեկատվական ցուցանակի վրա:

373. ԲԼՄ-ն ներառում է՝

- (i) Շինարարական հրապարակի մուտքի նոտ կտեղադրվեն համապատասխան տեղեկատվություն պարունակող պաստառներ կամ տեղեկատվական վահանակներ: Տեղեկատվությունն իր մեջ ներառում է դաշտային գրասենյակի գտնվելու վայրը, աշխատանքային ժամերը, պատասխանատու կոնտակտային անձանց անունները, «թեժ գծի» հեռախոսահամարները, փոստային և էլ. փոստի հասցեները և այլն:
- (ii) Ազդակիր անձանց համար դաշտային գրասենյակում կամ ցանկացած այլ հասանելի վայրում պահվող բողոքների գրանցամատյան: Հանրային բողոքների և առաջարկությունների ներկայացման համար դիմումի ձևաթուղթը կցվելու է ՇՄՆՈՒ հաշվետվությանը:
- (iii) Կապալառուի՝ շինհրապարակում գտնվող ներկայացուցիչը (աշխույժ, ինժեներ, սոցիալական կամ բնապահպանական հարցերով պատասխանատու անձ) պատասխանատու է ազդակիր անձանց կողմից ներկայացված բողոքների/առաջարկությունների բավարարման և Կապալառուի կողմից դաշտային գրասենյակում պահվող բողոքների գրանցամատյանում բողոքը/առաջարկությունը գրանցելու թույլտվություն տալու համար: Կապալառուի ներկայացուցիչը բողոքի/առաջարկության վրա գրանցում է նախնական տվյալները (ԱԵԱ-ի անունը, բողոքի/առաջարկության ներկայացման ամսաթիվը, խնդրի էությունը, հետագա գործողությունները և լուծման կարգավիճակը):

374. Կապալառուն գրանցամատյանում գրանցում է բոլոր բողոքները (բանավոր և գրավոր), ինչպես նաև լուծման էությունը և եղանակը, կիրառված մեղմացնող միջոցառումները: Եթե խնդիրը գտնվում է Կապալառուի իրավասությունից դուրս, ապա այն փոխանցվում է Ինժեներին: Եթե Ինժեները չի կարողանում լուծել բողոքը, ապա այն փոխանցվում է ԵՔՕԻԳ-ին:

375. Ծրագրի Բողոքների լուծման մեխանիզմի ընթացակարգային քայլերը ներկայացված են Գլուխ Է-ում:

Նախնական գնահատման հայտ

- Պահել բողոքների գրանցամատյան (բողոքը ներկայացնող անձի անունը, խնդրի նկարագրությունը, բողոքի ներկայացման ամսաթիվը, պատասխան լուծման ամսաթիվը, հետագա գործողությունները և լուծման կարգավիճակը):
- Համոզվել, որ գործում է բողոքների և առաջարկությունների անհապաղ Ինժեներին ներկայացման մեխանիզմ:

Բուսական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլան

376. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների մոտեցումը անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում, ինչպես նաև հարակից տարածքներում բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցությունների նվազեցման, Ծրագրի՝ կարմիրգրքյան և վտանգված տեսակներ ընդգրկող տարածքների պահպանության նկատմամբ: Պլանը մշակվել է բուսական (23.11.2009) ու կենդանական (03.05.2000) աշխարհի մասին Հայաստանի Հանրապետության օրենքների, «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 14.08.2014 թ.-ի №781-Ն որոշման, ինչպես նաև բուսականության մաքրման համար քիմիական նյութերի օգտագործման մասին օրենսդրական նորմերի համաձայն:
377. Պլանի այս բաժինը մշակելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ թեն նախատեսվող գործունեության անմիջական տարածքում կարմիրգրքային բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն հայտնաբերվել, այնուամենայնիվ Կապալառուին արգելվել է իրականացնել որևէ գործունեություն հարակից տարածքներում, իսկ բեռնափոխադրումներն իրականացնել բացառապես քաղաքային ավտոճանապարհներով, քանի որ ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների և բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանն արգելվում է²²:
378. Թեև ծրագրի իրականացման տարածքում բուսական աշխարհի վրա ազդեցության մակարդակը գնահատվում է ցածր (տե՛ս Մխեմա Զ-2), այնուամենայնիվ, տեղայնացված և փոքրամասշտաբ բացասական բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ են նախատեսվում: Ընդհանուր սկզբունքն է՝ պահպանել բնությունը սահմանափակելով անհարկի ծառահատումը և առավելագույնս խուսափելով տարածքի հետագա աղտոտումից:
379. Հարակից տարածքների կենդանական աշխարհի պաշտպանությանն ուղղված միջոցառումները նպատակ ունեն կանխելու աշխատողների գիտելիքների և բնության նկատմամբ հոգածության բացակայության պատճառով բեռնափոխադրումների ընթացքում կենդանիների բնական միջավայրի որևէ չհիմնավորված ոչնչացում, ձվադրման վայրերի, կենդանիների բների, կենդանիների ոչնչացում: Կապալառուն պատասխանատու է ՇՄԱԳ

²² ՀՀ օրենքը «Կենդանական աշխարհի մասին» 03.04. 2000 թ., հոդված 18; ՀՀ օրենքը « Բուսական աշխարհի մասին» 23.11. 1999 թ., հոդված 17.

Նախնական գնահատման հայտ

անխախտելի մաս կազմող ԲԿՊ-ի Մխեմայում ներկայացված մեղմացնող միջոցառումների իրականացման համար:

380. Ծառերի և թփերի պատշաճ կառավարումն ապահովելու նպատակով Կապալառուն իր սեփական հետազոտությունն է իրականացնում հաստատելու համար սույն հաշվետվությանը կցված (ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-1) Բուսականության (ֆլորայի) հետազոտման հաշվետվության մեջ ներկայացված տվյալները, Ծրագրի տարածքում գտնվող և շինարարության ընթացքը խոչընդոտող բույր ծառերը և թփերը, որպեսզի խուսափի անհիմն ծառահատումներից: Բացի դրանից, շինարարական հրապարակին մոտ գտնվող ծառերը և թփերը, որոնք կարող են վնասվել իրականացվող աշխատանքների պատճառով, պետք է որոշվեն՝ դրանց պահպանությունն ապահովելու համար: Մոբիլիզացման փուլում Կապալառուն մշակում և ՎԻ-ի հաստատմանն է ներկայացնում ՇԲԿՊ-ի Բուսական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլանի մաս կազմող Ծառերի կառավարման պլանը՝ համաձայն ստարն բերվածի՝

Ա. Ներածություն (փաստաթղթի նպատակը)

Բ. Թույլտվություններ և հաստատումներ

Գ. Ազդեցության գնահատում՝

ա. շինարարության ընթացքը խոչընդոտող, կտրման և կոտրման ենթակա ծառերի (թփերի) հաստատում՝ ըստ տեսակների և վարչական շրջանների

բ. աշխատանքային տարածքին մոտ գտնվող, պահպանության կարիք ունեցող ծառերի (թփերի) նույնականացում

Դ. Մեղմացնող միջոցառումներ՝

գ. ըստ կանաչապատման նախագծի և վարչական շրջանների հետ ձեռք բերված համաձայնության՝ իրականացվելիք ծառատունկի (վերատնկման) վայր և ժամանակացույց

դ. ծառահատման ընթացակարգ և փայտանյութի թափոնների կառավարում

ե. աշխատանքների պատճառով հավանական վնասման ենթակա ծառերի պահպանում

զ. նոր տնկված ծառերի (թփերի) պահպանում:

Ե. Թույլտվություններ/համաձայնագրեր, քարտեզներ, աղյուսակներ, նկարներ և այլն պարունակող հավելվածներ

381. Կապալառուն թարմացնում է Ծառերի կառավարման պլանը, ծանուցում ՎԻ-ին և, նախքան ծառերի ու թփերի հատման գործընթացը սկսելը հավանություն ստանում: Մաքրման ենթակա կամ այլ կերպ խաթարվող տարածքները պետք է նվազագույնի հասցվեն և նշվեն:

382. Կապալառուն իրականացնում է բուսականության մաքրման աշխատանքները՝ խստագույնս հետևելով Տեխնիկական մասնագրերի Բաժնին 401. «Մաքրում և արմատահանում» և Բաժնի 1003 «Ծառեր և թփեր» պահանջներին: Բուսականության մաքրման նպատակով թունաքիմիկատներ չեն օգտագործվելու: Անհրաժեշտության դեպքում օգտագործվելու են միայն Հայաստանի Հանրապետության կառավարության՝ «Արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկը հաստատելու մասին» 2005 թվականի մարտի 17-ի թիվ 293 որոշման մեջ չգրանցված թունաքիմիկատներ և բացառելու է ԿՕՍ-ներ պարունակող քիմիական նյութերի օգտագործումը:

Նախնական գնահատման հայտ

383. Ծառերի հատման արդյունքում բնությանը հասցվող վնասի փոխհատուցման համար Կապալառուն հատված ծառերի/թփերի փոխարեն պետք է տնկի նորերը: Ծառերը տնկվելու են 1:6 հարաբերակցությամբ ընդհանուր սկզբունքով (6 ծառ/թուփ մեկ հատված ծառի/թփի դիմաց): Ընդհանուր առմամբ տնկվելու է 1068 ծառ և 132 թուփ, որից 366 ծառը և 36 թուփը առաջին փուլի ավարտին: Ծառատունկի համար ծախսերը առաջին փուլի համար նախատեսվում են 3492803.1 ՀՀ դրամի չափով: Ծառերը/թփերը տնկվելու են ԵՔ-ի կողմից հաստատված կանաչապատման պլանով նախատեսված և համապատասխան վարչական շրջանների հետ համաձայնեցված վայրերում՝ ըստ Ծառերի կառավարման պլանի: Լրացուցիչ միջոցառումների անհրաժեշտության դեպքում, փոխհատուցման ձևը կհամաձայնեցվի ԵՔ-ի հետ:
384. Աշխատանքների ընթացքում խաթարված ժամանակավոր օգտագործված հողամասերի (եթե կան այդպիսիք) վերականգնմանն ուղղված միջոցառումները կիրականացվեն տվյալ տարածքի համար բնորոշ համարվող բույսերի միջոցով: Բույսերի բնական միջավայրի/աճման գոտու ապօրինի տեղափոխումը և այդ տարածքում այլ տեսակների կլիմայավարժեցումը, ինչպես նաև անձանոթ տեսակների ներմուծումը խստորեն արգելվում է: Կապալառուն պետք է ներկայացնի օգտագործված տարածքների բուսականության վերականգնման մասին մեթոդաբանություն:
385. Մանրամասն միջոցառումները տե՛ս Հավելված Ժ-ում՝ ԲԿՊ աղյուսակի պարբ. 4 և 14:

Շրջակա միջավայրի պահպանության պլան

386. Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ների, ԵԿ-ների և նրանց աշխատակիցների մոտեցումը շինարարական աշխատանքների հետևանքով հողը, օդը և ջրային մարմինները էրոզիայից, նստվածքագոյացումից, փոշու և այլ արտանետումներից, ինչպես նաև աղմուկից և թրթռումներից զերծ պահելու նպատակով իրականացվելիք միջոցառումների ուղղությամբ: Պլանն իր մեջ ներառում է ցանկացած ազդեցության վտանգը նվազեցնելուն ուղղված մեղմացնող միջոցառումներ՝ դրանք հասցնելով օրենսդրորեն ընդունելի մակարդակի օգտագործված բոլոր տարածքներում՝ շինհրապարակներում, ճամբարներում, շինարարական նյութերի տեղափոխման համար նախատեսված ճանապարհներին, հանքերում, բացահանքերում, լցակայաններում և այլ վայրերում: Մասնավորապես, դիտարկվել են հետևյալ ասպեկտները.

- i. Օդի աղտոտման և փոշու վերահսկում
- ii. Աղմուկի և թրթռման վերահսկում
- iii. Հողի էրոզիայի և նստվածքների վերահսկում
- iv. Ջրի որակի և նստվածքների վերահսկում

Օդի աղտոտում և փոշու վերահսկում

387. Մշակվել են կառավարման միջոցառումներ՝ շինարարական աշխատանքների արդյունքում առաջացող փոշու և զազի արտանետումները նվազեցնելու համար՝ այսպիսով վերահսկելով օդի աղտոտվածությունը և շրջակա հանրության վրա հնարավոր առողջական ու անբարենպաստ ազդեցությունները: Կապալառուն օդի որակի վերահսկողությունն իրականացնելու է աշխատանքների ճշգրիտ ժամանակացույցի և կազմակերպման միջոցով:

Նախնական գնահատման հայտ

Հիմնական սկզբունքը երկրի մակերևույթի ազդեցության ենթարկման տևողության նվազեցումն է, հանույթի նյութի և շինանյութի մնացորդների ճիշտ ժամանակին հեռացումը:

388. Օղի որակի վերահսկողության մեկ այլ սկզբունք է էլեկտրաէներգիայի կամ մարտկոցի էներգիայի կիրառումը որտեղ հնարավոր է (կամ պրակտիկ) աշխատել ձեռքի գործիքներով, ոչ թե դիզելով, և խուսափել դիզելային շարժիչով կամ բենզինով աշխատող գեներատորներ կիրառելուց:
389. Կարևոր սկզբունքներից մեկը նաև այն է, որ կապալառուն խուսափելու է կիրառել կամ օգտագործել գազի մեծաքանակ արտանետումներ բաց թողնող հնացած մեքենաներ կամ սարքավորումներ, ինչպես նաև իրականացնելու է տեխնիկական վիճակի կանոնավոր ստուգումներ և ժամանակին նորոգումներ:
390. Շինարարությանը վերաբերող հետագա միջոցառումները մանրամասն ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ Ժ-ում, ԲԿՊ սխեմայի, պարբերություն 5-ում՝ Շրջակա միջավայրի պահպանության ծրագիր: Շինարարությունից հետո օղի որակի վերահսկման միջոցառումները սահմանափակված են Թերությունների վերացման ժամանակաշրջանով: Ավտոբուսային հավաքակալանի շահագործման ժամանակահատվածի համար հատուկ մեղմացնող միջոցառումներ չեն պահանջվում (տե՛ս Գլուխ Ե., Ե2. Օղի որակ):

Աղմուկի և թրթռման մեղմացում

391. Աղմուկի և թրթռումների վերահսկման նպատակն է դրանց մակարդակի բարձրացման հնարավոր ազդեցությունները նվազեցնելն և կառավարելը, ինչպիսիք են աղմուկի պատճառած անհանգստությունը, լսողության խանգարումները, որը կարող է ազդել և՛ շինարարների, և՛ հարակից տարածքում բնակվողների վրա:
392. Աղմուկի և թրթռման վերահսկման միջոցառումները խմբավորված են 2 բաժիններում՝
- Ծրագրի շինարարության փուլում ժամանակավորապես բարձրացած աղմուկի մեղմացում,
 - Կառուցված ավտոբուսային հավաքակալանի շահագործման ընթացքում մշտապես առկա աղմուկի և թրթռման մեղմացում, ինչը հաստատվել է ձայնային (ակուստիկ) մոդելավորմամբ:
393. Միջոցառումների առաջին խումբը ներառվում է ՇՄՆՈՒ-ում և վերահսկվելու է ակնադիտական և գործիքային չափումների միջոցով: Կապալառուն պահպանելու է աղմուկի և թրթռման հետ կապված Հայաստանի օրենսդրությամբ սահմանված նորմերը (Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138 հրաման, քաղաքաշինություն) և ծրագրի համար ընդունված սահմանային արժեքները (տե՛ս Գլուխ Ե, Ե 3):
394. Շինարարական աշխատանքների ազդեցությունը շրջակա գույքի (տներ, շենքեր, շինություններ) վրա վերահսկելու նպատակով Ինժեներն իրականացնելու է թրթռման ազդեցության շրջանակում գտնվող շենքերի/շինությունների համար թրթռման կանոնավոր գործիքային չափումներ: Շինարարության ընթացքում մասնագիտացված կազմակերպության կողմից թրթռումների գործառնական չափումներ կիրականացվեն շաբաթական երկու անգամ: Ծրագրի համար սահմանված շեմերը գերազանցելու դեպքում աշխատանքային գործընթացը

Նախնական գնահատման հայտ

Ժամանակավորապես կդադարեցվի և շինարարության աշխատանքների եղանակը կվերանայվի:

395. Ավտոբուսային հավաքակայանի շահագործման ընթացքում հնարավոր մշտապես բարձր աղմուկը և թրթռումը մեղմացնելու համար նախագծվել է 2.5 մ բարձրությամբ բետոնե բլոկներից աղմկապաշտպան պարիսպ, որը շրջակայքի բնակիչների և այլ զգայուն տարածքների համար կծառայի որպես ձայնային արգելապատնեշ (Գլուխ Ե, Ե 3), ինչպես նաև հավաքակայանի տարածքի պարագծով նախատեսվում է պաշտպանիչ գոտի՝ կազմված 2-3 շարք ծառերից՝ ըստ կանաչապատման նախագծի:

Հողի էրոզիայի և նստվածքի վերահսկում

396. Սույն ենթապլանն իր մեջ ներառում է գրունտի և բուսահողի կառավարման հետ կապված հարցերը: Նախագծի շրջանակում մշակվել են Տեխնիկական մասնագրերի Բաժին 101. Ընդհանուր պահանջների, կետ 101.15 Շրջակա միջավայրի պաշտպանություն և Տեխնիկական մասնագրերի Բաժին 1002. Բուսահող, ինչպես նաև կիրառելի են ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ բուսահողի պահպանման կանոնակարգերը:

397. Գրունտի էրոզիայի և նստվածքի վերահսկման պլանն իր մեջ ներառում է վտանգված տարածքները նվազագույնի հասցնելու, գրունտի էրոզիայից և նստվածքների արտահոսքից խուսափելու նպատակով տեղամասային աշխատանքների պատշաճ կազմակերպմանն ուղղված միջոցառումները: Կապալառուն էրոզիայի վերահսկումն իրականացնելու է ըստ Տեխնիկական մասնագրերի (հղումը պետք է հաստատվի) - էրոզիայի վերահսկում, ինչպես նաև իրականացնելու է բուսահողի հեռացում և պահեստավորում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Տեխնիկական մասնագրերի Բաժին 1002-ի (Բուսահող):

Ստորգետնյա ջրերի պահպանության պլան

398. Թեև ըստ երկրաբանական հետազոտության տվյալների՝ ազդեցությունը ստորգետնյա ջրերի վրա հավանական չէ, երկրաբանի կողմից առաջարկվում են մի շարք միջոցառումներ, որոնք ներառված են նախագծում: ԲԿՊ-ում նախատեսվում է համապատասխան մեղմացնող ընթացակարգ՝ շինարարության ընթացքում աղտոտումը նվազեցնելու համար, մասնավորապես՝ վառելիքի պահեստավորման, վերալիցքավորման կայանների և մեքենաների տեխնիկական սպասարկման արհեստանոցների համար սահմանազღված տարածքների ապահովման, ցանկացած արտահոսքի մաքրման, իսկ լայնածավալ արտահոսքի դեպքում ՇՄՆ-ին հաշվետվությունների ներկայացման միջոցառումներ:

Հաղորդողիների պահպանության պլան

399. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի մոտեցումը հաղորդողիների՝ էկոլոգիապես անվտանգ տեղադրման ուղղությամբ՝ ըստ հաղորդողիների նախագծի՝ պահպանելու հայտնաբերված այն հաղորդողիները, որոնք ենթակա չեն տեղափոխման, և իրականացնելու շինարարական աշխատանքների ընթացքում հայտնաբերված ցանկացած հաղորդողու պահպանումը կամ տեղափոխումը:

Նախնական գնահատման հայտ

400. Հաղորդուղիների նախագիծը հաստատվելու է սեփականատիրոջ կողմից: Հաղորդուղիների պահպանության և տեղափոխման պլանը իրականացվում է Տեխնիկական մասնագրերի՝ «Հաղորդուղիների տեղափոխում» բաժնի պահանջների համաձայն:
401. Հաղորդուղիների տեղափոխման գործընթացի պատշաճ իրականացման համար մշակված մեղմացնող միջոցառումները փոխկապակցված են Հանրային լուսմների և հաղորդակցության պլանին և ներկայացվելու են ԲԿՊ սխեմայում (ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, ԲԿՊ սխեմա, պարբերություն 7).

Շինարարական ճամբարների տեղակայման պլան

402. Սույն ենթապլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների մոտեցումը շինարարական ճամբարների կառավարման միջոցառումների իրականացման ընթացքում՝ հաշվի առնելով, որ Ծրագրի տարածքը գրեթե ամբողջությամբ գտնվում է խիտ կառուցապատված, ձեռնարկատիրական գործունեությունների և հանրային վայրում: Ճամբարների տեղակայման և օգտագործման հետ կապված խնդիրները մի կողմից վերաբերում են ճամբարների՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությանը, մյուս կողմից՝ շրջակա միջավայրը պաշտպանելու անհրաժեշտությանը՝ հարակից հանրային վայրերում անհանգստություններից խուսափելու և աշխատակիցների առողջությունը, անվտանգությունը և հարմարավետությունն ապահովելու համար:
403. Ենթապլանով ԳԿ-ի համար ընդհանուր պահանջներ են սահմանվում՝ գլխավոր գրասենյակի և շինարարական ճամբարների պլանավորման և տեղակայման, մեքենաների կայանման, նյութերի և սարքավորումների պահեստավորման և աշխատանքային անձնակազմի համար սննդի և հանգստի համար սանիտարական հարմարությունների կազմակերպման վերաբերյալ:
404. Կապալառուի և ենթակապալառուների գրասենյակների, անձնակազմի բնակարանային ապահովման, սարքավորումների և մեքենաների պահեստավորման, կայանատեղերի և մեքենաների մաքրման արտադրամասի, նյութերի ժամանակավոր պահեստավորման տարածքների համար օբյեկտների տեղակայման հիմնական չափորոշիչները/սկզբունքը Ծրագրի տարածքում դրանց գտնվելու պահանջն է, որը Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանի տարածքն է: Ծրագրի համար հատկացված տարածքից դուրս ցանկացած տարածքի օգտագործումը բացառվում է: Այս պահանջը հաշվի է առնվել պլանի սույն բաժնում և համապատասխան միջոցառումները ներառվել են ՇՄԱԳ/ԲԿՊ-ի մեջ և իրականացվելու են Կապալառուի կողմից՝ տեղի բնակչությանը պատճառվող անհանգստությունը նվազագույնի հասցնելու, բնակչության և տեղի/կենտրոնական իշխանությունների հետ ընդհարումից խուսափելու, հողի և ջրի աղտոտումը նվազագույնի հասցնելու, ինչպես նաև հաշվի առնելու այն հանագամանքը, որ արգելվել է իրականացնել ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների և բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանը²³.

²³ ՀՀ օրենքը «Կենդանական աշխարհի մասին» 03.04. 2000 թ., հոդված 18; ՀՀ օրենքը « Բուսական աշխարհի մասին» 23.11. 1999 թ., հոդված 17.

Նախնական գնահատման հայտ

405. Ավտոբուսային հավաքակայանի տարածքից դուրս շինարարական ճամբարների տեղակայումը, որը կարող է անհրաժեշտ լինել Ծրագրի իրականացման ընթացքում և կիրառվել կա՛մ Կապալառուի, կա՛մ որևէ այլ ենթակապալառուի կողմից, ընտրվելու է Կապալառուի կողմից՝ միայն ՎԻ-ի հետ խորհրդակցելուց և վերջինիս կողմից հաստատվելուց հետո: Կապալառուն պետք է նախապես գրավոր թույլտվություն ստանա հողամասի սեփականատիրոջ կողմից՝ ցանկացած օբյեկտի տեղակայման համար: Ճամբարի տեղանքի ընտրությունը, Կապալառուի գրասենյակների համար օբյեկտների տեղակայումը, սարքավորումների պահեստավորման և մեքենաների կայանատեղին, հատկապես էթե գտնվում է ավտոբուսային հավաքակայանի տարածքից դուրս և մոտ է բնակելի և ձեռնարակատիրական գործունեությունների տարածքներին, իրականացվելու է՝ նվազագույնի հասցնելու հողի տոփանումը և աղտոտումը, ինչպես նաև շրջակայքի հանրությանը պատճառվող անհանգստությունը:
406. Դաշտային ճամբարները ստեղծվելու են՝ Կապալառուի մոբիլիզացման պլանի և Կապալառուի՝ ՇԲԿՊ-ում ներկայացված տեղակայման սխեմայի համաձայն: Կանխարգելիչ/մեղմացնող միջոցառումները մանրամասնորեն ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ Ժ-ի ԲԿԽ սխեմայի պարբերություն 8-ում:

ՋՐԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՈՒՄ

407. Տեխնոլոգիական նպատակներով ջրամատակարարումը ավտոբուսային հավաքակայանի շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում իրականացվելու է համապատասխան մարմնի հետ ծառայությունների մատուցման պայմանագրի միջոցով: Ջրամատակարարման պայմանագիր կնքելու հնարավորությամբ ամենամոտ ջրային համակարգերին միանալու հեռանկարային հնարավորությունը ուսումնասիրվում է նախագծման փուլում (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ե, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե -3):
408. Խմելու ջուրը հասանելի կլինի բոլոր այն վայրերում, որտեղ շինարարական աշխատանքներ են ընթանում: Կապալառուն ապահովելու է բավարար քանակությամբ շշալցված ջուր (օրական ամենաքիչը երկու լիտր շշալցված ջուր՝ մեկ անձի հաշվով) ամբողջ աշխատակազմի համար՝ ինչպես ղեկավար անձնակազմի, այնպես էլ աշխատակիցների համար:

ԷԼԵԿՏՐԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՈՒՄ

409. Շինարարական ճամբարի տեղանքը ապահովված է լինելու էլեկտրաէներգիայով՝ համապատասխան մարմնի հետ ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման միջոցով կամ կոմպակտ գեներատորների տեղադրման միջոցով: Էլեկտրաէներգիան անհրաժեշտ է լինելու ինչպես շինարարական աշխատանքների, այնպես էլ անվտանգության նկատառումներից ելնելով գիշերային ժամերին շինարարության տարածքում և ճամբարում լուսավորության ապահովման համար: Կապալառուն հոգալու է, որպեսզի բավարար լուսավորություն լինի բոլոր այն վայրերում, որտեղ աշխատանքները ընթացքի մեջ են և վերջինիս աշխատակազմի համար ապահովված են անվտանգ աշխատանքային պայմաններ:

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

410. Կապալառուն ծրագրի տարածքում տեղակայված ճամբարը կահավորում է ժամանակավոր սանիտարական հարմարություններով իր բոլոր աշխատակիցների համար:

Նախնական գնահատման հայտ

Սանիտարական հարմարությունները (գուգարան և լվացվելու, ճաշելու, սրճելու, հանգստանալու, ձմռանը տաքանալու հարմարություններ) պետք է ունենան բավարար հնարավորություններ, պատշաճ կերպով պահպանվեն շինարարական աշխատանքների ողջ ընթացքում, և առավելագույնս հեռու լինեն հասարակության տեսադաշտից: Կապալառուն ապահովելու է նման սանիտարական հարմարությունների հասանելիությունը բոլոր աշխատակիցների համար: Ժամանակավոր տեղակայված հարմարությունները ճիշտ ժամանակին կհեռացվեն շինարարական աշխատանքների ավարտից հետո:

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՅԱՆՄԱՆ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

411. Կապալառուն կազմակերպելու է ճամբարի տարածքում նյութերի ժամանակավոր պահեստավորումը և մեքենաների կայանման ու վերանորոգման արհեստանոցների տարածքները: Կապալառուն ապահովելու է այս օբյեկտների անվտանգությունը և մաքրությունը, որոնք տեղակայված են լինելու այնպես, որպեսզի որևէ կերպ չխանգարեն ավտոբուսային հավաքակայանի և ողջ անձնակազմի բնականոն գործունեությունը:
412. Նյութերի ժամանակավոր պահեստավորման տարածքները պատշաճ կերպով պահպանվելու են. նյութերը, որոնք կանոնավոր կերպով կուտակված են և ծածկված՝ չհամակարգված նյութերի դեպքում, պարկերն ու տարաները պիտակավորված են՝ նշելով նյութի անունը և վնասակարությունը՝ վտանգավոր/ոչ վտանգավոր:
413. Ճամբարի տարածքում լինելու են մեքենաների լվացման օբյեկտներ և կեղտաջրերի հեռացման համակարգեր. առաջացած կեղտաջրերը ուղղվելու են տեղի ջրահեռացման համակարգ:
414. Կայանման և վերալիցքավորման տարածքները լինելու են անջրաթափանց մակերեսի վրա: Կապալառուն պետք է խուսափի տեղակայել կայանման վայրերը առանց պատվածքի հողի վրա, կամ այն վայրերում, որոնք ծածկված են խոտով և այլ բուսականությամբ.

Տեղամասի կառավարման պլան (հանք և բացահանք, լցակույտեր, բետոնի և ասֆալտի գործարաններ)

415. Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների մոտեցումը Ծրագրի տարածքից դուրս՝ հանքերի, բացահանքերի, քարջարդ, բետոնի և ասֆալտի գործարանների, շինանյութերի և սարքավորումների տեղափոխման համար օգտագործվող ճանապարհների վրա շինարարական գործունեության հետևանքները կառավարելու միջոցառումների իրականացման գործում:
416. Ծրագրով չի նախատեսվում բացել նոր հանքեր և/ կամ հանույթի համար նախատեսված վայրեր: Նախատեսված չէ նաև հիմնել բետոնի կամ ասֆալտի գործարան: Ենթադրվում է, որ մրցույթի հաղթող կապալառուն նյութը գնելու է արդեն իսկ գոյություն ունեցող հանքից և/ կամ ասֆալտի գործարաններից գնման պայմանագրի հիման վրա: Հետևաբար, Կապալառուից պահանջվում է Խորհրդատուին տրամադրել շինանյութի գնման պայմանագրերի պատճենները:
417. Նաև չի նախատեսվում բացել թափոնների հեռացման երկարաժամկետ գործածության համար նախատեսված կուտակավայրեր: Բոլոր թափոնները կտեղափոխվեն գոյություն

Նախնական գնահատման հայտ

ունեցող աղբակույտեր՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագիրը: Համապատասխան թույլտվությունը Կապալառուն կտրամադրի ՎԻ-ին:

418. Եթե Կապալառուն այնուամենայնիվ բացի նոր հանքեր և/ կամ հանույթի համար նախատեսված վայրեր, կուտակավայրեր կամ հիմնի բետոնի կամ ասֆալտի գործարաններ, վերջինիցս կպահանջվի խստորեն հետևել ՀՀ համապատասխան օրենսդրությանը, այդ թվում ՀՀ օրենքը «Կենդանական աշխարհի մասին» 03.04. 2000 թ., հոդված 18; ՀՀ օրենքը « Բուսական աշխարհի մասին» 23.11. 1999 թ., հոդված 17, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքը» (ՀՕ-211 27.11.2006 թ) և պատրաստել և հաստատման ներկայացնել տեղամասի կառավարման պլան յուրաքանչյուր տարածքի համար, որը կօգտագործվի ծրագրային տարածքից դուրս ժամանակավորապես օգտագործված յուրաքանչյուր տարածքի համար: Տեղամասի կառավարման պլանի բովանդակության համառոտ նկարագիրը տրված է Հավելված Լ-ում:
419. Այն դեպքում, եթե նոր հանքերի, բետոնի և ասֆալտի գործարանների անհրաժեշտություն առաջանա, Կապալառուն պետք է տրամադրի համապատասխան համաձայնագիրը/ լիցենզիան՝ տրամադրված համապատասխան մարմինների կողմից և ստանա Բնապահպանության նախարարության բնապահպանական փորձաքննության հաստատումը հանքի և բացահանքի, լցակույտի շահագործման, ինչպես նաև թույլտվությունը բետոնի և ասֆալտի գործարաններից զազի արտանետումների համար:

Երթևեկության և մուտքերի կառավարման պլան

420. Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների, ինչպես նաև նրանց աշխատակիցների մոտեցումը՝ շինարարական աշխատանքների ընթացքում հանրային երթևեկությունը կառավարելու և շինարարական մեքենաները շինհրապարակ մուտք գործելու համար միջոցառումների իրականացման գործում: Երթևեկության և մուտքերի կառավարման պլանը կազմվելու է Կապալառուի կողմից՝ որպես ՇԲԿ-ի մաս, և պետք է համաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ի և Ճանապարհային ոստիկանության կողմից մոբիլիզացման ժամանակահատվածում և ամեն անգամ անհրաժեշտության դեպքում թարմացվի: Պլանավորման հիմնական սկզբունքը պետք է լինի խուսափել երթևեկության խցանումներից և հանրային երթևեկության ու հետիոտների համար անվտանգ տեղաշարժի պայմաններ ապահովելը:
421. ԵԿՊ-ն ներառելու է նաև Տրանսպորտային միջոցների կառավարման նորմեր՝ տեղամասի ներսում և տեղամասից դուրս, ինչպիսիք են՝ կայանման կազմակերպումը, վերանորոգումը, տեխնիկական գննությունը և կրկնակի ստուգումը, վերալիցքավորումը և այլն:
422. Կապալառուն պարտավորվում է անցկացնել Նախաշինարարական ճանապարհային և գույքի վիճակի ուսումնասիրություն՝ տեղական ճանապարհային ցանցի և ճանապարհի եզրին գտնվող ազդեցության ենթակա գույքի վիճակը փաստաթղթավորելու համար, ինչպես նաև փոխհատուցելու ու վերականգնելու պատճառով վնասը:
423. Երթևեկության և մուտքերի կառավարման պլանով նախատեսված միջոցառումները թվարկված են ՀԱՎԵԼՎԱԾ Ժ-ի ԲԿՊ սխեմայի Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 10-ում):

Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան

424. Սույն պլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների մոտեցումը շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական աշխատանքների ընթացքում արտակարգ իրավիճակներին օպերատիվ արձագանքելու միջոցառումների իրականացման գործում: Շինարարության կապալառուի կողմից ձեռնարկվելիք միջոցառումները մանրամասն ներկայացված են ՀԱՎԵԼՎԱԾ--- Աղյուսակ 1, պարբ. 11:
425. Նախագծման խորհրդատուի կողմից մշակվում է Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան ավտոբուսային հավաքակայանի օպերատորի համար, որը կտրամադրվի օպերատորին և կօգտագործվի հետշինարարական ժամանակաշրջանում (տե՛ս ստորև՝ Ավտոբուսային հավաքակայանի շահագործման փուլը):

Թափոնների և նյութերի հեռացման պլան

426. Այս պլանի նպատակն է միջոցառումների իրականացման ժամանակ փաստաթղթավորել ԳԿ-ի և ԵԿ-ների մոտեցումը շինարարական նյութերի պահեստավորման, ինչպես նաև շինարարության ընթացքում առաջացած թափոնների և փչացող նյութերի հեռացման համար, նաև ենթադրաբար շինարարության ընթացքում աղտոտված հողի կառավարման համար:
427. Սույն պլանի թափոնների կառավարման հիմնական սկզբունքը հիմնված է թափոնների կառավարման մոտեցումների ներքոնշյալ աստիճանականության վրա (ամենաբարձրից մինչև ցածր առաջնահերթություն)`
- i. հնարավորության դեպքում խուսափել թափոնների գոյացումից
 - ii. նվազեցնել թափոնների գոյացումը, ներառյալ՝ հողի աղտոտումը
 - iii. հնարավորինս վերաօգտագործել թափոնները
 - iv. հնարավորինս վերամշակել թափոնները, և
 - v. Մնացած թափոնները և տեղահանված աղտոտված հողը դեն նետել էկոլոգիապես հարմար եղանակով՝ քաղաքային իշխանությունների կողմից նշանակված վայրերում:
428. Նյութերի կառավարման հիմնական սկզբունքն այն է, որ Կապալառուն պատշաճ կերպով կազմակերպի ամբողջ շինանյութի մատակարարումը և պահեստավորումը: Շինանյութը մատակարարվելու է ամենօրյա սպառման քանակներով՝ շինարարության տարածքում երկար ժամանակ մնալուց, շինհրապարակներում տարածվելուց և աղբի, փոշու և ցեխի աղբյուր դառնալուց խուսափելու համար: Այն նյութը, որը չի մատակարարվում ամենօրյա սպառման քանակով, պահվելու է հատուկ հատկացված պահեստային տարածքում, որը նշված է Կապալառուի մոբիլիզացման պլանում և ՇՄԿՊ-ում. վերջինս հազեցած է լինելու անհրաժեշտ հարմարություններով՝ պահպանելու անվտանգության և աղտոտման վերահսկման կանոնները՝ կոնտեյներներ, ծածկված պահեստներ, մնացորդների հավաքման կոնտեյներներ և այլն:
429. Հանույթի և հարթեցման աշխատանքներից կարող է առաջանալ հանույթի նյութի ավելցուկ: Ավելանալու դեպքում այն պետք է դասակարգվի, տեղափոխվի և տեղավորվի՝ ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն:

Նախնական գնահատման հայտ

430. Կապալառուն դիմելու է համապատասխան մարմիններին՝ ստանալու բոլոր անհրաժեշտ օրենսդրական թույլտվությունները և լիցենզիաները թափոնների, այդ թվում՝ վտանգավոր թափոնների դասակարգման, փոխադրման, վերամշակման և հեռացման համար: Շինարարական թափոնների և նյութերի ցանկացած տեղափոխում շինարարության տարածք և տարածքից դուրս իրականացվելու է ճանապարհային ուստիկանության և ՎԻ-ի կողմից հաստատված ԵԿՊ-ի համաձայն:
431. Թափոնների, փչացող նյութերի և աղտոտված հողի կառավարումը վերոնշյալ սկզբունքների համաձայն՝ պատշաճ հավաքագրման, տարանջատման, պահեստավորման, հեռացման և կրթական/վերապատրաստման մեթոդների միջոցով, կապահովի թափոնների առաջացման և աղտոտված հողի կառավարման հետ կապված ռիսկի ցածր մակարդակը: Լուծիչների և ցնդող նյութերի մշակումը իրականացվելու է ՇՄՆ-ի, Հայաստանի օրենսդրության և միջազգային լավագույն փորձով սահմանված ընթացակարգերի համաձայն:
432. Թափոնների կառավարման ընդհանուր սկզբունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները, ներառյալ՝ թափոնների գրանցման պահանջները, նշված են ԲԿՊ սխեմայում (Հավելված Ժ, ԲԿՊ սխեմա, Թափոնների և նյութերի կառավարման պլան, պարբերություն 12): Մյուս կողմից՝ Կապալառուից պահանջվում է իր ՇԲԿՊ-ում ներկայացնել թափոնների կառավարման և թափոնների նվազեցման առավել մանրամասն ծրագիր: Կապալառուի՝ թափոնների կառավարման պլանը հաստատելիս Ինժեների ուշադրության կենտրոնում հասկապես պետք է լինեն բետոնաջրերի հավաքման եղանակները և նավթի/վառելիքի/քսանյութերի մնացորդները՝ հետագայում կրկին օգտագործելու համար:
433. Կապալառուն մանրամասն ներկայացնելու է իր մոտեցումը բոլոր տեսակի նյութերի և թափոնների կառավարման վերաբերյալ, որոնք առաջացել են շինարարական աշխատանքների ընթացքում:

ԱՆՎՏԱՆԳ ԹԱՓՈՆՆԵՐ

434. Այն թափոնները, որոնք առաջանում են ապամոնտաժման աշխատանքների ժամանակ և շինարարության հետ կապված այլ թափոնները ներառում են շինհրապարակից հանվող ամբողջ նյութերը, ինչպիսիք են ապամոնտաժված կառույցները, բետոնե բլոկները, շինարարության ոչ վտանգավոր բեկորները, ինչպիսիք են մետաղը, պլաստմասը, փայտե մասերը և այլն: Բոլոր ոչ վտանգավոր թափոնները դասակարգվելու են ըստ նյութերի՝ հետագայում օգտագործման պիտանելիության և ոչ պիտանելիության: Համապատասխան նյութերը փոխանցվելու են սեփականատիրոջը: Անհամապատասխան նյութերը հեռացվելու են տեղամասից և տեղափոխվելու են նախապես հաստատված աղբավայրեր: Կապալառուն դիմելու է Երևանի քաղաքապետարանին՝ թափոնների հեռացման վայրի համար և գրավոր թույլտվություն է տրամադրելու ՎԽ-ին:
435. Պինդ թափոններ: Վերջինս կարող է ներառել մետաղի և փայտանյութի, բետոնի, թղթի, պլաստմասայի, սովարաթղթի, թիթեղամանի և շշերի, արտադրամասի թափոնների և օրգանական սննդի թափոններ (աղբ): Կապալառուն պատասխանատվություն է կրում աշխատանքային տարածքի և շինհրապարակների հարակից տարածքի մաքրության համար: Հարակից տարածքներում թափոններ չեն լինելու: Կոնտեյնրներից դուրս գտնվող ցանկացած

Նախնական գնահատման հայտ

Թափոն հավաքվելու է Կապալառուի/Էնթակապալառուի կողմից: Ամբողջ աղբը Կապալառուի կողմից տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից նշանակած աղբավայր՝ վարչական շրջանի հետ կնքված պայմանագրի կամ թույլտվության հիման վրա:

ՀԵՂՈՒԿ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐ

436. Վտանգավոր հեղուկ նյութերը և դրանց թափոնները այրվող և/ կամ կենսակերպի համար վտանգավոր նյութերն են: Վտանգավոր նյութերը և դրանց թափոնները ներառում են ստորև նշվածներից որևէ մեկը և պահեստավորման, մշակման և վերացման հատուկ ընթացակարգեր են պահանջում՝

- ✓ վառելանյութ, ներառյալ՝ բենզինը և դիզելը
- ✓ օգտագործված յուղ
- ✓ ցանկացած թափոնային բենզին, դիզել և բիտում
- ✓ ցեմենտաջուր (բետոնի լվացման կառավարման լավագույն փորձը, երբ բետոնատար մեքենայի բաքը լվացվում է բետոնի վերամշակման գործարաններում կամ հատկացված վայրերում, ընտրվում է որպես կիրառելի այլընտրանք)
- ✓ ավտոլվացման կայանի կեղտաջրերը

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐ

437. Վտանգավոր նյութերն ու թափոնները ներառում են այնպիսիք, որոնք կարող են առաջանալ ավտոբուսային հավաքակայանի շահագործման ընթացքում և շինարարական աշխատանքների ընթացքում:

438. Հայաստանի օրենսդրության պահանջներին համապատասխանելու համար Կապալառուն պետք է լիցենզիա ստանա վտանգավոր թափոնների մշակման համար կամ պայմանագիր կնքի մասնագիտացված լիցենզավորված ընկերության հետ: Կապալառուն պետք է Շրջակա միջավայրի նախարարության հետ որոշի վտանգավոր թափոնների հեռացումը (անհրաժեշտության դեպքում), և այդ մասին տեղեկացնի ԵԿ-ին:

439. Ավտոբուսային հավաքակայանի շահագործման ընթացքում օգտագործված և առաջացած վտանգավոր նյութերը ներկայացված են Աղյուսակ Ը-1-ում: Ավտոբուսային հավաքակայանի օպերատորը պետք է պահեստավորի այս նյութը և մնացորդներն ու թափոնները վերամշակի Հայաստանի օրենսդրության պահանջներին և միջազգային լավագույն փորձին համապատասխան:

ԹԱՓՈՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

440. Կապալառուն օգտագործելու է առաջացած թափոնների այն մասը, ինչպիսիք են գրունտի հանույթը, ապարները և քարերը, քանդված ասֆալտը, բետոնի մասերը, օգտագործված յուղը և բետոնե թափոնները, եթե դա հնարավոր է: Վերջինս իր ՇԲԿՊ-ի շրջանակներում ներկայացնելու է թափոնների նվազեցման իր ծրագիրը: Այսպիսով, Կապալառուն կնվազեցնի թափոնների քանակությունը և կհամապատասխանի աղտոտվածության վերահսկման պահանջներին:

Մշակութային ժառանգության կառավարման պլան

441. Թեև հնագետի հետ խորհրդակցության հիման վրա ազդեցությունը մշակութային և հնագիտական ժառանգության վրա գնահատվել է «ոչ նշանակալի» և աննշան, Մշակութային ժառանգության ենթապլանը ներառվել է ԲԿՊ-ում: Թեև հնագետի հետ խորհրդակցության հիման վրա ազդեցությունը մշակութային և հնագիտական ժառանգության վրա գնահատվել է «ոչ նշանակալի» և աննշան, Մշակութային ժառանգության ենթապլանը ներառվել է ԲԿՊ-ում:

Աշխատանքային տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան

442. Այս պլանի նպատակն է փաստաթղթավորել ԳԿ-ի, ԵԿ-ների և նրանց աշխատակիցների մոտեցումը՝ տեղամասի մաքրման և վերականգնման աշխատանքների իրականացման համար՝ ավտոբուսային հավաքակայանի ամբողջական շահագործման և ճանապարհից օգտվողների հասանելիության նպատակով, ներառյալ՝ վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման միջոցառումները՝ որպես շինարարական աշխատանքների մի մաս: Ընթացակարգի նպատակն է շինարարական աշխատանքների ավարտից հետո ապահովել տեղամասի երկարաժամկետ կայունությունը: Նաև աշխատանքի ավարտին բոլոր խաթարված տարածքները պետք է գտնվեն մաքուր և կայուն վիճակում: Այս պլանը կիրառվում է՝

(i) բոլոր շինարարական տեղամասերում,

(ii) բոլոր այն տարածքներում, որտեղ Կապալառուն հարմարություններ է ստեղծել (շարժական տներ, պահեստային տարածքներ, կայանատեղիներ և այլն):

443. Ծրագրի ավարտից հետո կամ երբ շինհրապարակում աշխատանքներն ավարտվեն, վերջինս պետք է մաքրվի բոլոր նյութերից և բեկորներից, որպեսզի տեղանքը հնարավորինս վերականգնի նախնական վիճակը:

444. Բուսականության վերականգնման աշխատանքների պահանջները ներկայացված են կանաչապատման նախագծում հետագայում հրահանգվելու են ՎԻ-ի (Ինժեներ) կողմից: Սա ներառելու է՝

- Կանաչապատման նախագիծը լրամշակել և Ծառերի կառավարման պլանը կազմել հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 14.08.2014 թ.-ի №781-Ն որոշման պահանջները
- տնկել ծառեր, թփեր՝ համաձայն կանաչապատման նախագծի և Ծառերի կառավարման պլանի: Տե՛ս նաև Տեխնիկական մասնագրերի համապատասխան բաժինները. «Բուսահողի, ծառերի, թփերի վերականգնում և ճնապատում»:
- Ծառերի կառավարման պլանի և ծառերի ու այլ բույսերի գոյատևումը վերահսկելու համար վարձել կանաչապատման գծով ենթակապալառու:

445. Համաձայն կանաչապատման նախագծի, կանաչապատման ենթակա տարածքը զբաղեցնելու է մոտ 1347 մ², որի համար անհրաժեշտ բուսահողի ծավալը գնահատվում է 269.4 մ³:

Նախնական գնահատման հայտ

446. Կապալառուն իրականացնելու է տեղամասի վերականգնման միջոցառումներ և ավարտին է հասցնելու շտկման ենթակա թերությունների ցուցակը, որը պատրաստվել է ՎԽ-ի կողմից՝ վերջնական ստորագրման համար:

Թերությունների վերացման ժամանակահատված

447. Թերությունների վերացման ժամանակահատվածում Կապալառուն պատասխանատու է լինելու Բնապահպանական երաշխիքների՝ ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարագրի և Հայաստանի օրենսդրությանը համապատասխանության ապահովման համար այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում Կապալառուն տեղամասում իրականացնում է թերությունների շտկման աշխատանքներ: ԲԿՊ-ի այս բաժինը ներառում է շինարարության փուլի Մաս I-ով սահմանված մեղմացող միջոցառումներին հետևելու ընդհանուր պահանջը, կարող են նշված լինել միայն որոշ միջոցառումներ, ինչպիսիք են գործիքային մոնիթորինգի չափումների հաճախականությունը: Կապալառուի՝ թերությունների վերացման ժամանակահատվածի պարտավորությունները լրացվում են այդ ժամանակահատվածի համար հատուկ պահանջներով և մանրամասն ներկայացվում են ԲԿՊ սխեմայում:

Ավտորուսային հավաքակայանի շահագործման փուլ

448. Թերությունների վերացման ժամանակահատվածին հաջորդող ժամանակահատվածում՝ շահագործման փուլում, Հայաստանի օրենսդրության պահանջներին բնապահպանական համապատասխանության ապահովումը փոխանցվում է ավտորուսային հավաքակայանի շահագործողին (օպերատորին): Օպերատորը կմշակի և կհիմնի բնապահպանական/սոցիալական կառավարման համակարգ, որը կհամապատասխանի հետևյալ պահանջներին.

- ❖ Բնապահպանական երաշխիքների անձնակազմ՝ լրիվ դրույքով աշխատող բնապահպանության մեկ մասնագետ և լրիվ դրույքով աշխատող սոցիալական հարցերի մեկ մասնագետ
- ❖ Բնապահպանական կառավարման պլան
- ❖ Աշխատանքային անվտանգության և առողջության ծրագիր
- ❖ Սոցիալական պատասխանատվության ծրագիր
- ❖ Մոնիթորինգի պլան
- ❖ Տվյալների պահպանում և հաշվետվությունների ներկայացում

449. Բնապահպանական կառավարման պլանը պետք է ներառի՝

- Շրջակա միջավայրի պահպանության ծրագիր
 - Օդի որակ
 - Աղմուկի և թրթռման հսկողություն
 - Ծառեր և կանաչապատում
 - Թափոնների կառավարում
 - Նյութերի պահեստ
 - Հաղորդուղիների պաշտպանություն

Նախնական գնահատման հայտ

- Աշխատանքային անվտանգության և առողջության ծրագիր
 - Ավտոբուսային հավաքակալայանի անվտանգ շահագործման ձեռնարկ
 - Աշխատանքին բնորոշ անվտանգության ցուցումներ
 - Առողջապահության ծրագիր
- Սոցիալական պատասխանատվության ծրագիր
 - ԲԼՄ
 - Տեղեկատվության տրամադրում
 - Աշխատանքային անձնակազմի համար սոցիալական գործիքներ

450. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլանը (ԱԻԱՊ) մշակվել է Նախագծման ինժեների կողմից՝ որպես Անվտանգության կառավարման համակարգի մաս, որպեսզի այն ներառվի Ավտոբուսային հավաքակալայանի օպերատորի ձեռնարկում: ԱԻԱՊ-Ը ներառում է տեղամասի գլխավոր հատակագիծը՝ սահմանված անվտանգության գոտիներով, հարմարությունների/կառույցների և մոտակայքում երրորդ կողմին պատկանող տարածքների միջև նշված հեռավորություններով, ինչպես նաև առաջարկություններ ազդանշանային համակարգի կազմակերպման, արտակարգ իրավիճակների ընթացակարգերի, հրդեհավտանգ իրավիճակի և ռիսկի նվազեցման միջոցառումների վերաբերյալ (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-3):

451. Բնապահպանական երաշխիքների և համապատասխանության վերաբերյալ առաջարկությունները ներկայացված են ՇՄԱԳ/ԲԿՊ-ի այս բաժնում:

Թափոնների և նյութերի կառավարման պլան

452. Շինարարության փուլի ավարտից հետո Օպերատորը կկազմակերպի թափոնների կառավարումը ավտոբուսային հավաքակալայանի շահագործման ընթացքում: Ավտոբուսային հավաքակալայանում կմշակվի և կհիմնվի նյութերի և թափոնների կառավարման համակարգ:

Նյութերի կառավարում

453. Ավտոբուսային հավաքակալայանում պահպանվելու են վտանգավոր նյութերի հետևյալ տեսակները.

Աղյուսակ Ը-1. Ավտոբուսային հավաքակալայանում օգտագործվող վնասակար և վտանգավոր նյութերը

Անվանումը
Գազ
Բնական սեղմված գազ (ԲՄԳ)
Շարժիչի յուղ
Քսայուղեր
Փոխանցման տուփի յուղ
Ղեկի հիդրավլիկ յուղ
Հովացնող հեղուկ
Դիմապակու հեղուկ
Յուղագերծող միջոց
Մաքրող միջոց
Ներկանյութ
Արգելակի հեղուկ

Նախնական գնահատման հայտ

Յուղ
Աերոզոլ
Ռետին (անվադողեր)
O2 սեղմված գազի բալոն
Ացետիլենային սեղմված գազի բալոն
Մարտկոցներ

454. Այդ նյութերի պահպանումը/պահեստավորումը կիրականացվի՝ ըստ տվյալ նյութի դասակարգման՝ ըստ օգտագործման եղանակի և ըստ վտանգի տեսակի:

Աղյուսակ Ը-2. Պահպանման նպատակով նյութերի խմբավորումը

Պահեստավորում	<ul style="list-style-type: none"> - Դիզել՝ վերգետնյա օգտագործման համար (ավտոբուսների լիցքավորման համար) - Դիզել (հողային աշխատանքներ իրականացնող մեքենաների, շարժական գեներատորների, կոմպրեսորային շարժական սարքերի համար) - ԲՄԳ՝ վերգետնյա օգտագործման համար (ավտոբուսների լիցքավորման համար) - Դյուրավառ վտանգավոր նյութեր (օրինակ՝ ներկ, լուծիչ...) - Սեղմված գազի բալոն (արգոն, ազոտ, թթվածին, մեթան... շինարարական աշխատանքներում օգտագործման համար) - Բարձր ջերմային արժեք ունեցող նյութեր
---------------	---

455. Տեղամասում վտանգավոր նյութերի մասին տեղեկատվությունը տրամադրված է Օպերատորի ԱԻԱՊ-ում: Յուրաքանչյուր տեսակի նյութի վերաբերյալ Օպերատորի կողմից պետք է լրացվի ստորև նշված տեղեկատվությունը, որը կպահվի և հասանելի կլինի նյութերի և թափոնների կառավարման համակարգում: Օպերատորը պարտավոր է լրացնել նյութի անվտանգության տվյալների թերթիկը, վերապատրաստել իր անձնակազմին տվյալ թեմայի շուրջ, իրականացնել պահեստավորումը օրենսդրական պահանջներին և ԱԻԱՊ-ի առաջարկություններին համապատասխան, ինչպես նաև փոփոխությունների դեպքում թարմացնել այն.

- քանակը
- տեսակը
- վտանգի խորհրդանիշը
- առնչվող ռիսկը
- նյութի ծածկագիրը
- վտանգի ծածկագիրը
- Տեղամասում գտնվելու վայրը
- Առաջարկվող ԱՊՄ-ն

Թափոնների կառավարում

456. Թափոնների կառավարումը ներառում է հավաքակայանի շահագործման ընթացքում առաջացած բոլոր թափոնների դասակարգումը, ժամանակավոր առանձնացված հավաքումը,

Նախնական գնահատման հայտ

մշակումը և հեռացումը մշտական տեղավորման համար: Օպերատորը թափոնների կառավարումը կազմակերպում է՝ ըստ հետևյալ դասակարգման

Աղյուսակ Ը -3. Օպերատորի թափոնների կառավարման համակարգը

Թափոնների տեսակը	Ոչ վտանգավոր	Վտանգավոր	Վերամշակում/վերաօգտագործում	Տեղավորումը
Կոշտ	-	Մուտքային բաժանարարի (գատիչի) ներսում ձևավորված մասնիկներ, շլամ- III կարգի վտանգավոր նյութեր, ծածկագիր՝ 31604700 04 01 4 Քանակը՝ մոտ 40 կգ/ տարեկան	-	ԵՔ-ի կողմից հատկացված աղբավայր
	-	Կոմպրեսորների ներսում առաջացած մեխանիկական խառնուրդներ- III կարգի վտանգավոր նյութեր, Քանակը՝ մոտ 40 կգ/ տարեկան		Տեղավորվում է՝ համաձայն ՀՀ կառավարության Արձանագրություն No 16 –ի (26.04. 2012 թ.)
	Ավտոբուսների շարժակազմի՝ շահագործման համար ոչ պիտանի պահեստամասեր	-		ԵՔ-ի կողմից հատկացված աղբավայր
		Ավտոբուսների անվադողեր – IV կարգի վտանգավոր նյութ, քանակը՝ մոտ 400 հատ տարեկան	Վերաօգտագործման հնարավորությունը կուսումնասիրվի	

Նախնական գնահատման հայտ

	Օգտագործված սարքավորումներ ի՝ շահագործման համար ոչ պիտանի պահեստամասեր	-		ԵՔ-ի կողմից հատկացված աղբավայր
	Մետաղա, փայտե, պլաստմասե մասեր, դատարկ պարկեր, տարաներ և այլն	-		ԵՔ-ի կողմից հատկացված աղբավայր
	Կենցաղային աղբ և օրգանական սննդի թափոններ	-		ԵՔ-ի կողմից հատկացված աղբավայր
Հեղուկ		Գազի մաքրման ընթացքում յուղի զատիչներում առաջացող յուղը - III կարգի վտանգավոր նյութ, ծածկագիր՝ 5410021102033 մոտավոր քանակը՝ 20 կգ/ տարեկան	Վերաօգտագործվում է շարժիչի սպասարկման նպատակով	Մնացորդները հեռացվել են՝ հիմք ընդունելով ՇՄՆ հաստատումը
	Գազի՝ ջրի կաթիլներից մաքրման ընթացքում մուտքի զատիչներում առաջացող հեղուկը	-	-	Թափվում է հավաքակայանի կոյուղատար համակարգ, որը միացված է տեղական քաղաքային կոյուղու ցանցին
	Որպես չորացնող միջոց	-	-	Տեղավորվում է՝ համաձայն

Նախնական գնահատման հայտ

	օգտագործվող սիլիցեղային գել			ՀՀ կառավարության Արձանագրություն No 16 –ի (26.04. 2012 թ.)
	Ավտոբուսների լվացման կետերի կեղտաջրերը	Շարժակազմի և սարքավորումների լվացման նավթային շլամ, ծածկագիր 54701600 04 01 3 Քանակը՝ 20 կգ/ տարեկան	-	Տեղավորվում է՝ համաձայն ՀՀ կառավարության Արձանագրություն No 16 –ի (26.04. 2012 թ.)
	Ավտոբուսների սպասարկման համար օգտագործվող յուղեր/ քսանյութեր III կարգի վտանգավորության, ծածկագիր՝ 54100203 02 03 3 մոտավոր քանակը՝ 10 կգ/ տարեկան ծածկագիր 54100303 02 03 3, մոտավոր քանակը՝ 30 կգ/ տարեկան			Տեղավորվում է՝ համաձայն ՀՀ կառավարության Արձանագրություն No 16 –ի (26.04. 2012 թ.)
	Սանիտարահիգիենիկ սարքավորումներից դուրս եկող կեղտաջրերը	-	-	Ուղղվում են հավաքակայանի ջրահեռացման համակարգ, որը միացված է քաղաքային կոյուղատարին

Նախնական գնահատման հայտ

		Բենզինի և - դիզելի թափոններ, որոնք առաջանում են դիզվառեվիքի հազվադեպ օգտագործումից III կարգի վտանգավորությ ան, աննշան քանակությամբ	Տեղավորվում է՝ համաձայն ՀՀ կառավարությ ան Արձանագրությ ուն No 16 –ի (26.04. 2012 թ.)
--	--	---	---

Ը 3-2. Մոնիթորինգ

457. ԲԿՊ-ի շրջանակներում իրականացվող մոնիթորինգը ներկայացնելու է ծրագրի մոնիթորինգի համակարգը՝ ստուգելու ծրագրի գործունեության համապատասխանությունը Հայաստանի օրենսդրությանը և ԱԶԲ-ի ստանդարտներին և կանոնակարգերին:

458. «Մոնիթորինգ» բաժնում ներկայացված պահանջները վերաբերում են՝

- շինարարական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի մոնիթորինգ՝ օդի որակի, ջրի որակի և աղմուկի և թրթռման գործիքային չափումների միջոցով (գործիքային մոնիթորինգ),
- շրջակա միջավայրի մոնիթորինգ՝ ստուգելու շինարարական աշխատանքների համապատասխանությունը մեղմացնող միջոցառումներին, որոնք սահմանված են ԲԿՊ-ում կանոնավոր այցելությունների միջոցով (ակնադիտական մոնիթորինգ):
- շահագործման ընթացքում ինքնամոնիթորինգ՝ ստուգելու օդի որակի, աղմուկի և թրթռման առումով ավտոբուսային հավաքակայանի շահագործման համապատասխանությունը ՀՀ օրենսդրական չափանիշներին:

459. ԲԿՊ-ի այս պաժինը ներկայացված է նաև աղյուսակային ձևաչափով և պարունակում է հետևյալ տվյալները՝ (տե՛ս ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-2. Բնապահպանական կառավարման պլան. Մոնիթորինգ):

- Մոնիթորինգի են ենթարկվելու ծրագրի աշխատանքները՝ հողային աշխատանքներ, լիցք, ասֆալտապատում, կամրջի կառուցում և այլն,
- Մոնիթորինգի են ենթարկվելու պարամետրերը՝ արժեքավոր բնապահպանական ընկալիչները (հող, ջուր, օդի որակ և այլն),
- Մոնիթորինգի է ենթարկվելու վայրը (շինհրապարակ, ճամբարի տարածք, լցակույտ և այլն),
- Գործիքներ և մեթոդներ (համապատասխան փաստաթղթերի վերանայում, ակնադիտական ստուգումներ տեղամասում, գործիքային չափումներ և այլն),
- Բնապահպանական առանձնահատկությունների ցուցիչ (վերաբերում է ԲԿՊ մեղմացումներ Աղյուսակ 1-ում սահմանված մեղմացնող միջոցառումների կատարմանը),
- Պատասխանատու մարմիններ (բաժանված է բոլոր կողմերի միջև – Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ, Ինժեներ, Կապալառու, Օպերատոր),

Նախնական գնահատման հայտ

- Մոնիթորինգի հաճախականություն (վերաբերում է հանձնարարականներին, որոնք հիմնված են ծախսարդյունավետության սկզբունքի վրա)
460. Շրջակա միջավայրի որակի գործիքային մոնիթորինգը իրականացվելու է փոշու, ջրի, աղմուկի և թրթռման գործիքային մոնիթորինգի պլանի հիման վրա, որը ներառում է՝
- Օդի որակի, ջրի և աղմուկի և թրթռումների ելակետային տվյալների հավաքագրում: Սա կիրականացվի Կապալառուի կողմից՝ աշխատանքների մեկնարկից 28 օր առաջ: Ելակետային տվյալների հետազոտության ծախսերը ներառվելու են Կապալառուի բյուջեում:
 - Նույն պարամետրերի տվյալների կանոնավոր հավաքագրում (առնվազն ամիսը երկու անգամ, նաև ԱԵԱ-ի բողոքի հիման վրա)՝ ելակետային տվյալների և նախագծի համար ընդունված օրենսդրական ստանդարտների, ՄՖԿ ստանդարտների և սահմանային մեծությունների հետ համեմատելու համար:
461. Փոշու, ջրի, աղմուկի և թրթռման գործիքային մոնիթորինգի պլանը Կապալառուի կողմից մշակված և Ինժեների հետ համաձայնեցված Շրջակա միջավայրի տեղամասային բնապահպանական կառավարման պլանի բաղկացուցիչ մասն է, որտեղ հստակ նշված է չափման կետերի գտնվելու վայրը և համեմատական վերլուծության համար յուրաքանչյուր չափման կետի համար անհրաժեշտ շեմերը (տե՛ս Գլուխ Ե):
462. Շրջակա միջավայրի ակնադիտական մոնիթորինգը իրականացվելու է տեղամասային այցելությունների միջոցով՝ ծրագրի բացասական ազդեցությունների կանխարգելման և վերահսկման մեղմացնող միջոցառումների արդյունավետությունը որոշելու նպատակով, որպեսզի հնարավորինս շուտ սահմանվի համապատասխան ուղղիչ գործողությունների անհրաժեշտությունը: Կապալառուի կողմից զբաղեցված և հաստատված բոլոր տեղամասերը մոնիթորինգի են ենթարկվելու՝ աշխատանքային գոտի, շինարարական ճամբարներ, պահեստներ, կայանատեղիներ, բուսահողի պահպանման տեղամասեր, թափոնների հեռացման վայրեր, քարջարդ, բետոնի և ասֆալտի գործարաններ (եթե կան այդպիսիք):
463. Ստուգայցերը շինհրապարակ պետք է իրականացվեն՝ ՇՄԱԳ/ԲԿՊ-ում պլանավորված պաշտոնական ժամանակացույցի համաձայն՝ Կապալառուն՝ ամեն օր, Վերահսկողության խորհրդատուն (Ինժեներ)՝ ամեն շաբաթ, ԵՔՕԻԳ՝ ամեն ամիս:
464. Ստուգայցերի մոնիթորինգի արդյունքների մասին Կապալառուն հայտնելու է Շտկող միջոցառումներ հաշվետվությունների միջոցով, Ինժեները՝ Մեղմացնող գործողությունների համապատասխանության և մոնիթորինգի ստուգայցերի վերաբերյալ ցուցակների լրացման միջոցով (ձևաչափը տրամադրվելու է):

Ը 4. Շինարարության բնապահպանական կառավարման պլան (ՇԲԿՊ)

465. Հաշվի առնելով, որ Կապալառուն իր պայմանագրով առաջադրված պայմանների համաձայն պետք է հստակեցնի իր շինարարական պրակտիկան, աշխատանքային մեթոդները, ժամանակացույցը և տեղամասի հասանելիությունը՝ փոփոխված և ձևափոխված պայմանները լավագույնս արտացոլելու համար, վերջինիցս պահանջվում է լրացնել և թարմացնել ԲԿՊ-ն տեղանքին և գործունեությանը բնորոշ ավելի մանրամասն մեղմացնող միջոցառումներով և պատրաստել տեղամասային բնապահպանական կառավարման պլան (ՇԲԿՊ) աշխատանքների մեկնարկի ամսաթվից 21 օր առաջ:

Նախնական գնահատման հայտ

466. ՇԲԿՊ-ը ներառելու է Գլուխ Ը-ում թվարկված աշխատանքների և ենթապլանների նկարագիրը, որը կդիտարկվի նաև որպես Կապալառուի պայմանագրային պարտավորությունների բաղկացուցիչ մաս: ՇԲԿՊ-ի ընդհանուր նկարագիրը բերված է ՀԱՎԵԼՎԱԾ Ի-ում:
467. ՇԲԿՊ-ը ներառելու է հետևյալը՝
- 1) Առանձնացնում է յուրաքանչյուր հատվածի համար տեղանքին բնորոշ ազդեցություններն ու ռիսկերը,
 - 2) Նկարագրում է յուրաքանչյուր մեղմացնող միջոցառումը տեխնիկական մանրամասներով, ներառյալ՝ ազդեցության տեսակը, որին վերաբերում է, և պայմանները, որոնց դեպքում պահանջվում է,
 - 3) Ծրագրի համար պահանջվող ցանկացած այլ մեղմացնող ենթապլանի համար հղումներ է տրամադրում,
 - 4) Մեղմացնող միջոցառումների իրականացման համար սահմանում է դերեր և պարտականություններ:

Ը5. Հաշվետվողականություն

468. Ծրագրի բնապահպանական երաշխիքների համապատասխանության մասին պարբերաբար զեկուցվում է ծրագրի իրականացման բոլոր մակարդակներում՝ Կապալառու, Ինժեներ, ԵԶԾԻԳ, Երևանի քաղաքապետարան և ԱԶԲ:
469. Շրջակա միջավայրի վերաբերյալ հետևյալ հաշվետվությունները Կապալառուի կողմից ներկայացվելու են Ինժեներին՝
470. (i) *Շտկող միջոցառումների շաբաթական հաշվետվություն (ՇՄՀ)*. Շտկող միջոցառումները և դրանց կարգավիճակը փաստաթղթավորվելու է Ինժեների կողմից մշակված և Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ի կողմից հաստատված ձևանմուշում: Շտկող միջոցառումների շաբաթական հաշվետվությունը ներառելու է բնապահպանական գործունեության ցուցանիշը և մեղմացնող միջոցառումների արդյունավետության գնահատումը:
471. (ii) *Բնապահպանական պարտավորությունների կատարման ամսական հաշվետվություն*: Բնապահպանական ամփոփ հաշվետվությունը ներկայացվելու է որպես Կապալառուի ամսական առաջընթացի զեկույցի մաս: Ամսական հաշվետվությունները պետք է լինեն վերլուծական և բացատրեն շեղումների, անհամապատասխանության և առաջացած խնդիրների մասին:
472. Հաշվետվությունները համապարփակ կերպով ներկայացնելու են ԲԿՊ-ի և ՇԲԿՊ-ի մեղմացնող միջոցառումների իրականացման բոլոր համապատասխան ասպեկտների (օրինակ՝ մեղմացնող միջոցառումների տեսակը, նպատակը, առարկան, տեղանքը/գտնվելու վայրը, ընդգրկված նյութերն ու գործողությունները, այլ մանրամասներ) համապատասխանությունը բնապահպանական ցանկացած կանոնակարգերին և պահանջներին, ինչպիսիք են՝ վերապատրաստում/ կողմնորոշում, թույլտվություններ, լիցենզիա և այլն, որոնք ձեռնարկվել են հաշվետվությամբ սահմանված ժամանակահատվածում: Հաշվետվությունների ամփոփ նկարագիրը ներառում է հետևյալ

Նախնական գնահատման հայտ

չափորոշիչները և համաձայնեցված է Վերահսկող Ինժեների և Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ի հետ.

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բ. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- 1) Ծրագրի աշխատանքները հաշվետվության ընթացիկ ժամանակաշրջանի համար
- 2) Բնապահպանական երաշխիքների անձնակազմի հաշվետու ժամանակաշրջան
- 3) Ծրագրի նախագծից ցանկացած փոփոխության նկարագրություն

Կ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- 1) Հաշվետու ամսվա ընթացքում իրականացված վերապատրաստումներ/ուսուցումներ
- 2) Հաշվետու ամսվա ընթացքում ստացված հաստատումներ/թույլտվություններ
- 3) Նյութական ռեսուրսների օգտագործում
- 4) Թափոնների կառավարում
- 5) Բուսահողի կառավարում
- 6) Ճամբարների և պահեստների կառավարում
- 7) Անկանխատեսելի բնապահպանական ազդեցություններ կամ ռիսկեր
- 8) Առողջություն և անվտանգություն

Դ. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- 1) Հաշվետու ամսվա ընթացքում իրականացված միջոցառումների ամփոփ նկարագիր
- 2) Տեղամասային այցեր և նշանակալի բացահայտումներ
- 3) Անհամապատասխանության վերաբերյալ ծանուցումներ և շտկող միջոցառումներ:

Ե. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

- 1) Հանրային հաղորդակցություն և հանդիպումներ
- 2) Բողոքներ և/կամ առաջարկություններ

Զ. ՇԲԿՊ-Ի ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

Ը. ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԵՐ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Ծրագրի հաշվետու ժամանակաշրջանում արված լուսանկարներ

473. Պատահարների (անձնակազմում գրանցված մահ և/կամ վնասվածքներ, հրդեհ, պայթյուն, նավթի արտահոսք և բիտումի արտահոսք և այլն) դեպքում Կապալառուն պետք է

Նախնական գնահատման հայտ

անհապաղ տեղեկացնի Ինժեներին: Սկզբնական ծանուցումը կարող է լինել բանավոր, որին հաջորդելու է պատահարի կամ միջադեպի մասին գրավոր նախնական զեկույցը դեպքից կամ պատահարից հետո՝ 24 ժամվա ընթացքում: Պատահարի/միջադեպի մասին հաշվետվությունը պետք է ներկայացվի Ինժեներին դեպքի քննության ավարտից հետո՝ 2 շաբաթվա ընթացքում և կպարունակի նախնական զեկույցով նախատեսված միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն:

474. Վերահսկող Ինժեները, որպես ամսական հաշվետվության մաս, Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ին է ներկայացնում Բնապահպանական երաշխիքների ամսական հաշվետվությունը, ինչպես նաև փուլային հաշվետվություններ:

475. Երևանի քաղաքապետարանի ԾԻԳ-ը ԱԶԲ-ին ներկայացնելու է բնապահպանական երաշխիքների կիսամյակային հաշվետվություն: Վերջինս տեղադրվելու է ԾԻԳ-ի և ԱԶԲ-ի կայքերում:

Ը.6 Ազդեցությունների ամփոփում. Պարտականությունների գրանցամատյանը

476. Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է եզրակացնել հետևյալը. Բնապահպանական կառավարման պլանը հիմք է հանդիսանում հետևյալի համար.

- (i) Ծրագրի հնարավոր ազդեցությունների կառավարում և դրանց կանխում կամ մեղմացում,
- (ii) Նախքան նախաշինարարության և շինարարության հետ կապված գործողությունների մեկնարկը՝ Կապալառուի կողմից կազմվող ՇԲԿՊ, և
- (iii) Բնապահպանական օրենսդրության, ստանդարտների և նորմերի հետ համապատասխանությունը ստուգելու նպատակով մոնիթորինգի ծրագրի իրականացում,
- (iv) Ավտոբուսային հավաքակայանի օպերատորի կողմից բնապահպանական/սոցիալական կառավարման համակարգի մշակում և հիմնում:

477. Պարտականությունների գրանցամատյանը հնարավորություն է տալիս կապալառուներին և խորհրդատուներին հասկանալ հնարավոր ազդեցությունները և ռիսկերը՝ առանց ամբողջ ՇՄՆՈԻ հաշվետվությունն ուսումնասիրելու: ԲԿՊ-ի «Մեղմացնող միջոցառումներ» բաժինն ամփոփում է սույն հաշվետվության՝ Գլուխ Զ-ում նշված կանխատեսվող բոլոր ազդեցությունները, ինչպես նաև աշխատանքային գործունեության հետևանքով առաջացած հատուկ ազդեցությունները, ինչպիսիք են դաշտային ճամբարների ստեղծումը, աշխատանքները և անվտանգության ռիսկերը, ավելորդ հանույթի և թափոնների առաջացումը և այլն, և առաջարկում է համապատասխան խուսափման կամ մեղմացնող միջոցառումներ յուրաքանչյուր բացահայտված ազդեցության և ռիսկի համար:

Աղյուսակ Ը -4. Ազդեցությունների ամփոփում. Պարտականությունների գրանցամատյանը

Ազդեցության տեսակը	Մեղմացնող միջոցառումները	Աղբյուրը
1. Ազդեցության ենթակա կողմերի և շահառուների՝ պլանավորված աշխատանքների մասին տեղեկատվության և ըմբռնման	Հանրային լուսմների և հաղորդակցության պլան Մոբիլիզացիոն պլան	ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 3, 11

Նախնական գնահատման հայտ

<p>պակասը կարող է հանգեցնել հիասթափության ու դժգոհության, ինչի արդյունքում կարող են տեղի ունենալ Օրագրի ուշացումներ և խաթարումներ:</p>		
<p>2. Կապալառուի անձնակազմի՝ բնապահպանության, ԱևԱ և սոցիալական պաշտպանության վերաբերյալ ԱԶԲ-ի անվտանգության երաշխիքների և ազգային օրենսդրական պահանջների մասին տեղեկատվության և ըմբռնման պակասը, որը կարող է հանգեցնել պայմանագրի կետերի չկատարման:</p>	<p>Բնապահպանական և անվտանգության գծով վերապատրաստման ծրագիր</p> <p>Մոբիլիզացիոն պլան</p>	<p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 4, 9, 10</p>
<p>3. Առողջության և անվտանգության հարմարանքների պակասը կարող է հանգեցնել աշխատողների, Օրագրի ազդեցությանը ենթակա անձանց և շինհրապարակի մերձակայքում գտնվող մարդկանց հիվանդության, վնասվածքի կամ մահվան նյութերի ազդեցության պատճառով. սայթաքել, բախվել և ընկնել և ընկնող առարկաներ</p>	<p>Աշխատանքային անվտանգության և առողջության պլան</p> <p>Մոբիլիզացիոն պլան</p>	<p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 2, 11</p>
<p>4. Միջավայրի նկատմամբ պատշաճ ուշադրության և հարգանքի բացակայությունը, հատկապես հողային աշխատանքների ընթացքում, անցանկալի ժամանակներում բուսականության մաքրումը կարող է հանգեցնել բուսական միջավայրի քայքայման, տեսակների կորստի:</p>	<p>Բուսական աշխարհի պահպանության և բուսականության մաքրման պլան</p> <p>Շինարարական աշխատանքների ճամբարների տեղակայման պլան</p> <p>Տեղամասի կառավարման պլան</p>	<p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 4, 8 և 9</p>
<p>7. Գործող հաղորդողիների վնասումը և ծառայությունների ընդհատման ազդեցությունը առաջացնում է ԱԵԱ-ների դժգոհությունը:</p>	<p>Հաղորդողիների պահպանության և տեղափոխման պլան</p> <p>Տեղամասի կառավարման պլան</p>	<p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 7 և 9</p>

Նախնական գնահատման հայտ

<p>8. Հողային աշխատանքների ընթացքում պատշաճ ուշադրության և հոգածության պակասը բնական ռեսուրսները (ինչպիսիք են հողը և օդը) պաշտպանելու, նյութերի և թափոնների տեղափոխման և այլ շինարարական աշխատանքների նկատմամբ, կարող են հանգեցնել հողի էրոզիայի և նստվածքների, բուսահողի կորստի, փոշու քանակի ավելացման և օդի աղտոտման, աղմուկի և թրթռման մակարդակի ավելացման</p>	<p>Շրջակա միջավայրի պահպանության պլան</p> <p>Շինարարական աշխատանքների ճամբարների տեղակայման պլան</p> <p>Տեղամասի կառավարման պլան</p> <p>Թափոնների և նյութերի կառավարման պլան</p>	<p>Հավելված Ժ, Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 5, ինչպես նաև պարբերություն 8 և 12</p>
<p>9. Աշխատանքների հետ կապված հարմարությունների ոչ ճիշտ կազմակերպում. հիմնական գրասենյակ և դաշտային ճամբարներ, այդ թվում՝ շարժական տները, սարքավորումները և նյութերի պահեստավորման տարածքը, մեքենաների կայանատեղի, աշխատողների և այլ անձնակազմի սանիտարական, ճաշի և հանգստի համար նախատեսված հարմարություններ, որոնք կարող են անհարմարություն պատճառել տեղի հանրությանը, հանգեցնել հնարավոր կոնֆլիկտային իրավիճակների ձեռնարկատիրական գործունեությունների և տեղական/կենտրոնական իշխանությունների հետ:</p>	<p>Շինարարական աշխատանքների ճամբարների տեղակայման պլան</p>	<p>Հավելված Ժ, Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 8</p>
<p>10. Քարհանքերի, բացահանքերի, բետոնի դրզավորման, ասֆալտի, քարջարդիչ գործարանների, կուտակավայրերի հիմնման վայրերի ոչ ճիշտ ընտրությունը կարող է առաջացնել աղմուկի և</p>	<p>Տեղամասի կառավարման պլան (Օրագրի տարածքից դուրս տեղանքի համար)</p>	<p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 9</p>

Նախնական գնահատման հայտ

<p>փոշու հետ կապված անհարմարություններ մոտակայքի ձեռնարկատիրական գործունեությունների համար, տեղական կենսապայմանների և հաղորդակցության միջոցների խափանում, ճնշում շրջակա միջավայրի բնական ռեսուրսների վրա, մշակութային վայրերի խաթարման՝ գեղագիտական տեսքի կորստի առումով</p>		
<p>11. Փոխադրամիջոցների շարժը աշխատանքային տեղամասում և տեղամասից դուրս ոչ ճիշտ կազմակերպելը կարող է հանգեցնել հանրային երթևեկության արգելափակման, երթևեկության հետ կապված վտանգների և անվտանգության խնդիրների, շինարարական ծանր սարքավորումները և մեքենաները կարող են վնասել ճանապարհները, առաջացնել փոշի, աղմուկ և թրթռում, դեպի հանրային ճանապարհներ տանել կեղտը և ցեխը</p>	<p>Երթևեկության և մուտքերի կառավարման պլան</p>	<p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 10</p>
<p>12. Պատշաճ ուշադրության և հոգածության բացակայությունը վտանգավոր նյութերի հետ վարվելիս և այլ արտակարգ իրավիճակների դեպքում կարող է հանգեցնել դժբախտ պատահարների և այլն, դիվառեկիքի, նավթայուղերի և այլ թունավոր նյութերի արտահոսքի և ներթափանցման հողի և կեղտաջրերի մեջ:</p>	<p>Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան</p> <p>Շինարարական աշխատանքների ճամբարների տեղակայման պլան</p> <p>Տեղամասի կառավարման պլան</p> <p>Աշխատանքային անվտանգության առողջության պլան և</p>	<p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 11, ինչպես նաև պարբերություն 2, 8 և 9</p>
<p>13. Աղբի և ավելորդ նյութերի տեղավորումն անհամապատասխան վայրերում կարող է հանգեցնել աղտոտիչների ջրահեռացման համակարգ ներթափանցելուն,</p>	<p>Թափոնների և նյութերի կառավարման պլան</p> <p>Տեղամասի կառավարման պլան</p>	<p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 12, ինչպես նաև պարբերություն 9 և 10</p>

Նախնական գնահատման հայտ

<p>խաթարել 2րջակայքի գեղագիտական ավտոբուսային տեսքը, հավաքակայանի բնականոն գործունեության, հանրային երթևեկության անվտանգության խնդիրներ առաջացնել չմաքրված շինհրապարակների պատճառով:</p>	<p>Երթևեկության և մուտքերի կառավարման պլան</p>	
<p>14. Շինհրապարակի վերականգնման աշխատանքների նկատմամբ պատշաճ ուշադրության և հոգածության պակասը կարող է հանգեցնել ճանապարհի գեղագիտական տեսքի խաթարման չհեռացված շինարարական թափոնների և նյութերի, աշխատանքային ճամբարների և սարքավորումների մնացորդների և մաքրված բուսականության և ծառերի պատճառով</p>	<p>Աշխատանքային տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան</p> <p>Տեղամասի կառավարման պլան</p> <p>Թափոնների և նյութերի կառավարման պլան</p>	<p>Հավելված Ժ, Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 14, ինչպես նաև պարբերություն 9, 12</p>
<p>15. Բնապահպանական, ԱևԱ, սոցիալական երաշխիքների նկատմամբ պատշաճ ուշադրության և հոգածության բացակայությունը Թերությունների շտկման ժամանակահատվածում կարող է հանգեցնել վերը նշված բոլոր ազդեցությունների առաջացմանը այդ ժամանակահատվածում իրականացվող աշխատանքների ընթացքում:</p>	<p>Բոլոր պլանները (1-14)</p>	<p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ</p>
<p>4. Պատմական և մշակութային ռեսուրսների նկատմամբ պատշաճ ուշադրության և հոգածության բացակայությունը կարող է հանգեցնել դրանց վնասմանը և կորստին հնագիտական գտածոներ հայտնաբերելու դեպքում:</p>	<p>Մշակութային ժառանգության կառավարման պլան</p>	<p>ՀԱՎԵԼՎԱԾ Ժ, Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ, պարբերություն 13</p>

Ժ. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժ.1. Եզրակացություններ

478. ՀԱՎԵԼՎԱԾ Ա-ում կցված Արագ բնապահպանական գնահատման և ՇՄՆՈՒ-ի եզրակացությունների հիման վրա հաստատվում է ծրագրի՝ «Բ» կատեգորիայի դասակարգումը, և ԱԶԲ-ի բնապահպանական քաղաքականությանը համապատասխանելու համար չի պահանջվելու մանրամասն ՇՄԱԳ: Միևնույն ժամանակ, ըստ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի, այս ծրագրի համար պահանջվում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացակարգ: Առաջարկվող ծրագիրը դասակարգվում է «Բ» կատեգորիայում՝ ըստ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքի (22.07.2014 թ.) Գլուխ 3, 14-րդ հոդվածի կետ 5, 3) դ. բենզալցակայաններ՝ 5 մ³ և ավելի տարողությամբ:
479. Ծրագիրն, անշուշտ, էական դրական ազդեցություն կունենա սոցիալ-տնտեսական միջավայրի վրա՝ բարելավելով Երևանի հասարակական տրանսպորտի խիստ վատթար վիճակում գտնվող ենթակառուցվածքները, քաղաքային ավտոբուսների շահագործման պայմանները և ավտոբուսային արդյունաբերության աշխատակիցների բարեկեցությունը: Ընդհանուր առմամբ՝ հավաքակայանի կառուցման ավարտից հետո հասարակական տրանսպորտի բարելավված համակարգը կխթանի տարածաշրջանային տնտեսական աճը՝ Երևանի տարբեր հատվածների հասանելիության բարելավման շնորհիվ: Ակնկալվում է, որ ավտոբուսային նոր հավաքակայանը դրական դեր կխաղա Երևանի և հանրապետության տնտեսական աճի խթանման գործում:
480. Հավաքակայանը նախագծվել է՝ Էկոլոգիապես մաքուր և կայուն շինանյութերի ընտրությամբ: Էկոլոգիական օգուտները սերտորեն փոխկապակցված են նախագծային լուծումների հետ՝ բնական ռեսուրսների խնայողության առումով, ինչպիսիք են ջրի, նյութի և էներգիայի խնայողության լուծումները. ջրի վերաշրջանառություն և մոխրագույն ջրի օգտագործում, էներգաարդյունավետ վահանակներ և այլն: ԲՄԳ ավտոբուսները զգալի ազդեցություն ունեն շրջակա միջավայրի պահպանության առումով. դրանք շատ ավելի քիչ են աղտոտում CO₂, NO₂ աղտոտիչներով, քան դիզելային ավտոբուսները, ինչպես նաև ավելի քիչ աղմուկ են առաջացնում: Այս բաժինը մանրամասն նկարագրված է Գլուխ Զ, Զ1-ում՝ «Դրական ազդեցություններ» բաժնում:
481. Հնարավոր բացասական ազդեցությունները, ինչպիսիք են փոշու, աղմուկի, երթևեկի և մուտքի փոփոխությունների պատճառած անհարմարությունները, որոնք, ամենայն հավանականությամբ, կպատճառվեն հարակից բնակավայրերին, ազդեցությունները տեղի բուսական աշխարհի վրա և այլ ազդեցությունները, որոնք նշված են Գլուխ Զ, Զ2. «Բացասական ազդեցություններ» բաժնում, հիմնականում կլինեն ժամանակավոր և կարող են նվազագույնի հասցվել ԲԿՊ-ում և Շինարարական բնապահպանական կառավարման պլանում (ՇԲԿՊ) նախատեսված մեղմացնող միջոցառումների, ինչպես նաև մշտական մոնիթորինգի միջոցով, որն ապահովում է համապատասխան վերահսկողություն և նախանշված մեղմացնող միջոցառումների ժամանակին իրականացումը:

Նախնական գնահատման հայտ

482. Աղմուկի հետազոտության արդյունքների հիման վրա կկառուցվի 2,6 մ բարձրությամբ ձայնային արգելապատնեշ՝ որպես աղմուկի մեղմացնող միջոց, և հավաքակայանի պարագծով կտնկվի 2-3 շարքից բաղկացած ծառերի գոտի՝ շահագործման փուլում աղմուկի ազդեցությունը նվազեցնելու և տեղի բնակիչներին պաշտպանելու նպատակով, որոնք համարվում են առավել զգայուն ընկալիչներ:
483. Թրթռումների հետևանքով ԱԵԱ-ների գույքին հասցված ցանկացած վնաս կփոխհատուցվի:

Ժ.2. Առաջարկություններ

484. Շինարարական աշխատանքների կապալառուն սույն ՇՄԱԳ-ն և ԲԿՊ-ն կհամարի Պայմանագրի անքակտելի մաս:
485. 2. ԲԿՊ-ի (ՀԱՎԵԼՎԱԾ Ժ) հիման վրա Կապալառուն կմշակի և Ինժեների հաստատմանը կներկայացնի շինհրապարակին հատուկ Շինարարության բնապահպանական կառավարման պլան (ՇԲԿՊ)՝ մանրամասն բնապահպանական կառավարման և մոնիթորինգի միջոցառումներով՝ մոբիլիզացիոն փուլում, նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը, շինարարական աշխատանքների ամբողջ ընթացքում և թերությունների վերացման ժամանակահատվածում կիրառելու համար:
486. Շինարարական գործողությունների համապատասխանությունը ԱԶԲ երաշխիքներին և Հայաստանի օրենսդրությանը պետք է ստուգվի Կապալառուի, Ինժեների և ԵԾԻԳ -ի կողմից իրականացվող կանոնավոր մոնիթորինգի միջոցով: Ծրագրի ավարտին բնապահպանական մոնիթորինգը կփոխանցվի Երևանի քաղաքապետարանի բնապահպանության բաժնին և օպերատորին՝ ինքնամոնիթորինգի համար:
487. Կապալառուն պետք է ընդունի այս ՇՄԱԳ-ի հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքները (ծառերի նույնականացում և հաշվարկ, բնապահպանական ելակետային տվյալներ, հաղորդողներ) և կատարի օդի որակի, աղմուկի և թրթռման ելակետային տվյալների հավաքագրում շինարարական աշխատանքների մեկնարկի ամսաթվից 28 օր առաջ և կիրականացնի նույն պարամետրերի կանոնավոր չափումներ շինարարության ընթացքում և Թերությունների վերացման ժամանակահատվածում:
488. Վերահսկող Ինժեները պետք է կատարի Կապալառուի կողմից մեղմացնող միջոցառումների իրականացման մոնիթորինգ և վերահսկողություն, ինչպես նշված է ԲԿՊ-ում և տա անհամապատասխանության ծանուցում, եթե դրանք ժամանակին պատշաճ կերպով չեն կիրառվել: Անհամապատասխանությունները կգնահատվեն՝ ըստ Բնապահպանական երաշխիքների տեղեկագրում նշված անհամապատասխանության մակարդակի չափանիշների: III մակարդակի անհամապատասխանության համար Կապալառուի նկատմամբ կկիրառվի տույժերի համակարգ. աշխատանքների ընթացքում Կապալառուի նկատմամբ կկիրառվի օրական 200 ԱՄՆ դոլարի չափով տույժ՝ ՇՄՆՈԻ-ի և ԲԿՊ-ի պահանջներից որևէ մեկի բարելավման համար վերջնաժամկետ սահմանված օրվանից սկսած: Ինժեները կարող է նաև դադարեցնել բոլոր առնչվող աշխատանքները (Կապալառուի ծախսերով), քանի դեռ ՇՄՆՈԻ-ի և ԲԿՊ-ի պահանջները չեն կատարվել և շտկվել՝

Նախնական գնահատման հայտ

բավարարելով Ինժեների գոհունակությունը: Այդպիսի տույժերն անկախ են լինելու ՀՀ օրենքներով սահմանված տույժերից:

489. Կապալառուի համապատասխան մասնագետը Ինժեների հետ միասին կուսումնասիրի ծառերի և թփերի գտնվելու վայրը, որոնք, ամենայն հավանականությամբ, կվնասվեն շինարարական աշխատանքների արդյունքում և կառաջարկեն մեթոդներ դրանց կորուստը կանխելու համար: Բոլոր այն ծառերն ու թփերը, որոնք կարող են պահպանվել, բայց գտնվում են աշխատանքային տեղամասի մոտ, կպաշտպանվեն: Այլ ծառերի և թփերի փոխարեն, որոնք չեն կարող պահպանվել և կհեռացվեն, կտնկվեն նորերը՝ 1:6 հարաբերակցությամբ: Փոխարինվող ծառերն և թփերը կտնկվեն համապատասխան հողային պայմաններ ունեցող վայրերում: Նորատունկ ծառերը Կապալառուի կողմից կխնամվեն 1 տարի՝ թերությունների վերացման ժամանակահատվածում: Այնուհետև ավտոբուսային հավաքակայանի տարածքում տնկված բույսերի պահպանումը կփոխանցվի ավտոբուսային հավաքակայանի օպերատորին, իսկ հավաքակայանի տարածքից դուրս գտնվող բույսերի համար հոգ կտանի Երևանի քաղաքապետարանը:

490. 3. ԲԿՊ-ի (ՀԱՎԵԼՎԱԾ Ժ) և Գլուխ Ը-ի առաջարկությունների հիման վրա՝ ավտոբուսային հավաքակայանի օպերատորը կմշակի, կհիմնի և կգործարկի Բնապահպանական/սոցիալական կառավարման համակարգ՝ հաշվի առնելով սույն ՇՄԱԳ/ԲԿՊ-ում նշված պահանջները: ԵՔ-ն տարեկան մեկ անգամ կիրականացնի այս համակարգի գործառույթի աուդիտ:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. Արագ բնապահպանական գնահատման (ԱԲԳ) ստուգաթերթիկ

Ցուցումներ

(i) Ծրագրի թիվը ստուգաթերթիկը լրացնում է ծրագրի բնապահպանական դասակարգումը հիմնավորելու համար: Այն կցվելու է բնապահպանական դասակարգման ձևաթղթին և ներկայացվելու է Բնապահպանության և անվտանգության բաժին (ՇԱՄՊ)՝ տնօրենի կողմից հավանություն և Նորմատիվ վերահսկման բաժնի պետի կողմից հաստատում ստանալու համար:

(ii) Սույն ստուգաթերթիկը կենտրոնացած է բնապահպանական խնդիրների և մտահոգությունների վրա: Համոզվելու համար, որ սոցիալական առանձնահատկությունները պատշաճ կերպով հաշվի են առնվել, տե՛ս ԱԶԲ-ի (ա) հարկադիր տարաբնակեցման և բնիկ ժողովուրդների ստուգաթերթիկը, (բ) աղքատության նվազեցման ձեռնարկը, (գ) խորհրդատվության և մասնակցության աշխատողների ուղեցույցը և (դ) գենդերային ստուգաթերթերը:

(iii) Պատասխանի՛ր հարցերին՝ համարելով, որ «չեն կիրառվելու մեղմացող միջոցառումներ»: Նպատակն է որոշել հնարավոր ազդեցությունները: Ակնկալվող ցանկացած մեղմացող միջոցառում քննարկելիս՝ օտագործի՛ր «մեկնաբանություններ» բաժինը:

Երկիր/Ծրագրի անվանումը

Հայաստան / Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր , Տրանշ

Ոլորտը

CWUW

Նախնական գնահատման հարցեր	Այո	Ոչ	Մեկնաբանություններ
<p>Ա. Ծրագրի իրականացման վայր Արդյո՞ք ծրագրի տարածքը...</p>			<p>Ծրագիրը (նոր ենթաբաղադրիչ) ենթադրում է 4.53901 հեկտար տարածքով ավտոբուսային հավաքակայանի վերակառուցում՝ բնական սեղմված գազով աշխատող ավտոբուսների համար: Այն ներառում է վերալիցքավորման կայան, ավտոբուսների լվացման կայան և Ջրվեժի գոյություն ունեցող հավաքակայանի ավտոկայանտեղիի վերակառուցում:</p>

Նախնական գնահատման հայտ

Նախնական գնահատման հարցեր	Այո	Ոչ	Մեկնաբանություններ
<ul style="list-style-type: none"> ▪ Խիտ բնակեցված է 		X	Այն կառուցապատված արդյունաբերական տարածք է, որը գտնվում է Երևանի արդյունաբերական թաղամասում, բնակելի թաղամասերից բավականին հեռու: Ամենամոտ բնակելի տների հեռավորությունը Ծրագրի տարածքի եզրամասից 500 մ է:
<ul style="list-style-type: none"> ▪ Հարուստ է զարգացման ծրագրերով 		X	Տարածքում՝ հարևանությամբ կան գործող առևտրային կամ արդյունաբերական ձեռնարկություններ, ինչպես նաև խորհրդային ժամանակներից մնացած որոշ լքված կառույցներ:
Տեղակայված է բնապահպանական տեսանկյունից զգայուն հետևյալ տարածքներին կից կամ ներսում			
<ul style="list-style-type: none"> • Մշակութային ժառանգություն համարվող տարածքեր 		X	
<ul style="list-style-type: none"> • Պահպանվող տարածք 		X	
<ul style="list-style-type: none"> • Ճահճուտ 		X	
<ul style="list-style-type: none"> • Մանգրենի 		X	
<ul style="list-style-type: none"> • Գետաբերան 		X	
<ul style="list-style-type: none"> • Պահպանվող տարածքի բուֆերային գոտի 		X	
<ul style="list-style-type: none"> • Կենսաբազմազանության պահպանության համար նախատեսված հատուկ տարածք 		X	
<ul style="list-style-type: none"> • Խորշ 		X	
Բ. Հնարավոր բնապահպանական ազդեցություններ			
Արդյո՞ք ծրագիրը կհանգեցնի...			
<ul style="list-style-type: none"> ▪ Կոյուղու և պինդ թափոնների մաքրման համակարգերի և այլ քաղաքային ծառայությունների կայունության վրա ազդեցության 	X		Գազի լիցքավորման հարմարանքներից կարող է լինել բնական գազի արտահոսք, լվացման հարմարանքներից դուրս եկող կեղտաջրեր, որոնք պետք է տեղավորվեն, նույնը՝ օգտագործված յուղերի վերաբերյալ, այլևս ոչ պիտանի պահեստամասերի տեղավորումը և այլ կոշտ թափոնները, որոնք հնարավոր է առաջանան տեխնիկական և վարչարարական օբյեկտներից

Նախնական գնահատման հայտ

Նախնական գնահատման հարցեր	Այո	Ոչ	Մեկնաբանություններ
<p>▪ քաղաքային բնակչության կտրուկ աճի, առևտրային և ձեռնարկատիրական գործունեության, թափոնների ավելացման պատճառով շրջակա միջավայրի պայմանների այնպիսի վատթարացում, որ և՛ մարդածին, և՛ բնական համակարգերը գերծանրաբեռնվում են, իսկ դրանց կառավարման կարողությունները՝ սպառվում</p>	X		<p>Երթևեկության խցանումները կարող են առաջանալ ավտոբուսների համար նախատեսված մուտքի և ելքի ոչ պատշաճ տեղակայման պատճառով՝ հաշվի առնելով, որ տեղանքը շատ կենտրոնական է:</p>
<p>▪ հողի քայքայման և էկոհամակարգերի վատթարացման (օրինակ՝ ճահճուտների և վայրի հողերի, առափնյա գոտիների, ջրաբաժանքների և անտառների կորուստ)</p>		X	<p>Տարածքը ասֆալտապատ է: Գրեթե բացակայում է բուսածուխը, բացառությամբ հողատարածքի որոշ փոքր հատվածների, որոնք կանաչապտված են ծառերով և թփերով:</p>
<p>▪ տեղահանման կամ մարդկանց ոչ կամավոր տարաբնակեցման</p>		X	<p>Հողը գործող ավտոբուսային հավաքակայանի սեփականությունն է, և բնակիչների կողմից զբաղեցված հատվածներ չկան:</p>
<p>▪ աղքատների, կանանց, երեխաների, տեղաբնիկների կամ այլ խոցելի խմբերի վրա անհամաչափ ազդեցությունների</p>		X	<p>Ընդհակառակը՝ նախագիծը ներառում է լուծումներ հաշմանդամ մարդկանց աշխատանքային պայմանների բարելավման համար</p>
<p>▪ մշակութային գույքի վնասման, մշակութային ժառանգության կորստի և զբոսաշրջային եկամուտների նվազման</p>		X	
<p>▪ ապօրինի բնակիչների և ցածր եկամուտ ունեցող խմբերի կողմից ցածրավայրերի, ողողադաշտերի և զառիվեր սարալանջերի օկուպացիայի, աղտոտիչ արդյունաբերությունների պատճառով վերջիններիս ավելացող առողջապահական վտանգների և ռիսկերի ենթարկման</p>		X	
<p>▪ ջրային ռեսուրսների հետ կապված խնդիրների (օրինակ՝ հասանելի ջրամատակարարման ռեսուրսների սպառում/վատթարացում, մակերեսային և ստորգետնյա ջրերի որակի վատթարացում և ջրընդունիչների աղտոտում)</p>		X	<p>Փաստաթղթերի (Գլխավոր հատակագիծ) ուսումնասիրությունը ստորգետնյա ջրերի առկայություն ցույց չի տալիս: Այնուամենայնիվ, շինարարական աշխատանքների ընթացքում պահանջվող մեղմացնող միջոցառումները կներկայացվեն ԲԿՊ-ում:</p>

Նախնական գնահատման հայտ

Նախնական գնահատման հարցեր	Այո	Ոչ	Մեկնաբանություններ
<ul style="list-style-type: none"> քաղաքային արտանետումների պատճառով օդի աղտոտման 	X		<p>Ակնկալվում է, որ օդը աղտոտող նյութերի արտանետումները նվազագույն կլինեն՝ հաշվի առնելով, որ նոր ավտոբուսները լիցքավորվելու են ԲՍԳ-ով</p> <p>Շինարարական աշխատանքների փուլ (տրանսպորտային միջոցների տեղաշարժեր հողային ճանապարհներով/ուղիներով, հողահեռացման աշխատանքներ, պայթեցումներ, հորատումներ, քամի՝ մաքրված տարածքներում և/կամ պահեստավորված նյութերի կուտակավայրերում և այլն)</p> <p>Շինարարական աշխատանքների ընթացքում մեղմացնող միջոցառումները կներկայացվեն ԲԿՊ-ում:</p>
<ul style="list-style-type: none"> ծրագրի իրականացման և շահագործման ընթացքում ֆիզիկական, քիմիական և կենսաբանական վտանգների պատճառով մասնագիտական առողջության և անվտանգության հետ կապված ռիսկերի և խոցելիության 	X		<p>Շինարարական աշխատանքների ժամանակ ֆիզիկական վտանգների պատճառով կարող են լինել մասնագիտական առողջությանը և անվտանգությանը սպառնացող ռիսկեր (հիվանդություն, վնասվածք, աշխատողների մահ և այլն)</p> <p>Շինարարական աշխատանքների ընթացքում մեղմացնող միջոցառումները կներկայացվեն ԲԿՊ-ում:</p>
<ul style="list-style-type: none"> անձրևային սեզոնին իրականացվող հանույթի պատճառով ճանապարհի փակման կամ ժամանակավոր հեղեղման 	X		<p>Քանի որ մոտակա Թևոսյան փողոցը բավականաչափ լայն է, այնքան էլ հավանական չէ, որ կարող են տեղի ունենալ երթևեկության խցանումներ:</p> <p>Ենթակա է գնահատման, և անհրաժեշտության դեպքում շինարարական աշխատանքների ընթացքում մեղմացնող միջոցառումները կներկայացվեն ԲԿՊ-ում:</p>

Նախնական գնահատման հայտ

Նախնական գնահատման հարցեր	Այո	Ոչ	Մեկնաբանություններ
<ul style="list-style-type: none"> ▪ շինարարական աշխատանքների պատճառով աղմուկի և փոշու առաջացման 	X		<p>Շինհրապարակներում կան աղմուկի և թրթռման բազմաթիվ տարբեր աղբյուրներ, ինչպիսիք են ընդհանուր հողային աշխատանքները (հանույթի իրականացում, խտացում և այլն), հորատման աշխատանքներ, տրանսպորտային միջոցների երթևեկը, էքսկավատորները և այլ մեքենամեխանիզմները և այլն:</p> <p>Շինարարական աշխատանքների ընթացքում ընթացիկ մեղմացնող միջոցառումները կներկայացվեն ԲԿՊ-ում:</p> <p>Հնարավոր է, որ շահագործման փուլում իրավիճակը բարելավվի, քանի որ ազատ երթևեկը նվազեցնում է աղմուկը:</p>
<ul style="list-style-type: none"> ▪ շինարարական նյութերի տեղափոխման և թափոնների պատճառով երթևեկության խաթարումների 	X		<p>Շինարարությունը կխանգարի առկա երթևեկությանը և կարող է խոչընդոտել ճանապարհի և մայրի մի մասը</p> <p>Շինարարական աշխատանքների ընթացքում ընթացիկ մեղմացնող միջոցառումները կներկայացվեն ԲԿՊ-ում (Երթևեկության կառավարման պլան)</p> <p>Կապալառուն կտրամադրի իր կողմից մշակված Երթևեկության կառավարման պլանը՝ որպես Մրցութային գործընթացի մաս, որը մշտապես թարմացվելու է շինարարության ընթացքում</p>
<ul style="list-style-type: none"> ▪ շինարարության հետևանքով տիղմի ժամանակավոր արտահոսքի 	X		<p>Առկա է փոքր ռիսկ, երբ հողային աշխատանքների հարևանությամբ տեղի է ունենում երթևեկի մուտք/ելք դեպի շինհրապարակ: Կապալառուն պարտավոր է մաքրել այդ տարածքները:</p>
<ul style="list-style-type: none"> ▪ մոտակա, տնային տնտեսությունների, արտադրության պատճառով առաջացած աղտոտման, ջերմային կարգափոխման և ծխագոյացման հետևանքով հանրության առողջությանը սպառնացող վտանգների 		X	<p>Այն արդեն զբաղեցված պարսպապատ տարածություն է:</p>
<ul style="list-style-type: none"> ▪ ջրի սպառման և/կամ որակի վատթարացման 		X	

Նախնական գնահատման հայտ

Նախնական գնահատման հարցեր	Այո	Ոչ	Մեկնաբանություններ
<ul style="list-style-type: none"> գրունտային ջրերի գերածախսի պատճառով գրունտի նստեցման, գրունտային ջրի ցածր մակարդակի և աղակալման 		X	
<ul style="list-style-type: none"> ոչ պատշաճ աղբահեռացման պատճառով մակերեսային և գրունտային ջրերի աղտոտման 	X		
<ul style="list-style-type: none"> գրավչության կորստին, ձկնաբուծարանների և ջրային ռեսուրսների սպառմանը և առողջապահական խնդիրներին հանգեցնող կեղտաջրերի ջրընդունիչների աղտոտման 		X	
<ul style="list-style-type: none"> ծրագրի իրականացման և շահագործման ընթացքում բնակչության զգալի ներհոսք, սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների վրա բեռի ավելացմանը (ինչպես օրինակ՝ ջրամատակարարում և կոյուղու համակարգ) հանգեցնող բնակչության զգալի ներհոսքի 		X	
<ul style="list-style-type: none"> այլ մարզերից կամ երկրներից աշխատողներ վարձելու դեպքում սոցիալական ընդհարումների 		X	
<ul style="list-style-type: none"> շինարարության և շահագործման ընթացքում նյութերի, ինչպես օրինակ՝ պայթուցիկների, վառելանյութի կամ այլ քիմիական նյութերի տեղափոխման, պահեստավորման, օգտագործման և/կամ ոչնչացման հետևանքով համայնքին սպառնացող առողջապահական վտանգների 	X		<p>Շինարարության և շահագործման ընթացքում հնարավոր է արտահոսքի և ԲՄԳ-ի կուտակման հավանականություն:</p> <p>Շինարարական աշխատանքների ընթացքում ընթացիկ մեղմացնող միջոցառումները կներկայացվեն ԲԿՊ-ում:</p>
<ul style="list-style-type: none"> ծրագրի իրականացման, շահագործման և դադարեցման ընթացքում և՛ պատահականորեն հասցված, և՛ բնական վտանգների պատճառով համայնքի անվտանգությանը սպառնացող վտանգներ, հատկապես այն վայրերում, որտեղ ծրագրի կոնստրուկտիվ տարրերը կամ բաղադրիչները հասանելի են ազդակիր համայնքի անդամներին կամ այնտեղ, որտեղ անզգուշությունը կարող է համայնքի կարող է վնաս պատճառել 		X	

Կլիմայական ռիսկերի նախնական գնահատման ստուգաթերթիկ

Երկիր/Օրագրի անվանումը` Հայաստան / Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր, Տրան2 1
Ոլորտ` Քաղաքաշինություն
Ենթաօլորտ
Բաժին/Վարչություն` CWRD

Նախնական գնահատման հարցեր		Գնահատական	Մեկնաբանություններ²⁴
Օրագրի վայրը և նախագիծը	Արդյո՞ք ծրագրի տեղանքը և/կամ ծրագիծը (կամ նրա բաղադրիչները) կարող են ազդեցության կրել կլիմայական պայմանների, այդ թվում՝ սուր եղանակային դրսևորումների, օրինակ՝ հեղեղների, երաշտի, փոթորկի, սողանքների պատճառով:	0	Ստանդարտների համաձայն՝ որոշակի պարբերաշրջանի համար նախագծվելու է հեղեղաջրերի և թափոնաջրերի ջրահեռացման համակարգը:
	Արդյո՞ք ծրագրի նախագծում (օրինակ՝ կամուրջների համար իրականացվող մաքրում) պետք է դիտարկվեն որևէ հիդրոոդերևութաբանական պարամետրեր (օրինակ՝ ծովի մակարդակ, գետի առավելագույն հոսք, ջրի հուսալի մակարդակ, քամու առավելագույն արագություն և այլն)	0	Կիրառելի չէ
Նյութեր և սպասարկում	Արդյո՞ք եղանակը, ներկա և հետագա հավանական կլիմայական պայմանները (օրինակ՝ խոնավության գերակշիռ մակարդակը, շոգ ամառային և ցուրտ ձմեռային օրերի միջև ջերմաստիճանային հակադրությունը, քամին և խոնավությունը), հիդրոոդերևութաբանական պարամետրերը կարող են ազդել ծրագրի ներդրումների արդյունքների հետ համեմատական հարթության վրա դիտարկելիս, կատարվելիք ընտրության վրա (օրինակ՝ շինարարական նյութ):	0	Ոչ, բայց արևային մարտկոցները կարող են հաշվի առնվել որոշ օբյեկտների էլեկտրամատակարարման համար՝ ըստ նպատակահարմարության:
	Արդյո՞ք եղանակը, ներկա և հետագա հավանական եղանակային պայմանները և դրանց հետ կապված սուր եղանակային դրսևորումները ազդեցություն կունենան տեխնիկական	0	Կիրառելի չէ

²⁴ Հնարավորության դեպքում տվյալներ տրամադրել ծրագրի բաղադրիչների՝ կլիմայական պայմանների նկատմամբ զգայունության մասին: Օրինակ՝ այն մասին, թե ինչպես են դիտարկվել կլիմայական պարամետրերը ենթակառուցվածքների բաղադրիչների նախագծային ստանդարտներում, ինչպես կարող են առանցքային կլիմայական պարամետրերը և ծովի մակարդակը ազդել ծրագրի տեղադիրքի/ծրագծի, շինարարական նյութի ընտրության և/կամ ժամանակացույցի կազմման, ծրագրի արդյունքների կատարման և/կամ սպասարկման արժեքի/ժամանակացույցի կազմման վրա:

Նախնական գնահատման հայտ

	սպասարկման (ժամանակացույցի կազմում և արժեք) կամ ծրագրի արդյունքների վրա:		
Ծրագրի կատարման արդյունքներ	Արդյո՞ք եղանակային/կլիմայական պայմանները և դրանց հետ կապված սուր եղանակային դրսևորումները կազդեն ծրագրի արդյունքների կատարման վրա (օրինակ՝ փոշու տարեկան արտադրություն) (օրինակ՝ հիդրոէներգիա արտադրող սարքավորումներ) իրենց՝ նախագծով նախատեսված օգտակար ծառայության ժամկետում:	0	Կիրառելի չէ

Պատասխանների տարբերակները և համապատասխան միավորները ներկայացված են ստորև.

Պատասխան	Միավոր
Ոչ հավանական	0
Հավանական	1
Խիստ հավանական	2

Պատասխաններին տրված 0 միավորը համարվում է ցածր ռիսկեր պարունակող ծրագիր: 1-4 միավորի դեպքում, երբ պատասխաններից և ոչ մեկին չի տրվել 2 միավոր, ծրագիրը համարվում է միջին ռիսկեր պարունակող: Ընդհանուր 5 կամ ավելի բարձր միավորը (որը ներառում է բոլոր պատասխաններին տրված 1 միավոր) կամ պատասխաններից որևէ մեկին 2 միավոր դասակարգվում է որպես բարձր ռիսկեր պարունակող ծրագիր:

Նախնական գնահատման արդյունքները (Ցածր, միջին, բարձր) _____ ՑԱՄԸ _____

Այլ մեկնաբանություններ՝ _____

Պատրաստված է Մարիա Պիա Անկոյի կողմից

ՀԱՎԵԼՎԱԾ Բ: Իրականացնող մարմինների պատասխանատվության շրջանակի աղյուսակ

Առաջադրանքներ / կատարում	Կապալառու	Վերահսկողության խորհրդատու (Ինժեներ)	ԵԿՆ ԾԻԳ	ԵՔ/ այլ պետական մարմիններ	ԱԶԲ
Կարողություններ ի ստեղծում Ա. Բնապահպանական և սոցիալական անվտանգության երաշխիքների անձնակազմի նշանակում	Բնապահպանության, առողջության և անվտանգության գծով ազգային մասնագետ (լրիվ դրույք) Ազգային սոցիալական հարցերով մասնագետ (լրիվ դրույք) Յուրաքանչյուր շինարարական տեղամասի բնապահպանության, ԱևԱ գծով պատասխանատու (լրիվ դրույք)	Միջազգային և ազգային բնապահպանության, աշխատանքային առողջության և անվտանգության գծով մասնագետ (մասնակի զբաղվածությամբ) Սոցիալական հարցերի ազգային մասնագետ (մասնակի զբաղվածությամբ)	Ազգային բնապահպանական հարցերով պատասխանատու Ազգային տարաբնակեցման հարցերով մասնագետ (լրիվ դրույք)	ԵԿՆ ԾԻԳ-ին փոխանցված	Բնապահպանական հարցերով միջազգային խորհրդատու Բնապահպանական հարցերով ազգային խորհրդատու
Կարողություններ ի ստեղծում Բ. Վերապատրաստման և կողմնորոշման դասընթացներ	Անվտանգության կողմնորոշման պլանի համաձայն՝ իրականացնում է բնապահպանական, առողջապահական և անվտանգության թեմաներով դասընթացներ	ԱԶԲ անվտանգության և ազգային օրենսդրական պահանջների մասին վերապատրաստման դասընթացներ	Մասնակցում է վերապատրաստումների	Մասնակցում է վերապատրաստումներին	Մասնակցում է վերապատրաստումներին
Հանրային քննարկումներ և հաղորդակցություն	ԱԵԱ-ների և այլ շահագրգիռ կողմերի հետ նախաշինարարական փուլում հանդիպումներ ԲԼՄ-ի հաստատում	Հանրային լսումներ և քննարկումներ ՇՄԱԳ շրջանակներում ՀՀ օրենսդրական և ԱԶԲ	Մասնակցություն հանրային քննարկումներին և Կապալառուի	Հանրային քննարկումներին մասնակցություն	Հանրային քննարկումներին մասնակցություն Կայքէջում ՇՄՆՈԻ և կիսամյակային

Նախնական գնահատման հայտ

		ԱՔՀ-ի (2009) համաձայն`	նախաշինարարական հանդիպումներին Կայքէջում ՇՄԱԳ և կիսամյակային հաշվետվությունների հրապարակում		հաշվետվությունների հրապարակում
Լրացուցիչ հետազոտություններ	Նախաշինարարական փուլում կառույցների վրա թրթռումների ազդեցության ելակետային տվյալների հավաքագրման համալիր հետազոտություն և հաշվետվություն Նախաշինարարական փուլում ճանապարհի և գույքի վիճակի հետազոտություն և հաշվետվություն Շինարարության ընթացքը խոչընդոտող ծառերի և թփերի հետազոտություն	Ստուգում է և հաստատում է Կապալառուի հաշվետվությունը` թրթռումների ելակետային հետազոտության մասին Ստուգում է և հաստատում է Կապալառուի` ճանապարհի և գույքի վիճակի հետազոտության մասին հաշվետվությունը	Քննարկում և հաստատում	Կ/Չ	Դիտարկում
Տեղամասային բնապահպանական կառավարման պլան	Կազմում և թարմացում	Ստուգում և հաստատում	Քննարկում և հաստատում	Չ/Կ	Դիտարկում
ՇՄԱԳ/ԲԿՊ/ՇԲԿ Պ-ի համաձայն մեղմացնող միջոցառումներ	Գլուխ Ը-ում ներկայացված մեղմացնող միջոցառումների ամենօրյա իրականացում Մեղմացնող միջոցառումների իրականացման ամենօրյա ինքնավերահսկում	Կապալառուի կողմից կատարման վերահսկում	Ստուգում	Ըստ անհրաժեշտության ստուգում	Առաքելության այցելությունների միջոցով աուդիտ

Նախնական գնահատման հայտ

Տեղամասային այցելություններ	օրական	շաբաթական	ամսական	ըստ անհրաժեշտության	ըստ ԱԶԲ ժամանակացույցի
<p>Շրջակա միջավայրի գործիքային մոնիտորինգ</p>	<p>Շինարարական աշխատանքները սկսելուց 21 օր առաջ օդի որակի, փոշու, ծծմբի երկօքսիդի (SO2), ազոտի երկօքսիդի (NO2), աղմուկի և թրթռումների վերաբերյալ ելակետային տվյալների հավաքագրում: Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ փոշու, ջրի, աղմուկի և թրթռումների գործիքային մոնիտորինգի պլանի մշակում: Ամիսը երկու անգամ փոշու, ջրի որակի, աղմուկի և թրթռումների ընթացիկ գործիքային չափագրումների իրականացում և զեկուցում: Տարեկան երկու անգամ ԹՎԺ-ի ընթացքում փոշու, ծծմբի երկօքսիդի (SO2), ազոտի երկօքսիդի (NO2), ջրի որակի, աղմուկի և թրթռման գործիքային չափագրումներ:</p>	<p>ՇՄՆՈԻ շրջանակներում օդի որակի, փոշու, (SO2), ազոտի երկօքսիդի (NO2), աղմուկի և թրթռումների մասին ելակետային տվյալների հավաքագրում: Շաբաթական երկու անգամ թրթռման կանոնավոր գործիքային չափումներ՝ շինարարական աշխատանքների ազդեցությունը շրջակա գույքի վրա որոշելու համար Կապալառուի՝ փոշու, աղմուկի և թրթռումների գործիքային մոնիտորինգի պլանի ստուգում և պաշտոնական հաստատում:</p>	<p>Կապալառուի՝ փոշու, ջրի, աղմուկի և թրթռումների գործիքային մոնիտորինգի պլանի քննարկում և հաստատում: Մոնիտորինգի տվյալների հավաքագրում և գրանցում:</p>	<p>2/Կ</p>	<p>Կապալառուի՝ փոշու, աղմուկի և թրթռման գործիքային մոնիտորինգի պլանի դիտարկում</p>

Նախնական գնահատման հայտ

		Ընթացիկ գործիքային չափագրումների վերահսկողություն և հաշվետվությունների ստուգում			
Աշխատանքների կատարման մեթոդաբանություն	Աշխատանքների կատարման մեթոդաբանությունների, այդ թվում՝ բնապահպանության, աշխատանքային առողջության և ավտանգության/սոցիալական ազդեցության գնահատում և մեղմացնող ծրագրի մշակում	Կապալառուի կողմից ներկայացված մեթոդաբանությունների ստուգում և հաստատում	Քննարկում և հաստատում	Քննարկում և հարկ եղած դեպքում հաստատում	Դիտարկում
Վարակիչ հիվանդություններ (Covid-19) վերահսկում	COVID-19 առողջության և անվտանգության պլանի մշակում՝ հիմնված CWRD- ի առաջարկած գործառնական ընթացակարգի, Գլուխ Ը-ում գետեղված ՇԲԿՊ-ի առաջարկությունների վրա և Գլուխ Զ-ում թվարկված պարտականությունների իրականացում	Աջակցել ԾԻԳ-ին կապալառուների ԱԱԿՊ -ի և Գլուխ Զ-ում թվարկված այլ պարտականությունների վերանայման հարցում:	Կապալառուի նոր/թարմացված/վերանայված ԱԱԿՊ-ի և Գլուխ Զ-ում թվարկված այլ դերերի վերանայում	Քննարկում և հարկ եղած դեպքում հաստատում	Դիտարկում
Ծրագրի տարածքից դուրս գտնվող տարածքի զբաղեցում	Վերահսկողության խորհրդատուին (Ինժեներին) նման մտադրության մասին իրազեկում Տեղանքի կառավարման պլանի մշակում ՏԿՊ-ի համաձայն՝ ընթացակարգերի իրականացում	Տեղամասային այցելություն՝ Կապալառուի կողմից մտադրվող տարածքների բնապահպանական տեսանկյունից գնահատման համար ՏԿՊ-ի ստուգում և հաստատում	Քննարկում և հաստատում	Քննարկում և հարկ եղած դեպքում հաստատում	Դիտարկում

Նախնական գնահատման հայտ

<p>ԲԼՄ</p>	<p>Գլուխ Գ-ում և Հավելվածում նկարագրված ընթացակարգերի համաձայն՝ ԲԼՄ-ի հաստատում Ամսական հաշվետվության մեջ ԲԼՄ-ի և բողոքների կարգավիճակի մասին հաշվետվություն:</p>	<p>ԲԼՄ-ի գրանցամատյանի, հետագա խնդիրների և ԱԱ-րի հետ քննարկումների վերահսկում Կապալառուի իրավասությունների շրջանակից դուրս գտնվող հարցերի՝ ԵԿՆ ԾԻԳ-ին փոխանցում</p>	<p>Կապալառուի կողմից տրված լուծումների կարգավիճակի վերահսկում: Կապալառուի իրավասությունների շրջանակից դուրս գտնվող խնդիրների լուծում կամ ԵԶ-ին փոխանցում</p>	<p>Կապալառուի իրավասությունների շրջանակից դուրս գտնվող խնդիրների լուծում</p>	<p>Տրված լուծումների վերահսկում</p>
<p>Հաշվետվողականություն</p>	<p>Շաբաթական Ուղղիչ Գործողությունների Հաշվետվություն (ՈՒԳՀ) ՎԽ-ի կողմից ներկայացված անհամապատասխանությունների/մասնակի համապատասխանությունների և ուղղիչ միջոցառումներ ձեռնակելու պահանջների հիման վրա:</p> <p>Ինժեների կողմից պահանջված ձևաչափով Բնապահպանական, ԱԱԱ, սոցիալական անվտանգությունների ամսական հաշվետվություն (ԱՄՀ)՝ որպես ԱԱՀ մաս:</p> <p>Փոշու, ջրի, աղմուկի և թրթռումների գործիքային չափումների մասին</p>	<p>Կապալառուի՝ ՈւԳՀ շաբաթական և Բնապահպանական, ԱԱԱ, սոցիալական անվտանգություններ ի ամսական հաշվետվությունների ստուգում և հաստատում</p> <p>Կապալառուի՝ պատահարների/միջ ադեպերի մասին հաշվետվության ստուգում</p> <p>Ամսական Բնապահպանական, ԱԱԱ, սոցիալական անվտանգություններ ի ամսական հաշվետվություն</p>	<p>ԱԶԲ-ին ներկայացվելիք կիսամյակային հաշվետվություն ԵԿՆ ԾԻԳ-ի կայքէջում կիսամյակային հաշվետվության հրապարակում</p> <p>ԱԶԲ-ին ներկայացվելիք հետշինարարական աուդիտորական հաշվետվություն</p> <p>Ինժեների ամսական և ավարտական հաշվետվությունների ստուգում</p>	<p>Կ/Չ</p>	<p>ԱԶԲ-ի կայքէջում կիսամյակային հաշվետվության հրապարակում</p>

Նախնական գնահատման հայտ

	<p>հաշվետվություն որպես Բնապահպանական, ԱԱԱ, սոցիալական անվտանգությունների ամսական հաշվետվության մաս</p> <p>Պատահարների/միջադեպերի մասին հաշվետվություն ՀԱՎԵԼՎԱԾ Ի-ում ներկայացված ձևաչափով</p> <p>ԹՎԺ-ի ընթացքում տարեկան երկու անգամ մոնիտորինգային հաշվետվություն</p>	<p>պատրաստում՝ որպես ՎԽ-ի (Ինժեներ) ԱԱՀ մաս</p> <p>Ծրագրի շինարարական փուլի ավարտին ավարտական հաշվետվության պատրաստում:</p>			
--	---	---	--	--	--

Նախնական գնահատման հայտ

ՀԱՎԵԼՎԱԾ Գ Հայաստանի Հանրապետության կանոնակարգերի/ նորմատիվների շրջանակը

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Գ-1. ՀՀ կանոնակարգերը արդյունաբերության և շինարարության ոլորտում անվտանգության վերաբերյալ

Անվտանգության վերաբերյալ պահանջները	Կանոնակարգերի/ նորմատիվների շրջանակը
Հայաստանի Հանրապետության պաշտոնական ծառայությունների, մասնավորապես Քաղաքաշինության նախարարության շինարարության և Արտակարգ իրավիճակների նախարարության հրդեհային կանխարգելման ծառայությունների կողմից տրված շինությունների հրահանգի հետ կապված վարչական պարտավորությունների կատարումը	ՀՀ կառավարության No 156-Ն առ 20.02.2006 թ. որոշումը Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը քաղաքաշինության բնագավառում կառավարման պետական լիազորված մարմնի իրավասություն վերապահելու մասին
Հրդեհային անվտանգության պահանջները ԲՄԳ ցամաքային մեքենաների լցակայանների համար Մաքսային միության տարածքի ստանդարտներ և տեխնիկական կանոնակարգեր	JV 156.13130.2014 TP TC
Հայաստանի Հանրապետության ծառայությունների կողմից վավերացված փաստաթղթերի հիման վրա համապատասխան կազմակերպության կողմից հաստատված ԲԳՄ լցակայանների շինարարության կանոններին վերաբերող տեխնիկական պահանջների պահպանում (լիցենզիա)	ՀՀԾՆ IV-12.03.01-04 «Գազաբաշխիչ համակարգեր» շինարարական նորմեր. Գազի բաշխման համակարգերի շինարարության ստանդարտների հաստատումը
Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական տեսչության և հրդեհային անվտանգության նախարարության կողմից ընդունված ստուգումների ռեժիմի մասին որոշումը	ՀՀ կառավարության թիվ 2399-Ն առ 22.12.2005 որոշմամբ հաստատված «Անվտանգության կանոնները զազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգը՝ ենթակառուցվածքի անվտանգության գործընթացները վերահսկելու համար
Անվտանգության ստանդարտների և հրդեհաշիջման սարքերի նախնական գնում և ստուգում	12.09.19-Ն, 1244-Ն
Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից ստուգումների ստուգաթերթերի հաստատում	Հավելվածներ No. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30 (2-րդ կետը լրացվել է թիվ 1244-Ն առ 12.09.19 թ, որոշմամբ
Շինարարության համար հրդեհային անվտանգության պահանջներ	ՀՀ կառավարության թիվ 596-Ն առ 19.03.2015 թ. որոշման Հավելված 5 (փաստաթուղթ N 1-2)

Նախնական գնահատման հայտ

Անվտանգության վերաբերյալ պահանջները	Կանոնակարգերի/ նորմատիվների շրջանակը
Շինթույլտվությունը, շինարարության տեխնիկական վերահսկողությունն իրականացնող կազմակերպության անվանում և դրա թույլտվության (լիցենզիա) համարը հավաստող փաստաթուղթը	ՀՀ կառավարության թիվ 596-Ն առ 19.03.2015 թ. որոշման Հավելված 5 (փաստաթուղթ N 1-2)
Տեղադրված սարքավորումների պաշտպանությանն առնչվող օրենքներ և պահանջներ, որոնք պետք է հաշվի առնվեն. Արտակարգ իրավիճակների նախարարություն	2388-Ն, 1101-Ն 01.01.2006 GOST 14 2002-69
5 հեկտարը գերազանցող բազային տարածքների (պահեստներ) տրամադրում՝ հրշեջ մեքենաների համար՝ առնվազն երկու մուտքով	Հղում՝ նորմատիվ իրավական ակտերին "2," կետ 5.36
Հրդեհաշիջման մեքենայի համար ճանապարհներ >4.5 մ	"2", կետ 5.37
Բացօթյա հրդեհաշիջման աշխատանքներ. օբյեկտների մոտ կամ դրանց մոտակայքում (200 մ շառավղով) տրամադրվում է առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ առնվազն 50 մ ³ հակահրդեհային հոր:	"1," Գլուխ 3, Կետ 79, Գլուխ 25, Կետ 290
500 մ3-ից ավելի տարողությամբ պահեստային շենքերը հագեցված են հակահրդեհային հիդրանտներով հագեցած ներքին հրդեհային ջրային համակարգով, որպեսզի յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 լ/վրկ ջրային շիթով:	"8", կետ 61, Աղյուսակ 2
Կախված տարածքի չափից՝ պահեստները համարված են հրդեհաշիջման ավտոմատ համակարգով:	"1," Գլուխ 7, Կետ 81
Վարչական շենքերում գազի պահեստները կահավորված են ավտոմատ հրդեհային ազդանշանային համակարգով	"1", Բաժին I, Գլուխ 7, կետ 81
Օբյեկտը պետք է հագեցած լինի հրդեհաշիջման առաջին անհրաժեշտության միջոցներով	"1," Բաժին VIII, կետ 504
In Class 'A', 'B', 'V' buildings, fire extinguishers are installed no more than 30 meters from potential fires. «A», «B», «V» կատեգորիայի շենքերում կրակմարիչները տեղադրվում են հնարավոր հրդեհման վայրերից ոչ ավելի, քան 30 մետր հեռավորության վրա:	"1," Բաժին VIII, կետ 512
Ստորև բերված նորմատիվ փաստաթղթերի հիման վրա հսկման ենթակա ենթակառուցվածքների ցուցակը. - Հաստատվել է ՀՀ ՏԿԵՆ No. 595-Ն առ 18.06.2015 թ. որոշմամբ, Հավելված 1	"1" - ANC «Հրդեհային անվտանգության կանոններ»

Նախնական գնահատման հայտ

Անվտանգության վերաբերյալ պահանջները	Կանոնակարգերի/ նորմատիվների շրջանակը
<p>-9.02-02-03 Արդյունաբերական կազմակերպությունների գլխավոր հատակագծեր</p> <p>-12.03.01-04 Գազի բաշխիչ ցանցեր</p> <p>-11.03.02-04 Պահեստային շենքեր</p> <p>-21-01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն</p> <p>-12.02.01-04 Ջեռուցում, օդափոխություն, օդորակում</p> <p>-12.101-04 Շենքերում գազի բաշխման համակարգերի նախագծում</p> <p>- Ներքին ջրամատակարարում և շենքերի ջրահեռացում</p> <p>ՀՀ օրենքը «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ» մասին, 24.10.2005 թ.</p> <p>- Արդյունաբերական օբյեկտներ</p>	<p>"2" - ՀՀՇՆ III</p> <p>"3" - ՀՀՇՆ IV</p> <p>"4" - ՀՀՇՆ IV</p> <p>"5" - ՀՀՇՆ</p> <p>"6" - ՀՀՇՆ IV</p> <p>"7" - SHNZ IV</p> <p>"8" - ՀՀՇՆ 40-01.01-2014</p> <p>"9" -</p> <p>"10" ՀՀՇՆ IV-11.03.01-04</p>
<p>- Շինարարական ստանդարտներ</p> <p>- Գազամատակարարում</p>	<p>ՇՆևԿ (SNIP) 2.04.08-87</p> <p>ՇՆևԿ (SNIP) 3.05.02-88</p>
<p>- Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության վարչություն</p> <p>- Արդյունաբերական օբյեկտների գլխավոր հատակագծերը</p>	<p>ՀՀՇՆ II-8.04.01-97</p> <p>ՀՀՇՆ III-9.02.02-03</p>
<p>- Շենքերի ջրամատակարարում/վերականգնում</p> <p>- Շենքերի և շինությունների հրդեհների կանխարգելման ավտոմատացում</p> <p>- Արդյունաբերական շենքերի էլեկտրական սարքավորումների վերաբերյալ կանոնակարգեր</p>	<p>ՇՆևԿ (SNIP) 2.01.07-85</p> <p>ՇՆևԿ (SNIP) 2.04.09-84</p> <p>ՇՆևԿ (SNIP) 2.09.02-85</p> <p>(հաստատված է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության 1998 թվականի հունիսի 24-ի N 189-ԳՄ հրամանով և գազամատակարարման վերականգնման կարգով)</p>
<p>- ICPE Եվրոպական միության կանոններ</p> <p>- Եվրոպական ցուցումներ, որը պաշտպանում է ATEX/ ISO նորմալացման ռիսկերին ենթակա աշխատողներին</p> <p>- EurAsia Conformity</p>	<p>Նոմենկլատուրայի շեմերը n°1413</p> <p>ATEX 1999/92/CE</p> <p>AEC ստանդարտներ</p>

ՀԱՎԵԼՎԱԾ Գ-2 Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված/վավերացված շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պաշտպանությանը վերաբերող միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ

No	Կոնվենցիա կամ արձանագրություն, ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ է մտել	Ստորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
1	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1975	1993	Հաստատվել է ՍՍՀՄ կողմից	
2	Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992)	1993	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ.-ին
3	Կենսաբանական անվտանգության մասին կարթագենյան արձանագրություն (Կարթագեն, 2000)		2000	2004	
4	Գլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992)	1994	1992	1993	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1993 թ.-ին
5	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997)			2002	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 2003 թ.-ին
6	Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին կոնվենցիա (ժնև, 1979)	1983		1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ.-ին
7	«Անդրսահմանյան համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո, 1991թ.)	1997		1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ.-ին
	«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)		2003		
8	«Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիա (Շելսինկի, 1992թ.)	2000		1996	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ.-ին
9	«Անդրսահմանային ջրերում արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության հետևանքով քաղաքացիական պատասխանատվության և վնասի հատուցման մասին արձանագրություն» (Կիև, 2003)		2003		
10	Անապատացման դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Փարիզ, 1994)	1996	1994	1997	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1997 թ.-ին

Նախնական գնահատման հայտ

No	Կոնվենցիա կամ արձանագրություն, ընդունման օրն ու վայրը	Ուժի մեջ մտել	ԵՍՏորագրվել է	Վավերացվել է	Մեկնաբանություն
11	Վտանգավոր թափոնների անդրաահմանային վերահսկման և դրանց տեղափոխման նկատմամբ հսկողության սահմանման մասին կոնվենցիա (Բազել, 1989)	1992		1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ.-ին
12	Օգոնային շերտի պահպանության մասին կոնվենցիա (Վիեննա, 1985)	1988		1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ.-ին
13	Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին Մոնրեալի արձանագրություն (Մոնրեալ, 1987)	1989		1999	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 1999 թ.-ին
14	«Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս 1998թ.)	2001	1998	2001	
15	Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի կիրառման մասին կոնվենցիա (Ռոտերդամ, 1998)		1998	2003	
16	Միջազգային լճերի և անդրսահմանային ջրահոսքերի օգտագործման և պահպանության մասին կոնվենցիա (Շելլի, 1992)	1996	1999		
17	Ջրի և առողջության մասին արձանագրություն (Լոնդոն, 1999)		1999		
18	Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա (Ստոկհոլմ, 2001)		2001	2003	
19	Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի թշնամական օգտագործումն արգելելու մասին կոնվենցիա (ՇՆՆ, 1976)	1978		2001	Վերագրանցվել է ՄԱԿ-ում 2002 թ.-ին
20	Լանդաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենսիա, 2000)			2004	
21	Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա (Փարիզ, 1972)			1993	
22	Էներգետիկ խարտիայի պայմանագիր (Լիսաբոն, 1994)			1997	
23	Էներգետիկ խարտիայի արձանագրություն Էներգաարդյունավետության և հարակից բնապահպանական ասպեկտների վերաբերյալ (Լիսաբոն, 1994)			1997	
24	Բեռնի կոնվենցիա- Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Եվրոխորհրդի կոնվենցիա (Բեռն, 1979)	1982	2006		

ՀԱՎԵԼՎԱԾ Դ. Այլընտրանքների համեմատական վերլուծություն

	Օգուտներ	«Զրո» կամ «ոչինչ չանել» այլընտրանք	«Նոր ավտոբուսային հավաքակալայանի վերակառուցում»	«Գոյություն ունեցող Զրվեժի ավտոբուսային հավաքակալայանի վերակառուցում»
1	Երևանի տրանսպորտային համակարգի բարելավում	Ոչ	Այո	Այո
2	Երևանի տրանսպորտային միջոցների պակասի/դեֆիցիտի և շարժակազմի ծանրաբեռնվածության հաղթահարում	Ոչ	Այո	Այո
3	Բարելավված սպասարկման որակ	Ոչ	Այո	Այո
4	Ավտոբուսի արդյունաբերության աշխատակիցների բարեկեցության բարելավում	Ոչ	Այո	Այո/վերակառուցման աշխատանքների 2-րդ փուլից հետո
5	Տարածաշրջանի օդի որակի բարելավում	Ոչ	Այո	Այո
6	Անհրաժեշտ է նոր հողի զբաղեցում և օտարում	Ոչ	Այո/նվազագույնը 12 հա հողատարածք	Այո/ սակայն շատ աննշան՝ շուրջ 1078 մ ² համայնքային հողատարածք
7	Շինարարության փուլում առկա շարժակազմի ժամանակավոր տեղակայման համար բավարար տարածք	Ոչ	Այո	Այո
8	Շինարարական տարածքը մեկուսացնելու և գործող շարժակազմի անվտանգությունն ապահովելու հնարավորություն հին հավաքակալայանի շենքերի և կառույցների ապամոնտաժման և քանդման ժամանակ	Կիրառելի չէ	Այո	Այո, կապահովվի
9	Տարածք առկա և նոր ժամանած տրանսպորտային միջոցների շարժակազմի վերջնական տեղակայման համար	Ոչ	Այո	Այո
10	Խուսափել ծառահատումից	Այո	Ոչ	Ոչ

Նախնական գնահատման հայտ

11	Խուսափել շրջակա սոցիալական համակարգերի վրա բացասական ազդեցությունից	Այո	Ոչ	Ոչ/բայց ոչ զգալի
12	Ծրագիրը կարճ ժամկետում ավարտին հասցնելու հնարավորություն՝ հաշվի առնելով, որ Երևան ժամանող 100 ավտոբուսների հրատապ տեղակայման անհրաժեշտություն կա և ժամանակային սահմանափակումներ	Ոչ	Ոչ	Այո

ՀԱՎԵԼՎԱԾ Ե. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-1. Երևանի քաղաքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվություն (Ճարտարապետահատակագծային առաջադրանք)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՆԱՏԱԿԱԳՑՍՅՈՒՄ ԱՌԱՋՄԴՐԱՔ)

N 01118 - 07/4522-Ա (20.12.2021թ.)

Օրինակ **Երևանի ավտոտրասային հավաքակազմի վերակառուցման**
(օրինակի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)
«Աշխատանքային նախագիծ» (ՀՀ կառավարության 19.03.2015թ. հ. 596 որոշման N4 հավելվածի N2 ցանկի համաձայն փաստաթղթերի մշակման քարտը ընդկալության օրինակ IV կատեգորիա) համար

(Նախընտրված, եզրույթային, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), ճակագրական փոփոխությունը և այլն)

Գտնվելու վայրը **Լոր-Լոր վարչական շրջան, Հ թնայան փողոց հ.9**
(վարչական շրջան, փողոց, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **Երևան համայնք՝ ի դեմս «Երևանի կառուցապատման ներքուստային ՄԴ» ՀՈԱԿ**
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ընտանիքի անունը, կառուցապատման հասցեն)

Առաջադրանքի տրամադրման կիմքը **Կառուցապատողի հայրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ. 19082021-01-0356 վկայականը, Երևանի քաղաքապետի 20.12.21 թ. հ. 4522-Ա որոշումը:**
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անբանախախտ փաստաթուղթ)

Առաջադրանքի գործողության ժամկետը **Երկու տարի**
(ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)

Ն Ա Մ Ա Գ Ց Մ Ա Ն Դ Ն Ղ Վ Ս Մ Ա Ս Ի Բ Ն ՈՒ Թ Վ Գ Ի Ր Ը
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1500)

1. Հողամասը գտնվում է **Նպաստակալի նշանակությունը՝ Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կամուսնային ներկայացվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը կամ հողատնային տրանսպորտի օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը սեփականություն, կադաստրային ծածկագիրը՝ 01-008-0507-0083:**
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը **4.53901 հա:**
(հողամասի սահմանները կտրվածության նշանաբանով, մակերես, (հա))

3. Հողամասի անկա վիճակը **Վարչական շենք՝ 4743.7քմ, լվացման-տորգման տեղամաս՝ 4134քմ, ավտոկայանատեղ՝ /հանգրվան՝ 5306.7քմ, չորացման տեղամաս՝ 109.12քմ, արհեստանոց՝ 351.1քմ, կաթնաբանական՝ 109քմ, սպորտակայան՝ 36.4քմ, պահակատուն՝ 10.5քմ, անցադրային կենց 36.04քմ, արհեստանոց՝ 19.4քմ, պահեստ՝ 323.6քմ, ցրի պահեստային բաք՝ 33քմ, ծածկ՝ 216քմ:**
(սեյսմիկ բնութագրեր, շենքերի (այդ թվում՝ բաղնիքի և ներկայումս) առկայությունը (օգտակարությունը, նյամակարգումը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կամապատասխան, բարեկարգված և այլն)

4. (*) Տրամադրության պայմանները **Հ թնայան փողոց, Ա Հովհաննիսյան փողոց:**
(ճանապարհների անվանումները, երկաթուղային տրամադրության մասնագրությունը և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կապի, էլեկտրամատակարարման, Լախագծվող է կից տարածքներով անցնող ինժեներական ցանցեր և հաղորդակցություններ):
(ճակագրվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ներկայացվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասը **Բնակելի, հասարակական և արտադրական շինություններ, Հ թնայան փողոց:**
(կից հարգապատվությունների անվանումը և դրանց սահմանները՝ համանայն ներկայացված սխեմայով)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) **Անկա չէ:**
(նույնարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ **Չկա:**
(տեղանքում գործող արտադրական, պայտավորվող օբյեկտների, ինժեներատրամադրության ներկայացվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

Ն Ա Մ Ա Գ Ց Մ Ա Ն Դ Ն Ղ Վ Ս Մ Ա Ս Ի Բ Ն ՈՒ Թ Վ Գ Ի Ր Ը
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1500)

9. Ճարտարապետահատ **Մշակել Հ թնայան փողոց հ.9 հասցեում Երևանի ավտոտրասային հավաքակազմի վերակառուցման աշխատանքային ակազմային պահանջներ նախագիծ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման հ. 19082021-01-0356 վկայականով արագործված հողատարածքի սահմաններում:**
(նշելով Պատմամշակութային հուշարձանության օբյեկտության և կործանողականության փաստաթղթերի պահանջները, անկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթները կամ դրանց բացարձակության դեպքում՝ կազմակերպող (կազմակերպող) քաղաքաշինական միջավայրի պայմանները, առաջադրություններ ճակատների ձևավորման, տակվածքի, արտաքին դրների, պատմամշակութային համապատասխանության և գրանցման փոփոխությունների վերաբերյալ)

9.1. (*) Օրինակի հնամենիությունը կարմիր գծից (մետր) _____

9.2. (*) հնամենիությունը հարևան հողատարածքից (օրինակներից) (մետր) _____

9.3. քույրատրեյի բարձրությունը (մետր) _____

(սահմանային հարկապահության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀ Հ-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության և լախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հասուն կաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն))

9.4. կառուցապատման խտության գործակիցը _____

(կառույցի (կառույցների) բնօրինակի մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը **Մինչև 100%:**
(կառուցապատման (անշարժ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

9.6. կառուցապատման տոկոսը **Համաձայն նախագծի**
(կառուցապատման տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

9.7. այլ պահանջներ

- Նախագծով հետարվող է իրականացնել ավտոտրասային հավաքակազմի և գրանցվածքային շինության վերակառուցում, տրանսֆորմատորային ներակազմի կառուցում, ցածր և դեղինային վառելիքի լիցքավորման կայանի, լվացման կայանի, ավտոտրասային վերանորոգման համար նախատեսված շինությունների, բացառա կայանատեղի կառուցում,
- Նախագծով նախատեսվող ՀՀ կառավարության 19.03.2015թ. հ. 596 որոշման N4 հավելվածի N2 ցանկով տրված չափորոշիչները կենդանի կառուցվող շինության ռիսկայնության աստիճան:

Նախնական գնահատման հայտ

• Աշխատանքային նախագիծը մշակել իրավասու կազմակերպության կողմից նախապես սրված տեխնիկական եզրակացության պահանջների համաձայն:
 • Հիմնադրամների կազմը և ֆունկցիոնալ կապը մշակել հաշվի առնելով անհրաժեշտ տեխնոլոգիական և նորմատիվային պահանջները:

10. Հորմատում գտնվող շենքերի և շինությունների բանդան կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների ներթափանցումը **Հնարավոր է նախատեսել ըստ նյութ/ապամոնտաժման/ համաձայն պատվիրատուի առաջարկների**

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ **Միացնել գոյություն ունեցող ինժեներական գծերին՝ անհրաժեշտության դեպքում համաձայնեցնել իրավասու կազմակերպության հետ:**

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրը (համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. բոլլ հոսանքներ
 12.6. սղորահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում **Կազմակերպել ջրահեռացումը:**
 (սեյսմիկ կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում **Տարածքը բարեկարգել և կանաչապատել, հնարավոր է ցանկապատել:**
 (ամուլագիտային պահպանման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, զգվազ և այլն)

15. Երևարարական նյութեր **Երկաթբետոն, մետաղ, քարե շար, երեսապատման բարձրորակ այլ շին նյութեր:**
 (շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տնայնէջերի, ճակատների լուծումների, արտաքին դրների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ (արտակարգ իրավիճակներում մարդկանց օրինկների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ **Նախատեսել հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցներ:**
 (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաչափ խմբերի պաշտպանության միջոցառումներ **Նախատեսել հաշմանդամների և ԲՄՆ-երի կենսազործունեության ապահովմանն ուղղված միջոցառումներ՝ նախագծման (սարքավորման և կանակտման ընտրությունը) կատարելով ՀՀՆՆ TV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «Ենթերի և շինությունների մտայնիությունը բնակչության սակավաչափ խմբերի համար» շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջների համապատասխան:**

19. Երջակա միջավայրի պահպանում (շրջակա միջավայրը վնասվածք ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Երևարարության կազմակերպում **Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ.286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները:**
 (առարարություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տեսեսության և տրանսպորտի անվտանգ աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջարկների գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը **Երկու տարի:**
 (Նշվում են առաջարկների գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

22. Նախագծային փաստաթղթերի փորձարկմանը ներկայացվող պահանջներ **ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2 հավելվածի պայմանների և N 4 հավելվածի N 2 ցանկով սրված չափորոշիչներից էլեկտրոնային**
 • պարզ փորձարկություն (նախագծա-նախանաշխարհային փորձարկություն)
 • պետական համալիր փորձարկություն (նախագծա-նախանաշխարհային փորձարկություն)
 (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձարկության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում **ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և երդենային անվտանգության տեսչական մարմնի հետ:**
 (իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դերերում շահագրգիռ մարմինների հետ Երեզային նախագծի հանկական համաձայնեցում, եզրվում է նաև առաջարկների փոփոխման ենարավորությունը՝ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական բնաբերումներ (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)


25. Համաձայնեցումներ **• Համաձայնեցում Երևանի քաղաքապետի հետ:
 • Մինչև նախագծային աշխատանքները սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղադրման պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ:**

(Նշվում են տվյալ օրինկի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնույթային պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փաստային բաժանարարային պահանջների տեղադրում

27. Այլ պայմաններ **Նախագծի կազմը և բովանդակությունը հորմատային ենթակառուցվածքի ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության նախագծի կազմակերպության կողմից 11.09.2017թ. «Ֆեակելի, հասարակական, արտադրական շենքերի փորձարկության փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն երամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 28-Ն որոշմանը համապատասխանություններին:**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝
Կ.Տ.



ՀԱՅԳ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-2. Երևանի Քաղաքապետարանի նախնական համաձայնությունը նախատեսվող գործունեության վերաբերյալ



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1.

№ 17/6696.

« 31 » 01 2022.

Երևանի քաղաքապետարանի
«Երևանի կառուցապատման ներդրումային
ծրագրերի իրականացման գրասենյակ»
ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար
տիկին Ն.Մարտիրոսյանին

Հարգելի տիկին Մարտիրոսյան

Ի պատասխան Ձեր 17.01.2022թ. հ. 38/02-07Էլ գրության հայտնում եմ, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչությունը Երևան քաղաքում Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանում լիցքավորման և լվացման կայանների կառուցման և ավտոկայանատեղիի վերակառուցման նախատեսվող գործունեության վերաբերյալ 21.01.2022թ-ին տեղի ունեցած 1-ին հանրային քննարկմանն ապահովել է համայնքի ներկայացուցչի մասնակցությունը: Նախատեսվող գործունեության վերաբերյալ տալիս ենք նախնական համաձայնություն պայմանով, որ նախնական գնահատման հայտում որպես պարտադիր պահանջ անհրաժեշտ է ներառել.

- շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացման, շինարարական հրապարակների պարսպապատման պահանջների նկարագրությունը.
- տեղեկատվություն տարածքում առկա բուսականության, հատման ենթակա ծառերի քանակի, բուսական աշխարհին պատճառված վնասի չափի և վնասի փոխհատուցման միջոցառումների վերաբերյալ.
- հանրային քննարկման ժամանակ բարձրացված հարցադրումները:
Կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն աշխատակազմի բնապահպանության վարչություն ներկայացված և համաձայնեցված կանաչապատման նախագծի:

Հարգանքով՝

Աշխատակազմի բնապահպանության
վարչության պետ

Կատ.՝ Գ. Նավասարդյան
Հեռ. 011-514-188

Գ. Նավարյան

02/18/2022 12:05

Նախնական գնահատման հայտ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-3. Նախագծային փորձաքննության եզրակացություն

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 60-22

<< 14 >> մարտի 2022թ.

ԼԻՑ 17384

Պարզիրաբու՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
Նախագծող՝ <<ԷԳԻՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ>> ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
<ԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
Նախագծող՝ <<ՍՈՒՖԵՏ>> ՍՊԸ

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փաստաթղթերի փորձաքննության է դիտարկում << ք. Երևան, Նոր-Նորք վարչական շրջան, Հ. Թևոյան փողոց հ. 9 հասցեում Երևանի ավտորուսային հավաքակայանի վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերը:

Նախահաշվային արժեքը կազմում է՝ 3 253 512.84 հազար դրամ, ներառյալ ԱԱԳ-ն:

Առդիր՝ եզրակացությունը 8 էջից:

Տնօրեն՝



Լ. Սիրեկանյան



ՀՀ ք. Երևան, Լոր-Լորը վարչական շրջան, Հ. Թևոսյան փողոց հ. 9 հասցեում Երևանի ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթեր

Պատվիրարու՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Նախագծող՝ <<ԷԳԻՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ>> ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

<ԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

Նախագծող՝ <<ՍՈՒՖԵՏ>> ՍՊԸ

Մույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

<<ԱՐՆԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ին տրամադրվել է թղթային և էլեկտրոնային տարբերակով <<ԷԳԻՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ>> ընկերության Հայաստանյան մասնաճյուղի կողմից նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթներ, որը իր մեջ ներառում է՝

1. Ելակետային տվյալներ /հատոր 0/
2. Գլխավոր հատակագիծ /հատոր 1/
3. Ճարտարապետական մաս /հատոր 1/
 - Ավտոբուսների լվացման կայան
 - Գազի և դիզելի լիցքավորման կայան
 - Մուտքի անցակետ
 - Էլեկտրական ենթակայան
 - Պարխապ
4. Կոնստրուկտորական մաս /հատոր 2/ հաշվարկային մաս
 - Ավտոբուսների լվացման կայան

Նախնական գնահատման հայտ

- Գազի և դիզելի լիցքավորման կայան
 - Մուտքի անցակետ
 - Էլեկտրական ենթակայան
 - Պարիսպ
 - Հենապատ
5. Ինժեներական մաս /հատոր 3/
- Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր
 - Էլեկտրամատակարարման համակարգեր
 - Արտաքին լուսավորության համակարգ
 - Ուժային էլեկտրական սարքավորումներ
 - Գազամատակարարման համակարգ
6. Տեխնոլոգիական լուծումներ /հատոր 3/
- Դիզելային վառելիքի լիցքավորման կայան
 - ԱԳԼՀ կայան
 - Ավտոմատիկա ԱԳԼՀ կայան
 - Ավտոմատիկա դիզելային վառելիքի լիցքավորման կայան
7. Եինարարության կազմակերպման մաս /հատոր 4/
8. Հակահրդեհային անվտանգության միջոցառումներ /հատոր 5/
- Հրդեհաշիջում
 - Արտակարգ իրավիճակներում արձագանքելու պլան
9. Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ/հատոր 5/
10. Էներգային այդոլությանն ու էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ/հատոր 5/
11. Նախահաշիվ / հատոր 6/



<<ԱՐՄԻՏԵԿ>> ՍՊԸ-ն փաստաթղթերը ուսումնասիրել է՝ համաձայն 18.02.2022թ. կնքված N 01 ծածկագրով պայմանագրի և տեխնիկական բնութագրի / ԷԳԻՄ ԲՆԹԵՐՆԵՑՇՆԼ քննկերության Հայաստանյան մասնաճյուղի միջև/ , Երևանի քաղաքապետի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի և ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի հիման վրա:

Ելակետյին տվյալներում ներառված են հետևյալ փաստաթղթերը՝

1. ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից տրամադրված լիցենզիայի և ներդիրների պատճենները և ճարտարապետի ու կոնստրուկտորի արտոնագրերը:
2. Երևանի քաղաքապետի կողմից տրված 20.12.2021թ. N01/18-07/4522-Ա նախագծման թույլտվությունը/ճարտարապետահատակագծային առաջադրանք/:
3. Անշարժ գույքի սեփականության վկայականը :
4. ՀՀ «ԳԵՈՒԵՍԵՐԳ» ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներկառքանական եզրակացությունը Նոր-Նորք վարչական շրջան, Հ. Թևոսյան փողոց հ. 9 հասցեի տարածքի վերաբերյալ: / Լիցենզիա 17340/
5. Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրված ջրագծի և կոյուղագծի միացման կետերը:



Նախագծով նախատեսվում է վերակառուցել Նոր-Նորք վարչական շրջան, Հ. Թևոսյան փողոց հ.9 հասցեում ավտոբուսային հավաքակայանը: Հավաքակայանում գոյություն ունեցող կառույցների մեծ մասը և պարիսպի մի մասը նախատեսվում է քանդել: Ավտոբուսային հավաքակայանում նախատեսվում է կառուցել ավտոբուսների լվացման կայան, գազի և դիզելի լիցքավորման կայաններ, մուտքի հատվածում հսկիչ անցագրային կետ, էլ. ենթակայան, հարթակ/պանդուս/ , հենապատեր, պարիսպ, վերակառուցել ճանապարհային ծածկույթը իրականացնելով նորը, բարեկարգել իրականացնելով կանաչապատ տարածքներ:

Նախատեսվում է հիմնական մուտքը կազմակերպել Թևոսյան փողոցի աջակողմյան հատվածից, իսկ գոյություն ունեցող մուտքը օգտագործել որպես հիմնական ելք: մուտքն ու ելքը նախատեսվում է 10 մ լայնությամբ: Քանդված պարիսպի փոխարեն նախատեսվում է կառուցել քարե պարիսպ երկաթբետոնե հիմնակմախքով 2.6 մ բարձրությամբ: Ավտոբուսների լվացման կայանը ուղղանկյուն հատակագծային 37.0*22.0 մ արտաքին չափեր ունեցող շինություն է: Լվացման կայանը նախատեսվում է հինգ ավտոբուսների միաժամանակյա լվացման համար, ներսում լվացման կետերը առանձնացված են միմյանցից 200մմ հաստությամբ թեթևաբետոնե բլոկի շարով: Մեքենաների լվացումը նախատեսվում է ավտոմատացված լվացման համակարգով, ջրի մաքրման և վերաշրջանառության իրականացման համակարգով: Արտաքին պատերը

իրականացվում են սենդվիչ պանելներով, իսկ որմնախարիսխը երեսապատվում է բազալտե երեսապատման սալերով, տանիքը երկու լանջանի է մետաղական տանիքածածկույթով, որոնք կրկնվում են յուրաքանչյուր թռիչքում, կազմակերպված ջրահեռացման համակարգով, որտեղից անձրևաջրերը ուղղորդվում են դեպի ջրի մաքրման կայան, հետագայում օգտագործելու նպատակով: Մեքենաների մուտքերը և ելքերը կազմակերպվում են շենքի երկար ճակատներից: Շինության ներսում տեղակայվում են տեխնիկական սենյակներ, տեխնիկական սենյակի տակ գտնվում է նկուղային հարկ, որտեղ տեղակայված են ջրի մաքրման սարքավորումները:

Գազի և դիզելի լիցքավորման կայանը իր մեջ ներառում է գազի և դիզելի լիցքավորման շվաքարաններ, ճնշակայան ստորգետնյա դիզելային վառելիքի տարրաների և գազի կուտակիչների հորեր: Շվաքարանները բաղկացած են մետաղական թեթև ծածկից և միաձույլ երկաթբետոնե սյուներից: Ծածկերը և սյուները երեսապատվում են ալյուրոնոնե երեսապատման թերթերով: Դիզ. վառելիքի համար նախատեսվում է լիցքավորել երկու մեքենա միաժամանակ, իսկ գազի համար վեց մեքենա, տեղադրված են երեք գազի երկփողանի լիցքավորիչներ և մեկ դիզել երկփողանի լիցքավորիչ: Ճնշման կայանի շենքը ուղղանկյուն հատակագծային արտաքին չափերով մեկ հարկանի շինություն է, տանիքը մեկ լանջանի մետաղական տանիքածածկույթից: Ճնշակայանում տեղադրվում են հինգ հատ կոմպրեսորներ:

Մուտքի անցակետը իրենից ներկայացնում է ուղղանկյուն հատակագծային արտաքին չափերով մեկ հարկանի շինություն է, տանիքը հարթ տիպի կազմակերպված ջրահեռացման համակարգով, մուտքերը կազմակերպված շինության երկու կողմերից: Արտաքին պատերը սվաղվում են ցեմտավազե սվաղով և ներկվում ճանապարհի ներկով, իսկ որմնախարիսխը երեսապատվում է բազալտե երեսապատման սալիկներով:

Էլ. ենթակայանի շենքը իրենից ներկայացնում է ուղղանկյուն հատակագծային արտաքին չափերով մեկ հարկանի շինություն, տանիքը մեկ լանջանի մետաղական տանիքածածկույթով կազմակերպված ջրահեռացման համակարգով:

Ավտոբուսների լվացման կայանի շենքի կոնստրուկտիվ համակարգը լուծված է միաձույլ երկաթբետոնե հիմնակմախքով, շրջանակային և շրջանակակապային սխեմաներով:

Շենքի հիմնակմախքի հաշվարկը ուղղահայաց բեռնվածության և սեյսմիկ ազդեցությունների համար կատարված է համակարգչային ծրագրով ըստ ՀՀՇՆ 20.04-

2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմերի: Հաշվարկի ժամանակ օգտագործվել է՝

գրունտների կարգը 2-րդ,

գրունտային պայմանների գործակիցը - $K_0 = 1.0$,

թույլատրելի վնասվածքների գործակիցը - $K_1 = 0.35$

սեյսմաուժգնության գործակիցը - $A=0.4$

պատասխանատվության գործակիցը - $K_2 = 1.0$

հիմքերի տակ որպես գրունտներ ընդունված են կիսաժայռային և ժայռային, որի պայմանական հաշվարկային դիմադրությունը կազմում է $R_0=0.25 \text{ ՄՊա}$

Հաշվարկների ժամանակ բոլոր երկաթբետոնե կոնստրուկցիաների համար ընդունված են հետևյալ բնութագրերը՝ ծանր բետոն B25 դասի, $\gamma = 2.48 \text{ տ/մ}^3$ ծավալային կշռով, երկայնական ամրանները - A500C դասի, լայնական ամրանները - A240 դասի:

Շինությունների բոլոր հիմնական կրող կոնստրուկցիաները իրականացվում են միաձույլ երկաթբետոնից: Շինությունների հիմքերը նախատեսված է իրականացնել միաձույլ երկաթբետոնից ժապավենային խաչվող գոտիներով ուղղանկյուն հատվածքի կտրվածքներով: Ավտորուսների կայանի սյուները 45×45 սմ հատվածքի, պարզունակները 45×45 սմ, միաձույլ երկաթբետոնե պատերը 45 սմ հաստությամբ: Ծածկերը իրականացվում են միաձույլ երկաթբետոնից 16 սմ հաստությամբ հոծ սալերով կրկնակի ամրանավորմամբ, որը ապահովում է շենքի տարածական կոշտությունը և երկայնական, և լայնական ուղղություններով: Լցասյունակների կրող հիմնակմախքը և տանիքը իրականացվում են պողպատե տարրերից: Շինությունների պատի շարերը իրականացվում են ամրանավորված թեթևաբետոնե բլոկներով: Դիզ. Վառելիքի և գազի հորերի տարածքները պարփակվում են մետաղական ցանկապատի հիմնակմախքով: Հորերի հիմքերը իրականացվում են համատարած միաձույլ երկաթբետոնից հոծ սալի տեսքով կրկնակի ամրանավորմամբ, պատերը իրականացվում են միաձույլ երկաթբետոնից կրկնակի ամրանավորմամբ: Անցակետի և ենթակայանի շինությունների կրող հիմնակմախքը միաձույլ երկաթբետոնից է, հիմքերը ժապավենային ուղղանկյուն հատվածքի, սյուները 40×40 սմ հատվածքի, 40×50 սմ հատվածքի, ծածկը միաձույլ երկաթբետոնից 16 սմ հաստությամբ կրկնակի ամրանավորմամբ: Արտաքին պատի շարը իրականացվում է տուֆ քարի շարվածքից:

Քարե պարիսպի համար իրականացվում է միաձույլ երկաթբետոնե հիմք, սյուներ և գոտիներ 20×20 սմ հատվածքի P25 դասի բետոնից, իսկ արտաքին լուսավորության



Նախնական գնահատման հայտ

տեղադրման հատվածներում սյուները իրականացվում են 40*40սմ հատվածքի: Պարիսպը նախատեսվում է սվաղել ցեմենտավազե սվաղով և ներկել ճակատային ներկով:

Շինությունների նշանակումից և հրդեհայի անվտանգության կարգից ելնելով տարածքում նախատեսվում է միացյալ խմելու հակահրդեհային ջրամատակարարման ցանց, որը հետագայում կմիացվի ընդհանուր օղակաձև ցանցին: Խողովակները պողպատե 108*4 մմ հատվածքի հակակոռոզիոն մեկուսացումով 100-130 մ մեկ նախատեսվում է հավաքովի երկաթետոնե հրդեհային հիդրանտներով և բաժանարար հորեր: Տարածքի ցածր կետերում նախատեսվել են անձրևընդունիչ միաձույլ հորեր՝ ճաղավանդակներով: Անձրևաջրերի խողովակները ծալքավոր պոլիէթիլենե 200-300 մմ տրամագծով: Շրջակա միջավայրի պահպանման և ջրի ծախսի խնայողության համար ընտրվել է ջրի մաքրման սարք 5 խմ /ժամ արտադրողականությամբ:

Ավտոմատ հրդեհային համակարգը նախատեսված է հսկող շինություններում հրդեհի հայտնաբերման և համապատասխան ծառայությանը տեղեկացման համար, որպես ավտոմատ հրդեհային ազդասարքերը ընդունող հսկիչ օգտագործվում է դոզոն 4, որը գտնվում են օպերատորականում: Ծխային տվիչները տեղադրվում են առաստաղի վրա: Հրդեհային ազդարարման համար տեղադրվում են լուսաձայնային և հոսքային ազդարարներ: Սնուցման մալուխները տեղադրվում են պլիս խողովակների մեջ:

Նախագծով նախատեսված է ճնշակային կայանում տեղադրել 5 հատ լուսաբանչյուրը 1200մ³ /ժամ արտադրողականության, ռուսական արտադրության ճնշակային տեղակայումներ, որոնցից 1-ը պահուստային: Միջին ճնշման գազատարով գազը մտնում է նախնական կուտակիչ, որից հետո անցնելով գազի մուտքի բլոկներով, որոնք համալրված են ֆիլտրերով, տրվում է ճնշակներին: Ճնշակներից հետո բարձր ճնշման գազը ենթարկվում է հովացման, օդային հովացման սարքավորումներում և տրվում է չորացուցիչներին: Չորացված գազը կուտակվում է 40 հատ 400լ տարողության ստորգետնյա կուտակիչներում, որտեղից էլ տրվում են լցայուններին: Ճնշակային տեղակայումները ապահովված են ավտոմատ կառավարման համակարգերով: Ավտոմատ կառավարման համակարգը դադարեցնում է ճնշակի աշխատանքը, եթե՝ դադարել է հովացումը, իջել է յուրի ճնշումը, չինությունում բարձր է գազի կոնցենտրացիան, էլ համակարգում առաջացել է անսարքություն, սեղման աստիճաններից հետո գազի պարամետրերը չեն համապատասխանում տրված

Նախնական գնահատման հայտ

պահանջներին: Կուտակիչնեչում գազի ճնշումը կարգավորվումը պահպանվում է ավտոմատ եղանակով:

Էլեկտրաէներգիայի սնուցումը իրականացվում է տարածքում գտնվող ենթակայանից: Ենթակայանը բաղկացած է 6 կՎ և 0.4 կՎ ԲՍ-երից և տրանսֆորմատորների խցից: Ենթակայանում տեղադրվում է 2 հատ 6/0.4 կՎ լարման 2500 կՎԱ հզորության եռաֆազերի փաթոյթ յուղային հերմետիկ ուժային տրանսֆորմատորներ: Շինությունների սնող մալուխները իրականացվում են ՎՎԳ տիպի մալուխներով տարբեր հատվածքների կաբելային կանալներով: Խմբային ցանցերը կառուցվում են պղնձե բազմաջիղ մալուխներով, ներքին վարդակային ցանցերը իրականացվում են 3*4 մմ հատվածքի բազմաջիղ մալուխներով, իսկ ներքին լուսավորության ցանցերը 3*1.5 մմ հատվածքի, ավտովացման կետերում բոլոր մալուխները անցկացվում են ջրակայուն խողովակների միջոցով: Վարդակները տեղադրվում են հատակից 30սմ բարձրության վրա, անջատիչները 85սմ բարձրությամբ, իսկ էլ վահանակները 1.5 մ բարձրության վրա: Նախատեսվում է կառուցել հողանցման կոնտուր:

Նախատեսվում է հողամասի ամբողջ պարագծով իրականացնել ցանկապատ: Տարածքի մուտքը իրականացվում է երկու դարպասների միջոցով: Նախատեսվում է արտաքին ինժեներական ցանցերի անցկացում՝ ջրամատակարարման, կոյուղու և անձրևաջրերի: Տարածքը նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել: Մուտքի մոտ է գտնվում մեկ հարկանի պահակակետը: Տարածքում նախատեսվում է իրականացնել ասֆալտապատ ճանապարհներ և մայթեր պարփակված մայթեզրերով: Տարածքը նախատեսվում է լուսավորել փողոցային լուսատուներով հենասյուների վրա տեղադրված միմյանցից 25 մ հեռավորության վրա, բոլոր հենասյուները հողանցվում են էլեկտրոդով և շերտապողպատով:

Ավտոբուսային հավաքակայանում նախագծված կառույցները չունեն տեղաշարժման սահմանափակումներով խմբերի կենսագործունեությունը սամանափակող խոչընդոտներ, իսկ կառուցվող թեքահարթակը ունի նորմատիվային թեքություն:

Նախահաշվային մաս

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով
Հաշվարկը կազմում է **3 253 512.84** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:



Հաշվարկը նատարված է 1984թ. նորմերով և գներով նազմված տնղային
նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինղեքսը
1890.17 և մեքենաների շահագործման ինղեքսը 2779.30

Նյութերի արժեքն ընղունված է 2021թ. N 06 «Ինֆորմացիոն տեղեկազրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսղրության ու նորմատիվ
փաստաղրթերի և նախագծային առաղարանքի պահանջներին:

2. Նախագծի գծազրական մասը և մասնագրերը մշակված են միմիյանց
համապատասխան

3. Նախահաշիվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային
ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի
11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընշվող շեղումների վերացման ուղղղյամբ
առաղարկված փոփոխղյունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները
քննարկվել են նախագծային կազմակերպղյան հետ համատեղ:


Ուտումնասիրելով ներկայազված նախագիծ-նախահաշիվը

Փորձաքննղյունը երաշխավղրում է փաստաղրթերի համապատասխանղյունը ՀՀ
օրենսղրության և նորմատեխնիկական փաստաղրթերի պարտաղիր պահանջներին,
նախահաշիվը կարող է սահմանված կարզով պատվիրատուի կողմից ներկայազվել
համաձայնեցման և հաստատման:



Ն. Սիրեկանյան

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե- 4. Երևանի փ. Թևոյան 9 հասցեյում ավտոբուսային հավաքակայանի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական



5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ արտադրական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-008-0507-0083-001	Վարչական շենք	4743.7 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	01-008-0507-0083-002	Լվացման-նորոգման տեղամաս	4134 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	01-008-0507-0083-003	Ավտոկայանատեղ\հանգրվան	5306.7 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	01-008-0507-0083-004	Չորացման տեղամաս	109.12 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5	01-008-0507-0083-005	Արհեստանոց	351.1 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6	01-008-0507-0083-006	Կաթսայատուն	109 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
7	01-008-0507-0083-007	Պոմպակայան	36.4 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
8	01-008-0507-0083-008	Պահակատուն	10.5 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
9	01-008-0507-0083-010	Անցագրային կետ	36.04 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
10	01-008-0507-0083-011	Արհեստանոց	19.4 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
11	01-008-0507-0083-013	Պահեստ	323.6 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
12	01-008-0507-0083-012	Ջրի պահեստային բաք	33 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
13	01-008-0507-0083-009	Ծածկ	216 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ


Առկա են ընդհանուր 72.3քմ մակերեսով ինքնակամ շինություններ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՍՈՍ ԹՈՒՄԱՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱՎԱՆ N 23122021-01-0068, գաղտնաբառ՝ BGLXTRGYW6XZ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով



Նախնական գնահատման հայտ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-5. Ավտոբուսային հավաքակայանի օպերատորի դիմումը «Վեոլիա Ջուր» ՍՊԸ-ին՝ Ջրվեժի հավաքակայանի վերակառուցման ծրագրի համար ջրամատակարարման և կոյուղու տեխնիկական պայման տրամադրելու համար



«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՐՈՒՍ» ՓԲԸ
"YEREVANI AVTOBUS" CJSC

ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 5, 0076
5 Tevosyan, 0076, Yerevan, RA

Հեռ./Tel.: (374 11) 67 44 20
Էլ.փոստ/E-mail: yerevani.avtobus@gmail.com

ԵԱ 448-Ե

«08» 08 2021թ

Ում՝

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
տիկին Մարիաննա Շահինյանին

Պատճենը՝

«ԵԿՆ ԾԻԳ»-ի ծրագրի ղեկավար
տիկին Նորա Մարտիրոսյանին
«ԵԿՆ ԾԻԳ» -ի
տեխնիկական մասնագետ
պարոն Վարդան Կարապետյանին
«ԼՂԻԱ Ինթերնեյշնլ» ընկերության
հայաստանյան մասնաճյուղի տնօրեն՝
պարոն Ռիչարդ Տադանիին

Թեմա՝

Տեխնիկական պայմանի տրամադրում

Կոնտակտային անձ՝

Տիգրան Մամիկոնյան

Հեռախոս՝

+374 99 05 19 32

Էլ. փոստ՝

tigran.mamikonyan-int@egis.fr

Նախորդող գրություններ՝

առկա են

Նախնական գնահատման հայտ

Հարգելի՛ տիկին Շահինյան,

Հայտնում ենք Ձեզ, որ «Էգիս Ինթերնեյշնլ» ընկերությունը Երևանի քաղաքապետարանի պատվերով իրականացնում է Երևան քաղաքի Թևոսյան 5 հասցեում գտնվող ավտոբուսների հավաքակայանի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

Նշված հավաքակայանի նախագծային աշխատանքների համար խնդրում ենք տրամադրել ջրամատակարարման և ջրահեռացման տեխնիկական պայման՝ համաձայն ներքոհիշյալ տվյալների.

1. Հրդեհաշիջում

ա) արտաքին՝ 20 լ/վրկ

բ) ներքին՝ 10 լ/վրկ

գ) ավտոմատ՝ 30 լ/վրկ


2. Տնտեսական-կենցաղային կոյուղի՝ 4,5 լ/վրկ

3. Տնտեսական-խմելու կոյուղի՝ 4,5 լ/վրկ

4. Անձրևաջրեր՝ 350 լ/վրկ

Առդիր՝ հավաքակայանի տեղադիրքը, GoogleԷ քարտեզի վրա

Տնօրեն



Է. Թարփոշյան

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-6. «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված ջրամատակարարման և կոյուղու տեխնիկական պայման



«Երևանի Ավտոբուս» ՓԲԸ
լ/ա Տիգրան Մամիկոնյանին
/հասցեն՝ ք. Երևան, Թևոյան 5/

« 27 » հուլիսի 2021թ.
N 207/22654

Առարկան՝ Տեխնիկական պայմանի տրամադրում

Հարգելի պարոն Մամիկոնյան,

Ի պատասխան Ձեր 08/07/2021թ. թիվ ԵԱ448 գրության՝ ներկայացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից մշակված ջրամատակարարման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմանը ՎՋ4066/2021: Դրա հիման վրա անհրաժեշտ է համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունում պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի առնվազն 2 փաթեթ և մյուս կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների հետ համաձայնեցնելուց հետո, այն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից հաստատելու և միացման նախահաշիվ ստանալու նպատակով, ներկայացնել ընկերության Շահագործման տնօրինություն՝ հետևյալ հասցեներից որևէ մեկով.

1. ք. Երևան, Բեռնակիրների 85/1

2. ք. Վայք, Շինարարների 15

Հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերի 1 բնօրինակ փաթեթը պահվելու է ընկերությունում:

Տեղեկացնում եմ նաև, որ նոր համակարգի կառուցման աշխատանքները սկսելուց առաջ հարկավոր է այդ մասին տեղեկացնել 1-85, 011 300185 հեռախոսակենտրոնի միջոցով:

Հոդային աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղական ինքնակառավարման մարմնից ստանալ շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն:

Նոր համակարգի կառուցման տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով հարկավոր է դիմել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու համար լիցենզավորված կազմակերպության, որոնց ցանկը հրապարակված է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության պաշտոնական կայքում, օգտվել վերջինիս ծառայություններից և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություն ներկայացնել կառուցված օբյեկտի վերաբերյալ կից ցանկում նշված փաստաթղթերը ընկերության կողմից միացման աշխատանքներ կատարելու, առևտրային հաշվառքի սարք տեղակայելու և Ձեզ հետ Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելու համար:

Մինևույն ժամանակ հարկ եմ համարում եջել, որ կառուցված նոր համակարգի սեփականության իրավունքի Հայաստանի Հանրապետության անհատույց հանձնումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

Սելեզյույ

Գլխավոր տնօրեն
Մ. Շահինյան

Պատասխանատու՝

Լ. Մարտիրոսյան
Սելեզյույ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՐ» ՓԲԸ
ԵԼԻՑ 22654
« 27 » 07 2021թ.

ՀՀ, ք. Երևան, 375025, Արովյան 66ա
Հեռ.՝ 1-85, 0-800-00-185, 011-300-185
Էլ. փոստ՝ office@vjur.am
Վեբ-էջ՝ www.veolia.am

RA, Yerevan, 375025, Str. Abovyan 66a
Tel.: 1-85*0-800-00-185, 011-300-185
E-mail: office@vjur.am
Web site: www.veolia.am

Սելեզյույ

VEOLIA
Քիմի

Սրտադրատեխնիկական բաժնի պետ՝
Ա. Մարտիրոսյան
«23» 07 2021թ

Տեխնիկական պայման ՎՋ 4066 /2021
(Ջրամիացման և/կամ/ ջրահեռացման մախացման)

Ք. Երևան, Նոր-Նորք թևայան փողոց 5
/Ֆաբրիկայի հասցե/

Երևանի Ավտորու ՓԲԸ
/Իրավաբան և ճան. ազդանոց/

099051932
/Հեռախոսահամար/

© 2021 Google
Image © 2021 Maxar Technologies
Google Earth

268 236
«ՆԱԽՆԱԿԱԿԱՆ» ՓԲԸ
ՀԱՆՈՒՍԱԳՂՆԵՐԻ
ՄՊԱՍԱՐԿՄԱՆ
ԳՐԱՄԵՆՏԱԿ ԹԻՎ 3

Համակարգ	Ջրամատակարարում	Ջրահեռացում	Հեղեղատար	Հրդեհաշիջում
Կոմունիկացիայի գտնվելու վայրը	Թևոսյան փողոց	Թևոսյան փողոց	Թևոսյան փողոց	
Գործող խողովակի տրամագիծը, մմ/նմբ, տեսակը	d=600մմ, p=2.0մբ. պող.	d=500մմ	d=600մմ	
Միացման կետի տեղը	Թևոսյան փողոցով անցնող ջրագծից	Թևոսյան փողոցով անցնող կոյուղագծից	Թևոսյան փողոցով անցնող հեղեղատարին	
Միացման տրամագիծ	Համաձայն մայրագծի			
Ջրաչափի տրամագիծը,				
Այլ պահանջներ	1. Ջրաչափական հանգույցի համար կառուցել դիտահոր 2. Գոյություն ունեցող ջրամիացումը միացման կետում խցափակելուց հետո կատարել մոր միացումը 3. Քարտ N.7710	Կոյուղագծի միացման կետում կառուցել դիտահոր	Հեղեղատարի միացման կետում կառուցել դիտահոր	Տես * կետը
Ջրամատակարարման գրառվել	Շուրջօրյա			

Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը՝ պատկերել մայրագծամայրահաշվային փաստաթղթերի կազմում և դրանք համաձայնեցնել «Աեռլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ:

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Աեռլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմողի հաշվին: Կառուցված մոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Աեռլիա Ջուր» ՓԲԸ՝ դիմողի հաշվին:

Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի՝ զրանցման օրվանից սկսած, այն ենթակա է երկարացման միմյակ տեխնիկական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմողի կողմից մերկայացրած դիմումի հիման վրա:

Կառուցման ընթացքում, հողային աշխատանքներն իրականացնելիս, անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ ամձանց քույրտվությունները և/կամ համաձայնությունները:

* Հրդեհաշիջումը մայրատեսել համաձայն ՀՀԸՆ 40.01.02-2020թ. և ՀՀ Կառ. 08.08.2019թ քիվ 1025 որոշման, քիվ 29 հավելվածի, եիրանտի տեղադրման դեպքում կառուցել դիտահոր:

«Հյուսիս» տեղամասի պետ՝

[Ստորագրություն] Կ. Թորոսյան

Ինժեներական խմբի պատասխանատու՝

[Ստորագրություն] Կ. Վարդանյան

[Ստորագրություն]
Կատարող՝ Կ. Թաղևոսյան



Նախնական գնահատման հայտ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ե-7. ՀՀ ճանապարհային ոստիկանության կողմից հաստատված ավտոբուսային հավաքակայանի երթևեկության կառավարման պլան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
«ՃԱՆԱՊԱՐԿԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0082, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 9, հեռախոս՝ (010)52-27-63, թեժ գիծ՝ 1-77, էլ.փոստ՝ info@roadpolice.am

«19» 11 2021թ. № 7-3-78881

Ձեռք №

**<<Էգիս Ինթերնեյշնլ>> ընկերության
հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն Ռիչարդ Տադանին**

ք.Երևան, Ջեյմս Բրայս 19/1

Ի պատասխան Ձեր 17.11.2021թ. №ARM/130115L/2021/744 գրության հայտնում եմ, որ Ճանապարհային ոստիկանության ծառայողների կողմից ուսումնասիրվել է Երևան քաղաքի Թևոսյան փողոց №5 հասցեում գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանի նախագիծը, որի վերաբերյալ առարկություններ չկան:

19.11.2021

Հարգանքով՝

**պետի տեղակալ
ոստիկանության գնդապետ**


ՆՈՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN NORIK 2604640082


Ն. Սարգսյան

կատ. Կ.Աղաջանյան
հեռ. 011 56-34-18


Նախնական գնահատման հայտ



ՀԱՎԵԼՎԱԾ Զ. Ջրվեժի ավտոբուսային հավաքակայանի զգայուն ընկալիչների թերթիկ

N	Խնդրո առարկան	Շինարարության շահագործման ընթացքում ստուգվող պարամետրերը	Նկարներ
Ջրվեժի ավտոբուսային հավաքակայան			
1	Թևոսյան և Հովհաննիսյան փողոցներում հանրային ճանապարհների երթևեկության խաթարումներ	ԵԿՊ-ն պետք է պատրաստվի և անհրաժեշտության դեպքում համաձայնեցվի ճանապարհային ոստիկանության հետ	

Նախնական գնահատման հայտ

2	<p>Կանաչապատման ծառերը ավտոբուսային հավաքակայանի տարածքում</p>	<p>Հակակշռող միջոցառումներ՝ նոր ծառերի տնկման միջոցով և պահպանության ն ուղղված մեղմացնող միջոցառումներ</p>	

Նախնական գնահատման հայտ

3	Համայնքային ծառեր՝ Ծրագրի տարածքից դուրս պարսպի հետևում	Պահպանության և ուղղված մեղմացնող միջոցառումներ ը նախատեսված են ԲԿՊ-ում	
---	---	--	---

Նախնական գնահատման հայտ

4	<p>Մոտակա ձեռնարկատիրական գործունեություններին պատճառվող անհանգստություն (փոշի, աղմուկ, թրթռում, մուտքային ճանապարհների փոփոխություն)</p>	<p>ԲԿՊ-ով նախատեսված են մեղմացնող միջոցառումներ</p>	
---	---	---	---



Նախնական գնահատման հայտ

			 <p>The top photograph shows an entrance gate to a facility. The gate is made of metal and has a sign on it. There are several trees, some of which are bare, in the background. The ground is wet and reflective. The bottom photograph shows a different view of a gate. A white car is parked in the background. A person is visible near the gate. There are signs on the gate and a trash bin in the foreground.</p>
--	--	--	--


Նախնական գնահատման հայտ

<p>5</p>	<p>Գազի խողովակը և էլեկտրականության սյուները գտնվում են հարակից փողոցում</p>	<p>ԲԿՊ-ով նախատեսված են մեղմացնող միջոցառումներ</p>	
<p>6</p>	<p>Տեղական ճանապարհային ցանցերի վնասում և խաթարում</p>	<p>Մշակվել է ԵԿՊ ԲԿՊ-ով նախատեսված են մեղմացնող միջոցառումներ</p>	

Նախնական գնահատման հայտ

7	<p>Բնական ձորակ՝ հավաքակայանի պարսպի հետևում</p>	<p>ԲԿՊ-ում նախատեսվում են պաշտպանիչ միջոցառումներ</p>	
8	<p>Բնակելի տները գտնվում են բնական խորը կիրճի հետևում՝ 500 մ հեռավորության վրա</p>	<p>ԲԿՊ-ով նախատեսված են մեղմացնող միջոցառումներ</p>	

Նախնական գնահատման հայտ

9	Լքված կառույցների հայտ սեփականատերերով	ԲԿՊ-ով նախատեսված են մեղմացնող միջոցառումներ	
---	--	--	--

ՀԱՎԵԼՎԱԾ Է. Ելակետային իրավիճակի ուսումնասիրություններ և հետազոտություններ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-1. Կլիմայական հիմնական տարրերի տվյալները²⁵

Օդի ջերմաստիճան																
Բնակավայրի. օդերիութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.°C												Միջին տարեկան. °C	Բացարձակ նվազագույն. °C	Բացարձակ առավելագույն °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Երեվան "Արաբկիր"	1113	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5	-21	41

²⁵ ՀՀՇՆ (ՀԽԻՊ) II-7.01-2011 Շինարարական կլիմատոլոգիա, (http://www.mud.am/lows/files/26_10_11_h.pdf)

Հարաբերական խոնավություն															
Բնակավայրի, օդերյուրաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը,%												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երեվան "Արաբկիր"	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35
Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը															

Նախնական գնահատման հայտ

Բնակավայրի օդերյուծաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը <u>միջին ամսական</u> _____ օրական առավելագույն, _____ մմ													Ձնածածկույթ		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրունք, սմ	Տարվա մեջ ձնածածկույթի օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17

Նախնական գնահատման հայտ

Երեվան "Արաբկիր"	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353	50	53	152
	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47			

Քամի

Բնակավայրի օդերի արագության և կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ	ըստ ուղղությունների	Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥ 15 մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "ո" տարիների ընթացքում			
									20	50	100	

Նախնական գնահատման հայտ

1	2	3	Հյուսիսային (Հս)	Հյուսիս- Արեւելյան (ՀսԱրլ)	Արեւելյան (Արլ)	ՀարավԱրեւելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	ՀարավԱրեւմտյան (ՀվԱրմ)	Արեւմտյան (Արմ)	ՀյուսիսԱրեւմտյան (ՀսԱրմ)	12	13	14	15	16	17	18
Երեւան "Արաբկիր"	889, 7	Հունվար	3	29	8	7	14	20	6	3	45	0,9	2,0	30	20	23	25
			1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9							
		Ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2,1					
			3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5							
		Հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3,4					
			6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6							
		Հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1,8					
			2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0							

ԵՆԹԱՀԱՎԵԼ ՎԱԾ Է-2. Ջրվեժի ավտոբուսային հավաքակալի տարածքում առկա ծառերի և թփերի տեսակները

Ջրվեժի ավտոբուսի պարկի գեղազարդային ծառերի և թփերի տեսակները

Տեսակ (հայերեն)	Տեսակ (լատիներեն)	Ծառեր (քանակ)	Թփեր և լիանաներ (քանակ)	Բների տրամագիծ՝ (սմ Ø)
Թեղի փոքր	<i>Ulmus minor</i>	127	-	13-50
Թույա արևելյան	<i>Thuja orientalis</i>	3	-	10-17
Թխկի հացենիատերև	<i>Acer negundo</i>	3	-	10-12
Թխկի կեղծսոսիատերև	<i>Acer pseudoplatanus</i>	3	-	12-20
Կապար փշոտ	<i>Capparis spinosa</i>	-	1	2
Ցախակեռաս բուրավետ	<i>Lonicera caprifolium</i>	-	1	2
Ցախակեռաս թաթարական	<i>Lonicera tatarica</i>	-	3	2-3
Վիստերիա չինական	<i>Wisteria sinensis</i>	-	1	5
Հացենի սովորական	<i>Fraxinus excelsior</i>	1	-	10
Հացենի պենսիլվանյան	<i>Fraxinus pennsylvanica</i>	14		12-20
Մասրենի դամասկի	<i>Rosa damascena</i>	-	15	2-3
Բարդի կանադական	<i>Populus deltoides</i>	1	-	20
Բարդի իտալական	<i>Populus italica</i>	4	-	17-40
Բարդի սև	<i>Populus nigra</i>	1	-	45
Ուռենի բարձր	<i>Salix excelsa</i>	1	-	25
Թեղի մերկ	<i>Ulmus glabra</i>	11	-	20-30
Ընդհանուր		169	21	

Ջրվեժի ավտորուսի պարկի **պտղատու** ծառերի և թփերի տեսակները

Տեսակ (հայերեն)	Տեսակ (լատիներեն)	Ծառերի քանակ	Լիանաների քանակ	Բների տրամագիծ՝ (սմ Ø)
Ծիրանենի սովորական	<i>Armeniaca vulgaris</i>	2	-	20, 25
Թթենի սպիտակ	<i>Morus alba</i>	2	-	10
Իսնձորենի սովորական	<i>Malus domestica</i>	1	-	12
Ընկուզենի սովորական	<i>Juglans regia</i>	1	-	20
Փշատ նեղատերև	<i>Elaeagnus angustifolia</i>	1	-	20
Իսադող մշակովի	<i>Vitis vinifera</i>	-	1	10
Սալորենի կամ Դամբուլ	<i>Prunus domestica</i>	2	-	12, 15
Ընդհանուր		9	1	

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Է-3. Հատման ենթակա ծառերի և թփերի տեսակները

Տեսակ (հայերեն)	Տեսակ (լատիներեն)	Ծառեր (քանակ)	Բների տրամագիծ՝ (սմ Ø)
Թեղի փոքր	<i>Ulmus minor</i>	38	13-50
Հացենի պենսիլվանյան	<i>Fraxinus pennsylvanica</i>	7	12-20
Թեղի մերկ	<i>Ulmus glabra</i>	4	20-30
Թխկի հացենիատերև	<i>Acer negundo</i>	3	10-12
Թխկի կեղծսոսիատերև	<i>Acer pseudoplatanus</i>	2	12-20
Փշատ նեղատերև	<i>Elaeagnus angustifolia</i>	2	20
Բարդի իտալական	<i>Populus italica</i>	2	17-40
Բարդի սև	<i>Populus nigra</i>	1	45
Թթենի սպիտակ	<i>Morus alba</i>	1	10
Խնձորենի սովորական	<i>Malus domestica</i>	1	12
Ընդհանուր		61	
Տեսակ (հայերեն)	Տեսակ (լատիներեն)	Թփեր և լիանաներ (քանակ)	Բների տրամագիծ՝ (սմ Ø)
Կապար փշոտ	<i>Capparis spinosa</i>	1	2
Ցախակեռաս բուրավետ	<i>Lonicera caprifolium</i>	1	2
Ցախակեռաս թաթարական	<i>Lonicera tatarica</i>	3	2-3
Վիստերիա չինական	<i>Wisteria sinensis</i>	1	5
Ընդհանուր		6	

ՀԱՎԵԼՎԱԾ Ը. Ծրագրի գործողությունների հետևանքով արժեքավոր բնապահպանական ընկալիչներին (ԱԲԸ) պատճառված ազդեցությունների չափը

Աղյուսակ Ը-1. Ծրագրի գործողությունների հետևանքով արժեքավոր բնապահպանական ընկալիչներին (ԱԲԸ) պատճառված ուղղակի (D) և անուղղակի (I) ազդեցություններ

Ծրագրի գործողություն	Մթնոլորտային օդի որակ			Գրունտներ, բուսածո	Մոցիալական համակարգեր			Երթևեկություն	Բուսական աշխարհ	Լանդշաֆտ և գեղագիտական տեսք
	Փոշի	Աղմուկ	Թրթռում		Հանրային ենթակառուցվածքներ	Բնակելի տներ	Ձեռնարկ ատիրակալական գործունեություններ			
Գոյություն ունեցող կառույցների ապամոնտաժում	D	D	-	-	I	I	I	I	I	D
Հողային աշխատանքներ	D	D	-	D	I	I	I	D	D	D
Լիցք	D	D	D	-	I	I	I	D	I	D
Բետոնի հետ կապված աշխատանքներ	D	D	D	-	I	I	I	D	I	I
Հաղորդողիների տեղափոխում	D	D	-	I	I	I	I	I	I	D
Ասֆալտապատում	D	D	D	-	I	I	I	D	I	D
Ջրահեռացման համակարգի կառուցում	D	D	-	-	I	I	I	D	-	D
Վարչական շենքի կառուցում	D	D	-	-	I	I	I	D	-	D
Լիցքավորման կայանի և պահեստների կառուցում	D	D	-	-	I	I	I	D	-	D

Աղյուսակ Ը-2. Ազդեցությունների ժամանակային շրջանակը

ԱԲԸ	Ազդեցության չափը	Նախագծման փուլ	Նախաշինարարական փուլ-նախապատրաստական աշխատանքներ	Շինարարության փուլ	Գործարկման փուլ	Շահագործման փուլ
Մթնոլորտային օդի որակը	Հողային աշխատանքների հետևանքով առաջացած փոշի, շահագործվող մեքենամեխանիզմների և սարքավորումների գազային արտանետումներ	Կիրառելի չէ	X	X Հիմնականում հողային աշխատանքների հետևանքով առաջացած փոշի, շահագործվող մեքենամեխանիզմների և սարքավորումների գազային արտանետումները	X	X Երթևեկության հետևանքով մասնիկների և գազի արտանետումները թույլատրելի սահմաններում են Օդի որակի բարելավում՝ պայմանավորված ԲՍԳ-ով լիցքավորվող տրանսպորտային միջոցներով
Աղմուկ	Առաջանում է մեքենամեխանիզմների և սարքավորումների շահագործման և երթևեկության ինտենսիվության մեծացման հետևանքով	Կիրառելի չէ		X	X	X Ճնշվում է աղմկապաշտպան պատի միջոցով

Նախնական գնահատման հայտ

Թրթում	Առաջանում է մեքենամեխանիզմների և սարքավորումների շահագործման և երթևեկության ինտենսիվության մեծացման հետևանքով	Կիրառելի չէ		X Հիմնականում	Հավանական չէ	X Թույլատրելի սահմաններում է
Ստորգետնյա ջրերի որակ	Վառելիքի, յուղի (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն), քսանյութերի և այլ հեղուկ նյութերի արտահոսք, ինչպես նաև նյութերի ոչ պատշաճ պահեստավորումից առաջացած թափոնների լիցքավորման ժամանակ, կամ ծանր մեքենաների շահագործման հետևանքով առաջացած այլ պատճառներով:	Կիրառելի չէ	Հավանական չէ	Հավանական չէ	Հավանական չէ	Հավանական չէ
Բուսական աշխարհ	□ հանույթի, տոփանման և բնահողի տեղափոխման պատճառով բնական միջավայրի խաթարում կամ ոչնչացում, □ բուսականության ոչնչացման, ծառերի և թփերի հատման պատճառով ցեղատեսակների կորուստ	Կիրառելի չէ	Հավանական չէ	X	X	Հավանական չէ
Գրունտներ և բուսահող	□ հողայն և լիցքի աշխատանքների արդյունքում հեռացված գրունտ և բուսահող □ գրունտի ողողաքայքայում և նստվածքագոյացում □ արտահոսքերի պատճառով գրունտի աղտոտում	Կիրառելի չէ	X	X	X	Հավանական չէ
Նյութերի աղբյուրներ	լիցքի համար նախատեսված նյութի հանույթ շրջակա միջավայրից,	Կիրառելի չէ	Հավանական չէ	X	Հավանական չէ	Հավանական չէ

Նախնական գնահատման հայտ

(քարհանքեր/ բացահանքեր)	օրինակ՝ մոտակա գյուղատնտեսական հողերից					
Սոցիալական համակարգեր (տե՛ս Ծրագծի թերթիկը ՀԱՎԵԼՎԱԾ Զ)	<input type="checkbox"/> անհանգստություն և/կամ անհարմարություն	Կիրառելի չէ	X	X	X	X
	<input type="checkbox"/> գույքին հասցվող վնաս	Կիրառելի չէ	Հավանական չէ	Հավանական չէ	Հավանական չէ	Հավանական չէ
Հաղորդողիներ	հողային աշխատանքների ընթացքում վնասելու վտանգ	Կիրառելի չէ	X	X	Հավանական չէ	Հավանական չէ
Երթևեկություն և տրանսպորտ	<input type="checkbox"/> շինարարության և շահագործման ընթացքում բեռնատար և այլ մեքենաների տեղաշարժի պատճառով երթևեկության ինտենսիվացում <input type="checkbox"/> գոյություն ունեցող ճանապարհների և հետիոտնային անցումների փակում, <input type="checkbox"/> վտանգված հանրային անվտանգություն	Կիրառելի չէ	X	X	X	X
Լանդշաֆտ և գեղագիտական տեսք	հողային աշխատանքների, նյութերի և թափոնների կուտակումների, ծառերի և այլ բուսականության հեռացման, ժամանակավոր հարմարությունների ստեղծման պատճառով առաջացած ձևափոխում	Կիրառելի չէ	X	X	X	Հավանական չէ Կանաչապատման արդյուքնում գեղագիտական տեսքի բարելավում
Հնագիտություն և մշակութային ժառանգություն	<input type="checkbox"/> գտածոների վնասում և կորուստ	Կիրառելի չէ	Հավանական չէ	Հավանական չէ	Հավանական չէ	Հավանական չէ

Աղյուսակ Ը-3. Ազդեցությունների խստությունը

ԱԲԸ	Ազդեցության մեծությունը (փոփոխության նկատմամբ զգայունությունը)	Ազդեցության տարածումը	Ազդեցության տևողությունը	Ազդեցության հաճախականությունը	Ազդեցության հավանականությունը	Շրջելիությունը / անդառնալի լինելը	Ազդեցության խստությունը (գնահատական)	Ազդեցության մակարդակը առանց մեղմացման միջոցառման ²⁶	Նկարագրություն
Մթնոլորտային օդի որակը (փոշի և արտանետվող գազեր)	4	1	4	4	4	2	Չափավոր (19)	ՑԱԾԸ	Ծրագրի իրականացման ընթացքում փոշու և գազի պարբերաբար արտանետումներ անպայման տեղի կունենան ծրագրի իրականացման վայրում և հարակից տարածքում: Գործողությունների դադարեցումը զգալիորեն կնվազեցնի փոշու և աղմուկի մակարդակը, սակայն նախաշինարարական իրավիճակը չի պահպանվի կառուցված ավտոբուսային հավաքակայանի շահագործման ինտենսիվության ավելացման պատճառով:
Աղմուկ և թրթռում	4	1	4	4	4	4	Բարձր (21)	ՄԻՋԻՆ	Ծրագրի իրականացման և շահագործման ամբողջ ընթացքում ծրագրային տարածքի և հարակից տարածքում պարբերաբար տեղի կունենա աղմուկի և թրթռման աճ: Անհրաժեշտ են ազդեցությունը մեղմացնող արդյունավետ միջոցներ:
Բուսական աշխարհ	4	1	2	2	4	3	Չափավոր (16)	ՑԱԾԸ	Տեղամասի ներսում մաքրման աշխատանքների ընթացքում անշուշտ տեղի կունենա տեղական և տվորական բնական միջավայրի կորուստ: Մաքրված բուսականությունը կվերականգնվի նոր ծառերի և թփերի տնկմամբ:
Գրունտ, ներառյալ բուսահող	3	1	4	4	4	2	Չափավոր (18)		Գրունտների և բուսահողի խաթարում և/կամ աղտոտում միայն ծրագրի տարածքում: Սա տեղի է ունենալու հողային աշխատանքների

²⁶Ազդեցության մակարդակը առանց մեղմացման միջոցառման որոշվել է Մխեմա Զ-2-ի հիման վրա:

Նախնական գնահատման հայտ

								ՑԱԾԲ	իրականացման փուլում, իսկ աղտոտման առանց մեղմացնող միջոցառումների մշտական գործընթաց է: Ազդեցությունը հիմնականում կվերացվի հողի վերին շերտի պահպանմամբ և մակերևույթի ասֆալտապատմամբ:
Նյութերի աղբյուրներ, (հանքեր/բաց ահանքեր)	2	2	2	3	1	3	Թույլ (13)	ՑԱԾԲ	Ազդեցության հավանականությունը շատ ցածր է, քանի որ նոր հանքերի բացում չի նախատեսվում, իսկ հանույթն արգելվում է ԲԿՊ-ով: Մրցույթի հաղթող կապալառուն շինարարական նյութը գնելու է գրանցված աղբյուրներից:
Հիդրոերկրաբանություն (գրունտային ջրերի որակ)	1	1	4	4	1	1	Աննշան (10)	Ոչ գգալի	Ըստ երկրաբանական հետազոտության՝ ներթափանցման հավանականությունը ստորգետնյա ջրերի մեջ շատ ցածր է: Ավելին հավաքակայանի մակերևույթը կասֆալտապատվի և ազդեցությունն աննշան կլինի:
Սոցիալական համակարգեր	4	3	3	4	4	4	Բարձր (22)	ՄԻՋԻՆ	Մա ներառում է տեղի՝ ազդեցության ենթակա անձանց առողջությունը և կենսակերպը, մասնավոր համայնքային սեփականությունը, ձեռնարկատիրական գործունեությունները: ԲԿՊ-ով նախատեսվելու են խիստ և արդյունավետ մեղմացնող միջոցառումներ:
Ազդեցությունը հաղորդողի ներքի վրա	3	2	4	3	2	2	Չափավոր (16)	ՑԱԾԲ	Ծրագրի քաղաքային հատվածում տեղակայված հաղորդողիների վնասումը հավանական է, քանի որ ստորգետնյա հաղորդողիների հետազոտություն չի իրականացվել: Մյուս կողմից՝ նմանատիպ ազդեցություն չի կանխատեսվում, թեև որոշակի հավանականություն, այնուամենայնիվ, առկա է: Ազդեցությունը կարող է ամբողջությամբ վերացվել վնասված հաղորդողիների վերանորոգմամբ կամ տեղափոխմամբ:
Երթևեկություն և տրանսպորտ	3	2	4	4	4	3	Չափավոր (20)	ՄԻՋԻՆ	Շինարարական աշխատանքներով պայմանավորված և ավտոբուսային հավաքակայանի շահագործման ընթացքում անշուշտ տեղի կունենան հանրային երթևեկության խաթարումներ: Ազդեցությունը

Նախնական գնահատման հայտ

									կտարածվի նաև ծրագրային տարածքից դուրս, քանի որ կմեծանա քաղաքային ճանապարհների երթևեկը: Ազդեցությունը մասամբ շրջելի է, քանի որ շինարարության փուլի տրանսպորտային միջոցների երթևեկությունը կդադարեցվի, սակայն ճանապարհային երթևեկության ինտենսիվությունը մշտապես կպահպանվի՝ ավտոբուսային հավաքակայանի շահագործման հետևանքով:
Լանդշաֆտ և գեղագիտական տեսք	1	1	4	4	4	2	Չափավոր (16)	ՑԱԾԲ	Ազդեցության գոտին սահմանափակվում է ծրագրային տարածքով: Ծրագրի իրականացման ընթացքում և դրանից հետո անշուշտ տեղի կունենա լանդշաֆտի ձևափոխում: Ազդեցությունը միայն մասամբ կվերացվի, քանի որ նախաշինարարական իրավիճակը հնարավոր չէ վերականգնել:
Հնագիտական և մշակութային ժառանգություն (գտածո)	2	1	2	2	1	1	Աննշան (9)	Ոչ գգալի	Թեև ազդեցությունը հավանական չէ, առկա է գտածոների հայտնաբերման փոքր ռիսկ: Հետևաբար, ԲԿՊ-ով կնախատեսվի համապատասխան ընթացակարգ:

Աղյուսակ Ը-4. Նախքան մեղմացնող միջոցառումների իրականացումն ու դրանից հետո հասցված ազդեցության նշանակությունը

ԱԲԸ	Ազդեցության խստություն (գնահատական)	Մակարդակը նախքան մեղմացնող միջոցառումների իրականացումը	Մեղմացնող միջոցառումների տեսակը	Նստվածքային բացասական ազդեցություն	Ազդեցության նշանակությունը մեղմացնող միջոցառումներից հետո (Ն)/Ոչ նշանակալի (ՈՆ)
Աղմուկ թրթռում և	Չափավոր (17)	ՑԱԾԸ	<p><u>Նվազեցում</u></p> <p>Շինարարական փուլում բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ԲԿՊ-ով նախատեսված կանոնավոր մեղմացնող միջոցառումներ</p> <p>Քաղաքային տրանսպորտի բարելավված համակարգ՝ ԲՄԳ-ով լիցքավորվող ավտոբուսներով, ինչպես նաև ավտոբուսային հավաքակայանի կանաչապատման նախագիծը կնպաստի շահագործման փուլում ջերմոցային գազերի ավելի քիչ արտանետմանը</p> <p>Մեղմացնող միջոցառման տեսակը որոշվում է օդի որակի հետազոտությամբ</p>	արտանետվող սեղմված գազեր	ՈՆ

Նախնական գնահատման հայտ

Աղմուկ և թրթռում	Բարձր (21)	ՄԻՋԻՆ	<p><u>Նվազեցում</u></p> <p>Բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ԲԿՊ-ով նախատեսված հատուկ մեղմացնող միջոցառումներ շինարարության և հետշինարարական փուլում:</p> <p>Մեղմացնող միջոցառման տեսակը որոշվում է Ձայնային և թրթռման հետազոտության միջոցով</p>	Որոշ ֆոնային աղմուկ՝ ճնշված աղմկապաշտպան պատնեշների միջոցով՝ 2,5 մ բարձրությամբ քարե պատի և 2-3 շարք ծառերի տեսքով	ՈՆ
Բուսական աշխարհ	Չափավոր (16)	ՑԱԾԲ	<p><u>Հակակշռում</u></p> <p>Հատված ծառերի և թփերի փոխարեն նորերի տնկում և</p> <p>Բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ԲԿՊ-ով մեղմացնող միջոցառումների տեսակի սահմանում՝ Բուսական աշխարհի հետազոտության եզրակացությունների հիման վրա</p>	սովորական տեսակների բնական միջավայրի կորուստ	ՈՆ
Գրունտ, այդ թվում՝ բուսահող	Չափավոր (18)	ՑԱԾԲ	<p><u>Նվազեցում</u></p> <p>Բուսահողի պահպանում և կանաչապատման նպատակով վերաօգտագործում</p>	ոչ մի ազդեցություն	ՈՆ

Նախնական գնահատման հայտ

			<p>ԲԿՊ-ով նախատեսված կանոնավոր մեղմացնող միջոցառումներ՝ ուղղված աղտոտման նվազեցմանը</p> <p>Ասֆալտապատ ծածկը և հեղուկ նյութերի պահպանման վերաբերյալ առաջարկությունները կբացառեն շահագործման ընթացքում աղտոտումը</p>		
Նյութերի ստացման աղբյուրներ (հանքեր/բացահանքեր)	Թույլ (13)	ՑԱԾԲ	<p><u>Կանխարգելիչ</u></p> <p>Արգելվում է չգրանցված տեղամասերից նյութի ստացումը</p>	ոչ մի ազդեցություն	ՈՆ
Հիդրոերկրաբանություն (ստորգետնյա ջրի որակ)	Աննշան (10)	ՈՉ ՆՇԱՆԱԿԱԼ Ի	<p><u>Կանխարգելիչ</u></p> <p>Թեև ազդեցությունը հավանական չէ, սակայն առկա է որոշակի փոքր ռիսկ, ուստի համապատասխան ընթացակարգը նախատեսվելու է ԲԿՊ-ում:</p> <p>ԲԿՊ-ով նախատեսված աղտոտման նվազեցմանն ուղղված կանոնավոր մեղմացնող միջոցառումներ</p> <p>Ասֆալտապատ ծածկը և հեղուկ նյութերի պահեստավորման գործառնական ձեռնարկը</p>	ոչ մի ազդեցություն	ՈՆ

Նախնական գնահատման հայտ

			կբացառեն աղտոտումը շահագործման ընթացքում		
Սոցիալական համակարգեր	Բարձր (22)	ՄԻՋԻՆ	<u>Հակագրում և նվազեցում</u> Հատուկ միջոցառումներ ԲԿՊ-ում՝ շինարարության և շահագործման ընթացքում ԱԵԱ-ների, համայնքային և մասնավոր սեփականության պաշտպանության համար	ոչ մի ազդեցություն	ՈՆ
Հաղորդուղիների վրա ազդեցություն	Չափավոր (16)	ՄԻՋԻՆ	Հակակշռում	ոչ մի ազդեցություն	ՈՆ
Երթևեկություն և տրանսպորտ	Չափավոր (20)	ՄԻՋԻՆ	<u>Նվազեցում</u>	բարելավված երթևեկություն	ՈՆ
Լանդշաֆտ և գեղագիտական տեսք	Չափավոր (16)	ՄԻՋԻՆ	Հակակշռում Ավտոբուսային հավաքակայանի տարածքը կկանաչապատվի: Կանաչապատման նախագիծը ներառված է նախագծային փաթեթում:	բարելավված լանդշաֆտ	ՈՆ
Մշակութային ժառանգություն և հնագիտություն	Աննշան (9)	ՈՉ ՆՇԱՆԱԿԱԼ Ի	<u>Նվազեցում</u> Թեև ազդեցությունը հավանական չէ, բայց առկա է գտածոյի հայտնաբերման փոքր ռիսկ, ուստի համապատասխան ընթացակարգը նախատեսվելու է ԲԿՊ-ում:	ոչ մի ազդեցություն	ՈՆ

Նախնական գնահատման հայտ

ՀԱՎԵԼՎԱԾ Թ. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ և ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-1. Ներածական հանդիպում Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարության հետ

2021 թվականի դեկտեմբերի 14-ին, ժամը՝ 10:00-ին Նոր Նորք վարչական շրջանի վարչական շենքում տեղի ունեցավ Ծրագրի ինժեներական և բնապահպանական թիմի ներածական համատեղ հանդիպումը Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար պարոն Սուրեն Ղամբարյանի հետ: Հանդիպմանը ներկա էին՝

Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար պրն. Սուրեն Ղամբարյան

Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բանի պետ պրն. Հայկ Մարտիրոսյան
«ԷԳԻՄ Ինթերնեյշնլ» ընկերության ծրագրի համակարգող պրն. Տիգրան Մամիկոնյան

«ԷԳԻՄ Ինթերնեյշնլ» ընկերության բնապահպանական հարցերով խորհրդատու տկն. Էդիտա Վարդգեսյան

«ՍՈՒՖԵՏ» ՍՊԸ-ի նախագծային ինժեներ պրն. Անդրանիկ Օբազյան



Նկար 1. 2021 թվականի դեկտեմբերի 14-ին Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարության հետ տեղի ունեցած ներածական հանդիպում

1. Ներածական հանդիպման ընթացքում նախագծային թիմը ներկայացրեց գծագրեր և Ծրագրի տեխնոլոգիական ու ինժեներական մասով այլ մանրամասներ, տեղեկացրեց բնապահպանական ազդեցության գնահատման գործընթացի առաջընթացի և մեղմացնող միջոցառումների պլանավորման մասին:
2. Ազդակիր շրջանի ղեկավարը տեղեկացվել է նաև այն մասին, որ Ծրագրի նախաձեռնողները հանրային լսումներ են կազմակերպում ՀՀ օրենսդրության և ԱԶԲ անվտանգության

Նախնական գնահատման հայտ

քաղաքականության համաձայն: Նրանց խնդրեցին աջակցել և նպաստել այս գործընթացին՝ ապահովելու հանրային մասնակցությունը և հանրային խորհրդակցությունը դարձնելով արդյունավետ և բովանդակալից: Վարչական շրջանի ներկայացուցիչը խոստացավ ուսումնասիրել նախագծային գծագրերը և օժանդակել ծրագրի հետ կապված տեղեկատվության հրապարակմանը և տարածմանը՝ իրենց կայքէջում հանրային լուսմների վերաբերյալ գովազդների տեղադրմամբ և հանրային տեսանելի վայրերում դրանց հրապարակմամբ:

3. Գովազդի հետևյալ տեքստը ներկայացվել է ազդակիր համայնքի վարչական ղեկավարներին՝ ազդեցության ենթակա անձանց և այլ շահագրգիռ անձանց շրջանում դրանց հրապարակման և տարածման համար.



ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Երևանի քաղաքային կայուն զարգացման ծրագրի

ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՒՄԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ

ՀՀ Կառավարությունը և Երևանի քաղաքապետարանը իրականացնում են Երևան քաղաքի երթևեկության և տրանսպորտային համակարգի բարելավման ծրագիր, որի շրջանակներում կիրականացվի Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանում լիցքավորման և լվացման կայանների կառուցումը և ավտոկայանատեղիի վերակառուցումը:

Բոլոր շահագրգիռ կազմակերպություններին և անձանց հրավիրում ենք մասնակցելու հանրային քննարկմանը, որի ընթացքում ծրագրի իրականացման ինժեներատեխնիկական և բնապահպանական թիմի կողմից կներկայացվեն մանրամասն տեղեկություններ ծրագրի նախագծի, շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և դրանց կանխարգելման միջոցառումների վերաբերյալ: Քննարկումների միջոցառման ընթացքում դուք հնարավորություն կունենաք ծրագիրն իրականացնող թիմի պատասխանատուների հետ քննարկել Ձեզ հուզող հարցերը, փոխանակել Ձեր կարծիքները, այդ թվում՝ ծրագրի արդյունքում բնապահպանական, սոցիալական, անվտանգության և առողջության վրա հնարավոր ազդեցությունների հետ կապված հարցեր, ինչպես նաև հանրային քննարկումից հետո 10 օրյա ժամկետում կարող եք Ձեր դիտողություններն ու առաջարկությունները ներկայացնել գրավոր տեսքով: Հանրային քննարկումը տեղի կունենա

Ժամը՝ 14:00-ին

ուրբաթ, 21 հունվարի 2022 թ-ի

Վայրը՝ Նոր Նորք վարչական շրջանի թաղապետարանի շենքում,

5-րդ հարկ, 506 սենյակ

Հասցե՝ ք. Երևան, Գայի պողոտա, 19

Հեռ՝ +(374 11) 518 688

Հարցերի դեպքում դիմել՝ Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր

Երևանի քաղաքապետարանի "Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակի" (ԵԿՆ ՕԻԳ) կազմում ստեղծված աշխատանքային խումբ

ք. Երևան, Փ. Բուզանդի փ., 1/3, 5-րդ հարկ, Հեռ՝ 374 (10) 520973, (10) 5565487, Էլ հասցե armen.bodoyan@yerevan.am

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-2.Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարին ուղղված պաշտոնական ծանուցումը



ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հասցե՝ ք. Երևան, Ջեյմս Բրայս 19/1
Հեռախոս՝ +374 11 584404
Էլ. փոստ՝ richard.thadani@egis.fr
Ծրագրի No՝ 130115L

Ում՝ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար պարոն Մուրեն Դամբարյանին

Պատճենը՝ «ԵՎՆ ՕԻԳ» -ի ծրագրի ղեկավար տիկին Նորա Մարտիրոսյանին
«ԵՎՆ ՕԻԳ» -ի տեխնիկական մասնագետ պարոն Վարդան Կարապետյանին

Գրություն՝ ARM/130115L/2022/749

12-ը հունվարի, 2022թ.

Թեևս՝ Հանրային քննարկումների կազմակերպում

Կոնտակտային անձ՝
Հեռախոս՝
Էլ. փոստ՝

Էդիտա Վարդգեսյան
+374 93 606017
editavard@gmail.com

Նախորդող գրություններ՝

առկա չեն

Հարգելի՛ պարոն Դամբարյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ կառավարությունը և Երևանի քաղաքապետարանը Երևան քաղաքի տրանսպորտային համակարգը բարելավելու նպատակով պլանավորում են իրականացնել «Երևանի ավտոբուսային հավաքակայանների կառուցման ծրագիրը», որի շրջանակներում նախատեսվում է Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանում լիցքավորման և լվացման կայանների կառուցում և ավտոկայանատեղիի վերակառուցում:

Ծրագրի վերաբերյալ հանրության իրազեկումն ու մասնակցությունն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանը՝ ի դեմս «Երևանի կառուցապատման նկատմամբ ծրագրի իրականացման գրասենյակի» (ԵՎՆ ՕԻԳ) կազմում ստեղծված աշխատանքային խմբի, կազմակերպում և հանրային քննարկումներ, որտեղ ծրագրի ուղղակիոր կողմնակիցությունը և հանրությունը կապող են առավել մանրամասն տեղեկություններ ստանալ նշված ծրագրի նախագծի և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ, փոխանակել կարծիքներ և քննարկել հուզող հարցերը ինժեներատեխնիկական և բնապահպանական թիմի հետ:

Հայցում ենք ձեր աջակցությունը Նոր Նորք վարչական շրջանում ?077թ -ի հունվարի 21-ին, ժ. 14:00-ին կայանալիք հանրային քննարկումներին ծրագրի ազդակիր կազմակերպությունների, գործող բիզնեսների, բնակիչների և այլ շահագրգիռ կողմերի ներկայությունն ապահովելու հարցում:

Egis International
15, avenue du Centre - CS 20538 - Guyancourt - 78286 Saint-Quentin-en-Yvelines Cedex - France
Tél. +33 1 39 41 40 00 - Fax +33 1 39 41 57 57 - www.egis.fr - S.A.S au capital de 14 855 100 Euros
SIRET 582 132 551 00174 - SIREN 582 132 551 - R.C.S Versailles - N° identification intracommunautaire FR 62 582 132 551 - Code APE 7112B



Նախնական գնահատման հայտ



Մույն նպատակով խնդրում ենք.

- Ապահովել միջոցառմանը Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի կամ թաղապետարանի ներկայացուցչի, ինչպես նաև Զրվեժի ավտոբուսների հավաքակայանի ներկայացուցչի մասնակցությունը,
- հանրային քննարկումների մասին հայտարարությունը փակցնել թաղապետարանի հայտարարությունների ցուցատախտակում, ազդակիր թաղամասում, ինչպես նաև այլ հանրային մարդաշատ վայրերում,
- տեղադրել հանրային քննարկումների մասին հայտարարությունը թաղապետարանի վեբկայքում և այլ ինտերնետային հանրային հարթակներում:

Նաև տեղեկացնում ենք, որ կարող եք ներկայացնել Ձեր դիտողություններն ու առաջարկությունները գրավոր տեսքով քննարկումից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Առդիր՝ հայտարարության տեքստը, 1 (մեկ) էջ:

Հարգանքով,



Ռիչարդ Տարգանի
«Էգիս Բնօրենեյշնլ» ընկերության
հայաստանյան մասնաճյուղի տնօրեն

«Երևանի ավտոբուս» ՍՊԸ-ի տնօրենին ուղղված ծանուցումը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՎԱԿԱՆ ՍՏՐԱՆՈՒՄ

Հասցե՝ ք. Երևան, Ջեյմս Բրայս 19/1
Հեռախոս՝ + 374 11 584404
Էլ. փոստ՝ richard.thadani@egis.fr
Օրագրի No՝ 130115L

Ում՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրեն
պարոն Էլբակ Թարփոշյանին

Պատճենը՝ «ԵԿՆ ՕԻԳ» -ի ծրագրի ղեկավար
տիկին Նորա Մարտիրոսյանին
«ԵԿՆ ՕԻԳ» -ի
տեխնիկական մասնագետ
պարոն Վարդան Կարապետյանին

Գրություն՝ ARM/130115L/2022/748

12-ը հունվարի, 2022թ.

Թեմա՝ Հանրային քննարկումների կազմակերպում

Կոնտակտային անձ՝
Հեռախոս՝
Էլ. փոստ՝

Էդիտա Վարդգեսյան
+374 93 606017
editavard@gmail.com

Նախորդող գրություններ՝

անկա չեն

Հարգելի՛ պարոն Թարփոշյան,

Տեղեկացնում եմք Ձեզ, որ ՀՀ կառավարությունը և Երևանի քաղաքապետարանը Երևան քաղաքի տրանսպորտային համակարգը բարելավելու նպատակով պլանավորում են իրականացնել «Երևանի ավտոբուսային հավաքակալայանների կառուցման ծրագիրը», որի շրջանակներում նախատեսվում է Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակալայանում լիցքավորման և լվացման կայանների կառուցում և ավտոկայանատեղիի վերակառուցում:

Օրագրի վերաբերյալ հանրության իրազեկումն ու մասնակցությունն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանը ի դեմս «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակի» (ԵԿՆ ՕԻԳ) կազմում ստեղծված աշխատանքային խմբի, կազմակերպում է հանրային քննարկումներ, որտեղ ծրագրի ազդակիր կազմակերպությունը և հանրությունը կարող են առավել մանրամասն տեղեկություններ ստանալ նշված ծրագրի նախագծի և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ, փոխանակել կարծիքներ և քննարկել նույնպիսի կարևոր հարցերի լուծման համար:

Հայցում եմք Ձեր աջակցությունը Նոր Նորք վարչական շրջանում 2022թ.-ի հունվարի 21-ին, ժ. 14:00-ին կայանալիք հանրային քննարկումներին Ձեր կազմակերպության, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի ներկայությունն ապահովելու հարցում:

Ապրուսյան Վարդան Թարփոշյանի Ա.Մ.Կարճալ
12.01.22թ.

Egis International
15, avenue du Centre - CS 20538 - Guyancourt - 78286 Saint-Quentin-en-Yvelines Cedex - France
Tél. +33 1 39 41 40 00 - Fax +33 1 39 41 57 57 - www.egis.fr - S.A.S au capital de 14 855 100 Euros
SIRET 582 132 551 00174 - SIREN 582 132 551 - R.C.S Versailles - N° identification intracommunautaire FR 62 582 132 551 - Code APE 7112B



Նախնական գնահատման հայտ




Սույն նպատակով խնդրում ենք.

- ապահովել միջոցառմանը «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի կամ կազմակերպության այլ ներկայացուցչի մասնակցությունը,
- հանրային քննարկումների մասին հայտարարությունը փակցնել Ձեր կազմակերպության հայտարարությունների ցուցատախտակում, ազդակիր թաղամասում, ինչպես նաև այլ հանրային մարդաշատ վայրերում,
- տեղադրել հանրային քննարկումների մասին հայտարարությունը կազմակերպության վեբկայքում և այլ ինտերնետային հանրային հարթակներում:

Նաև տեղեկացնում ենք, որ կարող էք ներկայացնել Ձեր դիտողություններն ու առաջարկությունները գրավոր տեսքով քննարկումից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Առդիր՝ հայտարարության տեքստը, 1 (մեկ) էջ:

Հարգանքով,




Ռիչարդ Տադանի
«Էգիս Ինթերնեյշնլ» ընկերության
հայաստանյան մասնաճյուղի տնօրեն

Նախնական գնահատման հայտ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-3. 2021թ.-ի հունվարի 21-ին կայացած հանրային քննարկման մասին հաշվետվությունը

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-3-1. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022 թ.-ի հունվարի 11-ի համարում լույս տեսած հանրային քննարկման մասին հայտարարությունը

Հայաստան Հանրապետություն **ԷԶ 6**
11 ՀՈՒՆՎԱՐ 2022, ԵՐԵՎԱՆ


ՀԱՌՎԱԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Երևանի քաղաքային կառուցվածքային ենթակառուցվածքի ծրագրի իրականացման նպատակով ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՎԱՅՄԱՍՏԱՆԱԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ Երկրագործական վրաստանի մասնաճյուղի կողմից

ՀՀ Կառավարությանը և Երևանի քաղաքապետարանը իրականացնում են Երևան քաղաքի էքստենսիվային և սրբապատկերային համակարգի բարելավման կրթագործ, որի շրջանակներում կիրականացվի Երևան քաղաքում Ջրվեժի գրոթոյան ունեցող ագրոպրոյեկտի կառուցվածքային լիցենզիայի և ավտոկադաստրիի վերակառուցումը:

Բացը շահագրգիռ կազմակերպություններին և անհատիկ անհատներին կարգադրվում էր քննարկմանը, որի ընթացքում ծրագրի իրականացման ինտենսիվացման և յուսակապակցման թիմի կողմից կենտրոնացվեն մանրամասն տեղեկություններ ծրագրի նախագծի, շրջակա միջավայրի վրա հետազոտող ազդեցությունների և դրանց կանխարգելման միջոցառումների վերաբերյալ: Քննարկումների միջոցառման ընթացքում դուք հետազոտության կառուցվածքային ծրագրի իրականացման թիմի պատասխանատուներին ներկայացնելու համար կարող եք հարցեր, փոխանակել Ձեր կարծիքները, աղ թվում ծրագրի արդյունքում ընտանիքային, ազդեցության, անվտանգության և առողջության վրա հետազոտող ազդեցությունների ներկայացնելու համար, ինչպես նաև հանրային քննարկումից հետո 7 օրյա ժամկետում կարող եք Ձեր զիտություններն ու առաջարկությունները ներկայացնել գրավոր տեսքով:


Հանրային քննարկմանը տեղի կունենա
Ժամը՝ 14:00-ին
ուրբաթ, 21 հունվարի 2022 թ-ի
Վայրը՝ Կար Կար վարչական շրջանի քաղաքապետարանի շենքում,
5-րդ հարկ. 506 սենյակ

Հասցե՝ ք. Երևան, Գալի պողոտա, 19
Հեռ.՝ +(374 11) 518 688
Հարցերի դեպքում դիմել
Քաղաքային կառուցվածքային ենթակառուցվածքի ծրագրի
Երևանի քաղաքապետարանի "Երևանի կառուցվածքային ենթակառուցվածքի ծրագրի իրականացման գրասենյակի"
(ԵՐԿ ԾԳԿ) կազմում ստեղծված աշխատանքային խումբ
ք. Երևան, Փ. Բուզանիի փ., 1/3, 5-րդ հարկ, Հեռ. 374 (10) 520973, (10) 565487, էլ փոստի արտ. bodoyan@yerevan.am

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-3-2. Ազդեցության ենթակա բնակչության շրջանում տեղեկատվության տարածում


Առաջին հանրային քննարկումն անցկացվել է 2022 թվականի հունվարի 21-ին: Քննարկման նպատակն էր ապահովել «Հանրային քննարկումների անցկացման և տեղեկատվության հրապարակման մասին» ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայտարարագրի (2009) և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (2014) Գլուխ 6-ի Հոդված 26-ի և «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության N 1325-Ն որոշման պահանջները (19.11.2014):

1. Հանրային քննարկումների իրականացման մասին գովազդային ծանուցումը փակցվել է Հայաստանի Հանրապետություն օրաթերթի 2021 թվականի հունվարի 11-ի հրատարակման մեջ (տես Ենթահավելված Թ 3-1, կցված է նաև թղթային տարբերակով)
2. Հայտարարությունները փակցվել են հանրային տեսանելի վայրերում:



3. Հրավերը հանձնվել և փակցվել է առանցքային շահառու Ջրվեժի գործող ավտոբուսային հավաքակայանում:


Նախնական գնահատման հայտ



4. Հրավերները տրվել են Շենգավիթ վրաչական շրջանի Թևոսյան և Հովհաննիսյան փողոցների տարածքում ազդակիր բնակիչներին և ձեռնարկատիրական գործունեությունների ներկայացուցիչներին:



Նախնական գնահատման հայտ



5. Հայտարարությունը և հրավերները Երևան Օրիուս կենտրոնի ցանցի միջոցով բաժանվել են անմիջապես ՀԿ-ներին:
6. Հանրային քննարկումը տեղի է ունեցել Նոր Նորք վարչական շրջանում և ղեկավարվել պրն. Գևորգ Նավասարդյանի՝ Երևանի քաղաքապետարանի բնապահպանական բաժնի ղեկավարի կողմից՝ որպես ազդակիր համայնքի ներկայացուցիչ: Հանրային քննարկման արձանագրությունը, այդ թվում՝ մասնակիցների ցուցակը և մասնակիցների կողմից բարձրացված խնդիրների և հուզող հարցերի մասին ամբողջական տեղեկատվությունը պատշաճ կերպով փաստաթղթավորվել է և տեսաձայնագրության հետ միասին կցվել որպես ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-3-3:

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-3-3. 2022թ.-ի հունվարի 21-ին կայացած հանրային քննարկման արձանագրությունը

Նախնական գնահատման հայտ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևանի քաղաքային կայուն զարգացման ծրագիր

ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՒՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանում լիցքավորման և լվացման կայանների կառուցման և ավտոկայանատեղիի վերակառուցման

շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ

Ծրագրի համար

Ծրագրի վերնագիր Երևանի քաղաքային կայուն զարգացման ծրագիր

Առարկա

Երևան քաղաքում Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանում լիցքավորման և լվացման կայանների կառուցման և ավտոկայանատեղիի վերակառուցման նախագծի և շրջակա միջավայրի հնարավոր ազդեցությունների քննարկում

Օրը/ ժամը` 21 հունվարի 2022 թ. / 14:00- 15:30

Վայրը` Նոր Նորք վարչական շրջանի թաղապետարանի շենք,
5-րդ հարկ, դահլիճ № 506

Հասցե` ք. Երևան, Գայի պողոտա 19

Մասնակցում էին

1. Գևորգ Նավասարդյան, Երևանի Քաղաքապետարան, աշխատակազմի բնապահպանության վարչության պետի տեղակալ
2. Արմեն Բողոյան, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր Տրանշ 2, բնապահպանության մասնագետ
3. Նորայր Զատիկյան Նոր Նորք վարչական շրջանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ
4. Ռուբեն Ղուկասյան, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ, Ջրվեժի ավտոբուսների հավաքակայանի տնօրենի տեղակալ
5. Տիգրան Մամիկոնյան, EGIS International խորհրդատվական կազմակերպություն, ծրագրի համակարգող,

Նախնական գնահատման հայտ

4. Էդիտա Վարդգեսյան, EGIS International խորհրդատվական կազմակերպություն, ծրագրի բնապահպանության խորհրդատու,
5. Անդրանիկ Օբազյան ՍՈՒՖԵՏ ՄՊԸ նախագծային կազմակերպություն, ճարտարապետ
6. Տիգրան Հակոբյան, ՍՈՒՖԵՏ ՄՊԸ նախագծային կազմակերպություն, ճարտարապետ
7. Աշոտ Հարությունյան ՍՈՒՖԵՏ ՄՊԸ նախագծային կազմակերպություն, ինժեներ- նախագծող
8. այլ մասնակիցներ ընդհանուր ցուցակը տես Հավելված 1

Օրինակներ՝ Արձանագրության բնօրինակները ներկայացված են

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն Շրջակա միջավայրի գնահատման փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ-ին

Երևանի քաղաքապետարանին

Երևանի Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի գրասենյակին

Ասիական զարգացման բանկին

EGIS International խորհրդատվական կազմակերպությանը

Հավելվածներ՝ Մասնակիցների ցուցակը

Հայաստանի Հանրապետություն օրաթերթում հայտարարությունը

Լուսանկարներ

Տեսագրությունը և ձայնագրությունը պարունակող էլեկտրոնային կրիչը

Օրակարգը՝ Ծրագրի ընդհանուր քննարկում, նախագծի ներկայացում

բնապահպանական և սոցիալական բաղադրիչների ներկայացում

Բացման խոսքը

Հանրային քննարկման միջոցառումը ողջույնի խոսքով բացեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի տեղակալ՝ պարոն Գևորգ Նավասարդյանը: Նա տեղեկացրեց, որ ՀՀ Կառավարությունը և Երևանի քաղաքապետարանիը նախատեսում են իրականացնել Երևան քաղաքի Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանում լիցքավորման և լվացման կայանների կառուցման և ավտոկայանատեղիի վերակառուցման ծրագիրը: Սույն քննարկման միջոցառումը նվիրված է նախագծի՝ այդ թվում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների ներկայացմանը: Նա նշեց, որ հանդիպումը կազմակերպված է Երևանի քաղաքապետարանի կողմից, հանդիպման մասին հրավերը տեղադրված է ԵՔ պաշտոնական կայքում, և խոսքը փոխանցեց Երևանի քաղաքապետարանի կազմում ստեղծված «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակի» (ԵԿՆ ԾԻԳ) աշխատանքային խումբը ներկայացնող բնապահպանության մասնագետ Արմեն Բողոյանին (ԱԲ):

Արմեն Բողոյանը տեղեկացրեց, որ Ջրվեժի ավտոբուսների հավաքակայանի վերակառուցման նախագծային աշխատանքները, այդ թվում՝ շրջակա միջավայրի վրա գնահատումն իրականացվել է EGIS International խորհրդատվական կազմակերպության կողմից: Ուսումնասիրվել են շրջակա միջավայրի վրա ազդեցությունների բոլոր փուլերը՝ նախաշինարարական, շինարարական և հետշինարարական և ներկայումս պատրաստվում է ՇՄԱԳ հաշվետվությունը, որը նախնական հայտով ներկայացվելու է Շրջակա միջավայրի նախարարություն՝ փորձաքննական եզրակացություն ստանալու նպատակով: Հաշվի առնելով, որ կառուցվելու է սեղմված գազի լցակայան, ծրագիրը որակավորվել է որպես բնապահպանական Բ կատեգորիա, որը ենթադրում է մի շարք հանրային լուսմների իրականացում. ներկա հանրային քննարկումն այդ շարքում առաջինն է, որին հետևելու են ևս 3 լուսմներ:

Այնուհետև Արմեն Բողոյանը խոսքը փոխանցեց EGIS International խորհրդատվական կազմակերպության բնապահպանության խորհրդատու Էդիտա Վարդգեսյանին:

Էդիտա Վարդգեսյանը հակիրճ ներկայացրեց հանդիպման օրակարգը նշելով, որ սկզբից կներկայացվի ծրագրի նախագիծը, որից հետո կներկայացվեն շրջակա միջավայրի վրա գնահատված հնարավոր ազդեցությունները, այնուհետև կտրվի ժամանակ հարցուպատասխանի համար, կլսվեն նախագծի և ՇՄԱԳ-ի վերաբերյալ բարձրացվող հարցերը, որոնց կտրվեն պատասխաններ:

Նա իր հերթին տեղեկացրեց, որ ծրագիրն իրականացվելու է Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ, որը ենթադրում է, որ նախագծային աշխատանքներում և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ժամանակ հաշվի են առնվել ինչպես Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այնպես էլ ԱԶԲ-ի քաղաքականության պահանջները:

Էդիտա Վարդգեսյանը տեղեկացրեց, որ Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման նախագիծն իրականացվելու է 2 փուլով, նախագծային աշխատանքները կատարվել են հայկական «ՍՈՆԵՏ» կազմակերպության կողմից, ներկա են գտնվում անմիջական նախագծումն իրականացնող ինժեներները, որոնք կներկայանցնեն

Նախնական գնահատման հայտ

նախագիծը և առաջին փուլի աշխատանքները: Նա նաև տեղեկացրեց, որ ՇՄԱԳ-ի վրա աշխատել է ծրագրի բնապահպանական թիմը՝ ի դեմս EGIS International խորհրդատվական կազմակերպության և ԾԻԳ-ի բնապահպանության մասնագետի, ինչպես նաև ներգրավվել են առանձին բնապահպանական ոլորտների մասնագետներ, ինչպիսիք են՝ բուսաբաններ, երկրաբաններ, օդի որակի և աղմուկի չափագրումների մասնագիտացված թիմը և այլն:

Մաս 1. Ծրագրի ինժինեռատեխնիկական նախագծային մասի ներկայացում:

Այնուհետև խոսքը տրվեց նախագծող կազմակերպության ճարտարապետ Անդրանիկ Օբազյանին, ով գծագրերի միջոցով բացատրեց նախագիծը: Նա նախ ներկայացրեց Ջրվեժի գործող հավաքակայանի կառույցների ներկա վիճակը, այնուհետև ցույց տվեց դրանցից քանդման ենթակաները և թվարկեց վերակառուցման ծրագրի մեջ ընդգրկված աշխատանքներն ու կառույցները: Նա ցուցադրեց նոր կառուցվող սեղմված գազի արագ լիցքավորման համար նախատեսված լցակայանի, դիզելային լցակայանի, ավտոբուսների լվացման կայանի, ինչպես նաև այլ ստեղծվող կառույցների և դրանց սպասարկման համար նախատեսված կառույցների, այդ թվում՝ նոր բացվող մուտքի, ենթակայանի, ջրամբարի տեղադիրքը: Նա նշեց, որ առաջին փուլում հավաքակայանի կենտրոնական մասում գտնվող կառույցները հիմնականում ապամոնտաժվելու են, քանի որ այդ տարածքն անհրաժեշտ է ավտոբուսների կայանատեղիի համար, պահպանվելու են միայն մի քանի տեխասպասարկման խցիկներ՝ առկա ավտոբուսների սպասարկումն ապահովելու համար: Դրանք կքանդվեն երկրորդ փուլում: Առկա կառույցներից երկու փուլերի արդյունքում պահպանվելու է միայն վարչական մասնաշենքը և երկրորդ փուլում կառուցվելու է տեխասպասարկման նոր մասնաշենքը:

Անդրանիկ Օբազյանը նշեց, որ քանի որ հավաքակայանի տարածքի աջ և ձախ մասերի միջև կա բարձրության տարբերություն, ապա հատման հատվածում նախատեսված է 5%-ոց թեքահարթակ, որը նաև հաշմանդամներին կտա ազատ տեղաշարժման հնարավորություն: Նա տեղեկացրեց, որ նախատեսվում են նաև սպասարկման կետեր և ենթակառուցվածքներ, մուտքի հատվածում տեղադրվելու են անցակետեր և դրանց հսկողության համար նախատեսված տեսախցիկներ:

Այնուհետև հետագա քննարկումը վերածվեց հարցուպատասխանի.

Ն	հարց	պատասխան	Լրացում
1	Նորայր Զատիկյան <i>Արդյոք ներկայացվող նախագիծը ներջնական տարբերակն է:</i>	Ա.Օ. Այո, սա վերջնական տարբերակն է:	-
2	Գևորգ Նավասարդյան Քանի՞ մեքենայի համար է նախատեսվում և քանի՞ սն են մինչև այժմ սպասարկվել:	Ա.Օ. Վերակառուցվող ավտոբուսների հավաքակայանը նախատեսված է սեղմված	Ռուբեն Ղուկասյան Մինչ այժմ սպասարկել ենք դիզելային վառելիքով աշխատող 249 մեքենա

Նախնական գնահատման հայտ

		գազով աշխատող 200 ավտոբուսի համար	
3	Նորայր Զատիկյան <i>Ավտոբուսների կայանատեղիին արդյոք լինելու է ծածկով:</i>	Ա.Օ. Ոչ, այն լինելու է բացօթյա:	-
4	Արմեն Բողոյան <i>Հաշվի առնելով, որ ծրագիրը ֆինանսավորվելու է ԱԶԲ -ի կողմից, կխնդրեմ պարզաբանել որքան է կազմում հեռավորությունը սեղմված գազի լցակայանից մինչև մոտակա հասարակական և բնակելի վայրը և արդյոք պահպանված են պահանջվող ստանդարտները: Եթե ոչ, ապա ի՞նչ լուծումներ են նախատեսված այդ դեպքում անվտանգության ապահովման համար:</i>	S.Մ. Տեղեկացնեմ, որ նախագծի էսքիզն ուղարկել ենք հակահրդեհային անվտանգության տեսչություն և ստացել ենք դրական եզրակացություն: Էսքիզում ներկայացրել ենք հարևան վայրերի հեռավորությունները, շառավիղները և բոլոր նորմերը պահպանվել են: Այդ առումով առարկություն չենք ունեցել: Այժմ արդեն ներկայացնել ենք պահանջված աշխատանքային նախագիծը և կարծում ենք եզրակացության առումով փոփոխություն չի լինի, քանի որ անվտանգության սխեմայում փոփոխություն չի կատարվել:	
5	Արմեն Բողոյան <i>Առաջարկում եմ գծագրերում պարտադիր ավելացնել հարակից բնակելի հատվածները:</i>	Ա.Օ. Ավտոբուսների հավաքակայանին կից բնակելի տներ չկան, առկա են արտադրական նշանակության կառույցներ:	Ռ.Ղ. Նշված աջակողմյան հատվածում արտադրական գոտի է, կառույցների մի մասը գործող չեն և գտնվում են լքված վիճակում: Չախ կողմում առկա է միայն սգո սրահ և մեքենաների տեխապասարկման սրահներ: Ն.Զ.

Նախնական գնահատման հայտ

			<p>Նոր բացվող մուտքին հարակից առկա է հեղուկ գազի լցակայանը: Պարսպի հետնամասում ճանապարհ կա, որը տանում է դեպի Ջրվեժ գյուղ, որը բավականին հեռու է գտնվում:</p> <p>Է.Վ. Պարսպի գրեթե անմիջապես հետնամասում բնական ձոր է գտնվում:</p>
6	<p>Նորայր Զատիկյան</p> <p><i>Խնդրում եմ բացատրել ավտոբուսների շարժվելու սխեման հավաքակայանի ներսում:</i></p>	<p>Ա.Օ.</p> <p>Կառուցվելու է նոր մուտք աջակողմյան մասում, այնուհետև դուրս գալու համար ավտոբուսները կշարժվեն դեպի ելք, որն այս պահի դրությամբ Թևոսյան փողոցի մուտքն է: Լրացուցիչ պահուստային ելք է ինելու նաև Հովհաննիսյան փողոցի կողմից արտակարգ իրավիճակների համար:</p>	-
7	<p>Ռուբեն Ղուկասյան</p> <p><i>Հնարավոր չէ արդյոք տեղափոխել ենթակայանի տեղադիրքն այնպես, որ փողոցից հնարավոր լինի այն սպասարկել առանց հավաքակայանի տարածք մտնելու:</i></p>	<p>Ա.Օ.</p> <p>Ենթակայանի տեղադիրքը որոշված է այնպես, որ հնարավոր լինի հարմար ձևով պատի տակով անցկացնել հաղորդուղիները, մալուխները, դրանք լինեն հավաքակայանի բոլոր հատվածներից համաչափ հեռավորության վրա, ինչպես նաև գտնվի հավաքակայանի տարածքում և չխոչընդոտի այլ</p>	<p>Ա.Բ.</p> <p>Ձեր առաջարկած ձևով տեղադրելու համար անհրաժեշտ է հավաքակայանից դուրս լրացուցիչ տարածք, որը հանրային սեփականություն է և պատկանում է Երևանի քաղաքապետարանին, ուստի առաջանում են</p>

Նախնական գնահատման հայտ

		կառույցների տեղադիրքին և ավտոբուսների շարժին և երթևեկությանը:	օտարման հարցեր և այլն:
8	Ռուբեն Ղուկասյան <i>Խնդրում եմ առաջին հերթին կառուցել նոր ենթակայանը՝ հոսանքով ապահովելու համար:</i>	Ա.Բ. Շինարարական աշխատանքների հաջորդականությունը որոշվելու է կապալառու կազմակերպության կողմից, սակայն, իհարկե, հին ենթակայանը չի քանդվի մինչև նորը չկառուցվի:	Ա.Օ. Նախագծային փաթեթի հետ միասին կազմվում է շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծը, որտեղ առաջին հերթին նախատեսվելու են շինարարության համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսների կետերը. ջրի, հոսանքի և այլն, այնպես որ հնարավոր կլինի բավարարել ինչպես հավաքակայանի, այնպես էլ շինաշխատանքների կարիքները:
9	Ռուբեն Ղուկասյան <i>Նախատեսվել է արդյոք հոսանքի լրացուցիչ գիծ վթարային իրավիճակների դեպքի համար:</i> <i>Ես գտնում եմ, որ երկրորդ գծի անհրաժեշտությունը պետք է նախագծողը հիմնավորի:</i>	Գ.Ն. Պետք է դիմել ՀԷՑ-ին և խնդրել տեխպայման երկրորդ գծի համար: Դա արդեն ՀԷՑ -ի գործն է:	Ա.Օ. Քաղաքաշինական նորմերով ընթացակարգն այնպիսին է, որ Պատվիրատուն դիմում է ՀԷՑ-ին և ներկայացնում է պահանջվող հոսանքի ծավալը, թե ՀԷՑ-ը մեկ տեղից կտա, թե երկու տեղից դա արդեն իրենց գործն է:
10	Ռուբեն Ղուկասյան <i>Հնարավոր չէ արդյոք պահպանել և չքանդել կենտրոնական մասում եղած սպասարկման սրահները,</i>	Ա.Օ. Ինչպես արդեն ասեցի, այդ հատվածն անհրաժեշտ է ավտոբուսների կայանատեղիի կազմակերպման համար: Եթե	-

Նախնական գնահատման հայտ

	<i>քանի որ դրանք բավականին ամուր կառույցներ են և կարող են դեռ ծառայել:</i>	ենթադրենք, որ այդ կառույցը կպահպանվի որպես կայանատեղի, ապա պետք է հաշվի առնել նոր տիպի ավտոբուսների սպասարկման առանձնահատկությունները, անհրաժեշտ տեխնիկական սարքավորումները և այլն:	
11	Գևորգ Նավասարդյան <i>Ավտոբուսների լվացման կայանի համար ջուրը որտեղի՞ց է վերցվելու:</i>	Ա.Օ. 1-ին փուլում ջրի պահանջարկը հնարավոր է լիովին բավարարել գործող հավաքակայանի ջրագծին միանալով: Ներկայումս ավտոբուսների հավաքակայանն օգտվում է իր տարածքում գտնվող խորքային հորից: Տեղադրվելու է ջրի շրջապատյտի փակ համակարգ, որտեղ առաջացած կեղտաջրերի մաքրումից հետո ջուրը 90-97%-ի չափով վերօգտագործվելու է: 2-րդ փուլում կդիմենք «Վեոլիա Ջուր» մատակարարին՝ տեխնիկական պայման ձեռք բերելու համար:	-
12	Արմեն Բողոյան <i>Քանի որ արդեն խոսվեց մակերեսի նիշերի տարբերության մասին, ցանկանում եմ հստակեցնել. արդյոք նախատեսվա՞ծ է մակերևութային հոսքերի դրենաժային համակարգը և տեխնիկական սպասարկման սրահում արդյոք լինելու են</i>	Ա.Օ. Մակերևութային ջրերը ավելի բարձր նիշ ունեցող աջ մասից հոսելու են դեպի ձախ մասը, որից հետո հեռացվելու են: Իսկ ինչ վերաբերում է յուղերի որսիչին, ապա դա վերաբերում է տեխնիկական սպասարկման սրահին, որը կառուցվելու է 2-րդ փուլում: Նմանատիպ	-

Նախնական գնահատման հայտ

	<i>կեղտաջրերը յուղերից մաքրման որսիչներ:</i>	նախագծերում մենք միշտ նախատեսել ենք նման որսիչներ կեղտաջրերը մաքրելու համար, այնպես որ այս դեպքում էլ կնախատեսենք:	
13	Ռուբեն Ղուկասյան <i>Դատելով գծագրերից, արդյոք ճիշտ եմ հասկանում, որ Թևոսյան փողոցի պարիսպը դուրս է գալիս գործող հավաքակայանի տարածքից:</i>	Ա.Օ. Այո, Թևոսյան փողոցի կողմից պարիսպը տեղաշարժվելու է և ընդգրկելու է համայնքային հողակտորը մոտավորապես 1078 մ2 մակերես կազմող տարածքի չափով, որն առաջացնում է օտարման հարցեր: Օտարման գործընթացը սկսված է:	Ռուբեն Ղուկասյան <i>Եթե այդքանը օտարվելու է, առաջարկում եմ օտարել նաև մնացած մասը՝ ուղիղ պարիսպ կառուցելու համար և այդ տարածքը հնարավոր կլինի կանաչապատել և ձեռնարկության ուժերով խնամել:</i>
14	Ռուբեն Ղուկասյան <i>Ինձ հետաքրքրում է՝ ի՞նչ սարքավորումներ են տեղադրվելու նորացված հավաքակայանում, մասնավորապես արդյոք հնարավոր կլինի արագ լիցքավորել ավտոբուսները երեկոյան ժամերին, քանի որ ներկայումս լիցքավորումը երկար է տևում և վարորդները ստիպված են լինում արտաժամյա մեծ հերթերով լիցքավորել մեքենան:</i>	Ա.Բ. Լինելու է սեղմված գազի արագ լիցքավորում: Բոլոր սարքավորումները լինելու են ժամանակակից և համապատասխանելու են միջազգային ստանդարտներին: Դա Ասիական զարգացման բանկի պահանջն է:	-
15	Ռուբեն Ղուկասյան <i>Ինչպե՞ս է լինելու հավաքակայանի լուսավորությունը: Հնարավո՞ր է արդյոք սյուների փոխարեն գտնել մեկ այլ լուծում, քանի որ դրանք խոչընդոտում են ավտոբուսների շարժին:</i>	Ա.Օ. Առաջին փուլում լուսավորությունը նախագծված է այնպես, որ սյուները լնելու են պարսպի հետ, այսինքն դրանք որևէ կերպ չեն կարող խոչընդոտել ներքին երթևեկությանը:	-

16	<p>Ռուբեն Ղուկասյան</p> <p><i>Առկա՞ է արդյոք քանդման աշխատանքների նախագիծը:</i></p>	<p>Ա.Օ.</p> <p>Մենք հաշվել ենք քանդման աշխատանքների ծավալները</p>	<p>Ռուբեն Ղուկասյան</p> <p><i>Մա ամենակարևոր հարցերից մեկն է, առաջին հերթին քանդման նախագիծ պետք է լինի:</i></p>
17	<p>Գևորգ Նավասարդյան</p> <p><i>Ի՞նչքան է տևելու շինարարությունը:</i></p>	<p>Է.Վ.</p> <p>Երկու փուլերը միասին տևելու են մոտավորապես 2 տարի</p>	<p>Ա.Բ.</p> <p>Ֆինանսավորումը տրվում է 2 տարվա համար: Ժամկետը տևական է հիմնականում սեղմված գազի սարքավորման ներկրման ժամկետների հաշվին:</p>

Մաս 2. Ծրագրի բնապահպանական և սոցիալական բաղադրիչների ներկայացում:

Ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները ներկայացրեց EGIS International խորհրդատվական կազմակերպության բնապահպանության մասնագետ Էդիտա Վարդգեսյանը: Նա նշեց, որ նախագիծն անցնելու է Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացը, որը լինելու է 2 փուլով: Պատրաստման փուլում է գտնվում ՇՄԱԳ հաշվետվությունը, որը նախնառաջ ընդգրկում է ներկա ելակետային վիճակի նկարագրությունը, հնարավոր ազդեցությունները և դրանց կառավարման համար բնապահպանական միջոցառումների պլանը: Դիտարկվել են այլընտրանքային տարբերակները, և վերլուծվել է դրանց համեմատական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Դիտարկվել է Ասիական զարգացման բանկի էսքիզային տարբերակը, որը վերամշակվել և վերանայվել է EGIS International խորհրդատվական կազմակերպության կողմից: Արդյունքում եզրակացվել է, որ Ջրվեժի ավտոբուսների հավաքակայանը անհրաժեշտ է վերակառուցել և համապատասխանեցնել ժամանակակից անվտանգության պահանջներին: Ուսումնասիրվել են նախագծի հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, ընդ որում դրանք դասակարգվել են 2 հիմնական խմբի՝ (1) շինարարության ազդեցություններ և (2) հետշինարարական շահագործման ազդեցություններ: Շինարարության հնարավոր ազդեցությունները լինելու են մթնոլորտային օդի աղտոտման տեսքով՝ հողային աշխատանքներից առաջացող փոշու և տեխնիկայից գազային արտանետումների տեսքով, շինարարական տեխնիկայի և սարքավորումների աշխատանքի ընթացքում հնարավոր է աղմուկի մակարդակի որոշակի բարձրացում, առաջացող շինադրի և թափոնների ոչ ճիշտ կառավարման դեպքում հնարավոր է շրջակա միջավայրի աղտոտումը: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակներում մասնագետների

Նախնական գնահատման հայտ

ներգրավմամբ իրականացվել է օդի որակի հետազոտություն, կատարվել են չափագրումներ ծրագրի տարածքում օդի որակի ելակետային տվյալների հավաքագրման նպատակով:

Ծրագիրն իրականացնելու համար կազմվելու է բնապահպանական կառավարման պլան, որը լինելու է շինարարական կազմակերպության մրցությամբ փաթեթի մաս և իրենք պարտավոր են լինելու այն կատարել: ԲԿՊ-ի կատարումը շինարարության ընթացքում վերահսկվելու է տեխնիկական վերահսկողության թիմի կողմից:

Էդիտա Վարդգեսյանը նշեց, որ ազդեցություններից է լինելու, ծառահատումը, որից ցավոք, հնարավոր չէ խուսափել: Նա հիշեցրեց, որ Ջրվեժի հավաքակալայանի տարածքը վաղուց յուրացված և հիմնականում ասֆալտապատ արտադրական տարածք է, որտեղ բնական միջավայր գրեթե չի մնացել: Այնուամենայնիվ, չնայած այդ հանգամանքին, այս պահի դրությամբ իրականացվել է տարածքի բուսականության հետազոտություն մասնագետների ներգրավմամբ և արձանագրվել է ներկա վիճակը և ազդեցության ենթակա բուսականությունը, որը ներկայացված է հավաքակալայանի կողմից տնկված հիմնականում դեկորատիվ, ինչպես նաև մրգատու ծառերի և թփերի տեսքով: Համաձայն մասնագետների եզրակացության, հավաքակալայանի տարածքում կարմիրգրքային, հազվագյուտ կամ այլ հատուկ պահպանություն պահանջող տեսակներ չեն աճում: Ծառերի և թփերի ընդհանուր քանակը դեպոյի տարածքում կազմում է մոտավորապես 200, որոնցից մի մասը խոչընդոտում են 1-ին փուլի աշխատանքներին և հատվելու են: ԲԿՊ-ում լինելու է նաև ծառերին վերաբերող բաժին: Ծրագրում նախատեսված է մեղմացնող միջոցառում, այն է՝ յուրաքանչյուր հատված ծառի դիմաց 6 ծառ է տնկվելու: Ծառերի մի մասը լինելու է հենց հավաքակալայանի տարածքում ըստ կանաչապատման նախագծի: Այն մասը, որը քանակապես չի բավականացնելու տնկվելու է թաղապետարանի կողմից հատկացված վայրում:

Մեծ կարևորություն է տրվում շինարարական տեխնիկայի երթևեկության կառավարմանը և շինճամբարների և աշխատանքների կազմակերպմանը: Կապալառու կազմակերպությունից առաջին հերթին պահանջվելու է, որ հաշվի առնվի այն հանգամանքը, որ շինարարական աշխատանքները տեղի են ունենալու գործող ձեռնարկության տարածքում, այսինքն դրանք հնարավորինս այնպես կազմակերպվեն, որ չխոչընդոտեն և չխաթարեն հավաքակալայանի բնականոն աշխատանքը: Բնապահպանական կառավարման պլանով կապալառու կազմակերպությունից պարտադիր պահանջվելու է իրականացնել նախաշինարարական հանդիպում ազդակիր կողմերի հետ, որի ընթացքում ազդակիր ձեռնարկությանը ներկայացվելու է և համաձայնեցվելու է շինարարական աշխատանքների կազմակերպման, տեխնիկայի շարժի, ճամբարի և պահեստարանների, թափոնների ժամանակավոր կուտակման սխեման և այլն:

Էդիտա Վարդգեսյանն ընդգծեց, որ Բնապահպանական կառավարման պլանի պահանջներից է, որ շինարարական կազմակերպությունը իր գործողություններում սահմանափակվի ծրագրի տարածքով՝ տվյալ դեպքում ավտոբուսների հավաքակալայանի սահմաններով: Տարածքից դուրս որևէ գործողություն՝ ճամբարի և շարժական տնակի տեղադրում, նյութերի պահեստավորում, մեքենաների կայանում, շինադրի կուտակում և այլն, չի թույլատրվելու:

Էդիտա Վարդգեսյանը նշեց, որ ԲԿՊ-ի կատարումը խստիվ հսկվելու է վերահսկող կազմակերպության կողմից իրականացվող մոնիթորինգի պարբերական ստուգայցերի միջոցով: Իրականացվելու է նաև գործիքային մոնիթորինգ, այսինքն շինարարական կազմակերպության

Նախնական գնահատման հայտ

կողմից պարբերաբար չափագրվելու է օդի աղտոտվածությունը, աղմուկի և թրթռումների մակարդակը և ստացված արդյունքները համեմատվելու են Հայաստանի Հանրապետության և միջազգային թույլատրված նորմերի և ստանդարտների հետ:

Էդիտա Վարդգեսյանը տեղեկացրեց նաև, որ կապալառու կազմակերպությունից պարտադիր պահանջվելու է նաև մշակել և տեղադրել Բողոքների արձագանքման մեխանիզմը: Ազդակիր հանրությունը և առաջին հերթին Ջրվեժի հավաքակալայանը որպես անմիջական շահառու այդ մեխանիզմի միջոցով կարող է անընդհատ հսկողություն իրականացնել շինարարական աշխատանքների վրա, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկներ, պահանջներ և բողոքներ:

Ամփոփելով, Էդիտա Վարդգեսյանը տեղեկացրեց, որ EGIS International խորհրդատվական կազմակերպությունը միջազգային մասնագետների ներգրավմամբ մշակել է նաև Արտակարգ իրավիճակների արձագանքման պլանը վթարային իրավիճակների կառավարման համար:

ՇՄԱԳ հաշվետվությունը վերջնականացնելուց հետո այն հանրության համար հասանելի կդարձվի, հայերեն և անգլերեն լեզուներով կտեղադրվի Երևանի քաղաքապետարանի «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի» կայքում: Բոլոր շահագրգիռ կողմերը, այդ թվում և առաջին հերթին անմիջական ազդակիր շահառուն, հնարավորություն կունենան ծանոթանալու ՇՄԱԳ/ԲԿՊ-ի հետ:

Այնուհետև հարցուպատասխանը վերսկսվեց:

Ն	Հարց	Պատասխան	Լրացում
18	Գևորգ Նավասարդյան <i>Ստացել էք արդյոք նախագծման թույլտվությունը և ի՞նչ պահանջներ կան կանաչապատման վերաբերյալ: Առկա՞ է արդյոք կանաչապատվող տարածքի տոկոսային հարաբերակցության պահանջը:</i>	Է.Վ. Այո, կանաչապատման պահանջը առկա է նախագծման թույլտվության մեջ քարեկարգում հատվածում:	Ա. Օ. Նշված է կառուցապատման տոկոսը - 100%; Կանաչապատման տոկոսային հարաբերակցության պահանջը նշված չէ:
19	Ա.Բ. <i>Կանաչապատման վերաբերյալ 2 խնդիր կա, որոնք պետք է հաշվի առնենք նախագծում.</i> <i>1. ՀՀ օրենքով նախատեսվում է, որ</i>	Ն.Զ. Թևոսյան փողոցի վրա հավաքակալայանի պարսպից դուրս մինչև հենապատը որոշակի հատված կա, որը կարելի է օգտագործել ծառեր տնկելու համար, ինչպես նաև Հովհաննիսյան փողոցում	Գ.Ն. <i>Բոլոր դեպքերում անհրաժեշտ է կազմել դենդրոնախագիծ կանաչապատման համար:</i>

Նախնական գնահատման հայտ

	<p><i>յուրաքանչյուր բնակելի և արտադրական տարածք պետք է ունենա որոշակի տոկոսային հարաբերակցությամբ կանաչապատման գոտի:</i></p> <p><i>2. 100-ից ավելի ծառ ու թուփ է հատվելու հավաքակայանի տարածքում, որի փոխարեն Ասիական զարգացման բանկը պահանջում է 1:6 հարաբերակցությամբ նոր ծառեր տնկել: Այդքան քանակությամբ ծառեր հավաքակայանի ներսում տեղավորելն անհնարին է, ուստի խնդրում ենք համայնքից տրամադրել տարածք, ցանկալի է հարակից հատվածներում, այդ ծառերը տնկելու համար:</i></p>	<p>աճող բարդիները ներկայումս չորացած են, դրանց փոխարեն ևս կարելի է ծառեր տնկել:</p>	
<p>20</p>	<p>Գևորգ Նավասարդյան</p> <p><i>Ինչպե՞ս է իրականացվելու կանաչ գոտու ոռոգումը: Նախատեսվա՞ծ է արդյոք ոռոգման համակարգը և եթե ոչ, ապա պարտադիր անդրադարձե՞ք այդ հարցին:</i></p>	<p>Ա.Օ.</p> <p>Ամբողջ հավաքակայանի համար ամբողջական ոռոգման համակարգը նախատեսված է 2-րդ փուլում:</p> <p>1-ին փուլում ծառերը ջրվելու են տարածքում գտնվող խորքային հորից ռետինե ճկուն խողովակների միջոցով:</p>	<p>Ա.Բ.</p> <p>Կարծում եմ, որ հնարավոր է լվացակայանի փակ համակարգից 1-2 գիծ տալ ոռոգման համար:</p>
<p>21</p>	<p>Գևորգ Նավասարդյան</p> <p><i>Նախնական գնահատման հայտում պարտադիր պետք է ընդգրկվեն մեղմացնող միջոցառումները, որոնք պահանջվում են</i></p>	<p>Է.Վ.</p> <p>Ձեր կողմից նշված շատ միջոցառումներ արդեն ընդգրկել ենք ԲԿՊ-ում, այնուամենայնիվ դիտողությունը նախնական</p>	<p>-</p>

Նախնական գնահատման հայտ

<p><i>մթնոլորտային օդի պահպանության օրենքով, մեքենաների անիվների լվացման պահանջը, շինհրապարակի ցանկապատումը և այլն, ինչպես նաև պետք է հաշվի առնել շինարարական աշխատանքների ժամանակ ծառերի պահպանության վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի ավագանու 405 Ն որոշումը</i></p>	<p>գնահատման հայտում հաշվի կառնենք:</p>	
---	---	--

Ամփոփիչ խոսք

Հանդիպման վերջում Էդիտա Վարդգեսյանը մեկ անգամ ևս ընդգծեց ծրագրի կարևորությունը և դիմեց ներկա հանրությանը ծրագրին կողմ կամ դեմ լինելու հարցով:

Արտահայտվեցին

Գևորգ Նավասարդյան, Երևանի Քաղաքապետարան, աշխատակազմի բնապահպանության վարչության պետի տեղակալ

Քաղաքապետարանը տալիս է իր հավանությունը և փորձաքննության համար անհրաժեշտ գրությունը կտրամադրի 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Նորայր Զատիկյան, Նոր Նորք վարչական շրջանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ

Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարը նախագծին ծանոթացել է և տալիս է իր հավանությունը:

Ռուբեն Ղուկասյան, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ, Ջրվեժի ավտոբուսների հավաքակալայանի տնօրենի տեղակալ

Գազալցակալայանի կառուցումը մեր ձեռնարկության համար շատ կարևոր է , քանի որ այսօր այդ հարցում խնդիրներ ունենք, մեր վարորդները լիցքավորման պատճառով 2-3 ժամ ուշ են տուն գնում:

Աշխատանքային կարգով շատ լավ աշխատել ենք նախագծող թիմի հետ, նախագծողները հաճախ եկել են մեզ մոտ և ընթացքում քննարկել ենք շատ հարցեր:


Որոշվեց


1. Ընդհանուր առմամբ նախնական կարգով հավանություն տալ ծրագրին՝ կարևորելով դրա նշանակությունը Երևան քաղաքի համար:
2. Տեղադրել ՇՄԱԳ հաշվետվությունը Երևանի քաղաքապետարանի ներդրումային ծրագրերի գրասենյակի կայքում, ինչպես նաև ԱԶԲ և ՇՄՓորձաքննության ՊՈԱԿ-ի կայքերում թափանցիկությունն ու հանրության կողմից հասանելիությունն ապահովելու նպատակով:
3. Քննարկել հնչեցրած առաջարկությունները նախագծում հնարավորինս հաշվի առնելու նպատակով:
4. ՇՄԱԳ գործընթացում շարունակել համագործակցությունը Նոր Նորք վարչական շրջանի և «Երևանի ավտոբուս» ՓԲԸ Ջրվեժի ավտոբուսների հավաքակալայանի հետ հետագա հանրային քննարկումների ձևաչափով:

կայքերում թափանցիկությունն ու հանրության կողմից հասանելիությունն ապահովելու նպատակով:


3. Քննարկել հնչեցրած առաջարկությունները նախագծում հնարավորինս հաշվի առնելու նպատակով:
4. ՇՄԱԳ գործընթացում շարունակել համագործակցությունը Նոր Նորք վարչական շրջանի և «Երևանի ավտոբուսներ» ՓԲԸ Ջրվեժի ավտոբուսների հավաքակալայանի հետ հետագա հանրային քննարկումների ձևաչափով:

Քննարկումների պատասխանատու՝

Գևորգ Նավասարդյան, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի տեղակալ 

Արմեն Բողոյան, Երևանի քաղաքապետարանի ներդրումային ծրագրերի գրասենյակ 

Վարդ՝

Էդիտա Վարդգեսյան, EGIS International խորհրդատվական կազմակերպություն 

Ծրագրի ձեռնարկող՝

Տիգրան Մամիկոնյան, EGIS International խորհրդատվական կազմակերպություն

Արձանագրող՝

Էդիտա Վարդգեսյան, EGIS International խորհրդատվական կազմակերպություն

Նախնական գնահատման հայտ

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-3-5. 21.01.2022 թ. կայացած հանրային լուսմների լուսանկարները



ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Թ-3-6. 2022 թ. հունվարի 21-ին կայացած հանրային լսումների մասնակիցների ցանկը

ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՒՌՈՒՄԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
Construction of Yerevan Bus Depots

Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանում լիցքավորման և լվացման կայանների կառուցումը և ավտոկայանատեղիի վերակառուցումը ծրագրի
Construction of refuelling and washing facility and reconstruction of parking area at existing Yerevan Jrvezh Bus Depot





Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկումներ
Public consultation on the Initial Environmental Examination

21 հունվարի 2022 թ. ժ. 14:00

21 January 2022, 2:00 PM

Մասնակիցների ցուցակ

List of participants

Ը	անուն ազգանուն name, surname	Պաշտոն/ կարգավիճակ position	կոնտակտային տվյալ contact data	Ստորագրություն signature
1	Սարգսյան Ասատուր	ՀԻՑԻՈԼՈԳ	093 355 828	
2	Բիբերա Հարությունյան	EGIS Environmental	093 606 017	
3	Յիսակ Նազարյան	EGIS SE	099 051 932	
4	Վերոնիկա Սարգսյան	Զրև-ի ջրաբերան-ի հրմ. մասը: ԿԿ. Ց.	093 543 968	

ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՌՈՒՄԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Construction of Yerevan Bus Depots

Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանում լիցքավորման և լվացման կայանների կառուցումը և ավտոկայանատեղիի վերակառուցումը ծրագրի

Construction of refuelling and washing facility and reconstruction of parking area at existing Yerevan Jrvezh Bus Depot

Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկումներ
Public consultation on the Initial Environmental Examination

21 հունվարի 2022 թ. ժ. 14:00

21 January 2022, 2:00 PM

Մասնակիցների ցուցակ

List of participants

Ն	անուն ազգանուն name, surname	Պաշտոն/ կարգավիճակ position	կոնտակտային տվյալ contact data	Ստորագրություն signature
5	<i>Արթուր Բազումյան</i>	<i>ԵԳՀԾԻԳ ընկալ. ծառայության մեթ. խմբակ</i>	<i>095450445</i>	<i>[Signature]</i>
6	<i>Պարոն Զախարյան</i>	<i>Կենտր. սեփական ՊԲԸ</i>	<i>094821888</i>	<i>[Signature]</i>
7	<i>Զորբայր Զաքարյան</i>	<i>Զուր Զուրբ ՎԷԻ / Գ.Ե.Ե. բաժնի պետ</i>	<i>093125050</i>	<i>[Signature]</i>
8	<i>Սարգսյան Մարգարիտ</i>	<i>«Առաջնություն» ՍՊԸ. Հարգանք պետ.</i>		

ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈՌՈՒՄԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

Construction of Yerevan Bus Depots

Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանում լիցքավորման և լվացման կայանների կառուցումը և ավտոկայանատեղիի վերակառուցումը ծրագրի

Construction of refuelling and washing facility and reconstruction of parking area at existing Yerevan Jrvezh Bus Depot

Շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկումներ
Public consultation on the Initial Environmental Examination

21 հունվարի 2022 թ. ժ. 14:00

21 January 2022, 2:00 PM

Մասնակիցների ցուցակ

List of participants

Ն	անուն ազգանուն name, surname	Պաշտոն/ կարգավիճակ position	կոնտակտային տվյալ contact data	Ստորագրություն signature
9	<i>Մարտիրոսյան Մարտիրոս</i>	<i>«ՏՄԺԲ» Վարչարարակ</i>	<i>091-00-69-30</i>	<i>[Signature]</i>
10	<i>Հակոբյան Տիգրան</i>	<i>«ԵՐԵՎԱՆԻ ՋՐԵՎ» ԻՋԵՆԵՐ</i>	<i>094-015-017</i>	<i>[Signature]</i>
11				
12				
13				

ՀԱՎԵԼՎԱԾ Ժ. Բնապահպանական կառավարման պլան (ԲԿՊ)

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-1. ԲԿՊ աղյուսակ. մեղմացնող միջոցառումներ

<p align="center">Աղյուսակ 1. Բնապահպանական կառավարման պլան. Մեղմացնող միջոցառումներ</p> <p align="center">Ջրվեժի գոյություն ունեցող ավտոբուսային հավաքակայանի վերակառուցում</p>				
Ծրագրի գործողությունները	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Պատասխանատու մարմինները	Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը
ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓՈՒԼ				
Նախագծային փուլ				
1. Մոնիթորինգի ելակետային հետազոտությունները (օդի որակի, աղմուկի և թրթռման, բուսականության)	Ազդեցության գնահատման ելակետային տվյալների հավաքագրում, հետագա գործիքային մոնիթորինգի և մեղմացնող միջոցառումների համար	1. Իրականացնել մոնիթորինգի ելակետային հետազոտություններ՝ համաձայն Տվյալների հավաքագրման պլանի, և արդյունքները ներառել ՇՄԱԳ/ԲԿՊ-ում (տե՛ս Գլուխ Ե, Աղյուսակ Ե-1) 2. Հետագա գործիքային մոնիթորինգի հատուկ պահանջը ներառել մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:	<u>ՄՆԽ</u> Իրականացնել օդի որակի, աղմուկի և թրթռման, ինչպես նաև ֆլորայի, հետազոտություններ և արդյունքները ներառել մրցութային և պայմանագրային փաստաթղթերի դրույթներում <u>ԵՔԾԻԳ</u> Գնահատել մրցութային հայտերը և տրամադրել պայմանագրային փաստաթղթերը <u>ԱԶԲ</u> Տեղեկանալ ՇՄՆՈՒ/ԲԿՊ-ում ելակետային հետազոտությունների արդյունքների մասին	Օդի որակի, աղմուկի և թրթռման, ինչպես նաև ֆլորայի հետազոտությունները ներառված են ՄՆԽ-ի բյուջեում:

Նախնական գնահատման հայտ

<p>2. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում</p>	<p>Անվտանգության մեխանիզմներն արտացոլված մրցութային պայմանագրային փաստաթղթերում</p>	<p>Մշակել Տեխնիկական մասնագրեր՝ հիմնվելով ԲԿՊ-ում սահմանված մեղմացնող միջոցառումների վրա և ներառել բնապահպանական կետերը մրցութային և պայմանագրային փաստաթղթերի հատուկ պայմաններում</p>	<p><u>ՄՆԽ</u> Մշակել Տեխնիկական մասնագրեր (ՏՄ) և ներառել համապատասխան բնապահպանական կետերը մրցութային և պայմանագրային փաստաթղթերում</p> <p><u>ԵՔԾԻԳ</u> Ուսումնասիրել մրցութային և պայմանագրային փաստաթղթերը</p> <p><u>ԱԶԲ</u> Տեղեկանալ ԵՔԾԻԳ-ի դիտարկումների արդյունքների մասին</p>	<p>Ծախսերը հաշվառված են ՄՆԽ-ի բյուջեում</p>
<p>3. Տեղեկատվության հրապարակում, հանրային հաղորդակցություն, հանրային լուումներ և մասնակցություն</p>	<p>Ծրագրի մասին տեղեկատվության և ըմբռնման պակասը ազդեցության ենթակա կողմերի և շահառուների մոտ կարող է առաջացնել հիասթափություն և դժգոհություն, ինչի արդյունքում կարող են տեղի ունենալ ծրագրի իրականացման ժամկետների խաթանումներ:</p>	<p>1. Կազմակերպել հանդիպումներ հիմնական շահառուների հետ և Ծրագրի վերաբերյալ հանրային քննարկումներ/լուումներ՝ համաձայն Հանրային լուումների և հաղորդակցության պլանի (տե՛ս Գլուխ Է և Գլուխ Ը):</p> <p>2. Ներկայացնել ԲԼՄ-ն, որը կհիմնվի Գլուխ Է-ում նկարագրված մեխանիզմի վրա:</p> <p>3. Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը և վերջնական ՇՄԱԳ/ԲԿՊ-ն տեղադրել ԵՔԾԻԳ-ի և ԱԶԲ-ի կայքերում</p>	<p><u>ՄՆԽ</u> Կազմակերպել հանրային քննարկումներ/լուումներ և պատրաստել փաստաթղթեր</p> <p><u>ԵՔԾԻԳ</u> Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը և վերջնական ՇՄԱԳ/ԲԿՊ-ն տեղադրել կայքում</p> <p>Աջակցել կազմակերպմանը և մասնակցել հանրային քննարկումներին/լուումներին</p> <p><u>ԱԶԲ</u></p>	<p>Ներառված է ՄՆԽ-ի բյուջեում</p>

			Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը և վերջնական ՇՄԱԳ/ԲԿՊ-ն տեղադրել կայքում	
			Մասնակցել հանրային լսումներին/քննարկումներին	
ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ				
Մոբիլիզացիայի փուլ				
4. Բնապահպանական, ԱԱԱ (H&S), սոցիալական երաշխիքների պատասխանատու անձնակազմի նշանակում	Բնապահպանական/ ԱԱԱ և սոցիալական կառավարման պատասխանատու մասնագետների բացակայությունը կարող է հանգեցնել պայմանագրային դրույթների, ՏՄ-ի և ՇՄԱԳ/ԲԿՊ-ի հետ անհամապատասխանության	Նշանակել անձնակազմ, որը պատասխանատու կլինի Ծրագրի շինարարական աշխատանքների և պայմանագրային դրույթներին, այդ թվում՝ ՇՄԱԳ/ԲԿՊ-ին համապատասխանության մոնիթորինգի իրականացման համար Պատրաստել և ներկայացնել ՇԲԿՊ, այդ թվում՝ Գլուխ Ը-ում ներառված բնապահպանական կառավարման ենթածրագրերը	<u>ԵՔՕԻԳ</u> Նշանակել Ծրագրի բնապահպանական մասնագետ <u>ՏՎԻ</u> Ծրագրի համար նշանակել Բնապահպանության մասնագետ, ԱԱԱ (H&S) գծով մասնագետ և սոցիալական հարցերի մասնագետ՝ և հաստատել Կապալառուի ՇԲԿՊ-ն <u>Կապալառու</u> Վարձել լրիվ դրույքով աշխատող բնապահպանության/ առողջապահության և անվտանգության մեկ մասնագետ և լրիվ դրույքով աշխատող սոցիալական մասնագետ Պատրաստել և ներկայացնել ՇԲԿՊ	Ներառված է համապատասխան բյուջեներում և պայմանագրում <u>Տեխնիկոլոգիայի խորհրդատու (Ինժեներ)</u> Վարձատրությունը 24 ամսվա համար ներառված է բյուջեում և գնահատված է 39 000 ԱՄՆ դոլար <u>Կապալառու</u> Երկու մասնագետների ամբողջ դրույքով 18 ամսվա աշխատանքը գնահատված է 45 000 ԱՄՆ դոլար

Նախնական գնահատման հայտ

				Այդ պլանների արժեքը հաշվարկվել է ստորև մանրամասնած Շինարարական աշխատանքների յուրաքանչյուր պլանի համար
5. Հանրային հաղորդակցություն	Ազդեցության ենթակա կողմերի և վարչական շրջանի ղեկավարության մոտ աշխատանքների, գործողությունների և իրականացման ժամանակացույցի մասին տեղեկատվության և ըմբռնման պակասը կարող է հանգեցնել հիասթափության ու դժգոհության, և արդյունքում տեղի ունենան ծրագրի իրականացման ժամկետների խափանումներ:	Իրականացնել միջոցառումներ՝ համաձայն Հանրային լուսմների և հաղորդակցության պլանի (Գլուխ Ը) 1. Կազմակերպել նախաշինարարական հանդիպումներ՝ պլանավորված աշխատանքների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ: Այդ նպատակով <ul style="list-style-type: none"> ✓ որոշել պոտենցիալ զգայուն ընկալիչները՝ օգտագործելով առկա ՇՄԱԳ/ԲԿՊ-ով տրամադրված տվյալները և կատարելով տեղամասային այցելություններ, ✓ հաղորդակցվել վարչական շրջանի ղեկավարների հետ՝ իրազեկելով նրանց և 	Աջակցել նախաշինարարական հանդիպման կազմակերպմանը և մասնակցել <u>ՏՎԻ</u> Աջակցել նախաշինարարական հանդիպման կազմակերպմանը և մասնակցել <u>Կապալառու</u> Կազմակերպել նախաշինարարական հանդիպումը	Ներառված է կապալառուի բյուջեյում

Նախնական գնահատման հայտ

		<p>ինդրելով նրանց աջակցությունը,</p> <p>✓ իրազեկել պոտենցիալ ԱԵԱ-ներին և հանրությանը՝ տեսանելի վայրերում փակցնելով Ծրագրի վերաբերյալ տեղեկություն պարունակող հայտարարություններ և պաստառներ՝ հանդիպման ամսաթիվը, վայրը և օրակարգը և կոնտակտային տվյալները,</p> <p>✓ պատրաստել Ծրագրի վերաբերյալ հակիրճ վիզուալ շնորհանդեսներ (PP, գրաֆիկական պատկերներ), ներառյալ շինարարական աշխատանքների նկարագրությունը, ժամանակացույցը և բնապահպանական և ԱԱԱ (H&S) մեղմացնող միջացառումները,</p> <p>✓ հանրությանը ներկայացնել սույն ՇՄԱԳ/ԲԿՊ-ի Գլուխ Է-</p>		
--	--	---	--	--

Նախնական գնահատման հայտ

		<p>ի E3-ում նկարագրված ԲԼՄ-ն:</p> <p>2. Արձանագրել նախաշինարարական փուլի հանդիպումը (հանդիպման արձանագրությունը, օրակարգը, մասնակիցների ցանկը, բարձրացված հարցերը, լուսանկարները) և ամբողջական տեղեկությունը ներառել ՇԲԿ-ի մեջ:</p> <p>3. Լուծել բարձրացված խնդիրները կամ փոխանցել դրանք ՎԻ-ին, այնուհետև առաջընթացի վերաբերյալ առաջին հաշվետվությունում ներկայացնել դրանց կարգավիճակի մասին (լուծված/չլուծված)</p>		
<p>6. Իրագեցության բարձրացում և Ծրագրի կողմերի վերապատրաստում և դասընթացներ բնապահպանական/ԱԱԱ (H&S), սոցիալական երաշխիքների թեմաներով</p>	<p>Ծրագրի կառավարման, ինժեներական/տեխնիկական և վերահսկողության և Կապալառուի անձնակազմի՝ բնապահպանության, ԱԱԱ և սոցիալական պաշտպանության վերաբերյալ ԱԶԲ-ի անվտանգության երաշխիքների և ազգային օրենսդրական պահանջների մասին տեղեկատվության և ըմբռնման պակասը, որը</p>	<p>Իրականացնել միջոցառումներ՝ Բնապահպանական և անվտանգության գծով վերապատրաստման ծրագրի համաձայն (տե՛ս Գլուխ Ը)</p> <p>1. ԱԶԲ-ի անվտանգության երաշխիքների վերաբերյալ ՏՎԻ-ի կողմից վերապատրաստման դասընթացների կազմակերպում ԵԶ-ի, ԵՔՕԻԳ-ի և Կապալառուի ինժեներական և բնապահպանության,</p>	<p><u>ՏՎԻ</u> Մեկնարկից հետո՝ մոբիլիզացիայի ժամանակահատվածում կազմակերպել վերապատրաստման դասընթաց նախքան շինարարական աշխատանքների սկսելը</p> <p><u>Կապալառու</u> Մշակել Անվտանգության դասընթացների պլան և մոբիլիզացիայի ժամանակահատվածում՝</p>	<p><u>Տեխնիկոլոգիայի խորհրդատու (Ինժեներ)</u></p> <p>Առողջության, անվտանգության և բնապահպանական ծրագրի 1 օրվա ուսուցման ծախսերը 50 շինարար-բանվորի համար գնահատված է</p>

Նախնական գնահատման հայտ

	<p>կարող է պայմանագրի չկատարմանը:</p> <p>հանգեցնել կետերի</p>	<p>առողջության և անվտանգության գծով անձնակազմի համար՝ նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը:</p> <p>ii. ՇԲԿՊ-ում մշակել դասընթացների ծրագիր Կապալառու կազմակերպում է Բնապահպանական /անվտանգության ներածական դասընթաց Կապալառուի և ենթակապալառուների անձնակազմի համար մեկնարկից հետո՝ առաջին շաբաթվա ընթացքում և նախքան շինարարական աշխատանքներն սկսելը:</p>	<p>նախքան շինարարական աշխատանքներն սկսելը կազմակերպել ուսուցողական դասընթաց ողջ անձնակազմի համար</p> <p><u>ԵՔԾԻԳ</u></p> <p>Մասնակցել վերապատրաստման/ուսուցողական դասընթացներին</p> <p><u>ԱԶԲ</u></p> <p>Մասնակցել վերապատրաստման/ուսուցողական դասընթացներին</p>	<p>2 950 ԱՄՆ դոլար՝ կիրառելով հետևյալ հաշվարկը. օրական 50 ԱՄՆ դոլար՝ գումարած 3 օրվա համար ուսուցանողի վճարը՝ օրական 75 ԱՄՆ դոլարի չափով</p> <p><u>Կապալառու</u></p> <p>Ուսուցման ծախսերը ներառված են 1՝ լրիվ դրույքով աշխատող ԱԱԲ մասնագետի ծախսերի մեջ և ներառված են Կապալառուի բյուջեում</p>
<p>7. Շինհրապարակի մոբիլիզացիա. Շինհրապարակի առանձնեցում, շինճամբարի տեղակայում</p>	<p>Շինարարական աշխատանքները սկսվում են նախքան անվտանգության միջոցառումների ձեռնարկելը</p>	<p>1. Տեսանելի ցանկապատել և հստակ առանձնացնել շինճամբարը տեղադրելով ամուր և ժապավենային ցանկապատեր (ինչպես պահանջվում է Ինժեների կողմից):</p> <p>2. Կազմակերպել ճամբարի տարածքը, ներառյալ՝</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>Իրականացնում է Մոբիլիզացիայի պլանը</p> <p><u>ՏՎԻ</u></p> <p>Իրականացնել Մոբիլիզացիայի պլանի մոնիթորինգ</p>	<p>Ներառված է Կապալառուի բյուջեում</p>

Նախնական գնահատման հայտ

		պահեստը, ավտոկայանատեղին, արհեստանոցները և այլն: 3. Ապահովել սանիտարական հարմարություններ ամբողջ անձնակազմի համար: 4. Անձնակազմին ապահովել համազգեստով և ԱՊՍ-ներով:	<u>ԵՔՕԻԳ</u> Ստուգել Մոբիլիզացիոն ծրագրի իրականացումը	
8. Կառույցների վրա թրթոման ազդեցության ելակետային տվյալների հետազոտություն	Կառույցները կարող են ազդեցության ենթարկվել պայթեցման աշխատանքների և լիցքերի խտացման համար գլոբոնների աշխատանքի հետևանքով	Մշակել և հաստատման ներկայացնել հետազոտության և ազդեցության մեղմացնող մեթոդաբանությունը Նախքան շինարարական աշխատանքներն սկսելը պատրաստել և ներկայացնել հետազոտության վերաբերյալ հաշվետվությունը	<u>Կապալառու</u> Մշակել մեթոդաբանությունը, կատարել հետազոտություն և ներկայացնել հետազոտության վերաբերյալ հաշվետվությունը <u>ՏՎԻ</u> Ուսումնասիրել և հաստատել մեթոդաբանությունն ու հաշվետվությունը Մոնիթորինգի ենթարկել հետազոտության իրականացումը <u>ԵՔՕԻԳ</u> Վերահսկել գործընթացը	Ներառված է Կապալառուի բյուջեում
9. Ճանապարհի և գույքի վիճակի հետազոտություն	Ճանապարհները կարող են վնասվել մեքենամեխանիզմների և բեռնատարների շահագործման հետևանքով	Նախքան շինարարական աշխատանքներն սկսելը պատրաստել և ներկայացնել հետազոտության վերաբերյալ հաշվետվությունը	<u>Կապալառու</u> Կատարել հետազոտություն և ներկայացնել հետազոտության վերաբերյալ հաշվետվությունը <u>ՏՎԻ</u> Ուսումնասիրել և հաստատել հաշվետվությունը: Իրականացնել հետազոտության իրականացման մոնիթորինգ:	Ներառված է Կապալառուի բյուջեում

			<u>ԵՔԾԻԳ</u> Վերահսկել գործընթացը	
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ				
1. Բնապահպանական, առողջության և անվտանգության գծով վերապատրաստման և դասընթացների ծրագիր				
10. Իրագեցման փորձարարություն և Ծրագրի կողմերի վերապատրաստում նդասընթացներ բնապահպանական/ ԱԱԱ (H&S), սոցիալական երաշխիքների թեմաներով	Ծրագրի կառավարման, ինժեներական/տեխնիկական և վերահսկողության և Կապալառուի անձնակազմի՝ բնապահպանության, ԱևԱ և սոցիալական պաշտպանության վերաբերյալ ԱԶԲ-ի անվտանգության երաշխիքների և ազգային օրենսդրական պահանջների մասին տեղեկատվության և ըմբռնման պակասը, որը կարող է հանգեցնել պայմանագրի կետերի չկատարմանը:	Իրականացնել միջոցառումներ՝ Բնապահպանական և անվտանգության գծով վերապատրաստման ծրագրի համաձայն (նաև տե՛ս Գլուխ Ը) 1. Անձնակազմի փոփոխության դեպքում կանոնավոր կերպով կազմակերպել ՏՎԻ-ի անձնակազմի վերապատրաստման դասընթացներ՝ բնապահպանական, ԱԱԱ և սոցիալական երաշխիքների վերաբերյալ: 2. Կապալառուի և ենթակապալառուների անձնակազմի համար պարբերաբար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ՝ համաձայն ՇԲԿՊ-ում մշակված դասընթացների պլանի՝ հետևելով նշված պահանջներին. ա) տարեկան 2 պարտադիր վերապատրաստման	<u>Կապալառու</u> ՇԲԿՊ շրջանակում մշակել կողմնորոշման պլան: Կազմակերպել կետ 2-ում նշված վերապատրաստման դասընթացները: <u>ՏՎԻ</u> Դիտարկել և հաստատել Ծրագիրը, իրականացնել Ծրագրի մոնիթորինգը ՏՎԻ-ի նոր նշանակված անձնակազմի համար պարբերաբար կազմակերպում է ուսուցողական դասընթացներ <u>ԵՔԾԻԳ</u> Ստուգում է իրականացումը	<u>ՏՎԻ</u> Ներառված է ԲԱԱԱ (EHSS) մասնագետի վարձատրության մեջ <u>Կապալառու</u> Ներառված է լրիվ դրույքով աշխատող 1 ԲԱևԱ մասնագետի վարձատրության մեջ

		<p>դասընթաց ողջ անձնակազմի համար,</p> <p>բ) նախքան աշխատանքն սկսելը յուրաքանչյուր նոր վարձված աշխատողի համար անվտանգության երաշխիքների, այդ թվում՝ արտակարգ իրավիճակներին արձագանքելու վերաբերյալ դասընթացի կազմակերպում,</p> <p>գ) նախքան նոր տեսակի աշխատանք սկսելը՝ իրականացնել տվյալ աշխատանքի տեսակին բնորոշ անվտանգության դասընթաց</p> <p>դ) ՏՎԻ-ի պահանջով միջանկյալ լրացուցիչ դասընթացներ հատուկ թեմաների վերաբերյալ և / կամ թիրախային աշխատանքային խմբերի հետ,</p> <p>ե) այլ դասընթացներ՝ համաձայն Աշխատանքի անվտանգության և առողջության պլանի:</p>		
2. Աշխատանքային անվտանգության և առողջության պլան				
<p>11. Շինհրապարակի բոլոր գործողությունները</p>	<p>Տեղեկատվության պակասը Ծրագրի համար կիրառելի</p>	<p>I. ԱՌՈՂՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՊԼԱՆ</p>	<p><u>Կապալառու</u> Մշակել, ներկայացնել և իրականացնել ենթածրագրեր</p>	<p>Կապալառուի ԱԱԱ մասնագետի կողմից այս ենթածրագրի</p>

Նախնական գնահատման հայտ

	<p>առողջության և անվտանգության կանոնների մասին կարող է հանգեցնել աշխատողների, Ծրագրի ազդեցությանը ենթակա անձանց և շինհրապարակի մերձակայքում գտնվող մարդկանց հիվանդության, վնասվածքի կամ մահվան</p>	<p>1. Ապահովել, որ ողջ անձնակազմն անցնի Աշխատանքի անվտանգության և առողջության կողմնորոշման դասընթացներ՝ Գլուխ Ը-ում թվարկված թեմաների վերաբերյալ:</p> <p>2. Աշխատանքային տեղամասի յուրաքանչյուր հատվածում նշանակվում է Առողջության և անվտանգության գծով պատասխանատու, և նրանց կոնտակտային տվյալները տեղադրվում են տեսանելի վայրերում:</p> <p>3. Պարբերաբար տրվող աշխատանքին բնորոշ հրահանգներ՝ ողջ անձնակազմի անվտանգ աշխատանքի վերաբերյալ՝ համաձայն ՀՀ օրենսդրության, ինչպես նաև նոր աշխատանք սկսելուց առաջ և նոր վարձված աշխատողների համար աշխատանքի անցնելուց առաջ: Վարել գրանցամատյան, որը հասանելի է ստուգումների համար:</p> <p>II. ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ</p> <p>4. Շինհրապարակի աշխատակիցներին տրամադրել և ապահովել աշխատանքային</p>	<p><u>ՏՎԻ</u> Ուսումնասիրել և հաստատել Ծրագիրը, իրականացնել պատահարների գրանցամատյանի մոնիթորինգը</p> <p><u>ԵՔԾԻԳ</u> Ուսումնասիրել Ծրագիրը և աջակցել ՏՎԻ-ին</p>	<p>մշակման, իրականացման և կառավարման ծախսերը հաշվարկված են վերը նշված 6-րդ կետում:</p> <p>50 բանվորի համար ԱՊՍ արժեքը՝ 250 ԱՄՆ դոլար, գնահատված է 12 500 ԱՄՆ դոլար: Առողջության ռիսկերի, COVID-19- ի և ապօրինի թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է վերոնշյալ 6-րդ կետում ներկայացված դասընթացում:</p>
--	--	--	--	---

		<p>համազգեստով և ԱՊՄ-ով, ինչպես մանրամասնորեն ներկայացված է Գլուխ Ը. Բնապահպանական կառավարման պլան, 2, Մասնագիտական առողջության և անվտանգության պլանում:</p> <p>5. Առողջությանն ու անվտանգությանն առնչվող պատահարները պետք է արձանագրվեն և ծանուցվեն Ինժեներին և համապատասխան ղեկավար մարմիններին՝ ըստ անհրաժեշտության</p> <p>III. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ</p> <p>6. Տրամադրել անվտանգության ապահովման համար անհրաժեշտ բոլոր գործիքները և լրացուցիչ սարքավորումները (տե՛ս Գլուխ Ը)</p> <p>7. Շինհրապարակից բացառել ոչ անվտանգ գործելակերպը և գործիքները</p> <p>8. Անվտանգ կերպով ցանկապատել, ծածկել և պաշտպանել բոլոր փորված խրամուղիները, փոսերը և հորերը օրվա ընթացքում և մինչև աշխատանքային օրվա ավարտը</p>		
--	--	--	--	--

		<p>9. Կրակմարիչի առկայություն, որը հասանելի կլինի բոլոր շինճամբարում և շինարարական հրապարակի բոլոր հատվածներում:</p> <p>IV.ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՅՐՈՒՄ</p> <p>10. Բուժաշխատողի կողմից աշխատողների և այլ անձնակազմի համար կանոնավոր բժշկական ստուգումներ, և ստուգման վերաբերյալ շինհրապարակում առկա գրանցումներ</p> <p>11. Շինհրապարակի բոլոր հատվածներում և շահագործվող մեքենամեխանիզմներում առաջին օգնության պարագաների առկայություն</p> <p>12. Կապալառուի անձնակազմին տրամադրել կրթական նյութեր, բավարար քանակությամբ բարձրորակ պահպանակներ, կանոնավոր ՍՃՓՎ / ՄԻԱՎ-ի թեստեր, և անհրաժեշտ դեպքերում՝ սեռավարակների և ՁԻԱՀ-ի անվճար բուժում</p> <p>13. Մշակել COVID-19 Առողջության և անվտանգության պլան. Աշխատանքի բոլոր վայրերում</p>		
--	--	---	--	--

		<p>ապահովել COVID-19-ի վերահսկողության միջոցներ, գործիքներ և հարմարություններ</p> <p>V. ՀԱՆՐԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ</p> <p>13. Կիրառել բոլոր նախագուշացնող միջոցները (կոշտ և ժապավենով սահմանագծում, հսկիչ-անցակետեր, մուտքն արգելող պաստառներ և այլն)՝ աշխատանքային տեղամասը մեկուսացնելու և կողմնակի անձանց մուտքն աշխատանքային տեղամաս արգելելու համար,</p> <p>14. Տեսանելիորեն տեղադրել ցուցանակներ / պաստառներ, որոնք տեղեկացնում են ընթացիկ շինարարական աշխատանքների մասին և նախագուշացնում են վտանգի մասին,</p> <p>15. Տեղի հանրության համար տրամադրել շրջանցիկ ճանապարհ՝ կանխելով նրանց մուտքը աշխատանքային տարածք: Անհրաժեշտ վայրերում տեղադրել</p>		
--	--	--	--	--

		<p>ցուցանակներ, որոնք ցույց են տալիս շրջանցումները:</p> <p>16. Երբ շրջանցումը հնարավոր չէ, ապահովել անվտանգ միջանցք աշխատանքային տարածքում անցորդների համար,</p> <p>17. Մաքուր պահել մարդկանց կողմից օգտագործվող անցուղիները և չթողնել, որ մակերևույթը սայթաքուն դառնա շինհրապարակից տարածքվող ցեխից:</p>		
3. Հանրային լուսամների և հաղորդակցության պլան				
<p>12. Հանրային քննարկումներ, լուսամներ, իրազեկման մակարդակի բարձրացում</p>	<p>Ազդեցության ենթակա կողմերի կողմից տեղեկատվության և ըմբռնման պակասը ծրագրված աշխատանքների, գործողությունների և իրականացման ժամանակացույցի մասին կարող է հանգեցնել հիասթափության ու դժգոհության, ինչն էլ իր հերթին՝ խոչընդոտների և ժամկետների խաթարումների:</p>	<p>1. Ձեռնարկել սույն ՇՄԱԳ Գլուխ Է-ում նկարագրված միջոցները՝ ՇԲԿՊ շրջանակում Հանրային լուսամների և հաղորդակցության պլանը մշակելու համար</p> <p>2. Ծրագրի համար հիմնել և վարել ԲԼՄ, մասնավորապես՝ ա. Հանրության համար տեղադրել պաստառներ կամ Ծրագրի մասին տեղեկություններ պարունակող ցուցատախտակներ, այդ թվում՝ գրասենյակի վայրը, աշխատանքային ժամերը, պատասխանատու կոնտակտային անձանց անունները, «թեժ գծի» հեռախոսահամարները, փոստային հասցեն,</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>ՇԲԿՊ-ում Հանրային լուսամների և հաղորդակցության պլանի մշակում և ԲԼՄ-ի հիմնում, առաջադրված հարցերի լուծում</p> <p><u>ՏՎԻ</u></p> <p>Ուսումնասիրել և հաստատել ՀԼՀՊ-ն, Կապալառուի պատասխանատվությունից դուրս լինելու դեպքում դրանք հասցեագրել այլ մարմինների:</p> <p><u>ԵՔԾԻԳ</u></p> <p>Լուծել իր պատասխանատվության ներքո գտնվող խնդիրները</p>	<p>Կապալառուի ԱԱԱ մասնագետի կողմից այս ենթածրագրի մշակման, իրականացման և կառավարման ծախսերը հաշվարկված են վերը նշված 4-րդ կետում:</p>

		<p>էլեկտրոնային հասցեները և այլն:</p> <p>բ. Նշանակել անձնակազմ, որի անդամները պատասխանատու կլինեն հանրության և ԱԵԱ-ների կողմից բարձրացված հարցերը լուծելու համար:</p> <p>Ապահովել անհապաղ համագործակցությունը սոցիալական մասնագետի հետ:</p> <p>գ. Հանրային բողոքների և առաջարկների համար մշակել դիմումի ձև:</p> <p>դ. Վարել բողոքների գրանցամատյան, որը գրասենյակում հեշտությամբ հասանելի կլինի ազդեցությանը ենթակա անձանց և ստուգումների համար:</p> <p>Գրանցամատյանում գրանցել ԱԵԱ-ների բոլոր բողոքները (բանավոր և գրավոր) և առաջընթացի վերաբերյալ ամսական հաշվետվություններում ներկայացնել դրանց լուծման կարգավիճակը:</p> <p>3. Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ հարևան հանրության հետ՝ նոր ծագած խնդիրները քննարկելու համար:</p> <p>4. Ազդեցության ենթակա հանրությունը նախապես</p>		
--	--	--	--	--

		(առնվազն 1 օր առաջ) ցուցանակների և պաստառների միջոցով տեղեկացնել ցանկացած անհարմարության մասին, օրինակ՝ երթևեկության, տեղական ջրամատակարարման, էլեկտրաէներգիայի մատակարարման խափանումների և պայմանների փոփոխության և այլն:		
4. Ֆլորայի պահպանության և բուսականության մաքրման պլան				
13. Մաքրում և արմատահանում, հողային աշխատանքներ և այլ շինարարական աշխատանքներ	Ֆլորայի և բնական միջավայրի խաթարում և տեսակների կորուստ Բուսականության մաքրման ընթացքում բնական միջավայրի խաթարումը	1. Ապահովել, որ նախքան որևէ հատվածում աշխատանքները սկսելը բոլոր բանվորները և անձնակազմի այլ անդամները վերապատրաստվեն Ֆլորայի պաշտպանության և բուսականության մաքրման պլանի պահանջների գծով: <i>Ծառերի (թփերի) կտրում</i> 2. Հստակ նշել մաքրման ենթակա կամ այլ կերպ խաթարվող տարածքները: Բանվորներն ու սարքավորումները գտնվում են շինհրապարակի սահմանված տարածքում, դրանով իսկ կանխելով և/կամ նվազեցնելով այլ բնական հատվածների հասցվող վնասը:	<u>Կապալառու</u> ԿԲԿՊ-ի շրջանակում մշակել Ֆլորայի և ֆաունայի պաշտպանության և բուսականության մաքրման պլան, ներառյալ՝ Ծառերի կտրվարման պլանը, իրականացնել պահանջվող մեղմացնող միջոցառումները և կառավարումը: Բարձել ֆլորայի և ֆաունայի խորհրդատու միջոցառումների իրականացման համար: <u>Ինժեներ</u> Դիտարկել և հաստատել պլանը, մոնիթորինգի ենթարկել իրականացումը և կառավարումը <u>ԵԶՕԻԳ</u> Աջակցել ՇՄՆ-ի հետ համագործակցելիս	Կապալառուի ԱևԱ մասնագետի կողմից այս ենթապլանի մշակման, իրականացման և կառավարման ծախսերը հաշվարկված են վերը նշված 4-րդ կետում: Ֆլորայի մասնագետի 20 օրվա վարձակալության արժեքը (օրական՝ 75 ԱՄՆ դոլար) գնահատված է 1500 ԱՄՆ դոլար

		<p>2. Ծանուցել Ինժեներին նախքան ծառերի և թփերի ցանկացած հատում սկսելը:</p> <p>3. Պահել կտրված ծառերի և թփերի զրանցամատյան, որը հասանելի կլինի ստուգումների համար:</p> <p>4. Բուսականության հատման և մաքրման աշխատանքները խստագույնս հետևել ԵՔ-ի Ավագանու Ն-405 որոշման պահանջներին, ինչպես նաև՝ համաձայն Տեխնիկական մասնագրերի Բաժին 401-ի՝ – Մաքրում և արմատահանում և Բաժին 1003 –ի՝ Ծառեր և թփեր:</p> <p>5. Ստուգել և համոզվել, որ աշխատողներն օգտագործում են պաշտպանիչ հանդերձանք (ԱՊՍ/PPE) ծառերը կտրելիս կամ բուսականության մաքրման համար քիմիական նյութեր կիրառելիս:</p> <p>6. Կտրված և մաքրված բուսականության կառավարում՝ ըստ Թափոնների և նյութերի տեղավորման պլանի: Բացառել փայտանյութի թափոնների այրումը:</p> <p>7. Փայտանյութի թափոնների և մաքրված խոտի կուտակման համար հատկացնել ժամանակավոր տարածք և հեռացնել 2 օրվա ընթացքում:</p>	<p>Վերահսկել գործընթացը և ստուգել իրականացումը</p>	<p>Գոյություն ունեցող համայնքային ծառերի պահպանման ծախսերը 100 ծառի համար՝ յուրաքանչյուրը 15 ԱՄՆ դոլար, գնահատված է 1500 ԱՄՆ դոլար:</p>
--	--	---	--	---

		<p>8. Միջոցներ ձեռնարկել ծառերի և թփերի պաշտպանության համար, որոնք չեն հատվելու, բայց կարող են ազդեցության ենթարկվել (նշելով դրանք այնպես, որ հեշտությամբ ճանաչելի լինեն աշխատողների համար՝ տրանսպորտային միջոցների տեղաշարժ, թափոնների և նյութերի տեղավորում և այլն):</p> <p>9. Խուսափել տարածքի ցանկացած աղտոտումից և ավելորդ ծառահատումներից ու բուսականության մաքրումից: Կտրել միայն այն ծառերն ու թփերը, որոնք խոչընդոտում են աշխատանքներին, առավելագույնս զերծ մնալ լրացուցիչ ծառերի, թփերի, և այլ բուսականության ոչնչացումից, հեռացումից կամ մաքրումից, քան անհրաժեշտ է աշխատանքների կատարման համար:</p> <p>10. Վերականգնել խոտածածկը և այլ բուսականությունը ժամանակավոր օգտագործվող տարածքներում:</p>		
<p>5. Շրջակա միջավայրի պահպանության պլան</p>				

Նախնական գնահատման հայտ

<p>14. Հողային աշխատանքներ նյութերի տեղափոխում և տրանսպորտ Այլ շինարարական աշխատանքներ</p>	<p>Հողի էրոզիա</p> <p>Փոշու և մեքենաների արտանետումների պատճառով մթնոլորտային օդի աղտոտման մակարդակի ավելացում</p> <p>Աղմուկի և թրթռման ավելացում</p>	<p><i>Օդի աղտոտվածության և փոշու վերահսկողություն</i></p> <p>1. Նվազագույնի հասցնել փոշու արտանետումները՝ շինարարական հրապարակը կանոնավոր կերպով ջրցանելու միջոցով: Ջրցանման հաճախականությունը պետք է համաձայնեցվի Ինժեների հետ՝ կախված հողի տեսակից, սեզոնային և եղանակային պայմաններից, սակայն ոչ պակաս, քան աշխատանքային օրվա ընթացքում 3-4 անգամ:</p> <p>2. Աշխատանքները պլանավորել այնպես, որպեսզի նվազագույնի հասցվեն հանույթի տարածքների՝ որպես փոշու հիմնական աղբյուրի մակերեսները և խուսափել երկար ժամանակ շինհրապարակում հողի կույտերը պահելուց:</p> <p>3. Շինարարական նյութերը մատակարարել օգտագործման ժամանակ և բացառել լիցքի նյութերի վաղաժամ կուտակումը շինհրապարակում, որոնք հնարավոր չէ օգտագործել տվյալ օրը:</p> <p>4. Ծածկել լիցքի նյութերի կույտերը, եթե դրանք,</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>ԿԲԿՊ-ի շրջանակում մշակել գործիքային չափումների և մոնիթորինգի պլանը, իրականացնել պահանջվող մեղմացնող միջոցառումները և կառավարումը</p> <p><u>Ինժեներ</u></p> <p>Դիտարկել և հաստատել պլանը, մոնիթորինգի ենթարկել իրականացումը</p> <p><u>ԵՔՕԻԳ</u></p> <p>Աջակցել ՇՄՆ-ի հետ փոխգործակցելիս</p> <p>Վերահսկել գործընթացը և ստուգել իրականացումը</p>	<p>Ստորև ներկայացված ծախսերն ուղղված են շրջակա միջավայրի պահպանությանը. ա) Բուսահողի հանման, պահեստավորման և վերաօգտագործման արժեքը՝ 3 ԱՄՆ դոլար 1մ³-ի համար:, ընհանուր առմամբ ծախսը գնահատված է 16500 ԱՄՆ դոլար բ) օդի, աղմուկի և թրթռումների մակարդակի վերաբերյալ մոնիթորինգի տվյալների հավաքագրման համար մասնագիտացված Կապալառու վարձելու արժեքը գնահատված է 2500 ԱՄՆ դոլար:</p>
--	---	--	--	--

		<p>այնուամենայնիվ, երկար են մնալու շինհրապարակում՝ փոշու արտանետումները կանխելու համար:</p> <p>5. Կարգավորել փոխադրամիջոցների և սարքավորումների արագության սահմանափակումները՝ փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու համար:</p> <p>Շինարարական հրապարակում արագությունը չպետք է գերազանցի 10-20կմ/ժ-ը:</p> <p>6. Պարբերաբար մաքրել ճանապարհները եզրերին կուտակված ցեխից և ավազից, քանի որ դրանք դառնում են փոշու արտանետումների աղբյուր:</p> <p>7. Ապահովել, որ բոլոր բեռնատարները օգտագործեն ծածկեր հանրային ճանապարհներով և բնակելի տարածքներին կից շինհրապարակներում սորուն նյութեր տեղափոխելիս:</p> <p>8. Աշխատողներին ըստ անհրաժեշտության ապահովել փոշու պաշտպանիչ դիմակներով և համոզվել, որ նրանք օգտագործում են դրանք:</p> <p>9. Իրականացնել մեքենաների և սարքավորումների կանոնավոր</p>		
--	--	--	--	--

		<p>տեխնիկական ստուգումներ և նորոգում՝ գազի ավելորդ արտանետումներից խուսափելու համար:</p> <p><i>Հողի էրոզիա և նստվածքազոյացման վերահսկում</i></p> <p>1. Պահպանել առկա հողի շերտը այնտեղ, որտեղ հնարավոր է: Եթե անհրաժեշտ չէ, չխաթարել հողը:</p> <p>2. Ապահովել ժամանակավոր ծածկ (ինչպես օրինակ՝ արագ աճող խոտի տեսակներ) այն տարածքների համար, որտեղից հողի շերտը հեռացվում է և գետինը մերկանում է երկար ժամանակով:</p> <p>3. Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ հողի էրոզիան կանխելու և շեղերի կայունությունն ապահովելու համար:</p> <p>4. Նախքան հողային աշխատանքներն սկսելը, մաքրման և արմատահանման աշխատանքներից հետո հեռացնել բուսահողը և առանձնացնել մեծ քարերն ու ժայռերը:</p> <p>5. Չափել հեռացված և պահեստավորված բուսահողը և</p>		
--	--	---	--	--

Նախնական գնահատման հայտ

		<p>գրանցամատյանում կատարել գրանցումներ ստուգման համար:</p> <p>6. Պահել բուսահողը մինչև 2 մ հասնող կանոնավոր կույտերով նախապես որոշված և Ինժեների հետ համաձայնեցված տարածքներում՝ անվտանգ հեռավորություն պահպանելով թափոններից և այլ նյութերից:</p> <p>7. Այնպես տնօրինել բուսահողը, որ պահպանվեն դրա քիմիական և կենսաբանական հատկանիշները: Բուսահողը նորից օգտագործել թփեր, ծառեր տնկելու և կանաչապատման այլ նպատակների համար:</p> <p>8. Ցանել խոտ բուսահողի կույտերի վրա, որոնք պահպանվում են երկար ժամանակով՝ խուսափելու էրոզիայից և կորուստներից:</p> <p>9. Բուսահողի կույտերի վրա իրականացնել ջրահեռացման ալյուսներ՝ էրոզիայից խուսափելու նպատակով հեղեղաջրերի հեռացումն ապահովելու համար:</p>		
--	--	--	--	--

		<p><i>Աղմուկի և թրթռման վերահսկողություն.</i></p> <p>1. Խուսափել շինարարական գործողությունները, ճամբարները և սարքավորումներն ազդեցության նկատմամբ առավել զգայուն ընկալիչների մոտ տեղակայելուց, ինչպես օրինակ՝ վատ մեկուսացում ունեցող տներն են, դպրոցները, այլ հասարակական և բնակելի վայրերը:</p> <p>2. Աղմկոտ գործողությունների իրականացումը ծրագրել օրվա կեսերին, եթե հնարավոր է:</p> <p>3. Կանոնավոր կերպով ստուգել աղմուկի և թրթռման գործիքային չափումների տվյալները և համապատասխանաբար փոխել շինարարական մեթոդը աղմուկի և թրթռման մակարդակը նվազեցնելու համար, որպեսզի վերջիններս չգերազանցեն ՇՄՆՌ Աղյուսակ Ե-6-ում և Ֆ-4-ում ներկայացված առավելագույն թույլատրելի մակարդակները:</p> <p>4. Ապահովել, որ առավել զգայուն տարածքներում (վատ մեկուսացում ունեցող տները, դպրոցները հնագիտական վայրերը) թրթռումների մակարդակները կանոնավոր</p>		
--	--	---	--	--

		<p>կերպով վերահսկվեն. աշխղենկն ու աշխատողները տեղյակ են գործիքային չափումների տվյալներին և կիրառվում է Ինժեների պահանջած պատշաճ շինարարական մեթոդը:</p> <p>5. Ապահովել, որ բոլոր մեքենաները համալրված լինեն համապատասխան իլացուցիչներով և չօգտագործել այն սարքավորումները, որոնք պատշաճ վիճակում չեն:</p> <p>6. Ապահովել, որ բանվորներին և շինհրապարակի այլ անձնակազմին տրամադրվեն համապատասխան ԱՊՍ-ներ, այդ թվում՝ ականջի պաշտպանիչ սարքեր՝ աղմկոտ միջավայրում աշխատելիս:</p>		
6. Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանության պլան				
<p>15. Հավաքակայանի վերակառուցման շինարարական աշխատանքներ</p>	<p>Ստորգետնյա ջրերի և ջրագծերի աղտոտում</p>	<p>1. Աղտոտող, փոշի արտանետող և նստվածքներ առաջացնող մեքենաներն ու սարքավորումները տեղադրել հավաքակայանի տարածքի ջրա- և կոյուղագծերից հնարավորինս հեռու:</p> <p>2. Աշխատանքային տեղամասի տարածքում կառուցել ջրահեռացման համակարգ, նախնական</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>ԿԲԿՊ շրջանակում մշակել Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանման պլան և իրականացնել պահանջվող մեղմացնող միջոցառումները:</p> <p>Վարձել մասնագիտացված ենթակապալառու՝ ջրի որակի ելակետային և կանոնավոր ստուգումների համար:</p> <p><u>Ինժեներ</u></p>	<p>Ստորև բերված ծախսերը մասնավորապես ուղղված են ջրային մարմինների պահպանությանը. ա) շինարարական աշխատանքների արդյունքում առաջացած նստվածքների մշակման արժեքը (նախքան դրանց</p>

Նախնական գնահատման հայտ

		<p>հավաքել հոսող ջրերը և մաքրել տեղային ջրահեռացման գիծ թափվելուց առաջ: Կանխել չմաքրված հեղեղաջրերի և կեղտաջրերի հոսքը շինհրապարակից:</p> <p>3. Կանխել ջրերի արտահոսքը շինարարական բոլոր տեղամասերից, այդ թվում՝ շինարարական ճամբարներից, քարհանքերից, ջարդիչ գործարաններից և բետոնի հանգույցներից, թափոնների կուտակավայրերից և այլն:</p> <p>4. Մաքրել արտահոսքերը, որոնք առաջացել են շինարարական գործունեության արդյունքում հողից և այլ նստվածքներից՝ նախքան տեղային ջրահեռացման գիծ թափվելը:</p> <p>5. Կանոնավոր կերպով ստուգել, վերանորոգել կամ կարգավորել ջրահեռացման կառույցները՝ հատկապես հեղեղաջրերից հետո նստվածքները կանխելու համար:</p>	<p>Դիտարկել և հաստատել Պլանը, մոնիթորինգի ենթարկել իրականացումը և կառավարումը</p> <p><u>ԵՔԾԻԳ</u> Աջակցել ՇՄՆ-ի հետ համագործակցելիս Վերահսկել գործընթացը և ստուգել իրականացումը</p>	<p>գետերը թափվելը), գնահատվում է՝ 5 000 ԱՄՆ դոլար</p> <p>բ) յուրի գատիչի տեղադրման արժեքը գնահատվում է՝ 12 000 ԱՄՆ դոլար</p> <p>Մակերևութային ջրերի մոնիթորինգի տվյալների հավաքագրման և վերլուծության համար մասնագիտացված կապալառու վարձելու ծախսերը կազմում են 2 500 ԱՄՆ դոլար</p>
--	--	---	---	---

		<p>6. Կառուցել յուղի գատիչներ և այլ նյութերը հավաքող սարքեր խստորեն վերահսկելով կոշտ և հեղուկ թափոնների արտանետումը դեպի ջրագծեր:</p> <p>7. Մաքրել մեքենամեխանիզմներն ու սարքավորումները, և դրանց վերանորոգումն ու վերալիցքավորումը իրականացնել ջրագծերից հեռու՝ անվտանգ հեռավորության վրա:</p> <p>8. Յուրաքանչյուր ջրթող կետում տեղադրել յուղահավաք սարքեր:</p> <p>10. Տեղադրել յուղահավաք սարքեր բոլոր բեռնատարների և մեքենանների մոտ՝ արտահոսքի դեպքում ջրի աղտոտումը կանխելու համար:</p> <p>11. Տեղադրել ճնշումային խողովակ կամ նմանատիպ սահմանափակող այլ սարքեր բոլոր սարքավորումների վրա՝ պատահական արտահոսքի դեպքում աղտոտումը կանխելու համար:</p>		
<p>7. Հաղորդուղիների պահպանության պլան</p>				

Նախնական գնահատման հայտ

<p>16. Հողային աշխատանքներ</p>	<p>Գործող հաղորդողիների վնասումը և ծառայությունների ընդհատումն առաջացնում է ԱԵԱ-ների դժգոհությունը:</p>	<p>Կապալառուն հանրությանը ծանուցում է ջրի, էլեկտրականության և գազի մատակարարման բոլոր խափանումների մասին, նախքան տարածքում աշխատանքները սկսելը:</p> <p>1. Հաղորդողիների պահպանությունը և տեղափոխությունն իրականացնել համաձայն Տեխնիկական մասնագրերի (հղումը ենթակա է հաստատման):</p> <p>2. Հաղորդողիների սեփականատիրոջ հետ ճշտել հաղորդուղու ճշգրիտ տեղադիրքը և անհրաժեշտության դեպքում իրականացնել փորձնական հորատումներ:</p> <p>3. Ծրագրել և կատարել աշխատանքներ՝ հաղորդողիների ժամանակավոր խափանումները նվազեցնելու ուղղությամբ:</p> <p>4. ԱԵԱ-ների հաղորդողիների</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>Հետագոտել հաղորդողները նախքան հողային աշխատանքներն իրականացնելը: Փոխգործակցել տեղական իշխանությունների և ներկայացուցիչների և ծառայություններ մատուցողների հետ:</p> <p>Վարձել հաստատված մասնագիտացված կապալառուների:</p> <p><u>ՏՎԻ</u></p> <p>Վերահսկել և մոնիթորինգի ենթարկել իրականացումը</p> <p><u>ԵՔԾԻԳ</u></p> <p>Աջակցել սեփականատերերի, տեղական իշխանությունների և ծառայություն մատուցողների հետ համագործակցելիս:</p>	<p>Հաղորդողների պահպանության և տեղափոխման արժեքը չի կարող հաշվարկվել որպես բնապահպանական մեղմացնող միջոցառում:</p>
--------------------------------	---	--	--	--

Նախնական գնահատման հայտ

		<p>հնարավոր խափանման մասին տեղեկացնել նախքան աշխատանքներն սկսելը:</p> <p>5. Տեղափոխել շինարարության ընթացքում հայտնաբերված հաղորդողիները, որոնք չեն հայտնաբերվել նախագծման փուլում և պահպանել դրանք հնարավոր վնասումներից:</p> <p>6. Վերականգնել վնասված հաղորդողիներն առավելագույնը 1-2 օրվա ընթացքում՝ Կապալառուի ծախսերով:</p>		
<p>8. Շինարարական ճամբարների տեղակայման պլան</p>				

Նախնական գնահատման հայտ

<p>18. Աշխատանքի հետ կապված հարմարությունների ստեղծում/հիմնում՝ հիմնական գրասենյակ, ներառյալ շարժական տնակները, սարքավորումների և նյութերի պահեստարանները, մեքենաների կայանատեղին, սանիտարական, ընդմիջման և հանգստի հարմարություններ՝ բանվորների և այլ անձնակազմի համար:</p>	<p>Տեղի հանրությանը պատճառվող անհարմարություններ , բնակչության և տեղական / կենտրոնական իշխանությունների հետ հնարավոր կոնֆլիկտային իրավիճակ, ինչպես նաև հողի և ստորերկրյա ջրերի աղտոտում</p>	<p>1. Շինարարական ճամբարը տեղակայել հավաքակայանի տարածքի սահմաններում՝ հանրային տարածքներից հնարավորինս հեռու՝ բնակիչներին չանհանգստացնելու համար: Պահպանել 50 մ բուֆերային հեռավորություն զգայուն ընկալիչներից՝ հարևան շինություններից, ձեռնարկատիրական օբյեկտներից:</p> <p>2. Շինարարական ճամբարը ծրագրի տարածքի սահմաններից դուրս հիմնելու դեպքում ձեռք բերել հողի սեփականատիրոջ թույլտվությունը, նախքան նրա տարածքում ճամբարի հիմնումը:</p> <p>3. Շինարարական աշխատանքի ճամբարները, փոխադրամիջոցների և սարքավորումների կայանատեղիները և այլ հարմարանքները չտեղակայել լանդշաֆտի վրա և բուսածածկ տարածքներում:</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>Մշակել Շինարարական աշխատանքների ճամբարների պլան Մոբիլիզացիայի պլանի և ԿԲԿՊ-ի շրջանակում, իրականացնել պահանջվող մեղմացնող միջոցառումները և կառավարումը:</p> <p><u>Ինժեներ</u></p> <p>Դիտարկել և հաստատել պլանը, մոնիթորինգի ենթարկել իրականացումը</p> <p><u>ԵՔՕԻԳ</u></p> <p>Վերահսկել գործընթացը և ստուգել իրականացումը</p>	<p>Կապալառուի կողմից սույն ենթապլանի մշակման, իրականացման և կառավարման արժեքը ներառված է շինարարության ընդհանուր ծախսերի մեջ:</p> <p>Սույն ենթապլանի իրականացումը պետք է կառավարվի Կապալառուի ԱևԱ մասնագետի կողմից: Դրա արժեքը հաշվառված է վերոնշյալ կետ 4-ում:</p>
--	---	--	--	---

		<p>4. Ողջ անձնակազմի համար ապահովել սանիտարական հարմարություններ՝ բավարար քանակությամբ խմելու և լվացվելու ջուր, զուգարաններ, սեզոնին համապատասխան ճաշելու և հանգստի հարմարություններ:</p> <p>Ապահովել, այդպիսի հարմարությունների հասանելիությունը, որպեսզի բանվորները և անձնակազմի մյուս անդամները մուտք ունենան դեպի հանգստի կայաններ (զուգարաններ, ձեռքի լվացարաններ, ցնցուղներ և այլն), ճաշարան և գրասենյակներ:</p> <p>5. Գիշերային ժամերին ապահովել շինհրապարակի և ճամբարի լուսավորությունը:</p> <p>6. Հատկացնել նյութերի ժամանակավոր պահեստավորման տարածքներ, նյութերը հավաքել կանոնավոր կույտերով և ծածկել ոչ պինդ նյութերը:</p>		
--	--	--	--	--

		<p>7. Պարկերն ու տարաները պետք է լինեն պիտակավորված, որտեղ նշվում է նյութի անվանումը և վնասակարությունը՝ վտանգավոր / ոչ վտանգավոր:</p> <p>8. Մեքենամեխանիզմների կայանատեղին, նորոգման և վերալիցքավորման արհեստանոցները տեղակայել կոպճային և այլ ներծծող նյութերով պատված տարածքներում:</p> <p>9. Աշխատանքային օրն սկսվելուց առաջ իրականացնել մեքենաների կանոնավոր տեխնիկական ստուգումներ՝ ցանկացած արտահոսք և հողի աղտոտումը կանխելու համար:</p> <p>10. Յուղի, քսայուղի և վառելանյութի արտահոսքի դեպքում մաքրվում է տարածքը և աղտոտված ներծծող նյութը տեղափոխվում է թափոնների կուտակման համար հատկացված վայր:</p>		
--	--	---	--	--

		<p>11. Կանոնավոր կերպով կազմակերպել մեքենամեխանիզմների լվացում և ճամբարի տարածքի մաքրում՝ կանխելու կեղտի և ցեխի տարածումը շինհրապարակից:</p> <p>12. Ձեռնարկել են բոլոր ողջամիտ նախագուշակյան միջոցները (ամուր ցանկապատեր, պահակակետեր և այլն)՝ դեպի շինհրապարակ չարտոնված մուտքը կանխելու համար:</p> <p>13. Բոլոր մեքենաների, այդ թվում՝ աշխատող անձնակազմի անձնական մեքենաների համար տրամադրվում է Ծրագրի և / կամ ընկերության պատկերանշանը:</p>		
9. Տեղամասի կառավարման պլան (հավաքակայանի տարածքից դուրս դեպքերի համար)				
<p>19. Քարհանքեր և բացահանքեր</p> <p>Բետոնի հանգույցներ և ասֆալտի գործարաններ</p> <p>Ջարդիչ գործարաններ</p>	<p>Աղմուկի և փոշու պատճառած անհարմարություններ</p> <p>Ե,</p> <p>Ազդեցությունը</p>	<p>1. Նախապատվություն տալ գոյություն ունեցող քարհանքերին, բետոնի հանգույցներին և ասֆալտի գործարաններին՝ նորերը բացելու փոխարեն:</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>ՇԲԿՊ-ի ներքո մշակել ՇԿՊ, իրականացնել պահանջվող մեղմացնող միջոցառումները և կառավարումը</p>	<p>Կապալառուի կողմից սույն ենթապլանի մշակման, իրականացման և կառավարման արժեքը ներառված է</p>

Նախնական գնահատման հայտ

<p>Թափոնների կուտակավայրեր</p>	<p>Չրջակա միջավայրի վրա, այդ թվում՝ պատմական և մշակութային վայրերի և հուշարձանների վրա, գեղագիտական տեսքի կորուստ, տեղական կենսապայմանների և հաղորդակցության միջոցների խափանում, փոխգործակցություն շինարարական աշխատուժի հետ, ճնշումը շրջակա միջավայրի բնական ռեսուրսների վրա, ինչպես օրինակ՝ էրոզիան և նստվածքները, վնասված ճանապարհը, մարդկանց կողմից մատուցվող ծառայությունները</p>	<p>2. Քարհանքերի, բացահանքերի, թափոնների կուտակման վայրերի, բետոնի դրզավորման և ասֆալտի գործարանների հիմնումն ու շահագործումն իրականացնել՝ ըստ Հավելված Ժ-ի պահանջների մշակված և Ինժեների կողմից հաստատված ՇԿՊ-ի:</p> <p>3. Կապալառուի կողմից բետոնի դրզավորման և ասֆալտի նոր գործարաններ բացելու դեպքում դրանք հնարավորինս պետք է հեռու լինեն ՇԿՊ շրջանակում ռիսկի գնահատման հիման վրա հայտնաբերված հնարավոր ընկալիչներից, այն է՝ բնակելի տարածքներից՝ տեղի բնակչությանը անհանգստություն չպատճառելու համար:</p> <p>4. Խուսափել բետոնի դրզավորման և ասֆալտի գործարանները չխաթարված բնական լանդշաֆտում և բուսականությամբ ծածկված մակերևույթին տեղադրելուց:</p> <p>5. Կիրառել վերը նշված բոլոր նախատեսված մեղմացնող միջոցառումները՝ օդի, ջրի որակի, բուսական աշխարհի, ջրահեռացման և այլ</p>	<p><u>ՏՎԻ</u> Դիտարկել և հաստատել պլանը, մոնիթորինգի ենթարկել իրականացումը</p> <p><u>ԵՔՕԻԳ</u> Ստուգել իրականացումը</p>	<p>շինարարության ընդհանուր ծախսերում:</p> <p>Սույն ենթապլանի իրականացումը պետք է կառավարվի Կապալառուի ԱևԱ մասնագետի կողմից: Դրա արժեքը հաշվառված է վերոնշյալ կետ 4-ում:</p>
--------------------------------	--	---	---	---

		<p>հաղորդողինների, ինչպես նաև հարակից բնակելի վայրերի բնակչության վրա ազդեցությունը նվազեցնելու համար:</p> <p>6. Մշակել երթևեկության կառավարման պլան մուտքի և մեքենամեխանիզմների շահագործման համար:</p> <p>7. Մշակել թափոնների կառավարման պլան՝ թափոնների առաջացմանն առնչվող բոլոր հարցերին անդրադառնալու համար:</p>		
10. Երթևեկության և մուտքերի կառավարման պլան				
<p>20. Փոխադրամիջոցների շարժն աշխատանքային տեղամասում և տեղամասից դուրս</p>	<p>Երթևեկության արգելափակում</p> <p>Երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ</p> <p>Շինարարական ծանր սարքավորումների և մեքենաների կողմից ճանապարհների հասցված վնասը</p> <p>Փոշի, աղմուկ և թրթռում</p> <p>Դեպի հանրային ճանապարհները</p>	<p>1. Փոխադրամիջոցների և սարքավորումների շարժն իրականացնել՝ հնարավորինս քիչ միջամտելով երթևեկության հոսքին:</p> <p>2. Խուսափել հանրային ճանապարհները արգելափակելուց ԵԿՊ-ով չնախատեսված դեպքերում:</p> <p>3. Ապահովել հավաքակայանի շարժակազմի երթևեկության և աշխատակիցների համար ժամանակավոր շրջանցիկ ճանապարհներ:</p> <p>4. Շինհրապարակների մուտքերը և ելքերը տեղակայել այնպես, որ դրանք</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>ԿԲԿՊ շրջանակում մշակել և իրականացնել, կառավարել ԵՊԿ-ն:</p> <p><u>Ինժեներ</u></p> <p>Դիտարկել և հաստատել պլանը, մենիտորինգի ենթարկել իրականացումը և կառավարել</p> <p><u>ԵԹՕԻԳ</u></p> <p>Ստուգել իրականացումը</p>	<p>Կապալառուի կողմից այս պլանի մշակման, իրականացման և կառավարման արժեքը ներառված է շինարարության ընդհանուր ծախսերի մեջ: Սույն պլանի իրականացումը պետք է կառավարվի Կապալառուի ԱևԱ մասնագետի կողմից:</p>

Նախնական գնահատման հայտ

	<p>տարվող կեղտը և ցեխը</p>	<p>չխանգարեն ընդհանուր երթևեկությանը և չտուժի հանրային անվտանգությունը: 5. Իրականացնել համապատասխան շինարարական ազդանշանային համակարգ, այդ թվում՝ բավարար չափով վտանգի մասին նախազգուշացնող և ուղղություն ցույց տվող նշաններ, գծանշումներ, երթևեկության ազդանշաններ, լուսավորություն, հստակ տեսանելի ամուր արգելապատնեշներ երթևեկությունը հոսքավորելու համար, և շրջանցումների կարգավորումներ: 7. Հավաքակայանի աշխատակիցների համար ապահովել անվտանգ ցանկապատված այլընտրանքային անցուղիներ: 8. Ապահովել մարդկանց շուրջօրյա (24 ժամ) անխափան մուտքը դեպի խանութները, աշխատավայրերը և այլն: 9. Խստացնել 20 կմ/ժ արագության սահմանափակումը</p>		
--	----------------------------	---	--	--

		<p>աշխատանքային տարածքում՝ անվտանգության և փոշու վերահսկման նպատակով:</p> <p>10. Փոխադրամիջոցների շարժը կազմակերպել՝ ըստ ժամանակացույցի՝ պիկ ժամերից հնարավորինս խուսափելու համար:</p> <p><i>Փոխադրամիջոցների կառավարումը շինհրապարակում և շինհրապարակից դուրս</i></p> <p>11. Վարորդների հետ կանոնավոր կերպով կազմակերպել վերապատրաստման դասընթացներ ԵԿՊ-ի և անվտանգության թեմաներով, սահմանել աշխատանքային ժամերը և արագության սահմանափակումները (20 կմ/ժ), խախտումների համար կիրառել տուգանային համակարգ:</p> <p>12. Հատկացնել կայանատեղիների տարածքներ և տեղակայել դրանք միայն նախատեսված վայրերում:</p> <p>13. Ապահովել, որ բոլոր փոխադրամիջոցներն</p>		
--	--	---	--	--

Նախնական գնահատման հայտ

		<p>(բեռնատարները և մասնավոր մեքենաները) ունենան կազմակերպության պատկերանշանը:</p> <p>14. Միջոցներ ձեռնարկել, որպեսզի փոխադրամիջոցներն ապահովվեն ծածկոցներով՝ ավազի, հողի, ոչ պիտանի նյութի և թափոնների փոխադրման և շինհրապարակից դուրս գալու ժամանակ և շինհրապարակի՝ բնակելի տներին և ձեռնարկատիրական գործունեություններին մոտ գտնվող տարածքներում:</p> <p>15. Ապահովել, որ փոխադրամիջոցներն ունենան ադմկակլանիչներ և իլացուցիչներ:</p> <p>16. Բեռնատար մեքենաների նորոգման, վերալիցքավորման և տեխնիկական սպասարկման համար հատկացնել պատշաճ սարքավորումներով արհեստանոցային տարածք, և մեքենաների տեխնիկական սպասարկումն</p>		
--	--	---	--	--

		<p>իրականացնել միայն այս տարածքում:</p> <p>17. Ստուգել, որ փոխադրամիջոցները կանոնավոր կերպով տեխնիկապես սպասարկվեն՝ կանխելու վառելանյութի և յուղերի արտահոսքը:</p> <p>18. Դադարեցնել արտահոսք ունեցող մեքենաների գործածումը և փոխարինել դրանք պատշաճ վիճակում գտնվողներով:</p> <p>19. Ապահովել անվադողերի մաքրման համար միջոցներ (շինհրապարակում կոպճային մակերևույթների և մեքենաների լվացման հարմարանքներ՝ արտահոսքի կանխարգելման համակարգով) նախքան շինհրապարակից դուրս գալը՝ շինարարական կեղտի և ցեխի տարածումը կանխելու համար:</p> <p>20. Պարբերաբար ստուգել շինհրապարակից եկող կեղտի և ցեխի կուտակումները հարակից ճանապարհների վրա: Անհրաժեշտության և անվտանգ լինելու դեպքում՝ ավելի և մաքրել:</p>		
--	--	---	--	--

11. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան				
<p>21. Վտանգավոր նյութերի հետ և այլ արտակարգ իրավիճակների դեպքում (դժբախտ պատահարներ և այլն) ճիշտ վարվելը</p>	<p>Շինարարության հետ կապված աշխատանքային և հանրային անվտանգությանը սպառնացող հնարավոր վտանգները</p> <p>Դիզելի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով նյութերի ներթափանցումը հողի, մակերևութային ջրերի և/կամ գրունտային ջրերի մեջ</p>	<p>Վտանգավոր նյութերի հետ վարվելը</p> <p>1. Մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգեր: Արտակարգ իրավիճակների արձագանքման ընթացակարգերի վերաբերյալ պաստառները փակցնել տեսանելի վայրերում, և անվտանգության վերաբերյալ տվյալների թերթիկները պետք է հասանելի լինեն ստուգման նպատակով:</p> <p>2. Արտահոսքերի մաքրող գործիքները պետք է հասանելի լինեն աշխատանքային տեղամասում, և աշխատակիցներին սովորեցնել դրանց ճիշտ օգտագործման եղանակները:</p> <p>3. Ներծծող նյութի միջոցով անմիջապես մաքրել այն տարածքը, որտեղ հոսք է տեղի ունեցել՝ հողի և գրունտային ջրերի հնարավոր թունավորումը կանխելու համար:</p>	<p><u>Կապալառու</u> ԿԲԿՊ-ի շրջանակում մշակել Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան, իրականացնել անհրաժեշտ մեղմացնող միջոցառումները և կառավարումը</p> <p><u>ՏՎԻ</u> Ուսումնասիրել և հաստատել պլանը, մոնիթորինգի ենթարկել իրականացումը և կառավարումը</p> <p><u>ԵԶՕԻԳ</u> Աջակցել ՇՄՆ-ի հետ փոխգործակցելիս</p> <p>Ստուգել իրականացումը</p>	<p>Կապալառուի կողմից այս ենթապլանի մշակման, իրականացման և կառավարման ծախսերը ներառված են ընդհանուր շինարարության արժեքի մեջ:</p> <p>Այս պլանի իրականացումը վերահսկվելու է Կապալառուի՝ շրջակա միջավայրի, առողջապահության և անվտանգության մասնագետի կողմից: Ծախսերն ընդգրկված են Կետ 4-ում:</p> <p>Արտակարգ իրավիճակների արձագանքման թիմի՝ 10 անդամների եռօրյա ուսուցման արժեքը՝ յուրաքանչյուր օրվա համար 50 ԱՄՆ դոլար արժողությամբ, գումարած ուսուցանողի՝ 3 օրվա վճարը՝ 75 ԱՄՆ դոլար, գնահատվում է՝ 1725 ԱՄՆ դոլար:</p>

		<p>4. Օգտագործել միայն Մոբիլիդագիոն պլանում նշված քիմիական և վտանգավոր նյութերը և անհրաժեշտության դեպքում թարմացնել ցանկը:</p> <p>5. Այդ նյութերը պետք պահվեն շինհրապարակում՝ ծածկված, անվտանգ և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում, որն ունի անանցանելի/անթափանցելի հատակ և թմբապատնեշ: Թմբապատնեշը պետք է ունենա ամենամեծ բաքի 150%-ի չափով տարողունակություն:</p> <p>6. Պահեստային տարածքները տեղակայել ջրահեռացման համակարգերից հեռու և խստորեն սահմանափակել մուտքը (միայն լիազորված անձանց համար)</p> <p>7. Բոլոր շինհրապարակներն ապահովել արտակարգ իրավիճակների դեպքում կիրառելի կոնտակտային տվյալներով, պատասխանատու անձանց և անվտանգության աշխատակիցների անուններով, հեռախոսահամարներով և այլն:</p>		
--	--	--	--	--

		<p>8. Ապահովել, որ ER –ը և քիմիական և վտանգավոր նյութերի հետ առնչվող ողջ անձնակազմը ստանա վտանգների և ռիսկերի կառավարման վերաբերյալ ուսուցում:</p> <p>9. Վերահսկողության ինժեներին տեղեկացնել ցանկացած մեծամասշտաբ արտահոսքի մասին, որը կարող է հանգեցնել հողի և ջրի աղտոտման:</p> <p><i>Աշխատանքային և հանրային անվտանգությանը սպառնացող պատահարները</i></p> <p>10. Ինժեներին անմիջապես տեղեկացնել ցանկացած պատահարի մասին, որը տեղի է ունեցել շինհրապարակի տարածքում և մերձակայքում և ձեռնարկել առաջին օգնության միջոցառումները:</p> <p>11. Ուսումնասիրել դեպքը՝ որոշելով պատճառները և զեկուցել պատահարի մասին՝ լրացնելով պատահարի հաշվետվության ձևը:</p>		
--	--	--	--	--

		<p>12. Նախաձեռնել արդյունավետ միջոցներ հետազայում դրանց կրկնվելը կանխելու համար:</p> <p>COVID-19-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ</p> <p>13. Պատասխանատու ER-ի և/կամ շինհրապարակի բուժաշխատողի որոշմամբ անմիջապես 14 օրով մեկուսացնել այն աշխատողին, որն ունի COVID-19-ի ախտանիշներ (ջերմություն, չոր հազ, հոգնածություն):</p> <p>14. Անհրաժեշտության դեպքում կանխել հիվանդ անձնակազմի մուտքը գործունեության տարածք:</p> <p>15. Անհրաժեշտության դեպքում կազմակերպել աշխատողին բժշկական հաստատություն տեղափոխելը և թեստավորումը: Եթե աշխատողի մոտ ախտորոշվել է վարակ (դրական պատասխան), ապա նա պետք է մնա մեկուսացված վիճակում, մինչև լիովին ապաքինվելը,</p>		
--	--	---	--	--

		<p>այնուհետև նա կկարողանա վերադառնալ աշխատանքի:</p> <p>16. Եթե անձնակազմի անդամներից որևէ մեկի մոտ հաստատվել է COVID-19 վարակը, ապա այցելուների մուտքը գործունեության տարածք պետք է սահմանափակվի, և անձնակազմի խմբերը հնարավորինս մեկուսացված լինեն միմյանցից:</p> <p>17. Տեղեկացնել ՎԻ-ին անձնակազմի յուրաքանչյուր վարակվածության դեպքի մասին ԿԲԿՊ-ում ներկայացված վթարի ձևանմուշի միջոցով:</p> <p>18. Որոշել վարակված անձի հետ շփում ունեցած անձանց շրջանակը և անմիջապես մեկուսացնել նրան և կազմակերպել COVID-19-ի ստուգման թեստավորում:</p> <p>19. Վերահսկել վարակված անձի կողմից 14-օրյա ինքնամեկուսացման ժամանակահատվածի պահպանումը:</p> <p>20 Ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ և</p>		
--	--	---	--	--

		<p>պահանջել, որ աշխատողը կատարի հետևյալը.</p> <p>ա. ձեռքերը հաճախակի լվանալ օձառով՝ առնվազն 20 վայրկյան: Եթե օձառն ու հոսող ջուրն անհասանելի են, օգտագործել ակոհեկ կամ ակոհոլային հիմքով ձեռքի քսուք՝ առնվազն 60% ակոհոլով: Միշտ լվանալ ձեռքերը, երբ դրանք տեսանելիորեն աղտոտված են հողով:</p> <p>բ. Ծածկել բերանը և քիթը կտորով՝ հազալիս կամ փռշտալիս:</p> <p>գ. Խուսափել աչքերին, քթին կամ բերանին չլվացված ձեռքերով հպելուց:</p> <p>դ. Խուսափել ախտանիշներ ունեցող մարդկանց հետ սերտ շփումից:</p> <p>ե. Աշխատողներից պահանջվում է օգտագործել սննդի անձնական տարաներ ու ջրի շշեր:</p> <p>զ. Հիվանդ աշխատակիցները չպետք է վերադառնան աշխատանքի, քանի դեռ առողջապահության տեղական բաժանմունքից թույլտվությունը չի ստացվել:</p>		
--	--	--	--	--

12. Թափոնների և նյութերի կառավարման պլան				
<p>22. Շինհրապարակի բոլոր աշխատանքները</p>	<p>Աղբի տեղավորումն անհամապատասխան վայրերում</p> <p>Ջրահեռացման համակարգ և/կամ ստորգետնյա ջրեր ներթափանցող թափոնների և նյութերի աղտոտիչներ</p> <p>Շինարարական նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից, պոտենցիալ վտանգ են հանդիսանում</p>	<p><i>Շինարարական նյութերի կառավարում</i></p> <p>1. Հատկացնել պահեստային տարածք՝ հազեցած համապատասխան ամեն տեսակի հարմարություններով շինարարության ընթացքում օգտագործվող բոլոր տեսակի նյութերի համար:</p> <p>2. Խուսափել շինարարության տարածք ավելորդ քանակությամբ նյութեր տեղափոխելուց և դրանց երկարաժամկետ կուտակումից:</p> <p>3. Ծածկել սորուն նյութերի կույտերը՝ տարածումից և փոշուց խուսափելու համար:</p> <p>4. Հատկացված պահեստային տարածքներում դասավորված պահել աշխատանքային գործիքները և օժանդակ սարքավորումները, ինչպիսիք են սանդուղքները, փայտամածը, եռակցման և կտրող սարքավորումները:</p> <p>5. Վտանգավոր նյութերը պահել հատուկ հարմարություններում,</p>	<p><u>Կապալառու</u> ՇԲԿՊ-ի շրջնակում մշակել Թափոնների կառավարման պլանը, իրականացնել և մոնիթորինգի ենթարկել</p> <p><u>ՏՎԷ</u> Դիտարկել և հաստատել պլանը, մոնիթորինգի ենթարկել իրականացումը և կառավարումը:</p> <p><u>ԵՔՕԻԳ</u> Աջակցել ԵՔ-ի և ՇՄՆ-ի հետ փոխգործակցելիս՝ թափոնների տեղադրան վայրերի թույլտվություններ ձեռք բերելիս:</p>	<p>Սույն ենթապլանի մշակման, իրականացման և կառավարման արժեքը ներառված է շինարարության ընդհանուր ծախսերի մեջ:</p> <p>Թափոնների հեռացման և տեղավորման գինը ներառված է Կապալառուի բյուջեում:</p> <p>Սույն ենթապլանի իրականացումը պետք է վերահսկվի Կապալառուի ԱևԱ մասնագետի կողմից: Ծախսերն ընդգրկված են Կետ 4-ում:</p>

		<p>որոնք ապահովված են անվտանգության սարքավորումներով, պիտակներով և վտանգի մասին նախազգուշացնող պիտակներով:</p> <p>Հարմարանքը ծածկելու է և անվտանգությունն ապահովվելու է՝ մուտքը սահմանափակելու համար, և ունենալու է ջրակայուն պատվածք, որը հոսքը կուղղի դեպի անվտանգ պահեստային տարածք:</p> <p>6. Պարբերաբար ստուգել հեղուկ նյութերը պահելու համար նախատեսված տարաների ամբողջականությունը՝ արտահոսքից խուսափելու համար:</p> <p><i>Թափոնների կառավարում</i></p> <p>1. Դասակարգել ոչ պիտանի և այլ շինարարական թափոններն՝ ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ, վտանգավոր և վնասակար, ինչպես նաև վերամշակման ենթակա:</p> <p>2. Շինհրապարակում պահել թափոնների գրանցամատյան՝ դրանց տեսակի և քանակի գրանցման համար,</p>		
--	--	--	--	--

		<p>թարմացնել գրանցված տվյալները յուրաքանչյուր ամսվա սկզբում և ապահովել հասանելիությունը՝ ստուգման նպատակով:</p> <p>3. Կապալառուի անձնակազմի համար կազմակերպել ուսուցողական ծրագիր թափոնների կառավարման վերաբերյալ և համոզվել, որ ողջ անձնակազմը վերապատրաստված է:</p> <p>4. Կանոնավոր կերպով շինհրապարակից հեռացնել շինարարական թափոններն ու աղբը՝ փոշին և աղբի երկարատև կուտակումը կանխելու համար: Կապալառուն պետք է սահմանի թափոնների հեռացման հաճախականությունը ԿԲԿՊ-ում՝ որպես մոնիթորինգի սկիզբ:</p> <p>5. Փոխադրումից և վերջնական տեղավորումից առաջ թափոններն ու նյութերը կանոնավոր կույտերով հավաքել ճանապարհի օտարման գոտում՝ ժամանակավոր կուտակավայրերում կամ հողամասի</p>		
--	--	---	--	--

		<p>սեփականատիրոջ հետ համաձայնեցված տարածքներում:</p> <p>6. Հավաքել նավթի, քսայուղերի և վառելանյութի ավելորդ քանակությունները՝ դրանց արտահոսքից և տարածումից խուսափելու համար: Տեղավորել դրանք հերմետիկ փակված տարաների մեջ՝ հատկացված կուտակավայրերում պատշաճ կերպով տեղավորելու համար:</p> <p>7. Շինարարության ընթացքում հավաքել յուղի բոլոր թափոնները և վերաօգտագործել շինարարական աշխատանքներում կամ տեղափոխել յուղի թափոնների վերամշակման հարմարանք, հակառակ դեպքում հավաքել հատուկ տարաների մեջ և տեղափոխել հաստատված կուտակավայր:</p> <p>8. Կառուցել լվացման ջրերի ջրահեռացման համակարգ և ուղղել դեպի տեղական ջրահեռացման համակարգ կամ հավաքել և թափել ԵՔ-ի</p>		
--	--	---	--	--

		<p>կողմից թույլատրված վայրերում:</p> <p>9. Թափոնաջրերը հավաքել հատուկ ջրամբարներում և պատշաճ կերպով մաքրել դրանք նավթից և վառելիքից՝ նախքան կոյուղագիծ թափվելը:</p> <p>10. Ձեռք բերել թափոնների տեղավորման բոլոր թույլտվությունները, և թափոնները տեղավորել միայն թույլատրված վայրերում:</p> <p>11. Շինարարական աշխատանքների բոլոր հատվածներում տեղադրել հատուկ տարաներ աղբի հավաքման համար, որոնք անհրաժեշտ քանակությամբ կափարիչներ ունեն: Դրանք տեղադրել օգտագործման համար հարմարավետ հեռավորության վրա, ինչպես նաև Կապալառուի գրասենյակներում, դաշտային ճամբարներում և շարժական տներում:</p> <p>12. Թափոնների հավաքման տարաները պետք է ունենան բավարար տարողունակություն՝ կանխատեսվող թափոնները մինչև դրանց հաջորդ</p>		
--	--	--	--	--

		<p>դատարկումը տեղավորելու համար:</p> <p>13. Ժամանակին դատարկել շինարարական թափոնների հավաքման տարաները՝ խուսափելով ավելորդ կուտակումներից:</p> <p>Շինարարական թափոնները պետք է ամեն օր կամ նույնիսկ ավելի հաճախակի հեռացվեն շինհրապարակից հատկապես ամռան սեզոնին:</p> <p>14. Խուսափել ծրագրի տարածքից դուրս կուտակումներից, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ երթևեկության և հանրության համար:</p>		
13. Մշակութային ժառանգության կառավարման պլան				
13. Հողային աշխատանքներ	<p>Հնագիտական, պատմական և մշակութային ռեսուրսներին հասցվող վնասը և կորուստները</p>	<p>1. Սահմանափակել աշխատանքները հավաքակայանի տարածքով և բացառել որևէ գործողության իրականացում՝ առանց նախապես ՎԻ-ի հետ համաձայնեցնելու:</p> <p>2. Արգելել շրջակա տարածքից հողի օգտագործումը և/կամ պահեստավորումը:</p> <p>3. Հնագիտական գտածո հայտնաբերելու դեպքում</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>Վարձել հնագետի՝ հողային աշխատանքների վերահսկողությունն իրականացնելու համար</p> <p>ՇԲԿՊ-ում մշակել և իրականացնել մշակութային ժառանգության կառավարման պլան</p> <p>Անհրաժեշտության դեպքում հետևել</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>Կոմիտասի անվան զբոսայգու ցանկապատի ապամոնտաժման և վերականգնման ծախսերը ներառված են շինարարության ընդհանուր ծախսերում</p> <p>Հնագիտական գտածոների հայտնաբերման դեպքում, որոնք</p>

		<p>Կապալառուն պետք է հետևի ստորև ընթացակարգին.</p> <ul style="list-style-type: none"> ✓ անմիջապես պետք է դադարեցնի աշխատանքները, ✓ ծանուցի ՎԻ-ին, ԵՔՕԻԳ -ին; ✓ մեկուսացնի տեղավայրը, ✓ փաստաթղթավորի և լուսանկարի գտածոն և անմիջապես դրան շրջապատող տարածքը, ✓ տեղեկացնի ԿԳՄՄՆ-ին՝ խորհրդակցելով՝ ինչպես պետք է գտածոն պահպանվի, ✓ ԿԳՄՄՆ-ից ձեռք բերի թույլտվություն շինարարական աշխատանքները շարունակելու համար: 	<p>գտածոների ընթացակարգին</p> <p><u>Ինժեներ</u></p> <p>Փոփոխություններ կատարել նախագծում՝ ներառելով հնագիտական/մշակութային և հետազոտության արդյունքում ներկայացված առաջարկությունները, եթե առկա են:</p> <p>Դիտարկել և հաստատել Պլանի առաջարկությունները և մոնիթորինգի ենթարկել իրականացումը:</p> <p><u>ԵՔՕԻԳ</u></p> <p>Աջակցել համապատասխան մարմինների հետ համագործակցելիս</p> <p>Ստուգել իրականացումը</p>	<p>ներառված են ընդհանուր շինարարական ծախսերում, գնահատված է առավելագույնը 2%:</p> <p><u>ԱԶԲ</u></p> <p>Ներառված է ընդհանուր բնապահպանական պատշաճ կատարման ծախսերի մեջ</p>
14. Տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան				
<p>23. Շինարարական բոլոր տեղամասերի վերականգնում</p>	<p>Շինարարական թափոնները և շինանյութերը հեռացված չեն և</p>	<p>1. Շինհրապարակից և հարակից տարածքներից հեռացնել շինարարության հետ կապված բոլոր նյութերը և</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>Իրականացնել պարբերություններ 1- 5-ում նշված միջազառումները</p>	<p>Ծառատունկի համար ծախսերը առաջին փուլի համար նախատեսվում են</p>

Նախնական գնահատման հայտ

<p>Բուսականության վերականգնում կանաչապատում</p>	<p>և գտնվում են շինհրապարակում: Մաքրված բուսականությունը և ծառերը ամբողջությամբ չեն փոխհատուցվել բուսականության վերականգնման աշխատանքների միջոցով: Շինհրապարակի գեղագիտական տեսքը բավարար չէ:</p>	<p>սարքավորումները, ներառյալ շարժական տները, թափոնները և չօգտագործված նյութերը: 2. Բոլոր մեքենամեխանիզմները, ներառյալ չսպասարկվող մեքենամեխանիզմները և փոխադրամիջոցները, պետք է հեռացվեն շինհրապարակից: 3. Հեռացնել բոլոր ժամանակավոր հարմարությունները և ժամանակավոր ցանկապատերը, եթե շինհրապարակն ընդունող Պատվիրատուն այլ կերպ չի պահանջում: 4. Ձևավորվել շինհրապարակի լանդշաֆտը՝ ապահովելով տարածքի պատշաճ ջրահեռացումը: 3. Շինհրապարակը մաքրել աղբից և յուղային նյութերի և վառելանյութի արտահոսքի հետքերից, եթե կան այդպիսիք: Մանրակրկիտ գննել վառելիքի պահեստավորման բոլոր տարածքները, աղտոտված հողը հեռացնել և</p>	<p><u>ՏՎԻ</u> Տրամադրել կանաչապատման նախագիծը: Դիտարկել պլանն ու մոնիթորինգի ենթարկել իրականացումը <u>ԵԲԾԻԳ</u> Մոնիթորինգի ենթարկել իրականացումը</p>	<p>7200 ԱՄՆ դոլարի չափով: Ծախսերը վերաբերում են միայն համայնքային ծառերին և թփերին: Ծրագրի հետևանքով ազդեցության ենթակա մասնավոր ծառերի, թփերի և մշակաբույսերի ծախսերը փոխհատուցվում են ՀՕՏԾ-ի շրջանակում:</p>
---	--	--	--	---

Նախնական գնահատման հայտ

		<p>տեղափոխել թույլատրված տարածք:</p> <p>4. Անհրաժեշտության դեպքում վերականգնել հողաշերտը և փխրեցնել ծանր մեքենաների կիրառման հետևանքով տոփանված հողը:</p> <p>5. Կատարել բուսականության վերականգնման աշխատանքներ՝ ըստ կանաչապատման նախագծի և ծառերի կառավարման պլանի, որը ներառում է 1:6 հարաբերակցությամբ ծառերի/ թփերի տնկումը, խնամքը և մոնիթորինգի իրականացումը՝ ծառերի, թփերի, սիզամարգերի և այլ բույսերի գոյատևման բարձր աստիճանն ու արագ աճն ապահովելու համար:</p>		
ՀԵՏԵՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ				
Թերությունների շտկման ժամանակահատված	Շինարարության փուլում բացահայտված բոլոր ազդեցությունները	Շինարարության փուլում նախատեսված հատուկ մեղմացնող միջոցառումներ: Բնապահպանական աուդիտի իրականացում մինչև ԹՇԺ-ի ավարտը	<u>Կապալառու</u> Թերությունների շտկման ժամանակահատվածում Կապալառուն պետք է իրականացնի ԲԿՊ և ԿԲԿՊ, ինչպես նաև ապահովի շրջակա միջավայրի	Կապալառուի կողմից երկարաժամկետ մոնիթորինգի իրականացման արժեքն այս պահին չի կարող գնահատվել:

			<p>անվտանգության հաշվետվություններ:</p> <p><u>Ինժեներ</u> Աշխատանքների իրականացման և թերությունների շտկման ժամանակահատվածում մոնիթորինգի ենթարկել ծառերի և այլ բույսերի գոյատևման գործընթացը և ԵՔՕԻԳ-ին ներկայացնել բնապահպանական անվտանգության վերաբերյալ հաշվետվություն:</p> <p><u>ԵՔՕԻԳ</u> Իրականացնել հետշինարարական բնապահպանական աուդիտ, պատրաստել ստուգաթերթիկ և ներկայացնել ԱԶԲ-ին:</p> <p><u>ԵՔ</u> Իրականացնել ճանապարհների շահագործման/սպասարկման աշխատանքներ՝ ապահովելով մաքրություն և անվտանգություն</p>	
--	--	--	--	--

Նախնական գնահատման հայտ

<p>Շահագործում և սպասարկում/պահպանում</p>	<p>Բուսականությունը չի աճում, ինչպես ակնկալվում էր</p> <p>Տարածքը մաքրված չէ,</p> <p>Աղմուկի ազդեցությունը</p> <p>Կանաչապատումը գեղագիտական առումով վտանգված է</p>	<p>1. Իրականացնել ճանապարհների պահպանման աշխատանքները՝ ապահովելով մաքրությունն ու անվտանգությունը:</p> <p>2. Ապահովել աղմկապաշտպան արգելապատնեշներ՝ տեղադրված ըստ աղմուկի հետազոտության արդյունքների և նախագծի:</p> <p>3. Ներառել Ծրագրի համար նախատեսված բույսերը ԵՔ կանաչապատ տարածքների սպասարկման պլանում: Այն կներառի ծառերի, թփերի, սիզամարգերի և այլ բուսականության աճի ու առողջական վիճակի մոնիթորինգը, բույսերի մահացած, վնասված կամ անառողջ տեսակների փոխարինումը և ոչ ճիշտ աճած սիզամարգերի տարածքների նորից ցանումը:</p>	<p>Օպերատոր Մշակում և հաստատում է բնապահպանական սոցիալական կառավարման համակարգը</p> <p>ԵՔ Տարեկան հիմունքներով իրականացնել բնապահպանական առողիտ</p>	<p>ԵՔ-ի կողմից իրականացվող երկարաժամկետ առողիտի արժեքը ներառված է ԵՔ-ի բյուջեում:</p>
---	--	--	---	---

ԵՆԹԱՀԱՎԵԼՎԱԾ Ժ-2. Բնապահպանական կառավարման պլան. մոնիթորինգ

Աղյուսակ 2. Բնապահպանական կառավարման պլան. Մոնիթորինգ						
Գործողությունները/ վայրը	Մոնիթորինգի ենթարկվող պարամետրերը	Մոնիթորինգի տեղանքը/ները	Միջոցները և մեթոդը	և Բնապահպանական գործունեության իրականացման ցուցանիշ	Պատասխանատու մարմինները	Հաճախականությունը (պաշտոնական մոնիթորինգ)
1	2	3	4	5	6	7
ՆԱԽԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ (Մոբիլիզացիոն փուլ)						
1. Աշխատանքի հնարավորություններ տեղացի աշխատողների, ոչ հմուտ աշխատողների և կանանց համար	Աշխատանքի տեղացի աշխատողների, փորձառու աշխատողների կանանց վերցնել ոչ և	Բոլոր շինարարական տեղամասերը՝ ներառյալ ավտոբուսային հավաքակալանի տարածքը, բացահանքերը, թափոնների կուտակավայրերը, շինարարական ճամբարները	Կապալառուի փաստաթղթերի դիտարկում, ներառյալ աշխատանքի հայտարարությունների թիվը, որոնք նախատեսված են տեղացիների, ոչ փորձառու աշխատողների և կանանց համար	Օրագրի շրջանակներում վարձված տեղացիների, անփորձ աշխատողների և կանանց թիվը	<u>Կապալառու</u> Մշակել և ԿԲԿՊ-ում ներառել ծրագիր՝ տեղացիներին, ոչ փորձառու աշխատողների և կանանց աշխատանքի ընդունելու համար: <u>Ինժեներ</u> Մոցիպական հարցերի մասնագետը դիտարկում է Կապալառուի աշխատողներ վարձելու ծրագիրը: Վերահսկողության արժեքը կներառվի Ինժեների բյուջեում: <u>ԵՔՕԻԳ</u> Վերահսկել Ինժեներին	Մեկ անգամ՝ մոբիլիզացիայի ժամանակ՝ Կապալառուի կողմից իր անձնակազմը հավաքագրելիս Թարմացում և հաշվետվություններ շինարարական աշխատանքների իրականացման փուլում

Նախնական գնահատման հայտ

<p>2. Անվտանգության երաշխիքների/մեխանիզմների կառավարման համակարգ</p>	<p>Նշանակվում է բնապահպանական /ԱևԱ և սոցիալական երաշխիքների պատասխանատու անձնակազմ</p>	<p>Բոլոր շինարարական տեղամասերը՝ ներառյալ ավտոբուսային հավաքակալանի տարածքը, բացահանքերը, թափոնների կուտակված ալյրերը, շինարարական ճամբարները</p>	<p>Դիտարկել ինքնակենսագրականները (CV) և թեկնածուների հետ անցկացնել հարցազրույցներ</p> <p>Դիտարկել ԿԲԿՊ-ն</p>	<p>Կապալառուի բնապահպանության, ԱևԱ և սոցիալական հարցերի մասնագետի ինքնակենսագրականները, շինհրապարակի պատասխանատուների ցանկը</p> <p>Մշակել ԿԲԿՊ</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>Տրամադրել բնապահպանության մասնագետի, ԱևԱ մասնագետի, սոցիալական հարցերի մասնագետի ինքնակենսագրականները , շինհրապարակի պատասխանատուների ցանկը և վարձել նրանց Ինժեների հաստատումն ստանալուց հետո</p> <p>Մշակել և ներկայացնել ԿԲԿՊ</p> <p><u>Ինժեներ</u></p> <p>Դիտարկել ինքնակենսագրականները և հաստատել անվտանգության երաշխիքների մասնագետներին, Դիտարկել և հաստատել Կապալառուի ԿԲԿՊ-ն</p> <p><u>ԵՔՕԻԳ</u></p> <p>Վերահսկել գործընթացը</p> <p>Դիտարկել Կապալառուի ԿԲԿՊ-ն</p>	<p>Մեկ անգամ՝ մոբիլիզացիայի ժամանակ և թարմացնել փոխարինման և նախագծային փոփոխությունների դեպքում</p>
--	--	---	--	--	--	--

Նախնական գնահատման հայտ

<p>3. Ծրագրված աշխատանքների վերաբերյալ հանդիպումներ նախաշինարարական փուլում</p>	<p>Հանրության հետ հանդիպումների կազմակերպում և իրականացում նախաշինարարական փուլում</p>	<p>Տարածքը, որի համար տրվում է աշխատանքների մեկնարկի թույլտվություն</p>	<p>Պաստառների, հրավերների միջոցով հրապարակված տեղեկատվություն: Պատրաստել շնորհանդեսի նյութը Կազմակերպել հանդիպում Կազմել փաստաթղթերը</p>	<p>Կապալառուի պաստառները, շնորհանդեսի նյութը, հանդիպումների արձանագրությունը</p>	<p><u>Կապալառու</u> Պատրաստել շնորհանդեսի նյութը, կազմակերպել հանդիպում հանրության հետ, հրավիրել Բնժեներին, պատրաստել հանդիպման արձանագրություն</p> <p><u>Բնժեներ</u> Տեղեկացնել ԵՔԾԻԳ-ին, մասնակցել հանդիպմանը և վերանայել Կապալառուի հանդիպման արձանագրությունը</p> <p><u>ԵՔԾԻԳ</u> Հրավիրել ԱԶԲ-ի ներկայացուցիչներին, մասնակցել հանդիպմանը և վերահսկել գործընթացը</p>	<p>Մեկ անգամ՝ մոբիլիզացիայի ժամանակ և աշխատանքների մեկնարկի նոր թույլտվություն ստանալիս</p>
<p>4. Կողմնորոշում, իրազեկման բարձրացում և բնապահպանական/ԱևԱ/ սոցիալական երաշխիքների վերաբերյալ ուսուցում</p>	<p>Դասընթացի կազմակերպում և իրականացում</p>	<p>Ողջ անձնակազմը</p>	<p>Կապալառուի՝ վերապատրաստման ծրագրի ղիտարկում, ներառյալ ուսումնական նյութը</p> <p>Կապալառուի կողմից կազմակերպված</p>	<p>Դասընթացին հաճախող Կապալառուի և ենթակապալառուի ինժեներական, ղեկավար և բանվորական անձնակազմի քանակը</p>	<p><u>Կապալառու</u> Իրականացնել վերապատրաստման/ուսուցման ծրագիրը, հրավիրել Բնժեներին և հաշվետվություն ներկայացնել</p> <p><u>Բնժեներ</u></p>	<p>Մեկ անգամ՝ մոբիլիզացիայի ժամանակ՝ ողջ անձնակազմի համար և նոր ենթակապալառու ներգրավելիս</p>

Նախնական գնահատման հայտ

			վերապատրաստման դասընթացների մասնակցությունը/հաճախումը		Տեղեկացնել ԵՔՕԻԳ-ին, մասնակցել դասընթացին և դիտարկել Կապալառուի հաշվետվությունը <u>ԵՔՕԻԳ</u> Հրավիրել ԱԶԲ-ի ներկայացուցիչներին, մասնակցել հանդիպմանը և վերահսկել գործընթացը	
5. Շինհրապարակի մոբիլիզացիոն աշխատանքներ	Գծանշումների իրականացում, գլխավոր գրասենյակի և դաշտային ճամբարների հիմնում	Բոլոր շինարարական տեղամասերը, ներառյալ՝ ներառյալ ավտոբուսային հավաքակայանի տարածքը, բացահանքերը, թափոնների կուտակվածայրերը, շինարարական ճամբարները	Դիտարկել Կապալառուի Մոբիլիզացիոն պլանը Տեղամասային այցելությունների մոնիթորինգ	Մոբիլիզացիոն պլանով սահմանված բոլոր պահանջները	<u>Կապալառու</u> Մշակել և իրականացնել Մոբիլիզացիոն պլանը <u>Ինժեներ</u> Դիտարկել և հաստատել Կապալառուի Մոբիլիզացիոն պլանը <u>ԵՔՕԻԳ</u> Վերահսկել գործընթացը	Մեկ անգամ՝ մոբիլիզացիայի ժամանակ, այնուհետև, երբ նոր ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների մեկնարկի նոր թույլտվություն է տրվում

Նախնական գնահատման հայտ

<p>6.1 Աշխատանքային անվտանգություն և առողջություն</p>	<p>Ողջ անձնակազմի համար համազգեստի և ԱՊՄ-ի ապահովում</p> <p>Շինարարական բոլոր տեղամասերում անվտանգության սարքավորումների տեղադրում և հիմնում</p>	<p>Բոլոր շինարարական տեղամասերը, ներառյալ ավտոբուսային հավաքակալանի տարածքը, բացահանքերը, թափոնների կուտակված ալյուրը, շինարարական ճամբարները</p>	<p>Աշխատանքային անվտանգության և առողջության պլանի դիտարկում</p> <p>Տեղամասային այցելությունների մոնիթորինգ</p>	<p>Աշխատանքային և անվտանգության և առողջության պլանը մշակված է, ներառված է ԿԲԿՊ-ում և տրամադրվել է բոլոր շինարարական տեղամասերին</p> <p>Բոլոր շինարարական տեղամասերի ապահովումը անվտանգության և սարքավորումներով</p> <p>Ողջ անձնակազմի համար համազգեստի և ԱՊՄ-ի ապահովում</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>Մշակել և իրականացնել Աշխատանքային անվտանգության և առողջության պլանը</p> <p><u>Ինժեներ</u></p> <p>Դիտարկել և հաստատել Կապալառուի Աշխատանքային անվտանգության և առողջության պլանը</p> <p><u>Ե.ՔՕԻԳ</u></p> <p>Վերահսկել գործընթացը</p>	<p>Մեկ անգամ՝ մոբիլիզացիայի ժամանակ, այնուհետև շինարարության և ընթացքում</p>
<p>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ</p>						
<p>6.2 Կողմնորոշում և բնապահպանական ուսուցում</p>	<p>Ողջ անձնակազմի համար համազգեստի և ԱՊՄ-ի ապահովում</p>	<p>Բոլոր շինարարական</p>	<p>Աշխատանքային անվտանգության և առողջության</p>	<p>Աշխատանքային և անվտանգության և առողջության</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>Իրականացնել և մոնիթորինգի ենթարկել</p>	<p>Մոնիթորինգի կանոնավոր</p>

Նախնական գնահատման հայտ

	Շինարարական բոլոր տեղամասերում անվտանգության սարքավորումների տեղադրում և հիմնում	տեղամասերը	փաստաթղթերի ստուգում Շինարարական տեղամասերի ստուգում Դեպքերի ու պատահարների գրանցամատյանի ստուգում	պլանի առկայությունը Անվտանգության և ցուցումների առկայությունը դաշտային գրասենյակում Ուսուցման դասընթացի մասնակիցների ցուցակի առկայությունը Շինարարական տեղամասերի ստուգումների վերաբերյալ հաշվետվությունների առկայությունը Դեպքերն ու պատահարները նկարագրող հաշվետվությունների առկայությունը	Աշխատանքային անվտանգության և առողջության պլանը Ծախսերը ներառված են Կապալառուի բյուջեում <u>Ինժեներ</u> Դիտարկել և մոնիթորինգի ենթարկել Կապալառուի Աշխատանքային անվտանգության և առողջության պլանը Վերահսկողության ծախսերը ներառված են Ինժեների բյուջեում <u>Ե.ՔՕԻԳ</u> Վերահսկել գործընթացը	Ժամանակացույցի համաձայն
7. Հանրային լուսամներ և հաղորդակցություն	ԱԵԱ-ների իրագրելվածությունը Ծրագրի Բողոքների լուծման մեխանիզմի վերաբերյալ	Բոլոր շինարարական տեղամասերը	Դժգոհությունների գրանցամատյանի դիտարկում	Հանրային լուսամների և հաղորդակցության պլանի առկայությունը	<u>Կապալառու</u> Իրականացնել Հանրային լուսամների և հաղորդակցության պլանը	Կանոնավոր մոնիթորինգի պաշտոնական ժամանակացույցի համաձայն

Նախնական գնահատման հայտ

			Մոնիթորինգի նպատակով տեղամասային այցելություններ Հանրային լսումներ և հանդիպումների	Բողոքների լուծման մեխանիզմի իրականացումը	<u>Ինժեներ</u> Դիտարկել և վերահսկել Հանրային լսումների և հաղորդակցության պլանը Վերահսկողության արժեքը ներառված է Ինժեների բյուջեում <u>ԵԶՕԻԳ</u> Վերահսկել գործընթացը	
8. Մշակութային ժառանգության կառավարում Ճանապարհների և կամուրջների կառուցման աշխատանքներ հնագիտական և/կամ պատմական վայրերի անմիջական հարևանությամբ	Մշակութային ժառանգության կառավարման պլանում սահմանված մեղմացնող միջոցառումների իրականացում	Հավելված Դ-ում նշված հնագիտական և/կամ պատմական վայրերը	Ակնադիտական մոնիթորինգ տեղամասային այցելությունների միջոցով	Մշակութային ժառանգության կառավարման առկայությունը Հնագետի վարձումը, հնագիտական հաշվետվությունների տրամադրումը Հնագիտական գտածո հայտնաբերելու դեպքում ընթացակարգի վերաբերյալ ուսուցում	<u>Կապալառու</u> Իրականացնել Մշակութային ժառանգության կառավարման պլան <u>Ինժեներ</u> Դիտարկել և վերահսկել Մշակութային ժառանգության կառավարման պլանը Վերահսկողության արժեքը ներառված է Ինժեների բյուջեում <u>ԵԶՕԻԳ</u> Վերահսկել գործընթացը	Ծրագիրը պետք է մշակվի և հաստատվի նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը, այնուհետև նոր հայտնաբերումների դեպքում պարբերաբար թարմացվի՝ համապատասխանեցվելով կատարվող փոփոխություններին: Կանոնավոր կերպով իրականացվող մոնիթորինգ

Նախնական գնահատման հայտ

						պաշտոնական մոնիթորինգի Ժամանակացույցի համաձայն, հնագիտական և/կամ պատմական վայրերի հարակից տարածքներում աշխատանքների իրականացման ընթացքում
9.Մակերևութային ջրերի պահպանություն Ճանապարհի և կամրջի կառուցման աշխատանքներ Հրազդան գետի և ոռոգման ջրանցքի անմիջական հարևանությամբ	Մակերևութային ջրերի պահպանության պլանում սահմանված մեղմացնող միջոցառումների իրականացում	Հրազդան գետ և ոռոգման ջրանցք	Գործիքային չափումներ՝ համաձայն Փոշու, ջրի, աղմուկի և թրթռման գործիքային մոնիթորինգի պլանի	Գործիքային չափումների պլանը մշակվել և ներառվել է ԿԲԿՊ-ում Աղյուսակ Ե-1-ում սահմանված պարամետրերը Գործիքային չափումների և վերլուծության վերաբերյալ հաշվետվություններ	<u>Կապալառու</u> Իրականացնել Մակերևութային ջրերի պահպանության պլանը <u>Ինժեներ</u> Դիտարկել և վերահսկել Մակերևութային ջրերի պահպանության պլանը Վերահսկողության արժեքը ներառված է Ինժեների բյուջեում <u>Ե.ՔՕԻԳ</u> Վերահսկել գործընթացը	Ջրի որակի պարամետրերի գործիքային չափումներ՝ առնվազն երկու շաբաթը մեկ և հեղեղումներից հետո

Նախնական գնահատման հայտ

<p>10. Ֆլորայի և ֆաունայի պահպանության և բուսականության մաքրման պլան</p>	<p>Բուսականության մաքրումը հնարավորինս նվազագույնի է հասցվում</p> <p>Շինհրապարակների մոտակայքում գտնվող բուսականությունը պահպանվում է:</p>	<p>Բոլոր շինհրապարակները</p>	<p>Ֆլորայի և ֆաունայի պահպանության և բուսականության մաքրման պլանի դիտարկում</p> <p>Տեղամասային այցելություններ մոնիթորինգի նպատակով</p> <p>Հատված ծառերի և թփերի գրանցամատյանի դիտարկում</p>	<p>Ֆլորայի և ֆաունայի պահպանության և բուսականության մաքրման պլանի առկայությունը</p> <p>Մեղմացնող միջոցառումներ են ձեռնարկվում՝ Ֆլորայի կամ Ֆաունայի տեսակների պահպանման համար</p> <p>Հատված ծառերի և թփերի գրանցամատյանի առկայությունը</p>	<p><u>Կապալառու</u> Մշակել և մոնիթորինգի ենթարկել Ֆլորայի և ֆաունայի պահպանության և բուսականության մաքրման պլանը՝ որպես ԿԲԿՊ-ի բաղկացուցիչ մաս</p> <p>Մոնիթորինգի արժեքը ներառված է Կապալառուի բյուջեում</p> <p><u>Ինժեներ</u> Դիտարկել և վերահսկել Ֆլորայի և ֆաունայի պահպանության և բուսականության մաքրման պլանը</p> <p>Վերահսկողության արժեքը ներառված է Ինժեների բյուջեում</p> <p><u>ԵՔՄԻԳ</u> Վերահսկել գործընթացը</p>	<p>Կանոնավոր մոնիթորինգի պաշտոնական ժամանակացույցի համաձայն</p>
<p>11. Հաղորդողիների պահպանություն և տեղափոխում</p>	<p>Հաղորդողիների աշխատանքի խափանման դեպքեր, որոնք բացասաբար են</p>	<p>Բոլոր շինարարական տեղամասերը</p>	<p>Հաղորդողիների պահպանության և տեղափոխման պլանի դիտարկում</p>	<p>Հաղորդողիների պահպանության և տեղափոխման</p>	<p><u>Կապալառու</u> Մշակում և մոնիթորինգի է ենթարկում հաղորդողիների պահպանության և</p>	<p>Համաձայն կանոնավոր մոնիթորինգի ժամանակացույցի</p>

Նախնական գնահատման հայտ

	<p>ազդում սպառողների վրա</p> <p>Հաղորդողիների տեղափոխում՝ համաձայն նախագծի, նոր հայտնաբերվածները և դրանց տեղափոխումը</p>		<p>Մոնիթորինգի նպատակով տեղամասային այցելություններ</p>	<p>պլանի առկայությունը</p> <p>Հաղորդողիների աշխատանքի խափանման դեպքերը, որոնք բացասաբար են ազդել սպառողների վրա, գրանցված և ուսումնասիրված են</p>	<p>տեղափոխման պլանը՝ որպես ԿԲԿՊ-ի բաղկացուցիչ մաս:</p> <p>Մոնիթորինգի ծախսերը ներառված են Կապալառուի բյուջեում</p> <p><u>Ինժեներ</u></p> <p>Դիտարկել և վերահսկել հաղորդողիների պահպանության և տեղափոխման պլանը</p> <p>Վերահսկողության զարծրնթացի արժեքը ներառված է Ինժեների բյուջեում:</p> <p><u>ԵՔՕԻԳ</u></p> <p>Վերահսկել գործընթացը</p>	
<p>12. Շրջակա միջավայրի պահպանություն</p>	<p>Հողերի էրոզիա և մոլախոտի տարածում</p> <p>Նստվածքների արտահոսք Ջրի աղտոտում և նստվածքներ</p> <p>Բուսահողի պահեստավորում</p>	<p>Բոլոր շինհրապարակները</p> <p>Օդի որակի զգայուն ընկալիչները</p> <p>Ջրի որակի զգայուն ընկալիչներ,</p>	<p>Շինհրապարակների ակնադիտական մոնիթորինգ</p> <p>Բողոքների լուծման մեխանիզմում արձանագրված բողոքների դիտարկում</p>	<p>Շրջակա միջավայրի պահպանության պլանի առկայությունը</p> <p>Բողոքների լուծման մեխանիզմում արձանագրված բողոքների քանակը և</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>ԿԲԿՊ-ի շրջանակում մշակել և մոնիթորինգի ենթարկել շրջակա միջավայրի պահպանության պլանը</p> <p>Մոնիթորինգի արժեքը պետք է ներառվի Կապալառուի բյուջեում</p> <p><u>Ինժեներ</u></p>	<p>Ելակետային տվյալները կհավաքագրվեն և շինարական աշխատանքների մեկնարկից՝ 21 օր առաջ</p> <p>Պլանը պետք է մշակվի և հաստատվի Վերահսկողությ</p>

Նախնական գնահատման հայտ

<p>Փոշու և օդի այլ աղտոտիչների արտանետումներ</p> <p>Աղմուկի և թրթռման մակարդակը</p>	<p>որոնք գտնվում են շինարարական գործողությունների վայրից 50 մ հեռավորության վրա՝ հոսանքն ի վեր և հոսանքն ի վար</p> <p>Շինարարական գործողությունների վայրից 50-100 մ հեռավորության վրա գտնվող գոտիներում տեղակայված աղմուկի և թրթռման նկատմամբ զգայուն ընկալիչները</p>	<p>Օդի որակի գործիքային չափումներ</p> <p>Աղմուկի գործիքային չափումներ</p> <p>Թրթռման գործիքային չափումներ</p> <p>Ջրի որակի գործիքային չափումներ</p>	<p>Ծանրության աստիճանը</p> <p>Այցելություններ էրոզիայի նկատմամբ զգայուն տեղամասեր, ջրահեռացման հետևանքով նստվածքագոյացման ենթակա տեղամասեր, ինչպես նաև բուսահողի կուտակավայրեր</p> <p>Օդի որակի չափումներ առավել զգայուն տարածքներում՝ շինարարական աշխատանքների տեղամասից մոտ 50 մ հեռավորության վրա: Աղմուկի և թրթռման չափումներ՝ շինարարական աշխատանքներ</p>	<p>Դիտարկել և վերահսկել Պլանը, մոնիթորինգի ենթարկել մեղմացնող միջոցառումների իրականացումը:</p> <p>Իրականացնում է թրթռման չափումներ՝ գույքի վրա ազդեցությունը գնահատելու համար:</p> <p>Արժեքը պետք է ներառվի Ինժեների բյուջեում</p> <p><u>ԷՔՕԻԳ</u> Վերահսկել գործընթացը</p>	<p>յան ինժեների կողմից՝ նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը</p> <p>Օդի, ջրի, աղմուկի և թրթռման մոնիթորինգի պլանում սահմանված ժամանակացույցի համաձայն</p> <p>Օդի որակի չափումներ՝ նվազագույնը յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ և ավելի՝ հաճախակի՝ չոր եղանակային պայմաններում՝ կախված ԱԵԱ-ներից ստացված բողոքներից</p>
---	---	---	--	---	--

Նախնական գնահատման հայտ

		Մոնիթորինգի ենթակա կետերը նշված են օդի որակի, ջրի, աղմուկի և թրթռման ելակետային տվյալների և կանոնավոր մոնիթորինգի պլանում		ի տեղամասից մոտ 50 մ հեռավորության վրա: Օդի և ջրի որակի չափումների տվյալները, աղմուկի և թրթռման մակարդակները համապատասխանում են հայաստանյան նորմատիվների չափանիշներին և ՄՖԿ (IFC) ստանդարտներին:		Աղմուկի և թրթռման չափումներ՝ նվազագույնը յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ, կամ ԱԵԱ-ներից ստացված բողոքների հիման վրա
13. Շինարարական աշխատանքների ճամբարներ	Շինարարական աշխատանքների ճամբարների վայրը, հատակագիծը և աշխատանքային ճամբարների կառավարումը	Շինհրապարակում գլխավոր գրասենյակ և ճամբարներ	Դիտարկել Աշխատանքային ճամբարների պլանը և թարմացումները Հողի սեփականատիրոջ թույլտվությունների կրկնակի ստուգում	Շինարարական աշխատանքների ճամբարների պլանի առկայությունը Շինարարական աշխատանքների ճամբարի(ների) հատակագծի և տեղադիրքի համապատասխ	<u>Կապալառու</u> Մոբիլիզացիոն պլանի շրջանակում մշակել Շինարարական աշխատանքների ճամբարների պլանը, իրականացնել, թարմացնել այն և մոնիթորինգի ենթարկել:	Պլանը պետք է մշակվի և հաստատվի նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը, այնուհետև կանոնավոր կերպով թարմացվի՝ փոփոխություններին

Նախնական գնահատման հայտ

				անությունը Պլանին: ԲԼՄ-ում արձանագրված բողոքների թիվը և ծանրության աստիճանը	Ծախսերը պետք է ներառվեն Կապալառուի բյուջեում: <u>Ինժեներ</u> Դիտարկել և վերահսկել Պլանը Վերահսկողության աշխատանքների արժեքը ներառվելու է Ինժեների բյուջեում: <u>ԵՔԾԻԳ</u> Վերահսկել գործընթացը	համապատաս խանելու համար Կանոնավոր կերպով իրականացվող մոնիթորինգ՝ ըստ պաշտոնական կանոնավոր մոնիթորինգի ժամանակացու յցի
14. Աշխատանքային տեղամասի կառավարման պլան (քարհանք, բացահանքեր, շինարարական աշխատանքների ճամբարներ, թափոնների կուտակավայրեր, բետոնի դոզավորման և ասֆալտի գործարաններ)	Քարհանքի, բացահանքերի, բետոնի դոզավորման և ասֆալտի գործարանների և թափոնների կուտակավայրերի տեղանքների հատակագիծը և կառավարումը Տեղացիներին պատճառված անհարմարությունը	Բացահանք եր, թափոնների կուտակավ այրեր, շինարարակ ան աշխատանք ների ճամբարներ, բետոնի դոզավորմա ն, ասֆալտի գործարանն եր	Աշխատանքային տեղամասերի կառավարման պլան	Աշխատանքայի ն տեղամասերի կառավարման պլանների ատկայությունը Օգտագործված տարածքների հատակագիծը, համապատասխ անությունը Պլանի մասնագրերի պահանջներին Բողոքների լուծման մեխանիզմում բողոքների քանակի և	<u>Կապալառու</u> Աշխատանքային տեղամասերի կառավարման պլանի մշակում և մոնիթորինգի իրականացում Մոնիթորինգի արժեքը պետք է ներառվի Կապալառուի բյուջեում <u>Ինժեներ</u> Դիտարկել և վերահսկել Պլանը	Պլանը պետք է մշակվի և հաստատվի նախքան շինարարական աշխատանքնե րի մեկնարկը Կանոնավոր կերպով իրականացվող մոնիթորինգ՝ ըստ կանոնավոր մոնիթորինգի պաշտոնական ժամանակացու յցի

Նախնական գնահատման հայտ

				ծանրության աստիճանի արձանագրումը	Վերահսկողության աշխատանքների արժեքը ներառվելու է Ինժեների բյուջեում <u>ԵՔՕԻԳ</u> Վերահսկել գործընթացը	
15. Երթևեկության և մուտքերի կառավարում	<p>Հանրային ճանապարհների և մուտքերի տեղադիրքերը</p> <p>Նյութերի և թափոնների տեղափոխման երթուղիները</p> <p>Տեղացիներին պատճառված անհարմարությունը և հանրային անվտանգության խնդիրները</p> <p>Ճանապարհին և ջրահեռացման համակարգին հասցված վնասները</p>	<p>Ճանապարհների օգտագործումը՝ սարքավորումների և նյութերի փոխադրման համար</p> <p>Մուտքեր դեպի շինհրապարակ</p>	<p>Երթևեկության և մուտքերի կառավարման դիտարկում</p> <p>Մոնիթորինգի նպատակով տեղամասային այցելություններ</p>	<p>Երթևեկության և մուտքերի կառավարման պլանը և հասանելի է դիտարկման համար և հաստատված է Ճանապարհային և ոստիկանության կողմից</p> <p>Երթուղիների և մուտքերի տեղադիրքերը և հատակագծերը համապատասխանում են պլանի մասնագրերին</p> <p>Բողոքների լուծման մեխանիզմում բողոքների քանակի և ծանրության</p>	<p>Վերահսկողության աշխատանքների արժեքը ներառվելու է Ինժեների բյուջեում</p> <p><u>ԵՔՕԻԳ</u> Վերահսկել գործընթացը</p> <p><u>Կապալառու</u> ԿԲԿՊ-ի շրջանակում մշակել և մոնիթորինգի ենթարկել երթևեկության և մուտքերի կառավարման պլանը, իրականացնել մոնիթորինգ</p> <p>Արժեքը պետք է ներառվի Կապալառուի բյուջեում</p> <p><u>Ինժեներ</u> Դիտարկել և մոնիթորինգի ենթարկել Պլանը</p> <p>Վերահսկողության արժեքը պետք է ներառվի Ինժեների բյուջեում</p> <p><u>ԵՔՕԻԳ</u> Վերահսկել գործընթացը</p>	<p>Պլանը պետք է մշակվի և հաստատվի նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը</p> <p>Կանոնավոր կերպով իրականացվող մոնիթորինգը ստանդարտ մոնիթորինգի պաշտոնական ժամանակացույցի</p>

Նախնական գնահատման հայտ

<p>16. Արտակարգ իրավիճակների արձագանքումը</p>	<p>Վտանգավոր նյութերի հետ աշխատանքը</p> <p>Առողջությանն ու անվտանգությանը սպառնացող վտանգավոր իրավիճակների կառավարում</p>	<p>Բոլոր շինհրապարակները</p>	<p>Արտակարգ իրավիճակների արձագանքման պլանի դիտարկում</p> <p>Պատահարների վերաբերյալ հաշվետվությունների դիտարկում</p>	<p>Արտակարգ իրավիճակների արձագանքման պլանի առկայությունը</p> <p>Արտակարգ իրավիճակների արձագանքման թիմը նշանակվել է և վերապատրաստվել է</p> <p>Տեղի ունեցած բոլոր դեպքերը/պատահարները գրանցվել են և դրանց ընթացք է տրվել համաձայն Պլանի</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>ԿԲԿՊ-ի շրջանակում մշակել Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան, իրականացնել և ենթարկել մոնիթորինգի</p> <p>Մոնիթորինգի ծախսերը պետք է ներառվեն Կապալառուի բյուջեում</p> <p><u>Ինժեներ</u></p> <p>Դիտարկել և մոնիթորինգի ենթարկել իրականացումը</p> <p>Դիտարկել պատահարների վերաբերյալ հաշվետվությունը</p> <p><u>ԵԶՕԻԳ</u></p> <p>Վերահսկել գործընթացը</p>	<p>Պլանը պետք է մշակվի և հաստատվի նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը</p> <p>Կանոնավոր կերպով իրականացվող մոնիթորինգը ստանդարտ մոնիթորինգի պաշտոնական ժամանակացույցի</p> <p>Դեպքերի/պատահարների դեպքում դրանց վերաբերյալ հաշվետվության պատրաստում</p>
<p>17. Թափոններ և այլ նյութերի կառավարում</p>	<p>Շինարարության ընթացքում թափոնների և շինարարական նյութերի կառավարում</p>	<p>Բոլոր շինհրապարակները</p>	<p>Թափոնների և այլ նյութերի կառավարման պլանի դիտարկում</p>	<p>Թափոնների և նյութերի կառավարման պլանի առկայությունը</p>	<p><u>Կապալառու</u></p> <p>ԿԲԿՊ-ի շրջանակում մշակել Թափոնների և նյութերի կառավարման պլան</p>	<p>Պլանը պետք է մշակվի և հաստատվի նախքան շինարարական</p>

Նախնական գնահատման հայտ

		Թափոնների ժամանակավոր և մշտական կուտակավայրեր	Թափոնների վերաբերյալ արձանագրությունների դիտարկում	Թափոնների դասակարգման և տեղավորման իրավական հիմքերի ձեռքբերումը և հասանելիությունը Թափոնների և նյութերի բոլոր տեսակները կառավարվում են՝ համաձայն Պլանի Թափոնների գրանցամատյանի վարում	Իրականացնել և մոնիթորինգի ենթարկել Մոնիթորինգի ծախսերը պետք է ներառվեն Կապալառուի բյուջեում <u>Ինժեներ</u> Դիտարկել Պլանը և վերահսկել իրականացումը Վերահսկողության արժեքը պետք է ներառվի Ինժեների բյուջեում <u>ԵՔԾԻԳ</u> Վերահսկել գործընթացը	աշխատանքների մեկնարկը Համաձայն կանոնավոր մոնիթորինգի պաշտոնական ժամանակացույցի Թափոնների գրանցամատյանը և պլանը պետք է թարմացվեն յուրաքանչյուր ամսվա սկզբում
18.Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և բուսականության վերականգնում	Շինհրապարակը մաքրված է, ոչ մի նյութ կամ թափոն, սարքավորում տեղամասում չկա Բոլոր մակերևույթների և բուսականության վերականգնումը (ներառյալ քարհանքերը և բացահանքերը), որոնք շինարարության ընթացքում	Բոլոր շինհրապարակները	Տեղամասային ստուգումներ	Շինհրապարակի վերականգնման , կանաչապատման և բուսականության վերականգնման պլանն առկա է: Բոլոր օգտագործված մակերևույթներ	<u>Կապալառու</u> ԿԲԿՊ-ի շրջանակում մշակել Շինհրապարակի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլանը, իրականացնել և մոնիթորինգի ենթարկել Պլանը	Պլանը պետք է մշակվի և հաստատվի նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը Մոնիթորինգի իրականացում՝ համաձայն կանոնավոր մոնիթորինգի պաշտոնական

	օգտագործվել են ժամանակավորապես:			ը վերականգնված են՝ բերվելով իրենց սկզբնական վիճակին Տնկված թփերի և ծառերի տեղավայրերի և քանակի համապատասխանությունը կանաչապատման նախագծային փաստաթղթերին և Ծառերի և թփերի տնկիների 98%-ը գոյատևել է թերությունների շտկման ժամանակահատվածում	Պահպանել/խնամել կանաչապատ տարածքները պայմանագրում նշված ժամանակահատվածում Մոնիթորինգի արժեքը պետք է ներառվի Կապալառուի բյուջեում <u>Ինժեներ</u> Դիտարկել Շինհրապարակի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլանը և մոնիթորինգի ենթարկել Պլանի իրականացումը Վերահսկողության արժեքը պետք է ներառված լինի Ինժեների բյուջեում <u>ԷՔՕԻԳ</u> Վերահսկել գործընթացը և իրականացնել ստուգայցեր	Ժամանակացույցի Բոլոր մակերևույթներին վերականգնումը պետք է ավարտված լինի նախքան ծրագիրը ԵՔ-ին հանձնելը: Թերություններին շտկման ժամանակահատվածում թփերի և ծառերի վիճակը և աճը պետք է ստուգվի տարվա ընթացքում՝ երկու անգամ՝ ուշ գարնանը և վաղ աշնանը
13. Արձանագրություններ և հաշվետվություն	Աշխատանքային տեղամասի ստուգաթերթիկ, Հանդիպման արձանագրություններ,	Ինժեներիներ կայացված հաշվետվությունները	Արձանագրությունների/ հաշվետվությունների դիտարկում	Արձանագրությունները հասանելի/առկա են և ճիշտ լրացված	<u>Կապալառու</u> Տրամադրել ՇՄՊ, պահել և վարել գրանցամատյաններ, հանրային լուսմների արձանագրությունները,	Կապալառուն ներկայացնում է շաբաթական ՇՄՊ և ամսական առաջընթացի

Նախնական գնահատման հայտ

	<p>ԱԵԱ-ների հետ անցկացված հանրային լսումների գրանցամատյաններ, Դասընթացների/վերապատրաստումների արձանագրություններ</p> <p>Դեպքերի/պատահարների վերաբերյալ հաշվետվություններ</p> <p>Շտկող միջոցառումների վերաբերյալ հաշվետվություններ</p>	<p>Շինհրապարակի գլխավոր գրասենյակում գրանցամատյանների առկայությունը</p>		<p>Հետագա գրառումները/գրանցումները առկա են</p>	<p>դասընթացների/վերապատրաստումների արձանագրությունները և այլն</p> <p><u>Ինժեներ</u> Դիտարկել Կապալառուի արձանագրությունները/հաշվետվությունները</p> <p>Հաշվետվություններ ներկայացնել ԵՔՕԻԳ-ին</p> <p><u>ԵՔՕԻԳ</u> Դիտարկել Ինժեների հաշվետվությունները</p> <p>Հաշվետվություններ ներկայացնել ԱԶԲ-ին</p>	<p>վերաբերյալ հաշվետվություն</p> <p>Ինժեները պետք է ներկայացնի շաբաթական մոնիթորինգի հաշվետվություն և ամսական առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն</p> <p>Պետք է ներկայացնի փուլի ավարտական հաշվետվություն</p> <p>Պետք է ներկայացնի աուդիտի հաշվետվություն</p> <p><u>ԵՔՕԻԳ</u> ԱԶԲ-ին պետք է ներկայացնի կիսամյակային</p>
--	---	---	--	--	---	--

						հաշվետվություն
ՀԵՏԵՐՆԱՐԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ (Թերությունների շտկման ժամանակահատված)						
Գործողություն / Վայր	Մոնիթորինգի ենթարկվող պարամետրերը	Մոնիթորինգի տեղանք (ներ)ը	Միջոցները և մեթոդը	Բնապահպանական գործունեության իրականացման ցուցանիշ	Պատասխանատու մարմինները	Հաճախականությունը (պաշտոնական մոնիթորինգ)
14. Թերությունների վերացման բոլոր աշխատանքները	Ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ ԲԿՊ-ին չհետևելու և անտեսելու պատճառով	Ծրագրի տարածքը, Աշխատանքների իրականացման բոլոր վայրերը	Տեղամասային այցելություններ՝ ակնադիտական մոնիթորինգի նպատակով՝	ՇՄՆՈՒ/ԲԿՊ/ԿԲԿՊ-ի բոլոր պարբերությունները	<u>Կապալառու</u> <u>Իրականացնել ՇՄՆՈՒ/ԲԿՊ/ԿԲԿՊ-ն և մոնիթորինգի ենթարկել</u> <u>Ինժեներ</u> <u>Վերահսկել ՇՄՆՈՒ/ԲԿՊ/ԿԲԿՊ-ի իրականացումը</u> <u>ԵՔԾԻԳ</u> <u>Իրականացնել տեղամասային այցելություն՝ աուդիտի նպատակով</u> <u>Հաշվետվություն ներկայացնել ԱԶԲ-ին</u>	<u>Կապալառու</u> Օրական <u>Ինժեներ</u> Ամենօրյա վերահսկողություն, տեղամասային այցելություններ՝ մոնիթորինգի նպատակով տարեկան երկու անգամ Հաշվետվություն ներկայացնել ԵՔԾԻԳ-ին տարեկան մեկ անգամ

Նախնական գնահատման հայտ

<p>14. Երթևեկության շարժը</p>	<p>Աղմուկի ազդեցությունը</p> <p>Արտանետումներից առաջացող օդի և փոխադրամիջոցների հեղուկ աղտոտիչները</p> <p>Վթարային արտանետումներից ջրի աղտոտումը</p>	<p>Ծրագրի տարածքը</p>	<p>Տեղամասային այցելություններ՝ ակնադիտական մոնիթորինգի նպատակով՝</p>	<p>Զգայուն ընկալիչներից ստացված բողոքների թիվը</p> <p>Աղմուկի և թրթռման մակարդակները , օդի և մակերևութային ջրերի որակի տվյալները համապատասխանում են ՀՀ և ՄՖԿ (IFC) ստանդարտներին:</p>	<p><u>Կապալառու</u> Հավաքել և վերլուծության ենթարկել աղմուկի և թրթռման, օդի որակի տվյալները</p> <p>Մոնիթորինգի ենթարկել մոնիթորինգ իրականացնող մասնագիտացված ընկերությանը</p> <p>Մոնիթորինգի արժեքը ներառվելու է Կապալառուի բյուջեում</p> <p><u>Ինժեներ</u> Վերահսկել ԵԿՊ-ի իրականացումը</p> <p>Տարեկան երկու անգամ մոնիթորինգի ենթարկել Կապալառուի գործողությունները</p> <p>Հաշվետվություն ներկայացնել ԵՔՕԻԳ-ին</p> <p><u>ԵՔՕԻԳ</u> Հաշվետվություն ներկայացնել ԱԶԲ-ին</p>	<p>Աղմուկի և թրթռման մակարդակի, ջրի և օդի որակի չափումներ՝ նվազագույնը տարին մեկ անգամ, կամ ԱԵԱ-ներից ստացված բողոքների հիման վրա</p>
-------------------------------	--	-----------------------	---	---	--	---

Նախնական գնահատման հայտ

<p>15. Կանաչապատում</p>	<p>Ծառերի, թփերի և սիզամարգերի բնականոն աճ</p>	<p>Բոլոր մակերևույթները, որտեղ իրականացվել են կանաչապատման աշխատանքներ</p>	<p>Տեղամասային այցելություններ՝ ակնադիտական մոնիթորինգի նպատակով</p>	<p>Ծառերի, թփերի, սիզամարգերի աճը և սանիտարական վիճակը</p>	<p><u>Կապալառու</u> Մոնիթորինգի ենթարկել կանաչապատման վիճակը և ապահովել բոլոր ծառերի և թփերի 98%-ի աճը Մոնիթորինգի արժեքը պետք է ներառվի Կապալառուի բյուջեում Հաշվետվություն ներկայացնել ԵՔԾԻԳ-ին <u>Ինժեներ</u> Մոնիթորինգի ենթարկել կանաչապատման վիճակը և տնկված ծառերի և թփերի սանիտարական վիճակը՝ տարեկան 2 անգամ Հաշվետվություն է ներկայացնում ԵՔԾԻԳ-ին <u>ԵՔԾԻԳ</u> Վերահսկել կանաչապատումը, ծառերի և թփերի սանիտարական վիճակը Հաշվետվություն ներկայացնել ԱԶԲ-ին</p>	<p>Առնվազն տարեկան 2 անգամ և աշխատանքների վերջում՝ մինչև թերությունների շտկման թերթիկի ստորագրումը</p>
-----------------------------	--	--	--	--	--	--

ԵՆԹԱՀԱՎԵԼ ՎԱԾ Ժ-3. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան (բովանդակություն), 46 էջ

Բովանդակություն

- 1. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՂՈՒՄՆԵՐ Error! Bookmark not defined.
- 2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ..... Error! Bookmark not defined.
- 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ Error! Bookmark not defined.
- 4. ՆՊԱՍԱԿ..... Error! Bookmark not defined.
- 5. ՆՊԱՍԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ..... Error! Bookmark not defined.
- 6. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ..... Error! Bookmark not defined.
- 7. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... Error! Bookmark not defined.
- 8. ՎԵՐԱՆԱՅՈՒՄ / ԹԱՐՄԱՅՈՒՄՆԵՐ..... Error! Bookmark not defined.
- 9. ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ..... Error! Bookmark not defined.
- 9.1- Աշխարհագրական դիրքը (ՋԲՎԵԺ՝ Թևոսյան և Հովհաննիսյան փողոցների փոխհատում) Error! Bookmark not defined.
- 9.2- Տեղամասի գլխավոր հատակագիծ (գոյություն ունեցող կառույցները «մինչ 1-ին փուլի վերակառուցման մեկնարկը)..... Error! Bookmark not defined.
- 9.3- Գոյություն ունեցող կառույցների ապամոնտաժում (1-ին փուլ՝ վերակառուցման ծրագիր) Error! Bookmark not defined.
- 9.4- Տեղամասի գլխավոր հատակագիծ (հաղորդուղիներ և անվտանգության գոտի՝ «1-ին փուլի ավարտից հետո)..... Error! Bookmark not defined.
- 9.5- Տեղամասի գլխավոր հատակագիծ (կառույցների և մոտակայքում գտնվող երրորդ կողմի տարածքների միջև հեռավորությունները)..... Error! Bookmark not defined.
- 10. ԱԶԴԱՆՇԱՆ/ՏԱԳՆԱՊԻ ԱԶԴԱՆՇԱՆ..... Error! Bookmark not defined.
- 10.1- Ներքին ազդանշանային համակարգի գծապատկեր (փուլ 1)... Error! Bookmark not defined.
- 10.2- Ներքին ազդանշանային համակարգի գծապատկեր (առաջարկվում է 2-րդ փուլի համար) Error! Bookmark not defined.
- 10.3- Արտաքին ազդանշանային համակարգի գծապատկեր (փուլ 1) Error! Bookmark not defined.
- 10.4- Արտաքին ազդանշանային համակարգի գծապատկեր (առաջարկվում է 2-րդ փուլի համար) Error! Bookmark not defined.
- 10.5- Տեղեկատվական թերթիկի ձևանմուշ, որը պետք է փոխանցվի արտաքին արտակարգ իրավիճակների ծառայություններին (եթե աջակցություն է պահանջվում) Error! Bookmark not defined.
- 10.6- Տեղեկատվական թերթիկի ձևանմուշ, որը պետք է փոխանցվի իրավասու մարմիններին (քաղաքապետարան, թաղամաս...)..... Error! Bookmark not defined.
- 10.7- Իրավասու մարմինների կոնտակտային տվյալները..... Error! Bookmark not defined.
- 10.8- Տեղեկատվական թերթիկի ձևանմուշ, որը պետք է փոխանցվի շրջակայքում գտնվող կազմակերպություններին..... Error! Bookmark not defined.
- 10.9- Շրջակայքում գտնվող կազմակերպությունների ցանկը..... Error! Bookmark not defined.
- 11. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ..... Error! Bookmark not defined.
- 11.1- ԱԻԱՊ-ի կառուցվածքային գործառույթների սխեման..... Error! Bookmark not defined.

- 11.2- Առաքելություն և ռեֆլեքսային քարտեր Error! Bookmark not defined.
- 11.3- Արտաքին արտակարգ իրավիճակների ծառայությունների հետ միավորում Error! Bookmark not defined.
- 11.4- Կառավարման տարբեր գործառույթներ իրականացնող անձնակազմի ինքնությունը և կոնտակտները..... Error! Bookmark not defined.
- 12. ԱԻԱՊ-Ի ԱԿՏԻՎԱՅՈՒՄ ՊԱՀԱՆՁՈՂ ՀՐԴԵՀԻ ՌԻՍԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱՍՏ ՍՑԵՆԱՐԵՐ (1-ին և 2-րդ փուլ) Error! Bookmark not defined.
- 13. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՄԻՋԱՍՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ (Առանձին փաստաթուղթ A3 ձևաչափով)..... Error! Bookmark not defined.
- 14. ՀԱՎԱՔԱԿԵՏ ԵՎ ՔԱՍՈՒ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԴՐՈՇԱԿ Error! Bookmark not defined.
- 15. ՄԻԱԺԱՍՄԱՆԱԿՅԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՎԵԼԱՅՆՈՒՄ ԵՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՎԱՍՏ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԽՈՇՈՐ ՊԱՏԱՀԱՐԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ Error! Bookmark not defined.
- 15.1- Միաժամանակյա գործողությունների սահմանում Error! Bookmark not defined.
- 15.2- 1-ին փուլի հիմնական գործառնությունների ամփոփում Error! Bookmark not defined.
- 15.3- Հիմնական գործառնություններում ներառված գործողությունների ցանկը Error! Bookmark not defined.
- 15.4- Միաժամանակյա գործողությունների որոշման կայացման աղյուսակ Error! Bookmark not defined.
- 15.5- Որոշումների կայացման աղյուսակի մեկնաբանություն Error! Bookmark not defined.
- 15.6- Գործողությունների ռիսկերի նվազեցման միջոցառումներ Error! Bookmark not defined.
- 16. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՂԱՍՍՍՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Error! Bookmark not defined.
- 17. ՄԻՋԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ Error! Bookmark not defined.
- 17.1- Սարդկային ռեսուրսներ Error! Bookmark not defined.
- 17.2- Սարքավորումներ և տեխնիկական միջոցներ Error! Bookmark not defined.
- 18. ԼՐԱՅՈՒՑԻՉ ՊԼԱՆՆԵՐ/ՄԽԵՄԱՏԻԿ ԳԾԱԳՐԵՐ/ԳԾԱԳՐԵՐ..... Error! Bookmark not defined.
- 19. ՓՈՆԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ԻՆՏԵՐՅԵՑՍ) ԱՅԼ ՊԼԱՆՆԵՐԻ ՀԵՏ ... Error! Bookmark not defined.
- 19.1- Արտակարգ իրավիճակների արձագանքման պլանը արտաքին փրկարարական ծառայություններից..... Error! Bookmark not defined.
- 19.2- Առողջության, անվտանգության և բնապահպանական կառավարման պլան Error! Bookmark not defined.
- 20. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ Error! Bookmark not defined.
- 20.1- Տեղեկատվություն լրատվամիջոցներին (բնակչությանը) Error! Bookmark not defined.
- 20.2- Պատահարների վերաբերյալ հաշվետվություն իրավասու մարմինների համար Error! Bookmark not defined.
- 20.3- Իրավիճակային հաշվետվություն (իրավասու մարմինների համար) Error! Bookmark not defined.
- 21. ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... Error! Bookmark not defined.
- 22. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ Error! Bookmark not defined.

Նախնական գնահատման հայտ

ՀԱՎԵԼՎԱԾ Ի. Շինարարության բնապահպանական կառավարման պլանի կառուցվածքի ձևաչափ (կազմվում է Կապալառուի կողմից)

Ա. Ներածություն. ՇԲԿՊ-ի նկարագրությունը, աշխարհագրական դիրքը, պիկետաժը, կից քարտեզը:

Բ. ՇԲԿՊ-ի նպատակը

Գ. Պատասխանատու մարմիններ և անձինք

Դ. Օրենսդրական շրջանակները

Ե. Թույլտվություններ և հաստատումներ

Զ. Տեղանքի նկարագրություն`

I. ներկա իրավիճակը, վայրի բնության, բուսահողի, աղտոտված գրունտի, կուտակված թափոնների, ծառերի և թփերի, փոշու, աղմուկի, ջրային մարմինների, այլ գործոնների առկայությունը, որոնք կարող են ազդել շինարարության վրա, կից լուսանկարներ,

II. ենթակառուցվածքների առկայությունը` մուտքեր, դաշտային ճանապարհներ, խողովակներ, էլեկտրականություն, ոռոգում, ջրահեռացում և այլն,

III. զգայուն ընկալիչների առկայությունը` բնակելի տներ, գրասենյակներ, ձեռնարկություններ և այլն, կից լուսանկարներ:

Է. Տեղամասային աշխատանքներ`

- i. այստեղ իրականացվելիք աշխատանքների ցանկ,
- ii. մեքենաներ և մեխանիզմներ,
- iii. շինհրապարակի անձնակազմ:

Ը. Ազդեցությունների և ռիսկերի գնահատում

Լրացնել աղյուսակը

N	Շինարարական աշխատանք	Դիտարկման ենթակա վտանգները	Հավանականություն (1-5)	Հետևանք (1-5)	Գնահատական	Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը մեղմացնող միջոցառումներ

Թ. Բնապահպանական կառավարման պլաններ

I. Մեղմացնող միջոցառումներ

1. Բնապահպանական և անվտանգության գծով վերապատրաստման դասընթացների ծրագիր,

Նախնական գնահատման հայտ

2. Մասնագիտական առողջության և անվտանգության պլան,
3. Հանրային քննարկումների և խորհրդակցությունների անցկացման պլան,
4. Մշակութային ժառանգության կառավարման պլան,
5. Մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանության պլան,
6. Բուսական աշխարհի պահպանման և բուսականության մաքրման պլան, այդ թվում՝ ծառերի կառավարման պլան,
7. Հաղորդուղիների պահպանության և տեղափոխման պլան,
8. Շրջակա միջավայրի պահպանության պլան,
9. Շինարարական ճամբարների տեղակայման պլան (նկարագրել ճամբարները, կցել ճամբարների ՏԿՊ-ը),
10. Տեղամասի կառավարման պլան (հանք և բացահանք, լցակույտեր, բետոնի և ասֆալտի գործարաններ),
11. Երթևեկության և մուտքերի կառավարման պլան,
12. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան,
13. Թափոնների և նյութերի կառավարման պլան (նկարագրել նյութերի տեսակները և ստացման աղբյուրները՝ գոյություն ունեցող կամ նոր բացված, այս բաժնում կցել առաջացող թափոնների տեսակների և ծավալների մասով թույլտվությունները, նկարագրել ասֆալտից առաջացած թափոնների կառավարումը, գոյություն ունեցող կամ նոր բացված լցակույտերը, կցել թույլտվությունները),
14. Տեղամասի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան: Նկարագրել տեղամասի տեսքը ծրագրի ավարտից հետո:

Մոնիթորինգ

- I. Բնապահպանական պարամետրեր՝ ջրի որակ, օդի աղտոտում, աղմուկ և թրթռում:
Նկարագրել չափումների կետերը և կցել քարտեզը:
- II. ՏԿՊ-ի համաձայն՝ տեղանքի կանոնավոր մոնիթորինգ:

Ժ. Հաշվետվություն

Նախնական գնահատման հայտ

ՀԱՎԵԼՎԱԾ Լ. Տեղամասի կառավարման պլանի կառուցվածքի ձևաչափ

I. Ներածություն

II. Նպատակը և սահմանումները

III. Պատասխանատու անձնակազմ

IV. Կիրառելի օրենսդրությունը և կանոնակարգերը

V. Շինհրապարակի կազմակերպում

1. Նյութերի քանակը
2. Շահագործում
3. Շինհրապարակում օգտագործվող մեքենամեխանիզմները
4. Շինհրապարակի անձնակազմը
5. Աշխատողների և համայնքների առողջությունն ու անվտանգությունը
6. Երթևեկության կառավարման պլան (ԵԿՊ)
7. Անձնակազմի և համայնքի իրազեկման ծրագիր

VI. Աշխատանքային տեղամասի նկարագրությունը

1. Զբաղեցվող տարածքի տեղադիրքը
2. Շինհրապարակին բնորոշ առանձնահատկությունները
3. Հողակտորի կարգավիճակը
4. Արժեքավոր զգայուն ընկալիչներ

VI. Ռիսկի գնահատում

VII. Մեղմացնող միջոցառումներ

VIII. Մոնիթորինգ

IX. Շինհրապարակի փակում և վերականգնում

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Թույլտվություններ և հաստատումներ

Շինհրապարակի հատակագիծ

ՀԱՎԵԼՎԱԾ Խ. ՊԱՏԱՀԱՐԻ/ՄԻՋԱԴԵՊԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՆՄՈՒՇ

Ծրագիր _____

1.	Ամսաթիվ/ Ժամ	
2.	Ճանապարհահատված	
3.	Շինարարության Կապալառու/ Ենթակապալառու	
4.	Պատահարի/ Միջադեպի տեսակը	
5.	Ծանրությունը	Բարձր Միջին Ցածր
6.	Պատահարի/միջադեպի նկարագրությունը	
7.	Պատահարի/միջադեպի պատճառի նկարագրությունը	
8.	Կից նկար	
9.	Ձեռնարկված շտկող միջոցառումը	
10.	Շտկող միջոցառումը փաստող կից լուսանկար	
11.	Հետագայում ձեռնարկվելիք շտկող միջոցառումը	
12.	Կրկնվելը կանխարգելուն ուղղված ձեռնարկվելիք գործողությունը	
13.	Շտկող միջոցառումն իրականացնող անձը	
14.	Փակման ամսաթիվ	

Նախնական գնահատման հայտ

15.	Ներգրավված անձինք	
16.	Ներգրավված մեքենա-սարքավորումները	
17.	Երրորդ կողմի ներգրավում	
18.	Զեկուցման ամսաթիվ	
19.	Զեկույցը կազմեց	

Միայն Ինժեների օգտագործման համար

<i>Ամսաթիվ</i>	
<i>Ստացող</i>	
<i>Կայացված որոշում/ձեռնարկված գործողություն</i>	

ՀԱՎԵԼՎԱԾ Ծ. ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

NOTES
ՕՐԱԹԵՐԻՔԱՆ

- LAWN
Կանաչապարտի տարածք
- TRSE
ԾԱՒ

ՔԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԿԱՆԱՅԱՐԱՅՈՒՄ

ՎՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ
130115L.T7

ՎՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ
CONSTRUCTION OF REFUELING AND WASHING FACILITY AND RECONSTRUCTION OF PARKING AREA AT EXISTING YEREVAN JRYEZH BUS DEPOT

ԵՐԵՎԱՆ
YEREVAN MUNICIPALITY
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՄԱՐԱԿԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԼԱ

ԲՈՒԿՆԱԿԱՆ
ASIAN DEVELOPMENT BANK
ԱՄՐԱՆԵՆ ԶԱՐԿԱՆԱՆ ԲԱԼԱ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐԴԱՅՈՒՄ
EGIS INTERNATIONAL
ԵՍՐԱ ՊՐԵԿՏՆԵՐՆԵՐԼԻ

ՎՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ
SUPET
ՄՈՒՅՑ

ՎՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ
VOLUME 2_1.1
ՀԱՏՈՒՄ 2_1.1

ՎՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ
GENERAL LAYOUT
ՊԵՆԱԿԱՆ ԿԱՏԱՎԱԾՈՒ

ՎՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ
TERRITORY IMPROVEMENT PLAN
ՏԱՐԱԾԻ ԶՈՒԿՄԱՆ ՎԵՐԱԿԱՎԱԾՈՒ

ՎՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ
14/04/2022
ՎՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ
DD LU

ՆՈՒՄԵՐ	ՎՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ	ՎՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ	ՎՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ
1	GAS REFUELING STATION	ՊԵՆԱԿԱՆ ԿԱՏԱՎԱԾՈՒ	
1 ¹	COMPRESSOR STATION	ՊԵՆԱԿԱՆ ԿԱՏԱՎԱԾՈՒ	
1 ¹¹	GAS DRYER AND UNDERGROUND ACCUMULATOR TANKS	ՊԵՆԱԿԱՆ ԿԱՏԱՎԱԾՈՒ	
1 ¹¹¹	GAS FILLING POINTS	ՊԵՆԱԿԱՆ ԿԱՏԱՎԱԾՈՒ	
2	DIESEL REFUELING STATION	ՊԵՆԱԿԱՆ ԿԱՏԱՎԱԾՈՒ	
2 ¹	DIESEL REFUELING POINTS	ՊԵՆԱԿԱՆ ԿԱՏԱՎԱԾՈՒ	
2 ¹¹	DIESEL UNDERGROUND TANKS	ՊԵՆԱԿԱՆ ԿԱՏԱՎԱԾՈՒ	
3	BUS WASHING AREA	ՊԵՆԱԿԱՆ ԿԱՏԱՎԱԾՈՒ	
4	ELECTRICAL SUBSTATION	ՊԵՆԱԿԱՆ ԿԱՏԱՎԱԾՈՒ	
5	CHECK POINT	ՊԵՆԱԿԱՆ ԿԱՏԱՎԱԾՈՒ	
6	FENCE / NOISE BARRIER	ՊԵՆԱԿԱՆ ԿԱՏԱՎԱԾՈՒ	
7	RETAINING WALLS	ՊԵՆԱԿԱՆ ԿԱՏԱՎԱԾՈՒ	
8	ADMINISTRATION BUILDING	ՊԵՆԱԿԱՆ ԿԱՏԱՎԱԾՈՒ	

Տեսակ (տեսակ)	Ուշագրավ	Փակաս (տեսակ)
Գծակ ճաշ	Սնունդ տեսակ	228
Սրահ/հանգիստ	Քաղաքային տեսակ	42
Գծակ ծոց	Սնունդ տեսակ	34
Գծակ համակարգ	Սնունդ տեսակ	18
Գծակ կահույք	Սնունդ տեսակ	12
Գծակ հարկեր	Սնունդ տեսակ	12
Գծակ խնամ	Սնունդ տեսակ	6
Գծակ պահպան	Սնունդ տեսակ	6
Փակաս		348

Տեսակ (տեսակ)	Ուշագրավ	Փակաս (տեսակ)
Վարար ծառ	Սնունդ տեսակ	6
Գծակային տարրեր	Սնունդ տեսակ	6
Սրահային	Սնունդ տեսակ	18
Վարար ծառեր	Սնունդ տեսակ	6

Նախնական գնահատման հայտ

1-ին փուլի համար

